

Ա. Ռապինսկի

ԷՉԵՐ
ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ
ԴԻՎԱՆԻՑ




Ա. Պ. ԲԱԶԻՅԱՆՑ

ԷԶԵՐ ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ
ԴԻՎԱՆԻՑ

(Ակնարկներ)

2283

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅՍՏԱՆ» 1988



Քարգմանիչ՝ Վ. Ա. Գիլյանց
Խմբագիր՝ Հ. Հ. Մարտիրոսյան

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի ճակատագիրն այնպես է դասավորվել, որ իրենց հայրենիքի սահմաններից շատ հեռու հայերն ստեղծել են ազգային մշակույթի օջախներ՝ հասարակական մտքի, կրթության, գիտության, արվեստի, դրահրատարակության կենտրոններ: Կալիպթա և Մադրաս, Նոր Զուլա, Կոստանդնուպոլիս, Լիով, Աստրախան, Գրեգորիուպոլիս և Նոր Նախիջևան, Վենետիկ, Փարիզ՝ ահա դրանց ամենևին ոչ լրիվ ցուցակը, բայց դրանում էլ հիշատակվում են երկու աշխարհամասերի՝ Ասիայի և Եվրոպայի բազմաթիվ հայ կենտրոններից յուրաքանչյուրն աչքի է ընկել անկրկնելի ինքնատիպությամբ և յուրաքանչյուրը դրական դեր է խաղացել հայկական մշակույթի զարգացման գործում, թեև կատակածի ենթակա չէ, որ նրանց լուսնան այդ զարգացման մեջ նույնաբեկ չէ:

Հայկական գաղութների պատմության ապագա համահավաք աշխատության մեջ, խուսելով Հնդկաստանի հայկական գաղութի մասին, հավանաբար հատուկ կընդառնի «Աղաբարբ»՝ տմասագրի հրատարակության փաստը, Մովսես Բաղրամյանի և Շահամիր Շահամիրյանի խմբակի գործունեությունը: Վենետիկը, մեր կարծիքով, կկապվի Մխիթարյան խիստ հնաաբբերի միարանություն, նրա ձեռագրերի հավաքածուի, նրա զիտնականների աշխատությունների և Բայրոնի անվան հետ, որը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում միարանության գործունեության նկատմամբ: Աստրախանը՝ հայկական առևարատնտեսական վայերի և Մ. Կ. Պարիսի սկզբին հիմնադրված Աղաբարբյան ուսումնարանի հետ: Պետերբուրգը՝ Հովհաննես Լազարյանի և Հովսեփ Արղուիսյանի քա-

Բալլիանց Ա. Պ.

Բ 164 էջեր Լազարյանների դիվանից (Ակնարկներ) / Ռուս. թարգմ. Վ. Ա. Գիլյանց.— Եր.: Հայաստան, 1986.— 192 էջ:

Ակնարկները պատմում են XVIII—XIX դարերի Մասկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների մշակութային կյանքի որոշ կողմերի, ուստի և հայ ժողովուրդների բարեկամությունը և մշակութային կապերը վկայող վավերագրերի և հուշարձանների մասին: Այլոսկերի մեծ մասի համար որպես աղբյուր ծառայել են Լազարյանների ընտանեկան արխիվի նյութերը, ընտանեկը, որը նկատելի դեր է խաղացել Ռուսաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում, ինչպես նաև Լազարյան ճեմարանի արխիվը: Երկու ակնարկ ներկայում է ՄԱՀՄ Ալմաստի ֆոտոցի լեզնեղային «Յուզով» և «Շահ» արձանագրերի հետ կապված իրադարձություններին:

0505000000
Բ 701 (01) — 86

ԳՄԴ 63.3(2) 47/51

¹ «Աղաբարբ» հայկական առաջին ամսագիրն է: Հրատարակվել է Մադրասում 1734—1736 թվականներին:

դարձական գործունեության հետ XVIII դարի երկրորդ կեսին և զինտականների կադրերի պտտրաստման հետ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:

Բայց հայ ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության զարգացման, հասարակական մտքի, հրուպարակախոսության, աշխարհաբարի ձևագործման պատմության մեջ առանձնահատուկ տեղը Մոսկվային է պատկանում:

Ինչպես հայտնի է, ուշ միջնադարում ռուս-հայկական հարաբերությունների որոշիչ գործոնը առևտրատնտեսական կապերն են եղել:

Անեն մի հաջորդող դարում ամրապնդվում էին ռուս և հայ ժողովուրդների ոչ միայն տնտեսական, այլև մշակութային կապերը: Այսպես, XVII դարի Ռուսաստանի հետ հայերի ունեցած մշակութային կապերի հուշարձան կարող են ծառայել Մոսկվա հրավիրված նկարիչ Բողդան Սվաթնովի գործերը, որոնք պահպանվել են մինչև մեր օրերը և՛ Կրեմլում, և՛ «Կոլոմեննոկոյ» թանգարան-արգելոցում: Մոսկվայի նշանավոր Վասիլի Երաննչուսաճարի (Պոկրովսկի մտր Եկեղեցի) կողմնասեղաններից մեկը նվիրված է «Մեծ Հայաստանի սր. նահատակ Գրիգորին»:

Ժամանակակից ռուս պատմագրությունը արգտաբացիորեն գրտնում է, որ XVIII դարում ռուս-հայկական հարաբերությունները բնորոշող գործոնը դառնում է պայքարը հանուն Հայաստանի ազատագրության, շարժումը Ռուսաստանին միանալու համար, որն ունեցել է տնտեսական, պատմական, կրոնական և մշակութային նպաստաբերություն: Հայ ժողովրդի բոլոր խավերը մասնակամ ազատագրական պայքարը առաջ է քաշել հասարակական և քաղաքական խոշոր գործիչների, որոնց մեջ նշանակալի է Հովհաննես կազարյանի և Հովսեփ Արղուսթյանի դերը:

Շնորհիվ Ռուսաստանի քաղաքականության Մերձավոր արևելքում XVIII դարում իրական պայմաններ են ստեղծվում Անզըրեովկաի ժողովուրդներին իրանական և թուրքական լծից ազատագրելու համար: Անզրեովկայան ժողովուրդները, մասնավորապես հայ ժողովուրդը, հատկապես Ռուսաստանի հետ էին կապում ազգային-ազատագրական պայքարում իրենց հաղթանակը: Այդ պայքարում, անկասկած, շնայած տարբեր նպատակադրումներին, հայթնակի կարելի էր հասնել միայն Ռուսաստանի օգնությամբ:

Այդ պայմաններում աճում էր Ռուսաստանի, հատկապես մայրաքաղաքների, հայկական գաղութների քաղաքական դերը: Ազգայրյանների երկու սերունդներ սերտորեն կապված էին աշատագրական շարժմանը, իսկ Հովհաննես Աղազարի կազարյանը դարձավ նրա ճանաչված ղեկավարներից մեկը:

Ա. Ռ. Հովհաննիսյանը, Մ. Գ. Ներսիսյանը² և ուրիշ շատ հետազոտողներ գանում են, որ Հովհաննես Աղազարի կազարյանը և Հովսեփ Արղուսթյանը Ռուսաստանում ներկայացնում էին հայ աշատագրական շարժումը և օայն հայերն էին, որոնց հետ ռուսական բարձրաստիճան պաշտոնյաները բանակցությունների մեջ մտան, երբ 1780 թվականին հայկական հարցը առաջին անգամ օրակարգի մեջ մտավ³:

Վ. Ա. Գիլյովան՝ կազարյանների հասարակական-քաղաքական գործունեության վերաբերյալ հետաքրքրական ուսումնասիրության հեղինակը, նշում է, որ «XVIII դարի 80-ական թվականներին, երբ հայ ժողովրդի համար վրա հասավ աղատագրական հուշարի և բաղձանքների մի նոր ժամանակաշրջան, ռուսական կառավարության նախաձեռնությամբ Հովհաննես կազարյանը և Հովսեփ Արղուսթյանը բանակցությունների մեջ մտան նրա հետ Հայաստանի աղատագրության և Անզրեովկասում հայկական պետության վերանապնման հարցի շուրջ»⁴:

կազարյանների ընտանիքը (հայրը՝ Աղազար նաղարի կազարյան, մայրը՝ Աննա Հովակիմովնա, որդիները՝ Հովհաննես, Մինաս, Խաչատուր, Հովակիմ և դուստրը՝ Աննա) Ռուսաստան էր տեղափոխվել Իրանից և XVIII դարի կեսերին հաստատվել էր Մոսկվայում և Պետրբուրգում, որտեղ էլ կարծես զլխավորեց հայկական գաղութները: Ինչնչով վիթխարի հարտության տեր, Ռուսաստանում իրենց ձեռնարկուական գործունեությունն սկսելով մետաքսի մանուֆակտուրաների հիմնադրումով, 70-ական թվականներին կազարյանները իրենց հետաքրքրությունն ուղղեցին լեռնարդյունաբերության ոլորտը և շուտով դարձան լեռնարդյունաբերական ձեռնարկությունների խոշորագույն տերեր:

² А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия. Ер., 1947; М. Нерсисян. Из истории русско-армянских отношений. Кн. 1, Ер., 1956.

³ Նույն տեղը, էջ 21:

⁴ Վ. Ա. Գիլյովան, կազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես), Երևան, 1966, էջ 259:

Նկնարկուական, ֆինանսական և քաղաքական գործունեությունը Հովհաննես Լազարյանին՝ Լազարյան եղբայրներից ազագին, մերձեցրեց ազդեցիկ պալատականների հետ: Արխիվային մի համառոտ աեղեկանք արձանագրում է, որ Հովհաննես Ալիան մի Լազարյանը «հաճախակի և մերձավոր կապերի մեջ էր... Օսլովներին, ...Պոսլովներին-Տավրիներին, ...Բեզբորոդկոյին..., Վլադենսկու..., Ջուրովին... և ուրիշ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, այդ թվում իշխան Սուվորով-Իտալիսկու և կոմս Ռուսլանցև-Ջաղունայսկու հետ»⁵:

Ենկելով իր արտաքին քաղաքական շահագրգռություններից, ցարական կառավարությունը երկար ժամանակ աստարում էր հայ ազգային-ազատագրական շարժմանը և նրա ղեկավարներին:

Լազարյանները, թղթակիցներ ունենալով Մերձավոր և Միջին արևելքի, ինչպես նաև եվրոպայի շատ երկրներում, լավ էին կողմնորոշվում միջազգային քաղաքական իրադրության մեջ, կապ էին պահպանում արցական թաղավորական տան և Հընդկաստանի ազդեցիկ հայերի հետ: Հովսեփ արքեպիսկոպոս Արզուսյանի հետ միասին Հովհաննես Լազարյանը մասնակցել է Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետության վերականգնման նախագծերի նախապատրաստմանը: Նրանց պատկերացմամբ, հայկական պետության զուլս կանգնելու էր մյուսակար, որը պետք է լիներ կամ հայկական և կամ, ցարական կառավարության դիմադրության դեպքում, ռուսական (հի-հատակվում էր իշխան Պոսլովներին անոնը որպես հետադուր հայաց թագավորի) ավագանու ներկայացուցիչ: Դրա հետ միասին, բնութագրելով հայկական ազատագրական շարժման ղեկավարների քաղաքական հույսերները, հարկ է ի նկատի ունենալ, որ տղատագրական շարժման մեջ եղած բոլոր հոսանքների նախագծելում Հայաստանը պատկերացվում էր առանց ճորտատիրական իրավունքի (1):

Հովհաննես Լազարյանի խորհուրդները հաշվի էին առնվում հատկապես մերձավորարևելյան քաղաքականությունը վերաբերող հարցերը վճենիս:

Պետերբուրգի և Մոսկովայի համեմատաբար փոքրաթիվ հայ-

կական ընտանիքները, հատկապես ազնվականական հարուստ վերնախավը, ազգակցական կապերով սերտորեն կապված էին միմյանց հետ: Լազարյանների առավել մերձավոր ազգականներն էին Սբամելիք իշխանները, Հալաբապետյանները, Արզուսյանները, Գեղամովները, Սուբաստովները: Ազգակցական կապեր հաստատելով Աբամելիքների ընտանիքի հետ, Լազարյաններն ամուսնացնեցին իրենց քաղաքական կապերը Ռուսաստանի վրացական ազդեցիկ ընտանիքների հետ:

Աբամելիքների ընտանիքը հաստատվել էր Ռուսաստանում XVIII—XIX դարերի սահմանագծերում, հավանաբար Վրաստանի նախկին թագավորին ուղեկցելիս: Բանն այն է, որ Աբամելիքները ազգակցություն ունեին վրացական թագավորական տոհմի հետ: Արցախյան Դավիթ Գեորգիևիչը, վրացական վերջին թագավոր Գեորգի XII Բաղրատիոնու ավագ որդին, իր հոր կենդանության ժամանակ ամուսնացել էր Ելենա Սեմյոնովնա՝ Աբամելիքի՝ հետ:

Սույն դրքի հեղինակը ենթադրում է, որ իշխան Աբամելիքները ազգակցություն ունեին նաև Բաղրատիոնիների մյուս ճյուղի հետ:

Վրաց հեաազոտող Ն. Գ. Տարսախձեի իր «Պատմական էսյուդներ» հետաքրքիր գրքում, աշխատելով ճշտել Բաղրատիոնի իշխանների տոհմաձագը, գրում է. «Իվան Ալեքսանդրովիչ Բաղրատիոնին ունեւ երեք որդի՝ Պյոտրը, Ալեքսանդրը, Ռոմանը և դուստրեր: Հետևալի գեներալ Պյոտր Իվանովիչ Բաղրատիոնցականավոր զորավարներից մեկն էր... Ցավոք արտի, հայտնի չէ. թե ով է եղել Պյոտր Բաղրատիոնու մայրը: Միայն տեղեկություններ կան, որ նրա աստք եղել է հայուհի: Ի միջի այլոց, Ռոման Իվանովիչ Բաղրատիոնին ամուսնացած էր նույնպես հայուհու՝ Աննա Սեմյոնովնա Իվանովայի հետ»⁶:

Փորձներ ճշտել Ն. Գ. Տարսախձեի դատողությունները կամ,

⁵ Ելենա Սեմյոնովնան թագված է Ալեքսանդր-նեկի մայրավանդի (լավրայի) սր. Քեոդորտի եկեղեցում: Տագանարալին կա հետևյալ արձանագրությունը. «Վրաց արքայազուհուհի Ելենա Սեմյոնովնայի աճյունին է նվիրվում այս հուշարձանը իր հարազատ եղբայրների՝ իշխան Աբամելիքների կողմից: 1836»:

⁷ Հին ակտերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀԱԿՊԱ), ֆ. 1252, ց. 1, գ. 21, թ. 4 բ:

⁸ Н. Г. Тарсаядзе. Исторические этюды. Тб., 1972, с. 139.

⁵ Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ԿՊՊԱ), ֆ. 880, ց. 5, գ. 1, թ. 139: ԿՊՊԱ-ն գտնվում է Լենինգրադում:

հնարավոր է, առավել ևս բարդացնենք հեռագրատղի մտքի ընթացքը:

Աբամելիք-Լազարյանների արխիվային ֆոնդերում տեղեկություններ են պահպանվել 1817 թվականի մարտին Ռոման Իվանովիչ Բագրատյանի և Աննա Սեմյոնովնա... Աբամելիքի նշանդրության մասին⁹: Ուշադրություն դարձնենք, որ հարսնացուների անունը, հայրանունը լրիվ համընկնում են և նրանց ազգանունները բացարձակապես չեն համընկնում:

Հիշենք, որ Աբամելիքները ծագել էին հոգևորականների տոհմից, իսկ հայ լուսավորչական եկեղեցու, ինչպես նաև ուղղափառ եկեղեցու ավանդույթի համաձայն հոգևորականները ազգանուն չպետք է կրեին: Սա՝ առաջին: Երկրորդ, Աննայի հայրը փաստաթղթերում գրվում էր «Սիմեոն Օհանյան», այսինքն Իվանի որդի՝ Իվանով: Իշխանական արտոքս սասնալույժ նրանք, ըստ երևույթին, գերազասել են Աբամելիք ազգանունը կերել:

Այգպիտով, Բագրատյանիների տոհմի ավագ, թագավորական ճյուղի ներկայացուցիչ արքայազն Դավիդ Գեորգիևիչը ամուսնացած է եղել Երեսն Սեմյոնովնա Աբամելիքի, իսկ Բագրատյանիների մյուս ճյուղի ներկայացուցիչը՝ իշխան Ռոման Իվանովիչը, Աննա Սեմյոնովնա Աբամելիքի հետ:

Աբամելիք կորարները՝ Իվանը, Դավիդը, Ջաբարիան, Գեորգին, Ալեքսանդրը և Պետրոսը, ընդունվել էին «սուսական ծառայություն»¹⁰, ընտրելով զինվորական ասպարեղը: Վեց կորարյաններից առավել հայտնի էին ավագ կորարները՝ Իվանը և Դավիդը:

Իվան Աբամելիքը (1768—1828) «ծառայել էր որպես զինապահանսանների պետ Կիևում և Պետերբուրգում... Բեռլին էր այցելել ռուսմասերկու ինդանտների ձևումը»¹¹: Նա մահացել է 1828 թվականին, ունենալով լեյք-գլավորդայի հրետանու զենեակաւ-մայորի կոչում¹²:

Ավանավոր մարտական սպա էր նաև Դավիդ Աբամելիքը (1774—1833), որի արխիվում պահպանված ծառայության ցու-

ցակը վկայում է նրա մասնակցությունը Նապոլեոնի դեմ Ռուսաստանի վարած բազմաթիվ ռազմական կամպանիաներին և ամենահայտնի ճակատամարտերին: 1812 թվականի Հայրենական պատերազմում Գ. Ս. Աբամելիքը լեյք-գլավորդայի հուսարական զեղի հրամանատարն էր: Այդ պատերազմի զործում մասնակիցներ են եղել նաև Լազարյանները: Մ. Գ. Ներսիսյանը նշում է, որ պատերազմում հատկապես աչքի ընկան «կորարներ Իվան և Աբանելի Իովանովիչը (եկիմովիչը— Ա. Բ.) Լազարյանները... կրիստոֆոր և Լազար Եկիմովիչ Լազարյանները»¹³:

Արխիվային աղբյուրները և հրապարակումները համոզել կերպով վկայում են, որ հայ վերարենակիներն իրենց նոր հայրենիքի վերաբերվում էին որպես նրա հավատարիմ զավակներ: Նրանք «եղբայրացված ու աստիճաններ որսալու» եկած արկածախնդիրներ էին, որպիսիք փոքր թիվ էին կազմում Ռուսաստանում ապրող օտարերկրացիների մեջ:

1812 թվականի հայրենական պատերազմում հայ վերարենակիները զրևտրեցին խոր Հայրենասիրություն, իսկ զենեակներն ու բարձրատեխնիկ սպաները՝ Աբամելիքները, Աբգովյանները, Ախարամովը¹⁴, Լազարյանները, Մեխերիզը, Խաստատովը և ուրիշներ՝ հռչակվեցին:

Ռուսաստանում դանվոր ազդեցիկ հայ և վրացական բնույթիները սերտ կապեր էին պահպանում միմյանց հետ: Անգրերկովկասյան ժողովուրդների ընդհանուր քաղաքական նպատակները և պատմական ճակատադիրը նպաստում էին այդ մերձեցմանը: Անգրերկովկասում ընդհանուր թշնամու դեմ հայ-վրացական զաչեքի բաղձերու համար լուսնանես Լազարյանը դեռևս XVIII դարի 60-ական թվականներին նամակագրություն էր հաստատել վրացական Հերակլ II թագավորի հետ: Հետագրիք է նշել, որ Աբամետներ Ռուսաստանին միանալուց հետո էլ Լազարյանները սերտ կապեր պահպանեցին վրացական բնույթիներին հետ: Մասնավորապես, Լազարյանների արխիվում պահպանվել է XIX

⁹ ԱՊԳԱ, ֆ. 1252, գ. 689.

¹⁰ ԱՊԳԱ, ֆ. 1252, ց. 1, գ. 21, թ. 4 ր.

¹¹ С. Г. Арешин. Армянская печать и царская цензура. Ер., 1957, с. 26.

¹² Թաղված է Սեմյոն Հայկական զերեմանատանը: Ի. Ս. Աբամելիքի մահարձանի փոխադրված է կնիքորդի բաղաբային բանդակագործության թանգարանը (Լավրյայի Ավետիսյան հանրատարար):

¹³ М. Исраилян. Из истории русско-армянских отношений, с. 133, 134.

¹⁴ Գլխորդի Իվանովիչ Ախարամովը (1792—1837) մասնակցել է Սոմախի, Բորդինյի, Տարտիսի և Մալոյարուսկեցի ճակատամարտերին: Նա հայտնի է որպես 1812 թվականի հայրենական պատերազմի առաջին պատմաբան:

դարի 10-ական թվականներին վերաբերող եամակազմությունը Անդրոնիկությունների (Անդրոնիկաշվիխի) հաստնի վրացական տոհմի հետ:

Այնչյալ դարի սկզբին Մոսկվայում ստեղծվեց մի մասնավոր ուսումնական հաստատություն, որը նշանակալի դեր խաղաց հայրենական արևելագիտության, հայկական մշակույթի զարգացման գործում: Լազարյանների նախաձեռնությամբ և նրանց միջոցներով հիմնադրված Արևելյան լեզուների ճեմարանը իրենով մարմնավորում էր ուսու-հայկական մշակութային և գիտական կապերի մի օրինակ, եղավ ուսու և արեմտակիրուպական առաջավոր մշակույթի և հասարակական մտքի փոխանցողը: Ճեմարանը իր լուսման մուտքից ուսու ընթերցողին կովկասի, Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների պատմությանն ու մշակույթին ծանոթացնելու գործում: «Շամառոտ ակնարկ ուսումնական մշակույթի պատմության» հնագույն ժամանակներից մինչև 1917 թվականը» գրքի հեղինակները Մոսկվայի առավել նշանակալի բարձրագույն ուսումնական հաստատությունների թվին են դասում նաև Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը¹⁶:

Այդպիսով, Լազարյանների տոհմը հաստատուպես մտել է XVIII դարի երկրորդ կեսի— XIX դարի սկզբի հայ ժողովրդի և ուսու-հայկական հարաբերությունների պատմության մեջ, իսկ նրանց ստեղծած ճեմարանը՝ մշակույթի և հայրենական գիտության պատմության մեջ: Ջարմանալի շէ, որ Լազարյանների տոհմի հասարակական-քաղաքական, մշակութային և սոցիալական գործունեությունը դիտական հետադադարությունների առարկա է եղել, որոնցում լայնորեն օգտագործվել են Լազարյանների և Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի ընտանիական արխիվները: Լազարյանների արխիվը րազմահաղար գործեր է պարունակում և դտնվում է մեր երկրի առբեր քաղաքների՝ Մոսկվայում, Լենինգրադում, Երևանում, Պիրմում և այլուր:

Այստեղ աեղին է բացատրել, թե ինչու Լազարյանների, Աբամիխների և Մոսկվայի Լազարյան ճեմարանի արխիվները սփռված են երկրի տարբեր քաղաքներում: Ճեմարանի վերաբերող նյութերը առավել լրիվ ներկայացված են Մոսկվայի

պետական պատմական արխիվում (նախկինում կոչվում էր Մոսկվայի մարզային պետական պատմական արխիվ), որտեղ դրանք առանձնացված են հասուկ ֆոնդում: Ճեմարանի վերաբերյալ նյութերը գտնվում են Լենինգրադում այն կապակցությամբ, որ ճեմարանի հոգաբարձուները և պատվավոր հոգաբարձուները Լազարյանները, Աբամիխ-Լազարյանները, ինչպես նաև այդ ուսումնական հաստատության գլխավոր պետերը ապրում էին Պետերբուրգում և լուրջ հարցերը նրանք էին վճռում:

Ինչ վերաբերում է Հայաստանի արխիվային ֆոնդերին, ապա նրանցից մեկը, պամասնականորեն այն անվաններ էջմիածնի (հայ լուսավորչական եկեղեցու զլխավորի նստավայրի անունով), առաջացել է աստիճանաբար՝ կաթողիկոսության հետ ունեցած գրագրությունից: Մյուս ֆոնդում, որի պատմությունը շարադրված է Մ. Մխիթարյանի «Լազարյանների արխիվը Մատենադարանում»¹⁶ հանրամատնալից հոդվածում, արտացոլված են այն իրադարձությունները, որոնք հիմնականում կապված են ճեմարանի XIX դարի առաջին կեսի պատմության հետ:

Ինչպես գրում է Մ. Մխիթարյանը, 1929 թվականին Լազարյան ճեմարանի գրադարանը և այնտեղ պահպանվող արխիվային ֆոնդերը սեղավորսխվել են Երևան և կենտրոնացվել Երևանի համալսարանում և Մյասնիկյանի¹⁷ անվան պետական հանրային գրադարանում: Լազարյանների արխիվի այդ մասը 1956 թվականին անցել է Մատենադարանի ֆոնդերին: Իհարկե, տարբեր քաղաքների արխիվային նյութերը ինչ-որ շափով կրկնում են մեկը մյուսին, բայց ճեմարանի Մոսկվայում գտնվելը կանխորոշել է նրա ֆոնդերի համակենտրոնացումը մայրաքաղաքում:

Մոսկվայում՝ հին ակտերի վիենտրոնական պետական արխիվում, և Լենինգրադում՝ կենտրոնական պետական պատմական արխիվում, առանձնացված են Աբամիխ-Լազարյանների ֆոնդերը, որոնք ընտանիական ժամանակագրությունների շրջանակներից դուրս գտնվող շատ նյութեր են պարունակում:

Լազարյանների Պերմի արխիվում պահպանվում են նյութեր, որոնք առաջին հերթին վերաբերում են Լազարյանների լեռնային գործարաններին: Հայտնի է, որ XVIII դարի 70-ական թվական-

¹⁶ «Բանբեր Մատենադարանի», Եր., 1960, № 5, էջ 245—268:

¹⁷ Ա. Յ. Մյասնիկյան (Մյասնիկով, 1888—1925)— ակնավոր պետական և կուսակցական գործիչ: Մտերի է Լազարյան ճեմարանի գիմնադրական դասարաններում:

¹⁶ Краткий очерк истории русской культуры с древнейших времен до 1917 года. II., 1967, с. 342.

ներկ սկզբից այս ստճիք լեւանային գործարաններ և հանքարաններ ունեն Պերմի նահանգում:

Պերմի նրանց արխիվին ունի պահելի բան երեք հազար գործ: Այդ ֆոնդերի արխիվային աղբյուրները լույս են սփռում ո՛չ միայն Արեւելյան չեղունքի ճեմարանի պատմության, XIX դարում—XX դարի սկզբին Մոսկվայում արեւելագիտության պատմության վրա: Նրանք տվյալներ են պարունակում նաև Անդրդուրկասում և զբաղի երկրներում Ռուսաստանի վարած քաղաքակալապետ, ռուս-հայկական հարաբերությունների պատմության և հայկական մշակույթի վերաբերյալ, շենց դրա համար էլ այդ արխիվային ֆոնդերից օգտվել են Հայաստանի շատ գիտնականներ և հայագետներ: Նրանց էլ պատկանում XVIII և XIX դարերի պատմության և մշակույթի պատմության վերաբերյալ բազմաթիվ նոր փաստեր գիտական շրջանառության մեջ ղեկելու ծառայությունը: Այս արխիվներում կարելի է գտնել փաստաթղթեր, այդ թվում բնագրեր, որոնք տեղեկություններ են պարունակում հայ հասարակական գործիչների և գիտնականների՝ Հովհաննես Լազարյանի, Հովսեփ Արզուսյանի, Մ. Էմիլի, Ս. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի, Ս. Շահալյոզի, Գ. Խալաթյանցի, Գ. Ալվազով-ժուկ և շատ ուրիշների մասին, ինչպես նաև արեւելագետներ՝ Լ. Քուզազովի, Ի. Ն. Խոլմոզովի, Է. Է. Լազարևի, Ֆ. Ս. Կորշի, Վ. Ֆ. Միլլերի, Ա. Ս. Կրիստու, Լ. Ջ. Մանդլյանցի, Ա. Ս. Խալաթյանովի (Խալաթյանի) Վ. Օ. Աթաբեյյանի, Վ. Ա. Գորզևսկու, Վ. Ֆ. Մինոսովու, Յու. Ա. Վեյսկովու, Բ. Վ. Միլլերի մասին: Արխիվում պահպանվել են Վ. Վ. Ստասովի, ահազմիկոս Պ. Կ. Կոլոզյուզի, հայտնի արվեստարան Ա. Վ. Պրախովի, նկարիչ Վ. Գ. Պոլնոյի և ուրիշների նամակները¹⁵:

Արաւելիք-Լազարյանների ֆոնդերում կարելի է հետաքրքիր նյութեր գտնել ճորտ ճարտարապետների փառահեղ կառույցների հեղինակների, տաղանդավոր ճորտ նկարիչների վերաբերյալ: 1845 թվականի նոյեմբերին նամակով Հ. Հ. Լազարյանին էր դիմել զուրա Մաքսիմիլյան Լայտաներեզը. «Պերմից անցնե-

լիս, այցելելով տեղի մայր եկեղեցին,— գրում էր նա,— ես տեսա Ձեր գեղարվեստությանը պատկանող նկարիչներ Կոզակովի և Լոգվյշիկովի նկարած սրբապատկերները, դատելով նրանց նկարչության արժանիքից, ենթադրում եմ, որ այդ նկարիչները օժտված են ներշնչական մեծ շնորհքով և Կայսերական գեղարվեստից ահազմիայում արվեստի մեջ հետադա կատարելազորման հնարավորության ղեկավարում նրանք սկսարդանան լավ նկարիչներ դառնալ:

Այդ իսկ պատճառով էլ, կրելով ակազեմիայի պրեզիդենտի կոչումը, ես կողմնալի Կոզակովին և Լոգվյշիկովին հնարավորություն ընձեռել ընդունվելու ակազեմիա, բայց որքանով որ, ըստ օրենքի, այդ բանը այլ կերպ չի կարելի անել, եթե ոչ՝ միայն այն դեպքում, երբ նրանք անկախ կացության տեր կրկենեն, ուստի և ես գիտում եմ Ձեր գեղարվեստությանը խնդրանքով՝ Կոզակովին և Լոգվյշիկովին ազատություն շնորհել ճորտական կացությունից¹⁶:

Չունդը պահպանել է ոչ միայն ճշտորտի ազատ արձակման գրքերը, Լազարյանի գրադրությունը ղեկավարներից ակազեմիայի հետ՝ նախկին ճորտեր Նիկիտա Միխայլովիչ Կոզակովին և Պյոտր Վասիլիևիչ Լոգվյշիկովին ակազեմիայի աշակերտներ կարգելու, այլև դրանում այն մասին, որ Պերմի և Վեյտիերիերոզի տաճարում նույնպես սրբապատկերներ նկարված են մեր երկու սրբանկարիչներ Կոզակովի և Լոգվյշիկովի ձեռքով¹⁷:

Արխիվներում պահպանվել են Լազարյան ճեմարանի շենքի նախագծերը, պլանները և զծագրերը, նամակներ, որոնք հնարավորություն ընձեռեցին պաշտելու XIX դարի սկզբի ռուսական ճարտարապետության այդ հուշարձանի հեղինակներին անունները, ինչպես նաև Լեհինգրազի Ռուսական թանգարանում գտնվող հիանալի բանդակի նախկինում անհայտ հեղինակի անունը:

Իշխան Աբամելիք-Լազարյանների ընտանիկան նվիրական մատմեցների մեջ խնամքով պահպանվել են ռուս մեծ բանաստեղծների Ա. Ս. Պուշկինի «Շխառնուհի Ա. Գ. Աբամելիքի պլանում» և Մ. Յու. Լերմոնտովի «Վերջին բնակարանատուն» բանաստեղծությունները ինքնազրկերը: Իսկ Աբամելիքների և Լազարյանների արխիվները հնարավորություն տվեցին ոչ միայն ճըշ-

¹⁵ Լազարյան ճեմարանի արխիվում պահպանվել են զիմնագիտաներ՝ եղբայրներ Սիմանիկների անձնական գործերը: Համաձայնաբար, հետաքրքրությունից զուրկ չէ այն, որ նրանցից մեկը 1945 թվականից բանահինդ տարի շարունակ եղել է Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ալեքսեյն (վահճանվել է 1970 թվականին):

¹⁶ ԿՊԱ, ք. 830, ց. 1, գ. 400, ք. 34:
¹⁷ Նույն տեղը, ք. 39:

աելու այդ ինքնագրերի ճակատադիրը, այլև պարզելու, որ Ա. Պուշկինը և Մ. Յու. Լերմոնտովը բաշտամանոթ էին Աբամելիքենբերի և Լազարյանների ընտանիքներին:

Աբխիլալին Ֆոնդերը արժեքավոր աղբյուր են՝ ուսումնասիրելու Մոսկվայում հրատարակվող հայկական «Հյուսիսսովալլ» ամսագրի ստեղծման նախապատմությունը և ղեկավարին սկիզբը, ամսագիր, որը բացառիկ զեր է խաղաղեկ հայ ժողովրդի հասարակական կյանքում և աշխարհարարի ձևավորման գործում:

Լազարյանների արխիվները նույնիսկ են պահպանում մեր երկրի խոշորագույն ազամանդի մասին, որը հայտնի է տարբեր անուններով, այդ թվում՝ «Լազարյան», բայց ավելի հաճախ՝ «Օղով» անունով:

Յուրաքանչյուր խոշոր այմաստի վերաբերյալ հյուսվում են երբեմն միանգամայն դիտավորյալ, դանազան լեզուները: Իսկ ինչ վերաբերում է «Օղով»-ին, ուսաց զրականության մեջ համարյա երկու դար ղեկնում են նրա շուրջը: Բավական է ասել՝ որ այնպիսի մի հեղինակություն, որպեսին ակադեմիկոս Ա. Ե. Ֆերմանն է, ուսաց և օտար լեզուներով այդ պատմական ալմաստի մասին մի բանիկ հատուկ հողովածներ է հրատարակել: Սակայն «Օղով» ազամանի Ռուսաստանում հայտնվելու ճշմարիտ պատմությունը հաջողվեց պարզել սոսկ Լազարյանների արխիվի վավերագրերի հիման վրա:

Լազարյանների արխիվների Աբեբասնդր Աբրեղեիչ Գրիբոյեզովին ուղղակի կամ անուղղակի վերաբերող շատ քիչ տեղեկություններ են պարունակում: Հայտնի է, որ բանաստեղծը այցելել է Լազարյան ճեմարան և ծանոթ է եղել և Լազարյանների ընտանիքի, և Աբրովյանների ընտանիքի ներկայացուցիչների հետ: Բայց այդ փաստերը չէին, որ զրդեղեն հեղինակիս ակնարկ գրելու «բավական միտախի» մասին: Ինչպես և «Օղով» ազամանդի պատմության մեջ, Գրիբոյեզովի ապանության մասին լայն տարածում գտած վարկածները հեղինակիս պատկերացմամբ սոսկ աղավաղում են ճշմարտությունը:

Լազարյանների արխիվների ուսումնասիրումը ծանոթացնում է Ռուսաստանի ականավոր պետական գործիչ Մ. Մ. Սպերանսկու կենսագրության հետաքրքիր մանրամասների հետ:

Միտախի Միխայլովիչ Սպերանսկին (1772—1839) բարեկամ էր Հովհաննես Աղազարի Լազարյանին և բարեկամական հարաբերություններ էր պահպանում Լազարյանների հետ: Ավագ եղ-

բոր մահից հետո Սպերանսկին լիազեց իր կապերը Լազարյանների տան հետ և շարունակում էր զբաղվել նրա եղբայրների՝ Միխես Լազարյանի և Հովակիմ Լազարյանի գործերով: Նա է կազմել հայերի, լեռնագործական կալվածների, այգահանների, Աբրեղեյան լիզուների Լազարյան ճեմարանի շուրջը ծագած հարցերի վերաբերյալ գրությունները²¹, Ի պատիվ Լազարյանների պետք է ասել, որ նրանց բարեկամական հարաբերությունների մեջ էին Սպերանսկու հետ և՛ այն ասորիներին, երբ նա շնորհներ էր վայելում, և՛ նրա ձախողությունները ժամանակ: Բայց խոսքը ասանք Սպերանսկու կենսագրին, «Կոմս Սպերանսկու կյանքը» երկհատորի հեղինակ Մ. Մ. Կորֆին:

Հայտնի է, որ 1812 թվականի մարտին Սպերանսկին ձերբակալվել և արտղվել էր Նիժնի Նովգորոդ՝ ոստիկանության խիստ հուսուլության տակ, իսկ մի փոքր անց նրան փոխադրել էին Պեմո: Երոֆը գրում է. «Նեղհանուր հալածանքների պայմաններում նրա (Սպերանսկու:— Մ. Ք.) մեջ մարդկության հանդեպ ջերմ վրսուսհուլության զգացումները պահպանվեց երկու ընտանիքների՝ վսեվոլոժսկիների և Լազարյանների, աղնվաշնորճ գործողություններով... Լազարյանների ընտանիքը, որը, ինչպես արդեն դիտենք, վաղեմի բարեկամություն ուներ Սպերանսկու հետ, զժբարխուրության մեջ էլ չպավանանեց նրան: Խաչատուր Հովակիմի Լազարյանը, այդ ժամանակ զեռ համարյա պատանի, իր լայնածավալ կալվածների գործերով պալով Պեմո, շատուցեց արտախի կյանքի բուրը հնարուր համարությունների ընձեռել և ջանում էր ուրախություն ու միխիթարություն պատճառել նրան... Այդ շնորհքը, այդ բարեկամությունը, որոնք ցույց էին տրվել նրան՝ նրա կյանքի ամենազգվարին պահերին, Սպերանսկին ընդմիշտ պահպանեց իր սրտի ու հիշողության մեջ, և երբ նրա հորիզոնը կրկին պայծառացավ, նա մշտապես և ջերմորեն հովանավորում էր Լազարյանների հարգույապատիվ ընտանիքին, մինչև իր մահը շարունակելով սերտ կապ պահպանել նրա և հատկապես Խաչատուր Հովակիմովիչի հետ»²²:

1816 թվականով թվագրված նամակներից մեկում Սպերանսկին գրում էր. «Ողորմա՛ձ տեր, Հովակիմ Լազարեիչ, ես չեմ կա-

²¹ Письма графа М. М. Сперанского к Х. И. Лаазареву. СПб., 1864, с. 2.

²² М. М. Корф. Жизнь графа Сперанского. Т. 1, СПб., 1861, с. 82.

րոյ քննել իմ առանձնութիւնը (այդ ժամանակ Սպերանսկին գտնելում էր նիժնի նովորոզի իր կազմում)՝ վերիդպրոխելում:— Ա. Բ.), ըմտուցելով Ձեզ իմ անկեղծ երախտագիտութիւնը իմ ճակատագրում Ձեր կարեկցանքի բոլոր նշանների համար այնպիսի մի ժամանակ, երբ քչերն էին համարձակվում կամ ուզում ընդունել նույնիսկ, որ ծանոթ են ինձ հետ»²:

Համանարտը հեաքքերութիւնից զուրկ չեն այն տեղեկութիւնները, որ արտրում զանվոյ Սպերանսկին իր նամակները Աերքամեր 1-ին ուղարկում էր ոչ թե փոստով, այլ, ինչպես այն ժամանակ էին ստում, պատահած հարմար փոխադրամիջոցով, մասնավորապես, կազարյանների միջոցով:

Ահա թե ինչու կազարյանների արխիվին Ֆոնդերում պահպանվել են Սպերանսկու որոշ նախագծերի ձեռագիր պատճենները, իսկ կազարյաններին գրած նրա նամակները մի ամբողջ գիրք կաղնցին, որը հրատարակվեց ավելի ուշ, 1864 թվականին Պետերբուրգում «Կոմս Մ. Սպերանսկու նամակները եւ. 2. կազարյանին» խորագրով:

Ի զեպ, պէտք է ասել, որ Պետերբուրգ վերադառնալուց հետո Մ. Սպերանսկին ապրում էր կազարյանների կառուցած և մաշրաքաղաքի հայ լուսավորչական եկեղեցիների պահպանման համար արամադրված տներէջ մեկում: Սպերանսկու հարեանութիւնը ապրում էին կազարյանները (այժմ դրանք Նեակի պողոտայի վրա զանվոյ № 42 և № 40 տներն են):

Կազարյանների վիթխարի արխիվի նյութերից մի քանիսն արդէն ծառայել են գրելու «Ճշմարտութիւնը լեզնիքներից հետաքրքիր է» (Մոսկվա, 1975) գիրքը:

Ներկա գիրքը բաղկացած է առանձին ակնարկներից, որոնք իբրդ հետ կապված են նրանով, որ դրանց նյութերը բազմաժամ են կազարյանների և Արամելիք-կազարյանների ընտանեկան, Արեւիլլան լեզունների կազարյան ճեմարանի արխիվներից, նաև նրանով, որ ակնարկների սյուժեները վերաբերում են կազարյաններին հասարակական-քաղաքական և կրօնորոշութեամբական գործունեութեանը: Ավելի վաղ գրված գիրքը վերամշակված ձևով մտել է ներկա հրատարակութեան մեջ:

²³ Письма графа М. М. Сперанского к Х. И. Пазареву, с. 6.

XVIII ԳԱՐԻ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՇԱՐՔԱՆՆԵՐԸ

Պետերբուրգի հայկական փոքրիկ գաղութը, որի առաջացումը վերաբերում է XVIII դարի առաջին տասնամյակին, մեծ դեր է խաղացել ռուսահայկական քաղաքական և մշակութային կապերի ամրապնդման գործում:

2283

Պետերբուրգում հայերի մասին առաջին հիշատակումները վերաբերում են 1708 թվականին, իսկ 1710 թվականին քաղաքում արդեն հիմնադրվել էին «հայկական գրասենյակներ»²:


1712 թվականին Պետերբուրգը հայտարարվեց մաշրաքաղաք: Ռուսաստանի քաղաքական կենտրոնի փոխադրումը Պետերբուրգ ուղեկցվում էր Պյոտր 1-ի ետանդուն միջոցառումներով, որոնք ուղղված էին ռուս և օտարերկրյա վաճառականներին՝ նոր մաշրաքաղաքը գրավել դարձնելու, քաղաքը Բալթիական ծովում կապերը առևտրական նավահանգստի վերածելու նպատակին:

Հայ վաճառականները և հայկական առևտրական տեղեկութիւնները Պետերբուրգը դիտում էին ոչ որպէս սոսկ տարանցիկ կէտ Արեւելի և Արեւմուտքի միջև ընկած Հնաապարհներին: Նրանք հասկանում էին Ռուսաստանի քաղաքական կենտրոնում հայկական գաղութի սեղծելու օրտու: Այդ բանը զիտարցում էին նաև հայկական աղատագրական շարժման գործիչները, ինչի մասին է խոսում, մասնավորապես, Խարչիկ Օրսե՝ զինակից Մի-

¹ Պետերբուրգի հայկական գաղութի առաջնայն մասին տե՛ս Կ. Ն. Գրիգորյանի «Армянская культурная колония в Петербурге в XVIII веке» հոդվածը («Հայկ. ՄՄՀ ԳԱ տեղեկագիր», Երևան, 1953, № 9, էջ 53—74):

² ԿՊՊԱ, ֆ. 880, ք. 6, ց. 108, ք. 12:

³ Խորաչիկ Օրի (1658—1711) — հայկական աղատագրական շարժման գործիչ: 1701 թվականին գաղով Մոսկվա, Պյոտր 1-ից խոստում էր ստացել, որ վերջին կապերի հայ ժողովրդի շարժմանը ընդդէմ Քուրբական և պարսկական լծի:



Գրիգորյանը, վկայակոչելով Պ. Ն. Պետրոսովի «РІСТОРІЯ САНК-Петербурга» գիրքը (էջ 401, էջ 54)⁹, գրում է, որ «Պետերբուրգի առաջին հայ բնակիչներից մեկը՝ Լուկա Շիրվանովը, «բարձրագույն» թույլտվություն ստացավ սեփական տան տարածքում կառուցելու բարձի որ ոչ մեծ հայկական եկեղեցի, հասկանալի է, սեփական իսկ ծախքով»¹⁰։ Բայց կասկած է հարուցում նրա այն սնդումը, որ 40-ական թվականների սկզբին այդ եկեղեցին կասացված է եղել։ Բանն այն է, որ XVIII դարի վերջին լույս տեսնած գրքում այն գեղես չի հիշատակվում¹¹։ Բացի այդ, տեղին է հարց առ, թե արևելք արդյոք 30 արքանց այդ նույն վասիլևյան կղզում ևս մեկ հայկական եկեղեցի կառուցել, եթե մեկն արդեն կար, և, վերջապես, արդյոք շափից ավելի շատ չեն եկեղեցիները 100—150 ծխականների համար։ Ավելի շուտ «սեփական տարածքում» բառերը հարկ է հասկանալ այնպես, որ Լուկա Շիրվանովը եկեղեցական արարողությունների համար հատկացրել է իր տան մի մասը։

Սկզբնապես հայկական գաղութը տեղակայված է եղել, հավանաբար, Վասիլևյան կղզում։ Հայերով բնակեցված հողակտորին պաշտոնապես տիրում էին Լուկա Շիրվանովը, այնուհետև «բենդալան» բաղաբացի, հայ վաճառական և սակերիչ Արտեմի Շերիմանը⁶, որը մանուֆակտուրաների, նավերի տեր էր և համարվում էր հայկական գաղութի զուտը XVIII դարի 40—50-ական թվականներին։ Բայց արդեն 50-ական թվականներին նա տներ ուներ ոչ միայն Վասիլևյան կղզում, այլև Չմեռային պալատի մերձակայքում։

Մեկը մեր արամագրություն տակ ճշգրիտ տեղեկություններ չունենք XVIII դարում Պետերբուրգի հայկական գաղութի թվաքանակի մասին։ Վ. Ն. Գրիգորյանը, վկայակոչելով Արամելիք-Լազարյանների արխիվը, նշում է, որ Պետերբուրգի մշտական բնակիչ հայերի թիվը XVIII դարի 80-ական թվականներին 150 հոգուց չէր անցնում⁷։ Ի. Գ. Գևորգիև ուրիշ թիվ է բերում. «Հայկական ծխական համայնքը ավելի չէ բան 100 մարդ»⁸։ Բայց, չնայած հայկական գաղութի փոքրածիվությանը, նրա անդամները Պետերբուրգում XVIII դարում հայկական եկեղեցիներ են կառուցել։

Ինչպես արդեն ասվեց, Պետերբուրգի հայերի մեջ առավել ազդեցիկ դեմքը Լուկա Շիրվանովն էր, որը և 1740 թվականին թույլտվություն ստացավ կառուցելու հայկական եկեղեցի։ Վ. Ն.

⁴ «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа». с. I. М., 1833, с. 358.

⁵ К. Н. Григорьян. Армянская культурная колония..., с. 54.

⁶ ԶԿՊՍ, ֆ. 1252, ց. 1, մ. 1, գ. 19, ք. 10:

⁷ К. Н. Григорьян. Армянская культурная колония..., с. 55.

⁸ И. Г. Георги. Описание российского императорского столичного города Санкт-Петербурга и достопримечательностей в окрестностях онаго. Т. 2. СПб., 1794, с. 282.

Գրիգորյանը, վկայակոչելով Պ. Ն. Պետրոսովի «РІСТОРІЯ САНК-Петербурга» գիրքը (էջ 401, էջ 54)⁹, գրում է, որ «Պետերբուրգի առաջին հայ բնակիչներից մեկը՝ Լուկա Շիրվանովը, «բարձրագույն» թույլտվություն ստացավ սեփական տան տարածքում կառուցելու բարձի որ ոչ մեծ հայկական եկեղեցի, հասկանալի է, սեփական իսկ ծախքով»¹⁰։ Բայց կասկած է հարուցում նրա այն սնդումը, որ 40-ական թվականների սկզբին այդ եկեղեցին կասացված է եղել։ Բանն այն է, որ XVIII դարի վերջին լույս տեսնած գրքում այն գեղես չի հիշատակվում¹¹։ Բացի այդ, տեղին է հարց առ, թե արևելք արդյոք 30 արքանց այդ նույն վասիլևյան կղզում ևս մեկ հայկական եկեղեցի կառուցել, եթե մեկն արդեն կար, և, վերջապես, արդյոք շափից ավելի շատ չեն եկեղեցիները 100—150 ծխականների համար։ Ավելի շուտ «սեփական տարածքում» բառերը հարկ է հասկանալ այնպես, որ Լուկա Շիրվանովը եկեղեցական արարողությունների համար հատկացրել է իր տան մի մասը։

Կա ևս մեկ ծանրակշիռ փաստարկ, որը մեր վիճաբանությունը հանգեցնում է դուռ տեսական որոնումների, որքանով որ 1741 թվականին պալատական հեղաշրջման հետևանքով զահ բարձրացած ելիզավետա Պետրովնան վերացրեց իր նախորդների մի շարք որոշումները, մասնավորապես, հայկական եկեղեցիների կառուցման վերաբերյալ որոշումը։

«...Հայերը Աստաթանում առաջին բարաշեն եկեղեցին հանուն սուրբ Աստվածածնի վերափոխման կառուցեցին 1705 թվականի սկզբին։ Եվ թեև չթիվ է տասներորդ դարի ընթացքում նույնպես կառավարության թույլտվություն նրանք Մոսկվայում ու Ս. Պետերբուրգում և Ռուսաստանի այլ վայրերում բարաշեն եկեղեցիներ կառուցեցին, բայց երբ ելիզավետա Պետրովնայի գահակալության շրջանում հետեցին արգելները, բացի Աստաթանի և Մոսկվայի բարաշեն եկեղեցիներից, որը կառուցվել էր 1746 թվականին Գրուդինքում, որը... Պրեսնյայում է, մնացյալ եկեղեցիները վերացվեցին»¹²։

Հայկական առաջին ճարտարապետական հուշարձանների կա-

⁹ Լույս է տեսել Մանկո-Պետերբուրգում 1834 թվականին։

¹⁰ К. Н. Григорьян. Армянская культурная колония..., с. 55.

¹¹ И. Г. Георги. Описание российского... столичного города.

¹² ԶԿՊՍ, ֆ. 880, ց. 5, գ. 111, ք. 8:

առյուծը Պետերբուրգում, որնք պահպանվել են մինչև մեր օրերը. նույնպես, ուղղակի կամ անուղղակի, կապված է կաղարյանների բնույթի հետ:



Հովհաննես Ազգարի կաղարյան

XVIII դարի 60-ական թվականների կեսերին կաղարյան եղբայրներից անդրանիկի՝ Հովհաննեսի տեղափոխվելը Պետերբուրգ, նրա եռանդուն գործունեությունը անտիսահյան ասպարեզում և քաղաքակենտրոնյան բնագավառում, լայն կապերը պալատական շրջանների և խոշոր պետական գործիչների հետ, նշան դարձրեցին Պետերբուրգի հայկական գաղութի ամենազդեցիկ անդամը:

Հովհաննես կաղարյան և ուրիշ հայեր «1770 թվականին թուլլովություն խնդրեցին Մոսկվայում և Պետերբուրգում հայկական եկեղեցիներ կառուցելու 1770 թ. մայիսի 2-ին հետևեց կալանքական բարձրագույն հրամանագրեր, ի կատարումն որի Պետերբուրգում... եկեղեցու տեղի համար հողամաս հատկացվեց նևակի պողոտայի վրա և ձեռնամուխ եղան եկեղեցու կառուցմանը... ծխականների կամավոր նվիրատվություններով, որի նշանակալից բաժինը պատկանում էր ոսկեբիշ Հովհաննես կաղարյանին»¹³, նևակի պողոտայի վրայի հայոց եկեղեցին կառուցեց ճարտարապետ Յու. Մ. Ֆելտենը: Նա հիմք էլ կաղարյանների պատվերով մի քանի տներ կառուցեց եկեղեցու մոտակայքում: Մինչև 1778 թվականը հայոց եկեղեցին, ըստ էրևույթին, արդեն գրեթե պատրաստ էր և վերջնականապես կառուցված: Հայտնի է, որ սպառիչ արջուրներում հայկական եկեղեցու կառուցման սարքեր ասրեթվեր է արվում. Ջինովեր իր կաղարյան ձեռնարանի պատմության մեջ բերում է 1780 թվականը, Գրաբարը գտնում է, որ «Ֆելտենը հայոց եկեղեցին կառուցել է 1783—1789 թթ.»¹⁴, Սահայն հայտնի է, որ եկեղեցու օծումը կատարվել է 1780 թվականի փետրվարի 18-ին և աչն կրում է սր. Կատարինևի անունը: Եկեղեցու օծման արարողությանը ներկա է զբաղվել Գ. Ա. Պոսյոմկինը: (Կարելի է ենթադրել, որ եկեղեցու օծմանը նրա ներկայությունը անուղղակի առնչվում ունի պայծառափայլ իշխանին ասպզա հայկական պետության թագավոր հուշակելու հայկական ավազանու նախադժուներին): Ներկայումս շինության վրա հուշատախտակ է փակցված հետևյալ մակարդակով. «XVIII դարի ճարտարապետության հուշարձան: Նախկին հայոց սր. Կատարինև եկեղեցու շինքը: Կառուցվել է 1771—1780 թթ.: ճարտարապետ Յու. Մ. Ֆելտեն: Պահպանվում է պետության կողմից»:

Նևակի պողոտայի վրայի եկեղեցու շինարարության ավարտից տաս արի հետո, «1791 թվականին, Հովհաննես կաղարյանի... նույնպես իր խնամածությամբ կառուցեց մեկ ուրիշ հայկական եկեղեցի Սանկտ-Պետերբուրգում, Վասիլևյան կղզում... որտեղ տեղ հատկացվեց նաև զինվորամաստան համար»¹⁵:

¹³ ՀԱԿՊՁ, ֆ. 1252, գ. 425, թ. 2:

¹⁴ ԿՊՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 19, թ. 30:

¹⁵ Նույն տեղը, գ. 214, թ. 1 ր:

Լազարյանները լայն հայացքների տեր մարդիկ էին և իրանք խորթ չէին հասարակական շահերը: Արևիմալին պարզապես չունեին և հրապարակումներում մենք քանից քան հանդիպում ենք հիշատակաբեկների խոշոր գումարների մասին, որոնք այդ ընտանիքը նվերաբերել է զպրոցների կառուցելու և պահելու համար, մասնակավարժական մտքի և զպրոցական կրթության պատմության հալ հետազոտողները համոզվել կերպով ապացուցում են, որ սուղամտորվող հայկական արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչները Ռուսաստանում XVIII դարի վերջին— X^{IX} դարի սկզբին պաշտպանում էին աշխարհիկ և, որ նվազ կարևոր չէ. իրական կրթությունը՝ մայրենի և օտար լեզուների ուսումնասիրմամբ: «Պետերբուրգից ոչ հետև,— կարդում ենք մենք 1784 թ. փետրվարի 20-ով թվագրված մի արխիվային փաստաթղթում,— ազնվական պարոն Բվան Լազարևիչ Լազարևի ինձամածուխմբ կառուցվել է քաղաքային ժողովրդական դպրոց, որը և բացվեց անցյալ հունվարի 28-ին: Այդ դպրոցը պահելու համար Պ. Լազարևը մտածել է հազար ուրբի և արդեն բավականին թվով աշակերտներ են ընդունվել»¹⁶:

Հայտնի հետազոտող Ս. Գ. Արեշյանը գրում է. «Պետերբուրգի հալ լուսավորչական հոգևոր վարչության գործերում տեղեկություններ էին պահպանվել այն մասին, որ 1800 թվականին Պետերբուրգում հայկական դպրոց է եղել, որ անդամաված է եղել նեակի պողոտայի վրա գտնվող եկեղեցուն պատկանող տներում»¹⁷: Բայց էլ ավելի վաղ, հենց չայտեղ՝ նեակի պողոտայի վրա, «1780 թվականին»¹⁸ հիմնվել և գործել է առաջին հայկական տպարանը Ռուսաստանում»¹⁹: Նրա ստեղծողը եղել է Գրիգոր Խոջամալի Խալզարյանը (Խալզարով)՝ լուսավորության շատագուժ մի մարդ, մի շարք աշխատությունների, այդ թվում 1788 թվականին Պետերբուրգում հրատարակված հայ-ուսերեն բառարանի հեղինակ: Խալզարյանի մահից հետո նրա գործը շարունակել է նրա կինը՝ Կատարինն Ջաքարի Խալզարյանը, առ-

¹⁶ ԿՊՊԱ, ֆ. 550, ց. 5, գ. 19, թ. 51:

¹⁷ С. Г. Арешян. Армянская печать..., с. 18.

¹⁸ Ըստ մեր տրամաբանության տակ եղած արխիվային նյութերի, Խալզարյանը տպարանը հիմնադրել է ոչ թե 1780, այլ 1785 թվականին: Կ. Ն. Գրիգորյանը ապարանի հիմնադրած տարեթիվը համարում է 1783 թվականը: Տե՛ս К. Н. Григорьян. Армянская культурная колония..., с. 60.

¹⁹ С. Г. Арешян. Армянская печать..., с. 16.

ջին հայ կին հրատարակիչը²⁰: Ս. Գ. Արեշյանը ընդգծում է, որ հենց Կատարինն Խալզարյանին էր վիճակված հրատարակելու «Ռուսաստանում առաջին հալ կին-գրող «օրիորդ Կլեոպատրա Սարաֆյանի» աշխատությունը, որտեղ լեզվի առաջին դասագիրքը հայերի համար»²¹: Պետերբուրգի առաջին հայկական տպարանը գոյություն է ունեցել մինչև 1789 թվականը, իսկ հետո փոխադրվել է Գոնի նախիջևան: Անցնելով առաջ, ասենք, որ 1812 թվականին նեակի պողոտայի այդ նույն տներում բացվել է հայկական երկրորդ տպարանը Պետերբուրգում:

ՄՈՍԿՈՎԱՆ ԵՐԿՐՈՒՄ

Հայկական գաղութները Ռուսաստանում՝ Արմավիրում, Աստրախանում, Գրիգորիուպոլում, Կամենեց-Պոդոլսկում, Ղզլարում, Կիևում, Գոնի-Նախիջևանում, Պետերբուրգում, կարևոր դեր են խաղացել հայ ժողովրդի մշակութային կյանքում: Բայց, անկասկած, հատուկ տեղ էր գրավում Մոսկվայի հայկական գաղութը:

Ակադեմիկոս Մ. Ն. Տիխոմիրովը XIV—XV դարերի Ռուսաստանի պատմությանը նվիրված իր վերջին աշխատություններից մեկում մատնանշում էր, որ «Վուլգան ճանապարհով կատարվող միջազգային առևտրում կարևոր տեղ էր պատկանում հայ վաճառականներին: Վաղեմի ժամանակներից նրանք գաղութներ են ունեցել Մեծ Բուլղարիում, Հայքոն արձանագրություններով ստպանաբարեր են գտնվել Մեծ Բուլղարիում և Կազանում: Մոսկվայում նույնպես հայկական գաղութ է եղել»¹: Մոսկվայում հայկական գաղութի հիմնադրումը Մ. Ն. Տիխոմիրովը վերագրում է XV դարի սկզբին: «Կարելի է անկասկած համարել նաև փոքրիշատե մշտական հայկական գաղութի գոյությունը Մոսկվայում, որտեղ բնակվում էին արվարձանում՝ XV դարի սկզբին»²: Բայց դեռ 1390 թվականին, ինչպես վկայում են ուսսական տարեգրությունները, Մոսկվայի արվարձանում էր գտնվում «Արրահամ Հայի» իջևանատունը:

Մոսկվայի մեծ արվարձանի տարածքը XIV—XV դարերում ընդգրկում էր այն շրջանը, որն ավելի ուշ սկսեց կոչվել կիտաւզորդ: Հարաբերությունները հայերի ու ռուսների միջև բարե-

կամական բնույթ էին կրում: «Շարքայիս մարդիկ մեծ աարբերություն չէին զգում ուղղափառության և հայկական դավանանքի միջև, հաճույքով հաղորդակցվում և խնջույքներ էին անում հայերի հետ, նրանց թույլ էին տալիս հաճախել իրենց եկեղեցիները, բարեկամություն էին անում և ամուսնանում էին նրանց հետ»³:

Մեկ ուրիշ աշխատության մեջ Մ. Ն. Տիխոմիրովը գրում է. «Հետաքրքիր է, որ մեկ ուս միտրոպոլիտ իր խրատներում անդրաբար դատապարտում է ամուսնություններն ու քաղորությունները ռուսների ու հայերի միջև: Նշանակում է, նման ամուսնություններ ու քաղորություն եղել են իրականում, այլպես ինչ հարկ կար այդ մասին խոսելու»⁴:

Մոսկվայի հայկական գաղութի պատմության վերաբերյալ մոբրաթիվ հրատարակություններում մեեր չենք կարող ճշգրիտ տեղեկություններ գտնել ուս ժողովրդի հին մայրաքաղաքի հայ աղաքանակությունից իջևանակի, նրանց բնակեցման վայրերի, գաղովոներների մասին: Եստ նյութեր չենք գտնի նաև գաղութի պատմության հետ կապված ճարտարագետական հուշարձանների մասին: Մինչդեռ գաղութի առաջացման և զարգացման պատմությունը վերստեղծելու, նրանում տեղի ունեցած դեմոգրաֆիական և տեղիպական փոփոխությունները ուսումնասիրելու համար կարևոր կազմնորշիկ կարող են ծառայել եկեղեցական ծխամատյանները, որտեղ ազգանուն առ ազգանուն գրանցվում էին ծխբուրդ աճումները, մեթոսության, ամուսնության, մահվան վերաբերյալ ակտերը: Մոլորաբար եկեղեցիներին կից ստեղծվում էին դպրոցներ, սպասարաններ, անկիտոցներ: Եկեղեցական վավերագրերում գրանցվում էին ծխականների մուծումները, դրամական և առարկայական նվիրները, ձեռագրերը, գրքերը, եկեղեցական սպասքը և այլն: Հաճախ հենց եկեղեցին էր հանդես գալիս այն առյանի դերում, որի հետ աշխարհիկ իշխանությունները բանակցություններ էին վարում ամբողջ գաղութի համար ընդհանուր հարցերի շուրջ:

Տաճարական կառույցների տեղադրությունը քաղաքի տարածքում, եկեղեցիների քանակը, նրանց շափերը, կացութունը, ներքին հարդարանքը հրեմն վկայում էին ծխականների բարեկեցու-

¹ М. Н. Тихомиров. Средневековая Россия на международных путях (XIV—XV вв.). М., 1966, с. 105—106.

² М. Н. Тихомиров. Древняя Москва. М., 1947, с. 142.

³ М. Н. Тихомиров. Древняя Москва, с. 143.

⁴ М. Н. Тихомиров. Средневековая Россия... с. 106.

թյան, գաղութի նկատմամբ իշխանությունների ունեցած վերաբերմունքի մասին:

Հավանաբար, ճիշտ կլինի պնդել, որ Տնեց կեղեցական կառույցներն ավելի շատ պետք է պահպանվին աշխարհիկ բնույթի կառույցների համեմատությամբ: Եկեղեցու նկատմամբ ուղեծուծությունները դիմավում էին որպես բոլոր ծխականների, գաղութի ամբողջ համայնքի հետապնդում և անուղղակիորեն ասանում էին հարգալից վերաբերմունքը տիրապետող կրոնի նկատմամբ: Հիշենք, որ նախահեղափոխական օրենսդրությունն ավելի հաճախ գործածում էր դավանանք, քան թե ազգություն տեղմինը (ժառանգողական ցուցանիսներ և հարցաթերթերը չգիտեին ազգություն անբմինը): Այդ հանգամանքը ամենին չէ եղանակում, որ կառավարությունը խոշորոտներ չէր հարուցում այլ դավանանքի եկեղեցիների կառուցման գործում: Կինում էին դիպրեր, երբ կառավարությունը ոչ միայն չէր թուլատրում նոր եկեղեցիների կառուցում, այլև փակում էր նույնիսկ նրանին չված եկեղեցիները: Քաղաքական, տնտեսական շահագրգռություններ, իրավիճակային գործոնները խիստ որոշակիորեն անդրադառնում էին Ռուսաստանի մշտա ժողովուրդների դավանանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա, նույնիսկ նրանց, ովքեր ուղղափառություն էին դավանում (Ուղղափառ Վրաստանի միացումը Ռուսաստանին ուղեկցվեց վրացական եկեղեցու ինքնուրույնության վերացմամբ):

Հայկական ՍՍՀ ԳԿ ակադեմիկոս հանդուցյալ Լ. Ս. Խաչիկյանի իր վերջին հրատարակումներից մեկում պնդում էր, որ Մոսկվայում հայերը գեռես XIV դարի վերջից կեղեցի են ունեցել: Վկայակոչված աշխատության ճեղհակը այդ կապակցությունը տրամաբանորեն արդարացի երրակացություն է անում, որ «Նեոսարար, Մոսկվայում կազմակերպված հայկական գաղութ շտա ավելի վաղ է գոյություն ունեցել, քան ընդունված է կարծել»:

Ինչպես տեսնում ենք, սաճարի առկայության արձանագրումը կարևոր փաստարկ է պնդելու մշտական (Լ. Ս. Խաչիկյանը օգտագործում է «կազմակերպված» տեղմինը) գաղութի գոյություն:

ը, նրա նշանակությունը (քաղաքական կամ տնտեսական), իշխանությունների վերաբերմունքը նրա նկատմամբ և այլն:

Մոսկվայի հայկական գաղութի վերաբերյալ աշխատություններում հետադուրողներն ավելի հաճախ գրում են քաղաքի XVIII դարի 70-ական թվականներին և XIX դարի սկզբին կառուցված հայկական տաճարային շինությունների մասին և համարյա չեն հիշատակում դեռևս XVIII դարի առաջին կեսին հայտնի եկեղեցին: Այդ ճառարապետական հուշարձանը չի վերաբառադրվել Մոսկվայի հայկական գաղութի վերաբերյալ ժամանակակից աշխատությունների էջերում տեղ գտած պատկերների ու լուսանկարների թվում: Խոսքը հայկական սուրբ Ասավածածնի վերափոխման եկեղեցու մասին է, որը որպես տաճարային շինություն էր ճանաչվում ներկա դարում և որը, ինչպես պարզվեց, բնական անսրով լուսանկարվել է 20-ական թվականներին: Այդ եկեղեցին կառուցված էր Պրեսնյայում: Հայտնի է, որ Մոսկվայի սալ մասում գեռես XVII դարի վերջին, Վրաստանի և Ռուսաստանի միջև դիվանագիտական և մշակութային կապերի ակտիվացման կապակցությամբ, վրացական գաղութ էր առաջացել, որը նշանակալի շարժում աճել էր XVIII դարի առաջին երեսնամյակին, երբ Քարթլիի թագավոր Վախթանգ VII-ը, հարկադրված շինելով թողնել Վրաստանի սահմանները, հաստատվեց Մոսկվայում, որտեղ նրան և ուղեկցող անձանց (որոնց թվում քիչ էջներ լիպյին) Պրեսնյայի շրջանում հողամաս տրամադրվեց:

1731 թվականին Վախթանգը 16 սածեն լայնությամբ և 25 սածեն երկարությամբ (մոտավորապես 34 մ x 53 մ վրամ 1860 է. մ.) հողամաս տրամադրեց հայկական եկեղեցի և նրան կից գինեղմանատան կառուցելու համար: Այստեղ էլ, Պրեսնյայում, շահ 6 թ. կառուցվեց հայոց սուրբ Ասավածածնի վերափոխման եկեղեցին, իսկ Բուշայա Գրուբյանկայա փողոցի վրա՝ հայկական եկեղեցու տեղը (տներից սաացվող վարձավճարը դնում էր հոգալու եկեղեցական կարիները):

Այդ ոչ մեծ շինությունն ավելի շուտ հիշեցնում է սովորական քարաշեն բնակելի տուն և միայն կառույցը պատկող աշարտիկին էր վկայում նրա գործաճանկան կողումը:

Ինչ վերաբերում է ներքին հարդարանքին, ապա այն շատ

⁵ Լ. Ս. Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ուղիներում, «Բաների մասնագրանեթ», Մրեսն, 1980, № 3, էջ 106:

⁶ Նույն տեղը:

ավելի հարուստ ու գեղեցիկ տեսք ունեն, որի մասին է խոսում էկեղեցու ներսի մասի պահպանված լուսանկարը:

Քոլոր պարագաներում, այդ էկեղեցական կառույցը Պրենս-նյայում Մոսկվայի հայկական դադուբի էարատարապետական հուշարձաններից ամենահինն է, որը պահպանվել է գեթ լուսանկարներում:

Հայկական էկեղեցուց ոչ հեռու, մի քանի տարի ավելի ուշ, 1760 թվականին, վրաց արքայազն Գեորգի Վաթխեղովիչը կառուցեց վրացական սբ. Գեորգ եկեղեցին, որի անունով էլ հրապարակել, որտեղ կառուցված էր այդ տաճարը, սկսեց կոչվել Գեորգիեյան⁸:

Այդ էկեղեցիների կառուցման պատմությունը ևս մեկ վկայություն է առաջ, վրաց և հայ ժողովուրդների պատմականորեն ստեղծված բարեկամական հարաբերությունների:

Այդ նույն հողատնտեսում, հայկական էկեղեցու մոտ, գտնվում էր գերեզմանատունը:

Անցյալ դարի կեսերին վերաբերող «Տեղեկություններ Մոսկվայի հայոց էկեղեցիների հիմնադրման մասին» արխիվային վավերագրում պահպանվել է Պրենսնյայի հայոց դերեզմանատան համառոտ նկարագրությունը. Նիկողեզու ետևում հանդատարան էր, ծառայատեղի, շրջապատված փայտյա խուլ ցանկատարով, «բնի առջևի մասից բավականին գեղեցիկ դարպաս էր դրված և վանդակավոր ցանկապատ»⁹:

Այդպիսով, արդեն XVIII դարի առաջին կեսին Մոսկվայի հայ բնակիչները իրավունք էին ստացել այստեղ էկեղեցի կառուցելու, որը խոսում էր ոչ միայն գաղութի թվաքանակի և նրա արևմտաական ազդեցության աճի մասին, այլև, առաջին հերթին, նրա աճած բազմազան նշանակությունից մասին:

Հայկական նրբանցրում հայոց սբ. Խաչ էկեղեցու կառուցումից հետո Պրենսնյայի հայոց փոքրիկ էկեղեցին կորցրեց իր նախկին նշանակությունը. Բայց XVIII դարի առաջին կեսին կառուցված հայկական գաղութի այդ ձարտարապետական հուշարձանն և նրան կից գերեզմանատան մասին նշանակալից թվով մոսկովյան լրագրերը հիշատակեցին 1912 թ. հունիսին, երբ Գեորգ V կաթոլիկոսը այցելեց «հայոց սբ. Աստվածածնի վերափոխման հինա-

վուրց էկեղեցին, որը գտնվում է Գրուզիների Գեորգիեյան հրապարակի վրա, և նրան կից հին գերեզմանատունը»¹⁰:

Մովետահայ պատմաբանները, վկայաբույժներով հրապարակումներն ու արխիվային փաստաթղթերը, գտնում են, որ «XVII դարի էկեղեցու կեսից և XVIII դարի սկզբից սկսեցին Ռուսաստան դալ ոչ միայն հայ վաճառականներն ու հոգևորականության ներկայացուցիչները, այլև հայ արհեստավորներն ու առաջին մասնաֆակտորատները»¹¹:

Ռուսական կառավարությունը աշակեցում և խրախուսում էր հայկական առևտրական ընկերություններին, նրանց թույլատրում էր կառուցել, օրինակ Աստրախանում, ապրանքատար նավեր և բացել ֆարրիկաներ: XVII դարում Մոսկվայում մետաքսիտարատեր հայերի մեջ առավել հայտնի էր «Մոսկվայում մետաքսի ֆարրիկայի տեր հայազգի Զաքար Ծերիմանը Սպահանից»¹²:

XVIII դարում առաջակական հարաբերություններում որոշիչ դորձն են դառնում արգեն ու թե անտեսական կապերը, այլ պայմարը Հայաստանի ազատագրություն համար, հայերի շարժումը Ռուսաստանին միանալու համար: Ազատագրական պայքարը առաջ բուշեց ափանավոր հոտարարական ու ըստարական գործիչների: Մենք արգեն ասել ենք, որ նրանց մեջ առավել նկատելի էր Հովհաննես Լազարյանին և Հովսեփ Արզումանյանին: Լազարյանները Ռուսաստան էին տեղափոխվել Նոր-Ջուրայից¹³: XVIII դարի առաջին կեսին և հաստատվել էին Աստրախանում, որտեղ վաղուց ի վեր հայկական գաղութը զոյություն ունեն, իսկ մի փոքր ուշ տեղափոխվել էին Մոսկվա: 1758 թվականին Աղա-դար Նազարի Լազարյանը Մոսկվայում առև և հողատնտես էլ գնում ամենաբարձր ֆարրիկայի տեր Զաքար Իգնատի Ծերիմանից¹⁴: Լա-

¹⁰ Газета «Раннее утро», 16 июня 1912 г.

¹¹ П. Т. Арутюнян. Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века. М., 1954, с. 185.

¹² Собрание актов... ч. 1, с. 21.

¹³ Նոր Ջուրայի հիմնադրվել է Սպահանի մոտ XVII դարում, հին Ջուրայից գաղթած հայերի կողմից: Նոր Ջուրայի ևս ամենաբարձր բուրժուական ակնառու զոր է խաղացել միջազգային առևտրում: Ավելի մանրամասն այդ մասին տես В. А. Байбуртян. Армянская колония Новой Джульи в XVII веке. Ереван, 1969.

¹⁴ ԳԳՊԱ, ֆ. 880, գ. 173, թ. 2:

Վերահիշելու Շահինյանյանը (Ծերիման) և Պետրոսյանը ու Մոսկվայում

⁸ Пмена московских улиц. М., 1975, с. 118, 501.
⁹ ԿԳՊԱ, ֆ. 880, ց. 3, գ. 111, թ. 6, 6ր:

պարսկանների նոր տիրույթները¹⁵ գտնվում էին Մյաննիդիայա փո-
ղոցի և Մարոսելիայի միջև, քաղաքի այն մասում, որտեղ զինու
Պետրոս I-ի օրոք օտարերկրացիներին թույլատրված էր բնակվել և
աներ ձեռք բերել: Այդ շրջանում հող և տներ ունեին ուսս մե-
ծատուններ Սարդյանյանները, Կուրախիները, Ֆինապուցները,
Նշանավոր Ա. Գ. Մենշիկովը: Տեկերաֆինի նրբանցքում մինչև
մեր օրերը պահպանվել է նշանավոր «Մենշիկովի աշտարակը»:
Մասկվայի այն շրջանը, որտեղ գերազանցապես հայերն էին բնա-
կույթյուն հաստատում, կոչվում էր Ստոլպով նրբանցք, ըստ մո-
սկավաքում գտնվող «սբ. հրաշագործ Նիկողայոսի ուղղափառ
եկեղեցու, որը Ստոլպում է»¹⁶:

XVII դարում նրբանցքը «կոչվում էր Արտամոնովյան՝ ըստ
աշխարհ գտնվող խոշոր պետական գործիչ, ուսսական թատերոնի
հիմնադրներից մեկի, բույարին Արտամոն Մատվեևի տիրույ-
թի»¹⁷: Աքամելիք-Լազարյանների արխիվում պահպանվել է XIX
դարի սկզբի այժմյան Հայկական նրբանցքի մի մտտի նկարա-
զրույթյունը: Այստեղ եղել է «նշանավոր բույարին... Մատվեևի
հեկա թարաշեն տունը...», որի աճյունը հանգում է պրն. Լազարևի

Ֆարրիկաների ու հողամասերի տեր Շամհրանյանները մի քանակների ներկա-
յացուցիչներն էին: Այդ բնասերը նոր Պաշտում գլխավորում էր հայ կա-
թոլիկ համայնքը: 1699 թ. ավարտական կաշուր նրան կոստի տիրառն շնորհեց
(տե՛ս V. A. Байбурган. Армянская колония Новой Джульфы, с. 94—95):

XVIII դարի սառյույն կնիս արխիվային վավագրերում հիշատակվում են
Մոսկվայում օտարերկրացի, հայ Իդնատի Ֆրանցե Շերիմանը և նրա որդի Զա-
բար Իդնատի Շերիմանը (ՀԱԳՊՍ, ֆ. 1252, ց. 1, գ. 271, թ. 1բ): «Իդնատի
Ֆրանցե Շերիմանը (օտարերկրացի, հայ), մետաքսի ֆարրիկայի փայա-
տները այդ հողերը դեռ էր տարբեր մարզականցից՝ Վոյնչկովից, իշխան
Յուսուպովից և ուրիշներից, իսկ արդեն Իդնատի Շերիմանի որդաց՝ «մետաքսի
ֆարրիկայի տեր Զաբար Իդնատի Շերիմանից Ստոլպում Նիկողայոսի Պաշա-
գործի ծխում բակը բարև և փայտե կառույցներով 1758 թ. մայիսի 18-ին գնեց
Աղայար նազարի Լազարյանը» (նույն տեղը):

¹⁵ Ավելի ուշ ևս Լազարյանները հողը ու տներ են գնել այդ նույն շրբ-
չանում: Այսպես, Հովհաննես Աղայարի Լազարյանը տուն է գնել Մեշչերսկի
կղաղներից: 1828 թվականին խորհրդական Հովհաննես Հովհանի Լազար-
յանը Մ. Ա. Սայտիկովայից մեզը է բերել քարանի տուն և հողամաս, որը
հարում էր Վենեդիկտեովի տանը (ՀԱԳՊՍ, ֆ. 1252, ց. 1, գ. 284):

¹⁶ XVII դարի աշխատանքներում նրբանցքը համար անվանվում էր և՛
Նիկոլայի, և՛ Ստոլպովայի ըստ սբ. Նիկողայոսի և Սիմեոն Ստոլպովի եկե-
ղեցու անվան (տե՛ս Указатель улиц и домов старичного города Москвы,
էջ 37):

¹⁷ Имена московских улиц. М., 1975, с. 33.

տան ղիմայ՝ գերեղեղանատունը... քարաշեն դամբարանով», որը
վերջերս կառուցեց այս բույարին Մատվեևի թոռնորդի կոմս Նի-
կոլայ Պետրովիչ Ռուսյանցը»¹⁸: (Բույարին Մատվեևի տապանա-
բար-հուշարձանը չի պահպանվել: Ռուսյանցիների մասին հիշեց-
նում է Հայկական նրբանցքի և Բոզդան խմինիցու փողոցի ան-
կույտի դեղեղեղ առանձնատունը:)

Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ նախկինում
գրեթե մեկ ամբողջ գաղ, Ռուսաստանում Եասհրմանյան տոհմի
գրաված դիրքերը անցնում են Լազարյանների տանը:

Աղազար նազարի Լազարյանի ավագ որդի՝ Հովհաննեսը, որը
66-ական թվականների կեսերին տեղափոխվեց Պետերբուրգ: Ինչ-
պես արդեն հիշատակվել է, հայկական եկեղեցու կառուցումը
հանձնարարում է մայրաքաղաքում հայտնի ճարտարապետ Յու-
Մ. Ֆելետինին¹⁹:

Ֆելետինի նախագծով 1779 թվականին Մոսկվայում կառուց-
վում է հայոց եկեղեցի ռազնվական իսլամատուր Աղազարի (չբբ
եղբայրներից երբորդը— Մ. Բ.) Լազարյանի մարբով: սբ. հրա-
շագործ Նիկողայոսի ուղղափառ եկեղեցու մոտ»²⁰, թեև նրա կա-
ռուցման թույլտվությունը ստացվել էր դեռևս 1770 թվականին:
Ուսումնասիրելով հայտնի պատմագիր Պ. Վ. Սիտնին, 1781 թվա-
կանում մոսկվացի հայտնի պատմագիր Պ. Վ. Սիտնին, 1781 թվա-
կանին հայերին թույլատրվում է Ստոլպով նրբանցքում կառու-
ցել «երևից եկեղեցին: Այդ ժամանակից էլ նրբանցքը սկսեց կոչ-
վել «Հայկական»²¹:

Բայց այդ եկեղեցին չի եղել հայկական առաջին տաճարային

¹⁸ ԿՊՊՍ, ֆ. 880, ց. 5, գ. 111, թ. 3:

¹⁹ Յուրի Մատվեևի (Գեորգ Ֆրեդրիկ) Ֆելետին (1730—1801), պրոֆե-
սոր, արքունի ճարտարապետ, իսկ ավելի ուշ՝ Գեղարվեստից ակադեմիայի
դիրեկտոր, շատ տներ ու եկեղեցիներ է կառուցել Պետերբուրգում և Մոսկվա-
յի դիրեկտոր, շատ տներ ու եկեղեցիներ է կառուցել Պետերբուրգում և Մոսկվա-
յում: Արտասահմանից վերադառնալուց հետո (որտեղ նա ճարտարապետություն
էր ուսումնասիրել) Ֆելետինը աշխատել է Ռաստրիլնի մոտ: Ֆելետին իրեն
գրանցում էր միայն որպես լավ ճարտարապետ (նա կառուցել է ուղղափառ-
գրանցողի ու Միայն որպես լավ ճարտարապետ (նա կառուցել է ուղղափառ-
գրանցողի, հայկական եկեղեցիներ), այլև որպես կիրառական արվեստի
մասնագետ (նրա նկարներով ցանկապատեր էին մուսուլ, մասնավորապես՝
Ամառային այգու նշանավոր ցանկապատեր, ինչպես և Նախագործը Ֆելետինը
հետազոտվել տանը: Մատվեևի և ունեցի Պետրոս I-ի հուշարձանին Պետրոս I-ի
հեծելայ արձանի ստեղծի նախագծի համար 1770 թվականի հունվարի 23-ին կաշ-
տեղադրված Գեղարվեստից ակադեմիային նա ստացել է պրոֆեսորի կոչում:

²⁰ ՀԱԳՊՍ, ֆ. 1252, ց. 1, գ. 271, թ. 1:

²¹ П. В. Ситин. Из истории московских улиц. М., 1958.

կառույցը Մոսկվայում: Մի քանի տասնամյակ դրանից առաջ Պրեհնյալում, Վրացական սլոբոդայի շրջանում հայերը կառուցել էին եկեղեցի: Հայտնի է, որ Պրեհնյալում զեռուս XVII դարի վերջին, Վրաստանի և Մոսկվայի դիվանագիտական և մշակութային կապերի ակտիվացման կապակցությամբ, վրացական գաղութ էր առաջացել, որը նշանակալի չափով աճեց XVIII դարի առաջին երեսնամյակում, երբ այստեղ վերաբնակվեց Քարթլիի գահից դրվված Վախիանյ VI թագադրը, մոտադրապես մեկ ու կես հազար եկվորներով Վրաստանից: Թագավորի շքախմբում կալին նշանակալի թվով հայեր:

1731 թվականին Վախիանյ VI-ը նրանց Պրեհնյալում հողամաս արամադրեց հայոց եկեղեցի կառուցելու և նրան կից գերեզմանատան համար²²: Հենց այստեղ էլ 1746 թվականին կառուցվեց հայոց սուրբ Աստվածածին եկեղեցին²³, իսկ Բոլշայա Գրեպինսկայա փողոցի վրա կառուցվեցին հայոց եկեղեցու տնէրը²⁴: Այստեղից ոչ հեռու մի քանի տարի անց՝ 1760 թ. վրաց սարալան Գեորգի Վախիանյովիչը²⁵ կառուցեց սր. Գեորգ զորավարի եկեղեցին, որի անունով էլ այն հրապարակեց, որտեղ կառուցվել էր այդ եկեղեցին, սկսեց կոչվել Գեորգիելյան: Այդպիսով, Ստոլպով (Հայկական) նրբանցքի եկեղեցին հայկական երկրորդ առճարն էր Մոսկվայում:

Մայկական երբորդ եկեղեցին կառուցել են «Վազանկայի դաշտում... երկու եղբայրների՝ Մինաս և Հովակիմ Աղազարի կազարյանների ծախքով... 1815 թվականի հունիսի 1-ին, նախաբև Մոսկվա մայրաքաղաքում»²⁶ (Պրեհնյալի հայկական եկեղեցուց զերկզմանատան եկեղեցի փոխարզվեցին այնտեղ թաղված Աղազարյանների ազգականների աճյունները):

Եկեղեցին պահպանվել է մինչև մեր օրերը: Ծարտարապետական առումով լինելով ոչ շատ հետաքրքիր, այն հիշեցնում է XIX դարի առաջին քառորդի ճարտարապետական ուղղությունների մասին: (Սովետական դիտանկան Լ. Ս. Խաչիկյանը գանում է, «որ հայերը Մոսկվայում եկեղեցի ունեցել են զեռուս XIV

դարի վերջերից»): Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհներին», «Բանբեր մատենագրաանի», Եր., 1980, № 3, էջ 106):

Վերադառնալով Հայկական նրբանցքի եկեղեցու պատմությանը, հարկ է նշել, որ XIX դարի 20-ական թվականների սկզբին այդ եկեղեցին վերակառուցվել է ճորտ ճարտարապետ Ի. Մ. Պոդլյանի ղեկավարությամբ, իսկ նրա քանգակները արարել է նշախավոր Ի. Պ. Վիտալին²⁷:

Ուշադրություն է գրավում այսպիսի մի փաստ: Մոսկվայի և Պետերբուրգի հայկական եկեղեցիները «պիրագետող եկեղեցու նման շուռեին զանգակներ և զանգակատներ»²⁸: Եվ միայն մի քանի տասնամյակ անց այն քանից հետո, երբ եկեղեցիները կառուցվել էին, օգադտնի խորհրդական իտալիացի ճարտարապետ Լազարյանը 1864 թ. հոկտեմբերի 14-ին²⁹ դիմեց ներքին գործերի մրինիստրին՝ խնդրելով «միջնորդել ստանալու բարձրագույն թույլտվություն հայկական եկեղեցիներում ժամերգության ժամանակ զանգակներ օգտագործելու համար»³⁰: Թույլտվություն ստացվեց հաջող տարին և այդ ժամանակ էլ զանգակներ գնվեցին նաև Պետերբուրգի հայոց եկեղեցու համար և չօգտագործվեցին ժամերգության ժամանակ: 1866 թվականին ճարտարապետ Սոբոլշինիովը «Նառուչ զանգակատն»³¹ կառուցեց Մոսկվայի Հայկական նրբանցքի հայոց եկեղեցուն կից:

Եթե և՛հայայի ավանդույթով Հայկական փողոցը (Հայկական նրբանցքը) Մոսկվայում իր անունը ստացել է այստեղ եկեղեցի կառուցելուց հետո, ապա այն լայն հռչակ շեղբ բերեց շնորհիվ Արևելյան լիդուների ճեմարանի:

²² ԱՄԿԱ, ֆ. 1252, գ. 383.

²³ ԿԳՊԱ, ֆ. 830, ց. 5, գ. 111, Բ. 3.

²⁴ Указатель улиц и домов столичного города Москвы, с. 153.

²⁵ Имена московских улиц, с. 118.

²⁶ А. З. Зинovieв. Исторический очерк Лазаревского института восточных языков. М., 1863, с. 101.

²⁷ ԱՄԿԱ, ֆ. 1252, ց. 1, գ. 363, Բ. 372, 375:

²⁸ ԿԳՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 122, Բ. 2:

²⁹ Նույն տեղը:

³⁰ Նույն տեղը:

³¹ Նույն տեղը:

Մոսկվան հայ ժողովրդի մշակութային կենտրոն

Լազարյան ճեմարանի ստեղծման նախադրյալները և նրա խաղացած դերի նշանակությունը հայերի համար թարնված են հայ ժողովրդի, Ռուսաստանի նրա զաղուկների կյանքի պատմական պայմաններում և Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ ռուսական կառավարության վարած քաղաքականության մեջ:

Ժամանակակից հայ պատմագրությունը միանգամայն արդարացիորեն նշում է, որ «XVIII դարը հատուկ տեղ է գրավում և կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ, մասնավորապես ազատագրական շարժման պատմության մեջ»³², Հենց XVIII դարի սկզբին հայ ազատագրական շարժման մեջ «Տաղթանակեց այն գաղափարախոսությունը, որի համաձայն հայրենիքի փրկությունը ամենից առաջ նրա զավակների անմիջական գործն է»³³, Ազատագրական շարժումն ընդգրկել էր ոչ միայն հայկական հասարակության բոլոր խավերը, սրն ինքնրատինքյան արտակարգ նշանակություն ուներ, այլև պատմական Հայաստանի ամբողջ գուրս գտնվող նրա գաղութները:

Հայ ազատագրական շարժման գործիչները պետական ինքնուրույնության վերականգնման նախադրյալը տեսնում էին հայկական զորքի ստեղծման մեջ: Բայց միանգամայն ակնհայտ է, որ սազմական կողմը միակեր չէ պետականության վերականգնման գործում: Եվ պատահական չէ, որ հենց Հովհաննես Լազարյանը, Հովսեփ Արղուժյանը, Ներսես Աշտարակեցին և ուրիշները եղան մի քանի աշխարհիկ ուսումնական հաստատությունների և տպագրատների ստեղծման նախաձեռնողները: Այդ բանը հարկ է նշել այն պատճառով, որ Ա՝ Հովսեփ Արղուժյանը, և՛ Ներսես Աշտարակեցին բարձր դիրք էին գրավում հայոց եկեղեցական աստիճանակարգում:

Գյուրջները, տպագրատների ստեղծումը՝ լուսավորական գործունեությունը, հարկավոր է դիտել որպես ազգային-ազատական շարժման խզիչներից մեկը:

Հովհաննես Աղազարի Լազարյանը լավ էր հասկանում կրթության նշանակությունը և՛ ազգային-ազատագրական շարժման համար, և՛ հայկական գաղութների կյանքում: Լազարյանների լուսավորական գործունեությունը շատ էր գուրս եկել բարեգործության շրջանակներից, և այն հարկավոր է քննարկել բազմապլանային ձևով:

Ներկայացնելով սաղմնավերվող արդյունաբերական բուրժուազիային, Լազարյանները հիանալի աենում էին կրթության տարածման անհրաժեշտությունը: Իրենց շատ կալվածներում նրանք կառուցել էին դպրոցներ և ճարարագիտական սառնոժվեղեղեխ եկեղեցիներ: Չի կարելի ընշել, որ Լազարյանների քնտեսները, անկախ գրողապատճառներից, օժանդակել է իր մեկ շարք քնդունակ ճորտերի՝ ուսանելու ֆեղարվեստից արհեստներ և արվեստ: Հայ ազնվականությունը Ռուսաստանում և հայ բուրժուազիան, որոնց խորթ չէին հայրենասիրական շահագրգռությունները, սատարում էին լուսավորության տարածմանը, հայ երիտասարդությանը գիտությանն ու մշակույթին հաղորդակից դարձնելուն: Չնայած ցարական Ռուսաստանի պաշտոնական շրջանները ոչ միայն չէին օգնում, այլ, ավելի շուտ, հակադրոծում էին հայկական ուսումնական հաստատությունների ստեղծմանը, բայց և այնպես կրկի րտարեր բազմակենրում՝ Մոսկվայում, Գոնի նախիջևանում, Աստրախանում, Փի՛թխում հիմնադրվեցին հայկական ուսումնարաններ, տպարաններ: Հարկ է ասել, որ հայկական ուսումնական հաստատությունները մասնավոր էին, գլխավորապես ստեղծված բարեգործական միջոցներով, և ոչ մի աջակցություն կառավարությունից չէին ստանում:

Լազարյանների իսկ հաստատած ավանդույթները, Մոսկվայի հայկական ուսումնական հաստատության հիմնադիր ճանաչվում է Հովհաննես Աղազարի Լազարյանը: 1800 թվականի հունվարի 4-ին կազմված կոտակում նա հանձնարարում էր իր ժառանգ և կրտսեր եղբայր Հովակիմ Աղազարի Լազարյանին խնամակալական խորհուրդ մտնել 200 հազար ռուբլի ասիզնացիաներով, որպեսզի օտոկոսներից կաղմվելիք նշանակալի գումարով ժամանակի բնի՛ացրում մի վաշելուշ շնեք կառուցվի հայոց ազգից

³² А. Н. Качатрия. Военно-исторический очерк.— Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного содружества. Ер., 1968, с. 16.

³³ Սույն տեղը, էջ 33:



Հովակիմ Ազգաբի կազարյան

չբավոր երեխաների զաստիարակության և ուսումնառությունը համար»³⁴։

1812 թվականի հայրենական պատերազմի ավարտից անմիջապես հետո Հովակիմ կազարյանը ձեռնամուխ է լինում ուսումնական հաստատության շինարարությանը Մոսկվայում, այն շքրջանում, որը վաղուց ի վեր բնակեցված էր հայերով և որտեղ կազարյանները հողամաս և տուն ունեին։

Պատահականորեն լքել վճռված հայկական ուսումնական

³⁴ Մոսկվա քաղաքի պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՄՔՊՊԱ), ֆ. 213, ց. 1, գ. 1, ք. 145։

հաստատությունը հիմնադրել հենց Մոսկվայում։ Նախ, այնտեղ գոյություն ուներ հայկական համեմատաբար մեծ գաղութ, երկրորդ, հնագույն համալսարանի (XIX դարի սկզբին՝ Ռուսաստանում միակ) առկայությունը հույս էր ներշնչում լավ կազմակերպելու ուսումնական պրոցեսը ուսումնարանում, ինչպես և հայ ուսանող երիտասարդությանը հաղորդակից դարձնելու ռուս ժողովրդի առաջավոր մշակույթին։ Հտրկ է նկատի ունենալ, որ Հայաստանը այդ ժամանակ Ռուսական կայսրության կազմում չէր և Անդրկովկասի տարածքում ուսումնական հաստատություն ստեղծելու մասին խոսք լինել չէր կարող։

1815 թվականի մայիսին «կազարյան հայկական ուսումնական հաստատությունն ստացավ իր նախնական գոյությունը», Երացվեց զանազան գիտությունների ուսուցում ինչպես հայ, այնպես էլ ուրիշ ազգությունների պատկանող այնտեղ ընդունված սաների համար, և այն սկսեց գործել»³⁵։

Հոգաբարձուների իրավունքը ամրապնդվում էր կազարյանների առձմին, քանի որ նրանք էին կրում ուսումնական հաստատության շինարարության և պահպանման բոլոր ծախսերը, ինչպես նաև նրանք էին տրամադրում միջոցների նշանակալի թվով սաների անվճար ուսումնասուության համար։

Ստեղծման պահից այդ մասնավոր ուսումնարանը մյուսներից տարբերվում էր նրանով, որ սովորողների կազմով ռուս-հայկական էր։ Ուսումնական պլանը, ռուսական գիմնազիաների սովորական դասընթացից դաս, հայ պատանեկության համար նախատեսում էր հայոց լեզվի, հայ գրականության և մի շարք այլ առարկաների ուսուցում, ինչպես նաև արևելյան լեզուների ուսումնասիրում։ Հայերի և ռուսների համատեղ ուսումնասուությունը մեկ դպրոցում, դպրոց, որը գտնվում էր ռուսական մշակույթի կենտրոնում, ճեմաքանի հիմնադիրները գիտում էին որպես բացառիկ օգտակար քաղաքացիական ձեռնարկում պատանեկության դաստիարակության, նրան ռուսական և կվորպական մշակույթին հաղորդակից դարձնելու գործում։ Արևելյան լեզուները ճեմարանի ծրագրի մեջ մտցվեցին կազարյանների նախաձեռնությամբ։ Նրանք, ինչպես նաև հայկական շրջանների ուրիշ շատ ներկայացուցիչներ, քաջ գիտակցում էին արևելյան լեզուների նշանակությունը Ռուսաստանի և հայերի համար, որոնց մի

³⁵ ՄՔՊՊԱ, ֆ. 213, ց. 1, գ. 1, ք. 145։

նշանակալի մասը գանձում էր Իրանի և Յամանյան կայսրության սահմաններում: Կարճ ժամանակախիշտում Լազարյան ճեմարանը, Մոսկվայի համալսարանի դասախոսների ղգալի օգնությամբ դարձավ Մոսկվայի լավագույն ուսումնական հաստատություններից մեկը:

Արդեն իր գոյության առաջին տասնամյակներում ճեմարանը գրավել էր ժամանակի հայտնի գրողների և դիտնականների ուշադրությունը: Բավական էր ասել, որ ժամանակին ճեմարան են այցելել Ա. Հումբոլդտը, Մ. Բրոսսեն, Վ. Ա. Շուկովսկին, Ա. Ն. Գնեդինը, Պ. Ա. Վլադենկոն, Ա. Ս. Գրիբոլեզովը, Ա. Ս. Պուշկինը, հունական ադատադրական շարժման գործիչ Ա. Խալսիանտին: Զի կարելի չէ, որ 1829 թվականին ճեմարանի պանսիօնում է կղել 11-ամյա Ի. Ս. Տուրգենևը:

Հարկ է հատուկ քննողով, որ ճեմարանի հիմնադրումը վերաբերում էր այն ժամանակին, երբ Հայաստանի արածքը գանձում էր սուլթանական թուրքիայի և շահական Իրանի իշխանության ներքո, այսինքն՝ դեռ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց առաջ: Նման ընդգրկման և ուսուցման այդպիսի մակարդակի ուսումնական հաստատության ստեղծումը հայերի համար հնարավոր չէր ո՛չ Իրանում և ո՛չ էլ թուրքիայում: Եվ իրավացի էր Լազարյան ճեմարանի գրեթե ամբողջությամբ հիմնադրումը, երբ ասում էր. «Նախնական նրանց կարծիքը, ովքեր հիմնադիրների սխան են համարում հայերի համար ուսումնական հաստատության հիմնադրումը նրանց քնակության վայրերից հեռու, մենք այդ ընտրության մեջ տեսնում ենք նրա կայունություն ու ծաղկման ղլխավոր և կրթակազմային պայմանը: Եթե առաջադրվող պահանջը կարող էր բնական հիմքեր ունենալ ներկայումս (այսինքն՝ Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո:— Ա. Բ.), այդ այն ամեննէն կիրառելի չէ մի հաստատության համար, որն առաջացել է կեն գր սրտերից առաջ... Հայերով առայկապես բնակչությամբ քաղաքները պատկանում էին Կողմասյան և Անդրիովկասյան մարզերին, բայց նրանց բառասյին վիճակն այն դարաշրջանում քիչ կարող էր նպաստել ուսումնական հաստատության ճիշտ զարգացմանը: Մինչդեռ Մոսկվան միանգամայն բավարարում էր բոլոր պահանջները: Այնտեղ արդեն վաղեմի ժամանակներից գոյություն ուներ նշանակալից հայկական գաղութ... Բայց դրանից անչափ այն, որպես ուսական կրթության միջնակետ իր նշանավոր հա-

մալարանով, բնձնում էր բոլոր հնարավորություններն ամեն մի ուսումնական հաստատության զարգացման համար: Իսկ Լազարյանների հիմնադրած հաստատության սաների վերաբերմամբ այն ներկայացնում էր նա մեկ անգնահատելի պայման՝ նրանք ծանոթացնում էր այն հասարակության և պետության լեզվին, կյանքին ու բարբերին, որի համարազարգացիները պետք է նրանք գտնային ժամանակի ընթացքում» (Речи и отчет, произнесенные в торжественном собрании Лазаревского института. М., 1865, էջ 17—18):

Ազատագրության իրենց հույսերը կապելով ուս ժողովրդի հետ, հայ հայրենասերները ձգտում էին Ռուսաստանի տարածքում ստեղծվող հայկական զգրոցների ուսումնական ծրագրերում ներխառնել նուսաց լեզվի, գրականության և ուսական ուսումնական հաստատությունների այլ առարկաների ուսուցում: Ինքնամեկուսացման, ազգային ինքնամոտիվացության քաղաքականությունը խորթ էր հայ ժողովրդի առաջավոր հայրենապիտան ուժերին և պատմական ավանդույթներին:

XIX դարի 20-ական թվականների վերջին Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կաղմի մեջ մտնելուց հետո դեռ երկար ժամանակ հայկական գաղութները շարունակում էին ակնատու դեղ խաղել հայ ժողովրդի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում: Նրանց զործնունդությունը անխղիչ էր հայ ժողովրդի պատմությանից: Սակայն Լազարյան ճեմարանի գերը սրգնե ուսումնական ու գիտական կենտրոնի լավագանց բացառիկ էր կղել անցյալ դարի մի քանի տասնամյակների ընթացքում: Ոչ միայն Ռուսաստանում, այլև նրա սահմաններից դուրս, բազմաթիվ հայկական գաղութներում նման մի մշակութային մշտա ուսումնարաններին, մասնավորապես, Աստրախանի Աղաբեյբյան և Թիֆլիսի Նևրոխյան զարգանքին, ապա նրանց գործել էին այդպես հարուստ նյութական բազայից, համալսարանական կենտրոններից հեռու էին գտնվում և օգտվում էին արևելյան լեզուների ճեմարանի օգնությունից՝ կազմակերպելու ուսումնական արդյոցը , ապառնելու կարողը, զատագրելու, ձեռնարկները: Ճեմարանը հատուկ հետաքրքրություն էր առաջ բերում հայ երիտասարդության շրջանում: Նրա համբավը շատ արագ տարածվեց ոչ միայն Ռուսաստանի, այլև Իրանի, Թուրքիայի, Հնդկաստանի հայերի մեջ: Ամբողջ XIX դարի ընթացքում Լազարյան

ճնմարանը մեծ ազդեցություն էր գործում Ռուսաստանի հայերի կրթական ամբողջ համակարգի վրա: Մոսկվան կազարյան ճնմարանով և համալսարանով (այստեղ իրենց կրթությունը շարունակում էին մեծ թվով հայեր) դարձավ հայկական դպրոցների համար ուսուցիչների պատրաստման կենտրոն: Ընմարանն իր շրջանավարտներին ուղարկում էր Աստարայանի, Քիֆիսի, Նոր-Նախիչևանի և Ռուսաստանի ուրիշ շատ քաղաքների հայկական դպրոցները, ինչպես նաև Իրան և Եդիպտոս:

Կազարյանները համառոտվյալն ու եռանդով ջանում էին ճնմարանին կից սպարան ստեղծել: Վաղորդը (1828 թվականին) գնվեց Տոդամաս, որը դանվում էր ճնմարանի շենքի և Վենեվի-Վեյնովի տան միջև, քարաշեն տնով և ուրիշ կառույցներով, իսկ Պետերբուրգում՝ Լովսեի Լովհաննիսյանի տպարանը:

Կազարյանները ձեռք բերեցին ճնմարանին կից սպարան բացելու թույլտվություն: Նրանք Մոսկվա աեղափոխեցին տպարանի հարևանությունը, և 1829 թվականի հունիսին տպարանն սկսեց գործել: Բայց հին տպարանը հարմարեցված չէր եվրոպական և արևելյան լեզուներով գրականություն հրատարակելու համար: Կազարյանները ձեռք են բերում նոր մեքենաներ, առատեսակներ և այլն տպարանի գործունեության շրջանակը 1830 թվականից սկսած, դադարահաների բազմացումից և տարասեսակ պահանջումները կարգավորելուց հետո, ընդլայնվեց, գրատպությունը հաջողությամբ շարունակվում է 13 լեզուներով՝ եվրոպական և ասիական, որոնք են՝ ռուսերեն, հայերեն, լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, հունգարերեն, վրացերեն, սերբերեն, թուրքերեն և պարսկերեն²⁶, ճնմարանը հրատարակության էր պատրաստում և հրատարակում էր դասագրքեր, քրեստամատիաներ, բառարաններ և ուրիշ ձևանքակներ, ինչպես նաև գրքեր հայ ժողովրդի պատմության, գրականության, հուշարձանների, հայոց լեզվի վերաբերյալ, որոնցից լայնորեն օգտվում էին հայկական ուսումնական հաստատություններում: Գլուխ բերելով արևելյան և արևմտյան լեզուներով գրականության, մասնավորապես դասագրքերի թողարկման գործը, հրատարակելով հուշարձաններ, թարգմանություն-

ներ, հետադոտություններ, կազարյան ճնմարանը մեծ լուսավորչական հայրենական արևելագիտություն մեջ: Ընմարանի «Արևելյան լեզուների կազարյան ճնմարանի հրատարակած արևելագիտական աշխատություններ» սերիական հրատարակությունը, «Մ. Ը. Էմի-նի անվան ազգագրական ֆոնդի» պրակները «Արևելյան հանձնաժողովի հնությունների» հեա միասին նախահեղափոխական Ռուսաստանի առավել կարևոր արևելագիտական հրատարակումներն են:

Անկասկած, հետաքրքիր է հենց Մոսկվայում, կազարյան ճնմարանի սպարանում Յ. Մ. Դոստոևսկու երկերի առաջին ժողովածուի հրատարակության փաստը²⁷: Հրատարակումը լույս տեսավ երկու հատորով՝ 1860 թվականին:

Հիմնագրումից հետո շուտով կազարյան ճնմարանը մեծապես զերտզանցեց մասնավոր ուսումնական հաստատության շրջանակները: Հարգանքի և երախտագիտության աուրք մատուցելով՝ կազարյան ընտանիքին, մենք կազարյան ճնմարանը դիտում ենք որպես հասարակական մեծ նշանակություն ունեցող ազգային նախաձեռնություն, իսկ նրա գիտական ժառանգությունը որպես հայ, ռուս, ազգբնջանական և վրաց ժողովուրդների ազգային ստացվածք, որոնց լեղծները, գրականությունը, մշակույթը, հուշարձանները և պատմությունը դասավանդման, ուսումնասիրության և տարածման առարկա էին:

Հաստատվել էր մի արգարացի կարծիք՝ կազարյան ճնմարանը հայկական լուսավորության alma mater-ն է:

Մոսկվայի կազարյան ճնմարանը ռուս և հայ հասարակական մտքի, գիտության, մշակույթի առաջավոր զաղափարների լավագույն տարածողներից մեկն էր և հայ ուսանող երիտասարդությունն ու մտավորականությունը դրանց հաղորդակից դարձնելու զարդը:

Մենք իրավունք ունենք Մոսկվան և, մասնավորապես, կազարյան ճնմարանը գիտելու որպես հայկական հասարակական-քաղաքական կենտրոններից մեկը, հատկապես XIX դարի 50—60-ական թվականներին և զա կապված է «Հյուսիսսիսիպոս» ամսագրի, իր ժամանակի «Յեղափոխական-դեմոկրատական հրատարակատեսության համար միակ որբանություն ենթակա ամբիր-

²⁶ Собрание высочайших указов и актов, относящихся до Московского армянского Лазаревых института восточных языков. СПб., 1839, с. 184.

²⁷ Ф. М. Достоевский. Сочинения, изд. Н. А. Основским. М., тип. Лазаревского института восточных языков.

նի» հետ: Ստեփանոս Նազարյանցը, Միրայիլ Նալբանդյանը, Անրատ Շահազիզը, Ռափայիլ Պատկանյանը, Բաֆֆին և ուրիշ ակնաճարհոր հասարակական գործիչներ, գիտնականներ, գործընկեր կապված էին այլ ամսագրին, աշխատակցում էին նրան: Ամսագրի շուրջը համախմբվել էին լավագույն գործընկեր, բանաստեղծներ, ովքեր եռանդուն պրոպագանդում էին աշխարհաբարը, աշխարհիկ դպրոցը, ժողովրդի լուսավորությունը: Հայոց գրական նոր լեզվի հաղթանակի օրինակաբերությունը պատմական երևույթ էր, որը հայ ժողովրդի ճակատագրում տեղի ունեցած հասարակական-տնտեսական և քաղաքական փոփոխությունների արդյունք էր: Գրական նոր լեզվի հաղթանակի գործում փոքր չէ «Հյուսիսսփայլ» ամսագրի վաստակը: Խաչատուր Աբովյանը, Սեփանոս Նազարյանցը, Միրայիլ Նալբանդյանը այն առավել ակնաճարհոր գործիչներն են, որոնց անվան հետ է կապված հայկական գրական նոր լեզվի, հայ նոր գրականության, հրապարակախոսության ձևավորումը, արդյապանդումը և արարածումը:

XIX դարի 50-ական թվականներին հասարակական և գրական սպարեզում հայտնվում է լուսավորիչների և հասարակական գործիչների նոր սերունդը: Հավանաբար, ճիշտ էլինի հայ ժողովրդի ազատագրական շարժման պատմության վրա տարածել նաև Վ. Ի. Լենինի հայտնի դրույթն այն մասին, որ Ռուսաստանում ազատագրական շարժման արվավականական ժամանակաշրջանին փոխարինելու եկավ «ռազմոչինական կամ բուրժուա-դեմոկրատական»³³ ժամանակաշրջանը:

Տաղանդավոր հետազոտող Մ. Գ. Աբելյանը հատկապես ասանձացնում էր հայ մտավորականների այն համասանդուծությունը՝ Աբովյանի, Նազարյանցի, Ռ. Պատկանյանի, Գորգույանի, Ք. Պատկանյանի սերունդը, ովքեր 40—50-ական թվականներին կրթություն էին ստացել Ռուսաստանի համալսարաններում: Այլ ցուցակին լիակատար հիմք ունենր ավելացնելու և առաջին շարքում դնելու Նալբանդյանի անունը: Քաղաքական սպարեզ էր դարս եկել նոր սերունդը: Ազատագրական շարժման գործիչներին, սպինվականներից ելած հայ լուսավորիչներին՝ Աբովյաններին, Նազարյաններին փոխարինեցին ռազմոչինականները:

Հայկական լուսավորականությունը և հայ հեղափոխական-

դեմոկրատական շարժումը անցյալ դարի կեսերից դառնում է համատեսական շարժման մի մասը և ռուսական հեղափոխական-դեմոկրատական շարժման մեջ էր ան քաղում ողևորիլ զազափարներ և ուժեր:

Մոսկվայի արևելագիտական դպրոցը ձևավորվել է Մոսկվայի համալսարանի և Նազարյան ձևմարանի՝ միակ մասնագիտացված արևելագիտական ուսումնական հաստատության պրոֆեսորների և գիտնականների ջանքերով, հաստատություն, որտեղ ուսումնասիրության և դասավանդման առարկա էին արաբերեն, պարսկերեն ու թուրքերեն լեզուները և Անդրկովկասի ժողովուրդների երեք լեզուներ (հայերենը, վրացերենը և ադրբեջաներենը), իսկ ավելի ուշ՝ նաև ուղբերկերենը: Ուշագրություն է գրավում այն, որ ուսումնասիրվում էին այն ժողովուրդների լեզուներն ու պատմությունը, որոնց ճակատագիրը, մշակույթը իր բոլոր դրսևորումներով դարեր շարունակ սերտորեն միահյուսված են եղել: Անպիտակ, ձևմարանը մեծ ավանդ է ներդրել արաբագիտության, իրանագիտության, ֆլուրագիտության, ինչպես նաև Անդրկովկասի եզրայական ժողովուրդների՝ հայերի, վրացիների, ադրբեջանցիների լեզվի և գրականության ուսումնասիրության մեջ:

Մինչհեղափոխական հայրենական արևելագիտական դպրոցը ձևավորվել է ռուս գիտնականների գերակշիռ ղերով, բայց նաև հայերի, վրացիների, ադրբեջանցիների, թաթարների և Ռուսաստանի այլ ժողովուրդների միջավայրից ելած գիտնականների մեծ մասնակցությամբ: Մոսկվայում արևելագիտության սպարեզում արևում էին ուսուներ՝ Բոլդիրևը, Պետրովը, Կորշը, Միլլերը, Խոմոզորովը, Տրուտովսկին, Գորդևսկին, ովքերանցյալ կրիմեական, հայեր Նազարյանցը, էլմիրը, Վախրևը, Խալաբեյը, Խալաբեյանցը, ադրբեջանցիներ Բլումբիլովը, Ռիզաևը, Գաֆֆարովը, վրացիներ Գուրգենիձեն, Սերբրյակով-Օկրոմլեզիլովը, Խախաևովը (Խախաևիշվիլի): Ահա նրանց ամենեկին ոչ լրվիլ ցուցակը:

Նազարյան ձևմարանը արևելագիտության կենտրոններից մեկն էր և Մոսկվայի համալսարանի, իսկ ավելի ուշ՝ Մոսկվայի հեղափոխական քնկերության Արևելյան հանձնաժողովի հետ միասին նպաստում էր հայրենական արևելագիտության Մոսկվայի դպրոցի ստեղծմանը: Ձևմարանում էին դասավանդում և գիտական աշխատանք կատարում հայտնի գիտնականներ՝ ակա-

³³ Վ. Ի. Լենին, Ռուսաստանի բանվորական ժամուխ անցյալից: Երկերի լիակատար ժողովածու, հ. 25, էջ 113:

ղեմիկոսներ Զյոզոր եմբանեիշ Կորչը, Վեմվուղ Ֆլորորովիչ Միլ-լուցը, պրոֆեսորներ Ստեփանոս Նաչյո Նազարյանցը, Մկրտիչ Հովսեփի էմիրը, Ազաֆանուկ Շքիրովիչ Կրիմսկին, Լևոն Զար-մայրի Մսերյանցը, Վլադիմիր Ալեքսանդրովիչ Գորգլեսկին և ուրիշներ ճեմարանը Մոսկվայի համալսարանի և Հնագիտական ընկերության Արևելյան հանձնաժողովի հետ միասին լուրջ ներ-դրում կատարեց արևելագիտության ավանդական լուսավառնե-րում և համաշխարհային արևելագիտության՝ Մոսկվայում ստեղծված նոր ուղղություններում՝ օտագիտության և քաղաքի լեզվի ուսումնասիրության մեջ:

Լազարյան ճեմարանում էին արևելագիտական կրթություն ստացել Ն. Ի. Աշմարինը, Խ. Բ. Բարանովը, Վ. Ա. Գորգլեսկին, Բ. Մ. Գրանզին, Ն. Կ. Դավթրեբը, Լ. Ի. Ժիրկովը, Ա. Ն. Կրիմսկին, Վ. Կ. Կուսիկյանը, Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը, Բ. Վ. Միլլերը, Ղ. Զ. Միրոսկին, Մ. Ս. Միրայլովը, Լ. Զ. Մսերյանցը, Վ. Մ. Նասիրովը, Ա. Ն. Պոցելուեվսկին, Ա. Ա. Սևեյանովը, Ա. Ա. Ստա-րիկովը, Վ. Կ. Տյոտովսկին, Ե. Ա. Ծահաղիբը, որոնք նշանակալի լումա են ներդրել հայրենական դիտության և մշակույթի մեջ:

Ձի վարելի չնշել, որ այստեղ են ուսանել նաև հայ ակադեմիոր բանաստեղծ և հասարակական գործիչ Վահան Տերյանը, հայտնի բանաստեղծ Մմբատ Ծահագիբը, օտնիտական ուսաց գրակա-նության ավագագույն վարսեստերից մեկը, որը կանգնած է նրա ստեղծանքների մոտ»³⁹, ՍՍՀՄ ԳԱ քղթակից-անդամ Վլադի-միր Գեմանովիչ Լիզինը, լեզվաբան Ռուբեն Հովսեփանեսի Ավա-նեսովը, ՍՍՀՄ ԳԱ քղթակից-անդամ, գրականագետ Դմիտրի Դմիտրևիչ Բլազդը: Լազարյան ճեմարանի հետ է կապված ուսական մշակույթի հայտնի գործիչներ Վիսլոթսկիների անուն-ները Պատվավոր ակադեմիկոս Ալեքսեյ Նիկոլայիվիչ Վեսե-լովսկին դասավանդել էր Լազարյան ճեմարանում, իսկ նրա որ-դին՝ Տայտիի գրականագետ Յուրի Ալեքսեևիչը, ուսանել էր այն-տեղ: Այստեղ է կրթություն ստացել «ժամանակակից արևելյան խոշոր լեզվաբաններից մեկը՝ Ռ. Յակոբսոնը»⁴⁰: Ռոման Օսիպովիչ Յակոբսոնը գտնում է, որ «Լազարյան ճեմարանը հիբալի հակա-յական դեր է խաղացել» նրա գիտական արթության մեջ և, «էթե

պրոֆ Գ. Ն. Ուշակովը 1918 թ. գրում էր [էնձ] համալսարանում (Մոսկվայի— Ա. Բ.) թողնելու մասին առաջարկության մեջ, որ ես համալսարանն ու կելի որպես «պատրաստ պիտանական», [դրանում] ծառայությունը պատկանում է Լազարյան ճեմարանին»⁴¹:

Լազարյան ճեմարանի գիմնադրական դասարաններում են սովորել Վ. Ի. Լևինի աշխուրտ և դինակից, կոմունիստական կուսակցության և սովետական պետության ակադեմիո գործիչ»⁴² Ա. Ֆ. Մյասնիկովը (Մյանսկյան), հեղափոխական, բուլշևիկ Պ. Ա. Փայլինցյանը, վերջ հիշատակված բուլշևիկ Վ. Ա. Տերյանը, Ռ. Պ. Փայլանյանը:

Իհարկե, Լազարյան ճեմարանում են սովորել նաև նրանք, ով-քեր հռչակվել են ցարական կառավարությանը ցուցաբերած հա-վատարիմ ծառայությանը: Դրանց ձեջ են և լուսավորության մի-նիստը տերահառչակ Ի. Բ. Գեյլանովը, և՛ ներքին գործերի ոչ պա-կաս հայտնի մինիստր Մ. Տ. Լորիս-Մելիքովը, և՛ Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ի. Ա. Զինովիք: Այդպես էլ ինքնաբերա-բար համեմատություն է ծագում մեկ ուրիշ լիցեյի՝ Ցարսկոյե շեյնի լիցեյի հետ, որտեղ սովորել են Ա. Ս. Պուշկինը, դեկա-բրիստներ Վ. Կ. Կլուբինսկիները, Ի. Ի. Պուշկինը և արտաքին գոր-ծերի մինիստր Ա. Մ. Գորշակովը:

Քացառիկ և իսկապես միջազգային նշանակություն ուներ Լա-զարյան ճեմարանում հավաքված հայերեն, պարսերեն, արաբե-րեն, թուրքերեն և ուրիշ շատ լեզուներով ձևապարհի հավաքա-ծուն: «Այդ հավաքածուի բնիկումներից է տաջիկ (հայկական— Ա. Բ.) ձևագիրը, որը ստույգ տարիքիով ունի»⁴³, 887 թվականի հնագույն «Լազարյան ավետարանը» (Այժմ «Լազարյան ավե-տարան» պահվում է Երևանի Մասնագիտարանում):

Ձեռագրերը մանրակրկիտ ուսումնասիրվում և, որ հատկա-պես կարևոր է, հրատարակվում էին՝ դիտական շրջանառության մեջ դնելով նոր տեղեկություններ Անգրկոպկասի, Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների պատմության և մշակույթի պատ-մության լիբրարիայ:

Ձի վարելի չհիշատակել Լազարյան ճեմարանի գրադարաններին

³⁹ «Литературная газета», 10.X.1979.
⁴⁰ Константин Симонов. Два века русской поэзии.— «Правда», 18.XI 1965.

⁴¹ Ռ. Օ. Յակոբսոնի նամակը (ներկա աշխատության հեղինակի արխիվ):
⁴² Боец революции.— «Правда», 9.II. 1966.
⁴³ Армянская миниатюра, Ер., 1969, с. 19.

մտին, որտեղ հավարված էր 40 հազարից ավելի զինք, այդ թվում՝ այսպես կոչված մասնազինավան (բարձրագույն) դասարանների զրահարանի մասին, որը նախատեսված էր Արևելյան ուսումնասիրության համար և 12 հազար անունից ավելի զինք էր պարունակում:

Հարկ է նշել, որ Մոսկովյան հայ ուսանողությունը, այդ թվում՝ Լազարյան ճեմարանի սաները, մի կարևոր գործի՝ արևելահայ նոր ռեալիտական թատրոնի վերածննդն նախաձեռնողներ հանդիսացան: Դրանում արասցորում զբաղ ռուսական առաջավոր ռեալիտական թատրոնի՝ Փաբլովսկու և Շչեպինի թատրոնի, բարերար ազդեցությունը: Առաջին ներկայացումները, որ 1858 թ. ավելցին հայ ուսանողները Մոսկվայում, ինչպես գրում են սովետական հեղափոխողները՝ պատահական զրվագ չէր հայ թատրոնի երկհազարամյա պատմության մեջ, որը իմացել էր թատերական արվեստի վերելքի, վաղուցից և լիակատար անկման մասնակալմիջոցներ, այլ սկզբն էր նոր դարաշրջանի:

Ռուս և հայ ժողովուրդների մշակութային և գիտական լայն կապերը մասնազինական և հանրամատչելի գրականության մեջ ստացել են խոր, գիտականորեն հիմնավորված արտացոլում: Արդեն հաստատված է այն արդարացի գրույթը, որ Ռուսաստանում հայկական մշակույթի, գիտության և արվեստի շատ գործիչներ (Իհսաբև, ինչպես և ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչներ), միաժամանակ հանդիսացել են նաև ռուսական մշակույթի գործիչներ: Այդ կարևոր է վերագրել հեղափոխական-գեմնոկրատ Միքայել Նաբանդյանին, ակամավոր ժողանկարիչ Հովհաննես Ալվազովսկուն, նկարիչ Վարդգես Մտրևյանցին, լուսավորիչ, հրապարակախոս և գիտնական Ստեփանոս Նազարյանցին, գիտնական Մեր Քերթվել Պատկանյանին, Մկրտիչ Լժինին, Լեոն Մաերյանցին և շատ ուրիշներին: Այդ հասարակական գործիչների և մշակույթի ու գիտության գործիչների նկատմամբ հավասարապես կիրառելի է ռուսական դիմանկանները, «ռուսական հասարակական գործիչներ» տերմինը:

Մինչև «Նյուսթեր արևելյան լեզուներին Լազարյան ճեմարանի պատմության համար: Պրակ I» (Մոսկվա, 1914, ռուսերեն) ժողովածուի հրատարակումը, որը կազմված էր ճեմարանի վերջին դիրեկտոր Վ. Պ. Գիդուլյանովի կեկավարությամբ, արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի հիմնարդման պաշտոնական տարեթիվ միահամարուն ընդունվում էր 1815 թվականը: Ծիշտ է, անց-

յալ դարի 10—20-ական թվականների արխիվային վավերագրում և այդ նույն տարիների որոշ հրատարակություններում ընդվում են մի բանի տարեթիվը՝ 1814, 1815, 1816, բայց արդեն XIX դարի 30-ական թվականներից ճեմարանի հիմնադիրները՝ Լազարյան ընտանիքը, ճեմարանի վերաբերյալ աշխատությունների հեղինակները և նրա բոլոր փաստաթղթերը միայն 1815 թվականն են անկախում իբրև հիմնադրման տարեթիվ: Լազարյանների կենդանության օրը ճեմարանի վերաբերյալ գրված պատմական ակնարկներում նույնպես նշվում էր 1815 թվականը: «Արևելյան լեզուներին Լազարյան ճեմարանի յոթանասունհինգամյակը» գիրքը, որը ուսուցիչ լեզվով հրատարակվել է Մոսկվայում 1891 թվականին, ուներ «1815—1890» ենթախորագիրը: Ծեմարանի շենքի ճակատամասի արձանագրության մեջ «Արևելյան լեզուների Լազարյան ճեմարան» բառերից հետո գրված էր «1815» տարեթիվը: Ինչ և այդ արձանագրությունը այժմ չկա, բայց ճեմարանի պատկերով փոստային բացիկների վրա և հին լուսանկարներում այդ տեսքով և թվերը պարզորոշ էրևում են: Մեզայինների վրա, որոնցով պարզևսարում էին լավագույն շրջանավարտներին, նույնպես փորագրված է «1815» տարեթիվը: Եվ, վերջապես, Պ. Վ. Տուտուկինի պահպանված նկարում երիցա՝ շենքի ճակատամասում, հայերեն և ռուսերեն մակագրություններում, կրկնվում է 1815 թվականը որպես ուսումնական հաստատության հիմնադրման տարեթիվ:

Այսպիսով, XIX դարի 30-ական թվականներից և մինչև 1914 թվականը բոլորն անխորհր, այդ թվում նաև ճեմարանի հոգաբարձուներին իրենք, հետևում էին ավանդական սարեթիվին՝ 1815 թվականին:

Լազարյան ճեմարանի վերջին դիրեկտոր Վ. Պ. Գիդուլյանովը, ըստ եռույթի, ցանկանալով հորեղբայր նշել ճեմարանի զատմայլ, բայց խիստ ազդեցիկ պատվավոր հոգաբարձու իշխան Ս. Ս. Աբրամովիչ-Լազարյանի⁴⁴ կենդանության օրը, փորձեց վերանայել Լազարյան ուսումնական հաստատության հիմնադրման

⁴⁴ Ս. Ս. Աբրամովիչ-Լազարյանը լավանվեց 1916 թվականին, կաշտերական Գեղարվեստից ակադեմիային կտակելով Հոսմի իր աղբյուրը, որը հայտնի է Աբրամովիչի վրկառ անունով: 1946 թվականին իտալական կառավարությունը այն հանձնեց մեր զնայանությունը ներկայումս վրկան մեր երկրի սեփականությունն է:

ավանդական ասրեթիվը: Մասամբ այդ նպատակին պետք է ծառայեր նաև «նյութերի...» հրապարակումը:

Վ. Գիդուլյանովը, օգտվելով ժամանակի լուսավորության մի-նիստը և, Կաստսիի բարբառցական վերաբերմունքից, վերջինից թուլավորություն ստացավ հոբելյանական ասրեթիվ համարել Լազարյան ձեմարանի շենքի հիմնարկման օրը՝ 1814 թվականի մայիսի 10-ը⁴⁵: Բայց սկսված առաջին համաշխարհային պատե-րազմի պայմաններում ձեմարանի հոբելյանը այդպես էլ չնշվեց⁴⁶:

Կարելի է համարձակելուս պիղծել, որ Մոսկվայի Լազարյան ձեմարանը սկզբից և մինչև XIX դարի 70-ական թվականները Ռուսաստանի հայկական գաղութները և Արևելյան Հայաստանի համար եղել էր հիմնական մշակութային կենտրոններից մեկը: Ձեմարանը հայ ուսանող Երևանստաբուլյան և մասվորականու-թյան շրջանում ռուսական գիտություն և հասարակական մտքի առաջավոր գաղափարների հաղորդիչներից մեկն էր: Այն իրա-վացիորեն գիտվում էր օրպես հայկական լավագույն ուսումնա-կան հաստատությունը Ռուսաստանում, որը ամբողջ XIX դարի ընթացքում մեծ ազդեցություն էր գործել ժողովրդական կրթու-թյան ամբողջ համակարգի վրա Ռուսաստանի հայերի շրջանում:

Նշանակալի են Լազարյան ձեմարանի ծառայությունները հայ-երի մինչև Ռուսաստանի մշակույթի տարածելու, և ռուս հասարակականությանը հայ նոր դրակուլություն լավագույն նմուշներին, ժողովրդի պատմությանը, նրա բազմադարյան ազգային-ազա-տագրական պայքարին ծանոթացնելու գործում:

Լազարյան ձեմարանի նշանակությունը, նրա դերը մշակույ-թի պատմության մեջ կարելի է հասկանալ, առաջնորդվելով կա-պիտալիզմի ժամանակ յուրաքանչյուր ազգային մշակութային մեջ երկու ազգային մշակութային կենտրոնի վերաբերյալ Վ. Ի. Լենինի հայտնի դրույթով⁴⁷: «Կա երկու ազգ ժամանակակից յուրաքանչյուր ազգի մեջ... Կա երկու ազգային կուլտուրա կուլտուրալուր ազգային կուլտուրայի մեջ: Կա Պուրիշկինների, Գուչկոյների և Աստրովե-ների վիճիկոսական կուլտուրան, բայց կա վիճիկոսական կուլտուրա, որը բնորոշվում է Չերնիշևսկու և Պլեխանսովի անուն-ներով»⁴⁸: Լազարյան ձեմարանի ամբողջ պատմությունը իր ժա-

մանակի հայ հասարակական մտքի մեջ առաջադիմական գի-տական և մանկավարժական գաղափարների հաղթանակի հա-մար մղված պայքարի արասպողումն է:

Մոսկվայի և Լազարյան ձեմարանի հետ է կապված նաև XIX դարի կեսերի համար լավագույն հայկական առաջադիմական ամսագրի ստեղծումը: Ձեմարանի պրոֆեսոր Սահեփանոս Նա-զարյանը Միքայել Նաբանդյանի հետ համատեղ (որը մի ժամա-նակի զատավանդել էր ձեմարանում) Մոսկվայում հրատարակում էին «Հյուսիսայայ» ամսագիրը, որը անհատու դեր է խաղացել հայ հասարակական մտքի պատմության մեջ: Այսպիսով, Լա-զարյան ձեմարանի գործունեությունը կարևոր հասարակական-քաղաքական նշանակություն է ունեցել: Ժամանակի ընթացքում մասնավոր ուսումնական փոքրիկ հաստատությունը վերածվեց բարձրագույն ուսումնական հաստատության, որը խոշոր դեր խա-ղաց նաև հայրենական արևելագիտության մեջ:

1917 թվականի հեղափոխական իրադարձությունները հան-գեցրին կարուկ դասակարգային առհասարակումնան ինչպես ռուս-նոգոցիան, այնպես էլ ձեմարանի դասախոսների միջև: Նրանք տարբեր կերպ վերաբերվեցին Հոկտեմբերյան մեծ հեղափոխու-թյանը: Որոշ պրոֆեսորներ և ուսուցիչներ, ինչպես, օրինակ, Ա. Ե. Կրիմսկին, Մ. Օ. Աթթայան, Ս. Գ. Մերունյան, Վ. Ա. Գրյու-լևսկի, Զ. Կ. Կուսիկյան, նրանց մեջ էին, ովքեր հեղափոխու-թյան առաջին օրերից կակեցին աշխատել նոր, սովետական բարձրագույն դպրոցում:

Արևելյան լեզուների Լազարյան ձեմարանի վերակազմակեր-պումը կապված է Վլադիմիր Իլիչ Լենինի անվան հետ: 1919 թվա-կանի մարտի 4-ին Վ. Ի. Լենինի ստորագրած՝ ՌՍՖՍՀ Ժողովու-րդի դեկրետով արևելյան լեզուների Լազարյան ձեմարանի փոխանին ստեղծվեց Հայկական ինստիտուտ: Այդ վերակազ-մումը, իհարկե, ժամանակավոր բեռնով էր կրում և հետևանք էր ունի բանի, որ այդ ժամանակ Հայաստանի տարածքում ան-հնար էր բուհ ստեղծել: Բայց կարևոր է, որ Հայկական ինստի-տուտը «հանգիստացավ առաջին սովետական հայկական ուսում-նադիտական հաստատությունը: Հենց այստեղ, Մոսկվայում, վառ-վեց հայկական սոցիալիստական կուլտուրայի առաջին ջահը»⁴⁹: Նախկին Լազարյան ձեմարանի վերակազմումը, որը անց-

⁴⁵ ՄԲՊՊԱ, ֆ. 213, ց. 1, գ. 701, Թ. 3:

⁴⁶ Նույն տեղը:

⁴⁷ Վ. Ի. Լենին, Քննադատական գիտություններ ազգային հարցի վերա-բերյալ: Երկերի լիակատար ժողովածու, հ. 24, էջ 162:

⁴⁸ С. Т. Алиханян. Ваан Терян. Ер., 1960, с. 98.

Ֆիացից մի քանի փուլերով, ալարավից սկզբունքորեն նոր, սովետական բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Արևելահայտության ինստիտուտի, ստեղծմամբ: Հիացմունքի է արժանի, որ կարճ ժամանակամիջոցում, ընդամենը երկու-երեք ասքում, Մոսկվայում հաջողվեց կազմակերպել մի բուհ, որը դարձավ Մերձավոր և Միջին Արևելքի, Հնդկաստանի, Հեռավոր Արևելքի ղեկավարման գիտնականների պատրաստման առաջատար կենտրոններից մեկը երկրում:

Լազարյան ճեմարանի շրջանալարտ գիտնականների մի ամբողջ սերունդ բեղմնավոր աշխատանք էր կատարում Մոսկվայի Անդրդիվկասի և Միջին Ասիայի գիտահետազոտական և ուսումնական հաստատություններում արևելագիտության, արտասահմանյան Արևելքի ժողովուրդների լեզվի, պոլիտոլոգիայի, պատմության, մշակույթի ուսումնասիրման ոլորտներում, և խիստ նշանակալի է նրանց ներդրումը արևելագիտության և սովետական գիտնականների կազմերի պարբերական գործում:

Լազարյան ճեմարանը բացառիկ դեր է խաղակալ հայիական մշակույթի, լուսավորության, հեղափոխական-դեմոկրատական հրապարակախոսության գարգացման պատմության մեջ, հայ նոր գրական լեզվի ձևավորման և տարածման գործում:

Մեզք իրավունք ունենք Լազարյան ճեմարանը գիտելու որպես ռուս և հայ ժողովուրդների մշակույթի ու բարեկամության խորհրդանշան, որպես հուշարձան մեկ ամբողջ դար շարունակ, իսկ Մոսկվան՝ որպես հայ ժողովրդի մշակութային կյանքի կարևորագույն կենտրոն:

2

Ճեմարանապետներ

Մոսկվայի խաղաղ Ֆրանցյեբերից մեկում ուշադրություն է դրվում հնամենի մի առանձնատուն: Քարձր գեոմախորսի վրա վեր բարձրացած շենքը տպավորիչ կերպով կանգնած է հանուննետալ դարպասների ունեցող զեղեցիկ ցանկապատով: Փառահեղ սյունարահը արտահայտիչ կերպով ձևավորում է շենքի կենտրոնը: Ղլխավոր շինությունը և նրա հետ ներդաշնակորեն դրսևակցվող թևաշենքերը կազմում են հիանալի լուծված մի

անսամբը⁴⁹,— աչպես է գրում Պ. Վ. Մյուխըր նախկին արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի շենքի մասին:

Լազարյան ճեմարանի վերաբերյալ Լեզած աշխատություններում, ճեմարանի ուրվագրերում, ինչպես և բաղմաթիվ լրագրային հոդվածներում ու նոթերում չի հիշատակվում այն ճարտարապետի անունը, որը ստեղծել է ռուսական ճարտարապետության այդ հիանալի հուշարձանը, որը պատկանում է Մոսկվայի ճարտարապետական տեսարժան կառույցների թվին: Միայն «Նյույթեր արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի պատմության համար» գրքում բերվում է արխիվային մի գրառում: «Շենքի համար կազմվեցին պլանների դասազան նախագծեր իսկական պետական խորհրդական Սոկոլովի, ակադեմիկոս Մեկերկովի, Պրոստակովի և ուրիշների կողմից»⁵⁰: Իսկ ո՞վ է ճարտարապետը: Ինչո՞ւ ոչ ոք չի հիշատակում նրա անունը: Նախքան ճարտարապետների անունը պարզելը, պարզեցր շենքի շինարարության սկզբի տարեթիվը, քանի որ այն տա աչսօր ճշտված չէ:

Սովորարար Լազարյան ճեմարանի հիմքը զգելու արևելիվը հասարում են 1814 թվականի մայիսի 10-ը: Սակայն դա այնքան էլ ճիշտ չէ: Բանն այն է, որ այդ օրը տեղի է ունեցել հիմնարկված շենքի օծումը, իսկ շինարարությունը, ինչպես այդ մասին վկայում են փաստաթղթերը, տվել վաղ էր սկսվել: Արխիվում պահպանվել են պլաններ, գունաթափ նկարներ, այդ թվում օպարոնայք Լազարյանների ծախքով 1810 թվականի մայիսին Մոսկվա մայրաքաղաքում նոր կառուցված հայկական ուսումնական հաստատության առաջադրվի ձևակառի» պլանը:

Շենքի սյունադարձ ձևադասման պատկերի վրա մեկ տողով արված է հետևյալ արձանտղրությունը. «Հայկական ուսումնական հաստատություն 1810 թվականի մայիսին: Պարենայր Լազարյանների ծախքով»⁵¹: Մեկ ուրիշ արխիվային գրքում գտնվում է մի մեծ թերթ շենքի ձևադասման պատկերով, որտեղ սյունադարձ դաս վերևում գրված է հետևյալ տեքստը. «Հայկական ժողովրդական ուսումնարան»: Փաստաթղթի մյուս կետի գրված է. «Ֆինագրի և պատճենի վրա ստորագրված է... սույն ձևադասմանը Մոսկվայի շինությունների հանձնաժե-

⁴⁹ П. В. СЫТИН. Из истории московских улиц, с. 266.

⁵⁰ Կոպի, ք. 850, ց. 3, գ. 147, թ. 150:

⁵¹ ՀԱԿՊԱ, ք. 1252, ց. 2, գ. 177, թ. 3:

դուրը բննարկել է... 1813 թվականի դեկտեմբերի 2-ին»⁵²; Հեռագրաբար, շինարարության նախագաղտաստական աշխատանքները սկսված են եղել 1812 թվականի Հայրենական պատերազմից մի քանի ասարի առաջ, բայց շնորհի կառուցմանը ձեռնամուկն էին եղել միայն 1813 թվականին: «Այդ նույն՝ 1813 թվականին,— գրում էր Հովակիմ Լավարյանը,— ինքը Մոսկվայում տեղ է ընարել ուսումնարանի համար»⁵³: Բնականաբար, շինարարությունը նախատեսվում էր հիմնականում հայերով բնակեցված շրջանում՝ Հայկական նրբանցրում:

Հեռաբերք է, որ Մոսկվայի այդ մասը 1812 թվականի հրդեհներից բիշ էր ատծել և աճա թե ինչ պատճառով. «Հայոց եկեղեցու շինությունների մոտ, պարոնաչք Լավարյանների տանը, որը Ալեքսեյ Միխայլովիչ ցարի գահակալության օրոք պատկանում էր նրա սիրելցյալին, քարտին Արտամոն Մատվեևին, 1812 թվականին բնակվում էր մի ֆրանսիացի բարեմիտ գեներալ. ինչպես նա, առավել ևս Նապոլեոն կայսեր մերձավոր, ոմն հայ, սերելի մամլուր Բուստանը, Նապոլեոնից կարգադրություն էին ինչդրել, որպեսզի ամբողջ թաղամասը, Պոկրովկայից մինչև Մյասնիցկայա փողոցը, և այն ամենը, ինչ պատկանում է հայոց եկեղեցուն, պահպանվի և կրակի ճարակ չդառնա, որի համար էլ հրամաններ արձակվեցին և ֆրանսիական զինվորական պահակախմբեր լվարդվեցին, որը պահպանվեց մինչև ֆրանսիացիների հեռանալը, Բայց երբ հանկարծակի ֆրանսիացիները հեռացան և երբ գեներալն արդեն մեկնել էր, այնժամ ֆրանսիացիները և ուրիշներ սկսեցին հրկիզել այդ քաղաքասի տները, բայց այդ ժամանակ Մոսկվայում գտնվող որոշ հայերի հարեվանների ջանքերն ու գոնությունը կանխեցին հրդեհի աղետները, և միայն դրանով փրկվեց հնամենի մայրաքաղաքի այդ մասը»⁵⁴:

Վավերագրերից մեկում նշվում է. «Շինարարությանը ձեռնամուկն եղան 1813 թ. սկզբին և ատիճանաբար ու հաջողությամբ բարձրացվեցին կառույցները, նրանցից որոշ մասը գրեթե պատրաստ էր 1814 թ.: Այնտեղ, որտեղ գտնվում էր պարո-

նայք Լավարյանների նախնիների քարաշեն հին տունը, որն այժմ վերակառուցումից հետո բակի մոտեքի կողմից կազմում է աշխարհները, 1814 թ. արվել է հայերի կրթության համար ուսումնական հաստատության նախնական բացումը»⁵⁵:

Մեկ ուրիշ փաստաթղթում գտնում ենք ճշգրատում. «Այն նույն տեղում... որտեղ այժմ կառուցված է պարոնաչք Լավարյանների հայկական ուսումնական հաստատության գլխավոր առանձնաշենքը և թևաշենքերը, նախկինում գտնվում էր քարաշեն երկհարկան մի տուն՝ հասուկ քարաշեն թևաշենքով և փայտյա հարակից կառույցներով. այդ շինության մի մասը ենթարկվել է վերափոխման, իսկ մյուս մասը՝ ոչ հարմար լինելու պատճառով քանդվել է: Այդ հին տունը իր պատկանելիքով, ինչպես և պարսպ տարածքով ու այգիով նախկինում պատկանում էր հանրացույց Աղազար Նապարովիչին, պարոնաչք Լավարյանների հաստատության հիմնադիրների ծնողին, և բաժանեցից հետո անցել էր նրանց բոլորը... Իշխանուհի Աննա Լավարենա Մումբատովիչին՝ նրա վախճանվելուց հետո այս տունը բաժին հասավ նրա եղբորը... Մինչև Աղազարի Լավարյանի, իսկ մարանից իր եղբորը՝ Հովակիմ Աղազարովիչին, որը հիշյալ հանգուցյանների՝ ծնողի, բոլոր և եղբոր անունից այդ տունը և տնտեսեղ նվիրաբերեց հզգոտ ուսումնական հաստատության, ձեռնամուկն եղավ և ավարտեց նոր գլխավոր առանձնաշենքը բոլոր հարակից շինություններով»⁵⁶:

Գլխավոր առանձնաշենքը և նրան հարող երկու թևաշենքերը ավարտվեցին 1823 թվականին: Թևաշենքերի միջև ճակատի երկայնքով ցանկապատ էր դրված մեջտեղում կարպասներ: Ցանկապատի հիմքը քարեց էր, որի վրա դրված էր մետաղյա վանդակապատ: Հեռաբերք էր և նկատել, որ վանդակապատը և դարպասները պատրաստվել էին Պերմի նահանգում՝ պարոնաչք Լավարյանների գործարաններում⁵⁷: (Աղբյուրակա . բակը փողոցի կողմից երկուսում էր ցածրիկ տափակափայտ ցանկապատը):

Այժմ փորձենք պարզել ճարտարապետների անունները: Լավարյանների արխիվում հաճախ հիշատակվում են երկու ճարտարապետների՝ Իվան Պոտյանի և Տիմոֆեյ Պրոտասկովի անուն-

⁵² ՀԱԳԱ, ֆ. 1252, ց. 2, գ. 276, Բ. 1:

⁵³ ԿԳՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 152, Բ. 41 ր:

⁵⁴ «Материалы для истории Лазаревского института восточных языков». Вып. 1, М., 1914, с. 2—3.

⁵⁵ ԿԳՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 147, Բ. 150:

⁵⁶ Նույն տեղը, գ. 148, Բ. 2:

⁵⁷ Նույն տեղը, Բ. 19:

ներք: 1817 թվականի մարտի 4-ի Սովետը «Հուշարգում» ն. 2. Լազարյանը նշում էր, որ «Պողոպանը Տիմոֆեյ Գրիգորևիչի (Պրոստատակովի) — Ա. Բ.) հետ համատեղ իմ պահանջով պատրաստելու է հետևյալ պլանները. 1) ուսումնարանի (Լազարյանն ճեմարանը մինչև 1827 թվականը կոչվում էր ուսումնարան: — Ա. Բ.) զբլ-խավոր առանձնաշենքի սլանը հետանկարում երկու թևաշենքերով ու ցանկապատով: այս սլանը կազմել մեծ մասշտաբով և հարավօրին շափ լավ տեսքով: Այս սլանը կառուել երեք օրինակեց. 2) սլանների նախագծեր կազմել ցախատների, ախտաների, նկուղների և ուսումնարանի մյուս պատկանելիքների համար հնարավորին շափ լավ ու հարմարակետ»⁵⁴:

Մեկ ուրիշ փաստաթղթում կարգում ենք. «Ճարտարապետ Պողոպանին այս կարգալով հայտարարել, որպեսզի բոլոր աշխատանքները ինչպես ուսումնարանի թևաշենքերում, այնպես էլ մեր տանը անսպասան կատարվեն լավագույն հաջողությամբ»⁵⁵:

Պահպանվել է Տիմոֆեյ Պրոստակովի 1817 թվականի մայիսի 19-ի նամակը իսաառաջ Լազարյանին: Պրոստակովը գրում է. «Ձեր Մոսկվայում գտնված մամանակ բարհաճեցիք հանձնարարել ինձ՝ կաշսբին մատուցելու համար հետանկարում պատրաստել հաշիական ուսումնարանի զուտ երկու ճակատամասը, որը ես եմ կառուցել: Պատրաստել նաև նախագծեր այդ ուսումնարանի պատկանող ծառայությունների, այլմեք՝ թևաշենքերի համար»⁵⁶: Եվ, վերջապես, «Ճարտարապետ Պողոպանի մոտ եղած պլանների ցուցակում, որոնք նրա Պեմո մեկնելուց հետո հանձնվում են Մոսկվայի գրասենյակին» (Լազարյանների գրասենյակին), որտեղ թվարկված են ուսումնարանի սլանները, ուղղակի նշված են հեղինակները. «1. Ուսումնարանի ճակատամասը հետանկարում, 2. Ուսումնարանի առանձնաշենքի ճակատամասը թևաշենքերով Պրոստակովի նախագծով մեկ թերթի վրա, 3. Երկու թևաշենքերի ճակատամասը Պրոստակովի նախագծով մեկ թերթի վրա, 4. Թևաշենքերի ճակատամասը զուտ կողակողմից Պողոպանի նախագծով, մեկ թերթում, 5. Թևաշենքերի ճակատամասը թևաշենքերի կողակողմից Պրոստակովի

նախագծով, 6. Պրոստակովի նախկին նախագիծը ուսումնարանի պատկանելիքների համար... կոթողի ճակատամասը»⁵⁷:

Այսպիսով, կարելի է հաստատապես սանել, որ երկու ուսու ճարտարապետներ՝ Տիմոֆեյ Պրոստակովը և Իվան Պողոպանը, եղել են Լազարյան ճեմարանի շենքի նախագծի հեղինակները: Հենց նրանք էլ Ալեքսանդր Առաքելովի հետ միասին հանձնում էին ճեմարանի կառուցման ընթացքին: Շինարարությունը տարվել է, ինչպես երևում է փաստաթղթերից, մի քանի տարի 1817 և 1820 թվականների արխիվներում հիշատակվում է նաև ճարտարապետ Գրիգորեյ՝ վերակազմի պաշտոնով⁵⁸:

Մեզ թվում է, որ վարելի է պատասխանել նաև երկրորդ հարցին, թե ինչու են ճարտարապետների անունները մոռացվել: Ամենից առաջ այն պատճառով, որ Իվան Պողոպանը և Տիմոֆեյ Պրոստակովը հղել են ճորտեր: Տաղանդավոր ինքնուս ճարտարապետ Տ. Գ. Պրոստակովը գնեցրալ Ա. Մ. Ռիմսկի-Կորսակովի շնորհն էր: Պրոստակովը շատ շինություններ է կառուցել Գոլիցինի, Ալարկոսինի, Օստրևոնի, Լազարյանների համար, բայց, հնալած բազում ազդեցիկ ղեմերի միջնորդությամբ և ցարի իսկ միջամտությամբ, ճորտական կախումից ազատագրվել է միայն կյանքի 60-րդ տարում: 1838 թվականին Գեղարվեստի ակադեմիային ռուսաբանության անունով արվեստների ասպարեզում լավ գիտելիքները, Տ. Գ. Պրոստակովին շնորհում է ճարտարապետության ազատ կարգ շունչեցող արվեստագետի կոչումը⁵⁹: Պրոստակովը մահացել է Մոսկվայում 1853 թվականի սեպտեմբերի 15-ին և թաղվել Վաչանկայի դերձուղանատանը:

Արխիվներում հայտնաբերված տեղեկությունները հաստատում են, որ Իվան Մատվեևիչ Պողոպանը ևս XIX դարի 10—20-ական թվականներին ճորտ է եղել: Փաստաթղթերից մեկում հաշտտոր Լազարյանը ցուցում է տալին իր հավաքածուտարին. «Ճարտարապետ Իվան Պողոպանին հանձնարարում եմ իր ձեռքը վերցնել Մատոկա Կոզովին, նրան զրահանալություն, նկարչություն, գծագրություն, սլաններ կազմել և ճարտարապետու-

⁵⁴ ՀԱԳՊԱ, ֆ. 1252, ց. 1, մ. 2, գ. 4356, թ. 205:
⁵⁵ Նույն տեղը, թ. 257:
⁵⁶ Նույն տեղը, գ. 260, թ. 1:

⁵⁷ ՀԱԳՊԱ, ֆ. 1252, ց. 1, մ. 2, գ. 4112, թ. 48:
⁵⁸ ԿՊՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 143, թ. 17, 18 ր:
⁵⁹ Մեղրաման տե՛ս С. В. Бессонов. Крепостные архитекторы. М., 1938.

Քլուն ստորեցնել⁶⁴։ 1820 թվականի հուլիսի 30-ի թվակիր փաստաթղթում ավելի կարող է ասված. «Հարմապել ճարտարապետ Պողյաշին՝ մեղ հասցնելու համար... մատուցող զծազբի կազմել»⁶⁵։ Եվ այսպես, Իվան Պողյաշը եղել է կազարյանների ճարտը։

Պողյաշի դրուժյան մասին վկայում է մեկ ուրիշ փաստաթուղթ ևս. «Եթե ես (այսինքն՝ հայատուր կազարյանը։—Ա. Բ.) որևէ բանում թերութուն դանեմ, դրա համար նրան անպայման իրատրեն կպատժեմ, և դրա համար էլ նա պաշտոնի բերումով պտրտալոր է օրինակելի ջանասիրություն և Լուսնդ ցուցաբերել, բնդ որում նա չպետք է համարճակվի որևէ տեղ հեռանալ ստանց և՛ասփիլի և՛ասիլեի զիտություն ու թուլություն, որի մոտ էլ Պողյաշը պետք է գտնվի կատարյալ հնազանդ ու խոնարհ, իսկ թերացման դեպքում նրան խիստ պատժել»⁶⁶։

Եվ, վերջապես, կա իր՝ Պողյաշի նամակը, ուղղված ոմն «Ողորմած պարոն Իվան Իվանովիչին»։ «Ձեր հարգարժան հանձնարարությունը ես, ստորնադույն ծառաս, արժանի եղա ստանալու, որով զուր բարեհաճում էիք հանձնարարություն տալ հրեհված տան հարգործման նախաձեռնություն մասին, որ ես ներկայացրել էի Ձերդ բարձր բարեծնություն... այժմ Ձեր բարձր բարեծնության հրամանով... ևս կազմել եմ հրեհված տան պլանը... և եթե հաճո կլինի պատրաստել ըստ այս պլանի, ապա բարեհաճեցեք այն ստորագրել»⁶⁷։ Նամակը վերջանում էր այսպես. «Սրանով իմ ծառայական բարձր հարգանքով և նվիրվածությամբ մնում եմ Ձերդ բարձր բարեծնության ողորմած ախրջ ստորնադույն ճարտ և հնազանդ ծառա Իվան Պողյաշ»⁶⁸։ Նամակը մեկնաբանությունների կարիք չունի։ Հետաքրքրի է նշել, որ այն գրված է Մոսկվայում 1813 թվականի պետրվարի 6-ին։ Հետևարար, Իվան Մատվեևիչը զբաղվում էր նախագծումներով և աներ ու օժանդակ շենքեր էր կառուցում Մոսկվայում կազարյանների համար դեռևս 1813 թվականի սկզբին։

Իվան Մատվեևիչ Պողյաշը 1814 թվականից վարում էր ճար-

տարապետի պաշտոն, իսկ 1816 թվականից՝ Հեմարանի տնտեսի պաշտոն։ Գեղարվեստից ակադեմիան՝ «Ճարտարապետության բնագավառում լավ հաջողությունների համար ըստ ակադեմիայի խորհրդի առաջադրած ծրագրի, նրան արժանացրեց ազատ արվեստագետի կոչման, իրավունք վերապահելով նրան համտձայն կկարգեմիայի բարձրագույնս շնորհված ատանձանշորհույների, օգտվելու սերնդեհետևող, մշտնջինական ու կատարյալ աշատությունը և մտնել ցանկացած ծառայության, 29 մայիսի 1835 թ. ...Ընդունված է կազարյանների Արևելյան Հեմարան գրասենյակային ծառայության 1835 թ. ապրիլի 4-ին։ Այս պաշտոնից զատ վարում է ճարտարագետի և տնտեսի պաշտոն այս Հեմարանը ընդունվելու օրից»⁶⁹։

Այստեղ մենք մի փոքր շեղում կկատարենք և անցյալ օրերից կդառնանք ներկային, որպեսզի վերապատենք 1977 թվականի հունվարի 26-ին «Պրամտ» թերթում տպագրված հոդվածը։

«Ուրալյան փորձիկ Չերտոչ բաղաբի վրա արածվեցին կուրանտների հնչյունները։ Կենդանացել էր նախկին բաղաբային տաճարի հնամենի ժամացույցը»։ Կուրանտները վերականգնել էր Չերտոչի լուրարկման խարսխակայանի նորոգման-մեխանիզակալան արհեստանոցների վարպետ Ալեքսեյ Ֆեֆիմովիչ Բեկեմիշը, իսկ ժամացույցը մոտավորապես հարյուր հրեսուն տարի առաջ պատրաստել էր մեկ ուրիշ տաղանդավոր ճարտար անձ՝ Արթուրի թերթագրանման գործարանիկ կցագրված ճարտի որդի Եդրո Եպիշինը։ «1848 թվականի աշնանը գործարան այցելեց նրա տեղը՝ հաշատուր կազարյանը, լսեց մինչ այդ արդեն գործի գցված ժամացույցի կուրանտների ներդաշնակ հնչյունները և Եդրոկան գործարանարտիչից ստացավ 200 ռուբլի ասիզնացիաներով... Ուրալյան վարպետի պատրաստած ժամացույցը պատմական արժեք ներկայացնող գործ է։ Բավական է ասել, որ այն գործի է գցվել Մոսկվայի Սպասոկի աշտարակի վրա գրված կուրանտներից երեք տարի առաջ»։

Ճարտար վարպետի հետագա ձակատագիրն անհայտ է, գրում է «Կուրանտների կենդանացան»⁷⁰ հոդվածի հեղինակ Վ. Բարուկինը։

Ցավոք, սույն գրքի հեղինակին ևս հայտնի չէ տաղանդավոր

⁶⁴ ԱԿԳԱ, ֆ. 1252, ց. 1, մաս 2, գ. 4356, թ. 255։

⁶⁵ Նույն տեղը, թ. 257։

⁶⁶ Նույն տեղը։

⁶⁷ Նույն տեղը, ֆ. 1253, թ. 1, 2։

⁶⁸ ԿԳԱ, ֆ. 880, ց. 5, գ. 171, թ. 71, 72 (Ֆրանսեյակային ծառայող Իվան Մատվեևի որդի Պողյաշի ծառայացուցակը 1841 թ. համար)։

⁶⁹ ԿԳԱ, ֆ. 880, ց. 5, գ. 171, թ. 71, 72։

⁷⁰ «Правда», 26.1.1977.

վարպետի ճակատագիրը: Այս շնորհիվ կատարվեց բնթերցողին ավելի լրիվ Իվան Մատվեևիչ Պողչաշիի ստեղծագործությանը ծանոթացնելու համար, որի նախագծով էր Չերմոզով 1836 թվականին կառուցվել այն եկեղեցին, որի վրա ավելի ուշ գրվել էր կտրանտեխնիկ ժամացույցը, ինչպես նաև ամսաթիվի և Լուսնի փուլերի ցուցիչը:

Նախկին քաղաքային տաճարի ժամանակակից տեսքը փոքր-ինչ տարբերվում է Ի. Մ. Պողչաշիի կառույցից: Ինչպես սույն աշխատության հեղինակին հաղորդել է Չերմոզով քաղաքի ժողովրդագրական թանգարանի աշխատակցուհուհին, եկեղեցին կառուցված է «ինչ գմբեթանի, իսկ կրք ծանեկ ևն զանգակները (30-ական թվականներին)», թողել են միայն զլխավոր գմբեթը:

Ինտական ճարտարապետության պատմության բնագավառը կատարված այս փոքր էքսկուրսը մեզ հնարավորություն է տալիս ծանոթանալու տաղանդավոր, բայց մոռացված ճորտ ճարտարապետ Իվան Մատվեևիչ Պողչաշիի կենսագրությանն ու որոշ ստեղծագործություններին⁷¹, որի կառույցները Մոսկվայում, Տուլայում, Չերմոզով մնացել են մինչև մեր օրեր և պահպանվում են պետության կողմից որպես պատմական և ճարտարապետական հուշարձաններ:

Լադարյան ճեմարանի շէնքեր և ճակատի երկայնքի քարաշեն ցանկապատը քանիցս վերափոխումների են ենթարկվել: «Հայտունի է,— դրում էր հաշվատար կազարյանը 1841 թվականին,— ոչ մեր ճեմարանը բազմիցս տարբեր անձանց իտրուբուհերով, մեր քանի ճարտարապետների ցուցումներով... զանազան վերակառուցումների ու նորոգումների է ենթարկվել»⁷²: Առավել լուրջ վերակառուցումը տեղի է ունեցել XIX դարի 40-ական թվականների սկզբին, երբ կողաշենքերը միացվել են զլխավոր առանձնաշենքին:

1842 թվականին կազարյանները միջոցներ արամազրեցին զլխավոր առանձնաշենքի և կողաշենքերի միջև երկու քարաշեն վերնասրահներ կառուցելու, իսկ 1843 թվականին՝ նոր քարաշեն ցանկատարի համար⁷³: Բայց պետք է արժանին հատուցել ճարտարապետներին, զրանից ճեմարանի ճակատամասի ընդհանուր տեսքը աննշան փոփոխություններ է կրել: 40-ական թվա-

կանների սկզբին ճեմարանի վերակառուցումը զբաղվել են ճարտարապետներ Ի. Մ. Պողչաշի և Գրիգորի II-ը:

Նախկին կազարյան ճեմարանի շէնքը, որպես ճարտարապետական անսամբլ, որդիսին մենք այն գիտենք, ձևավորվել է 1914 թվականին: Անցյալ դարի 20-ական թվականների սկզբին սովորույց կենտրոնական առանձնաշենքի և երկու կողաշենքերի շինարարությունը, իսկ այդամ հուշակոթողի գրվել: «1822 թվականի զեկտեմբերի 12-ին ճեմարանի մեծ այգում գրվեց մարմարե պատկերաբանդակներով թուրաձույլ փասահեղ հուշարձան»⁷⁴:

Պատկերաբանդակները պատկերում էին ճեմարանի հիմնադիրներին, իսկ սալիկների վրա արված էին հիշատակության արձանագրություններ: «Բոտոբեն արձանագրություններն ու բանաստեղծությունները հորինել է օրդինար պրոֆեսոր Ա. Ֆ. Մերկլայանովը, հայերենը՝ ճեմարանի ուսուցիչները»⁷⁵: Այդ հուշակոթողի մոզիլը պատրաստված էր զեկտե 1819 թվականին⁷⁶: Հուշարձանը ձուլել էին կազարյանների Պերմի գործարաններում: Գրեթե հարյուր տարի աչն զտնվում էր այդում, զլխավոր առանձնաշենքի ետևում:

40-ական թվականներին կողաշենքերը անցումներով անմիջականորեն միացվեցին կենտրոնական առանձնաշենքին և կառուցվեց նոր քարաշեն ցանկապատ: Ճեմարանի հարյուրամյակի նախօրին փոխեցին կենտրոնական առանձնաշենքի ճակատի առջևի բակի պլանավորումը և այտուցի փոխադրեցին հուշակոթողը: Այտուցը էլ նա կառուցել է առ այսօր:

Հուշարձանը փոխադրվել է 1914 թվականի սեպտեմբերի 9-ին⁷⁶: Ճարտարապետ Ալաքանովը զեկավարում էր հուշարձանի տեղափոխությունը, իսկ նկարիչ Ս. Ալյուշինը զբաղված էր վերականգնմամբ, կամ, ինչպես գրված է արխիվային փաստաթղթերում, կատարեց «շուխանեն և շուխիմ Աղազարի կազարյանների երկու հին բարձրարանդակների արժատական վերանորոգումը, ինչպես նաև ստեղծեց երկու ուրիշ՝ Հովհաննես և

⁷¹ Գրգու, ք. 213, ց. 1, գ. 26, թ. 4:

⁷² Կրգու, ք. 850, ց. 5, գ. 147, թ. 15:

⁷³ Կրգու, ք. 850, ց. 5, գ. 148, թ. 17:

⁷⁴ Собрание высочайших указов и актов. СПб., 1839, с. 188.

⁷⁵ Նույն տեղը, էջ 192:

⁷⁶ Газета «Раннее утро», 10.IX. 1914.

եաշատուր Հովակիմի Լազարյանների բարձրաբանդակ դիմա-
նկարները⁷⁷: Մեր ժամանակներում այդ շնքը ուշադրություն է
գրավում որպես ոչ միայն պատմական, այլև որպես XIX դա-
րի սկզբի ռուսական ճարտարապետության արժեքավոր ճարտա-
քանակական հուշարձան:

III

ԱԶԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՀԱՎԱՔԱՄՈՒՑ

Պահպանված նկարագրությունները, լուսանկարները և նկար-
ները վկայում են, որ Լազարյան ճեմարանի ներսակողմը հար-
չարված էր գեղարվեստական մեծ ճաշակով:

Ճեմարանի հանդիսագահները, նրա կարլինտներն ու գրա-
դարանները զարգարում էին ականավոր վարպետներ Ի. Պ. Մար-
տոսի, Տ. Փ. Փակի, Վ. Ա. Տրոպինինի, Ի. Պ. Արզումովի, Վ. Ի.
Սոշկովի կտավներն ու քանդակները: Մեծ մասամբ դրանք գե-
ղանկարչական և քանդակագործական դիմանկարներ էին, որոնք
հասնելի պատկերացում են տալիս XIX դարի առաջին կեսի ռու-
սական դիմանկարային արվեստի մասին:

Կալին տեսարանային և սյուժետային կտավներ, որոնք այս
կամ այն չափով կապված են եղել Լազարյանների ընտանիքի և
նրանց ճեմարանի հետ: Նկարներից մեկը նվիրված է Պարսկա-
ստանից հայերի գաղթին: Գաղթի կազմակերպումը, ինչպես
հայտնի է, ցարական կառավարությունը հանձնարարել էր Ղա-
զար Հովակիմի Լազարյանին: Իհարկե, Լազարյանների ընտա-
նիքը հավերժացրել էր այդ կարևոր իրադարձությունը: Մյուսը
1860 թվականին նկարել էր գեղանկարչության ակադեմիկոս
Պ. Վ. Տուտուկինը¹, Դա Վեազարյան ճեմարանի տեսարանն էր:
Հավաքածուում կար նաև նշանավոր ծովանկարիչ Հ. Կ. Սյւլա-
զովսկու կտավը: 1865 թվականին ռեժիսանեսս Կոնստանտինո-
վիչ Ալվազովսկին, ի նշան երախտագիտության, սաների թվում

¹ Պյոտր Վասիլևիչ Տուտուկինը (1819—1901)՝ Գեղարվեստից ակադեմիստի
ազատ ասցիլու աշակերտը 1844—1851 թվականներին, իր աշխատանքների հա-
մար պարգևատրվել էր մեդալներով: 1857 թվականից՝ ակադեմիկոս: Եղել է
էրմիտաժի պատկերասրահի թանգարանագահը (տե՛ս Кондаков. Импера-
торская Академия художеств. Т. 2, 1914, с. 201):

իբ Մագիբոմբներ անվանյալ երկու զարմիկների կրթության համար, որոնք ավարտել էին լրիվ դասընթացը, սանդոզ մի քանչևիկ նկար՝ Քեոդոսիա քաղաքի տեսարանը, որն այժմ շրջանակով ուղարկվում է... (Պետերբուրգից Մոսկվա— Ա. Բ.) Այդ գովելի նվերը, որպես պրն. Այվազովսկու հիշատակ, պահպանվել է խնամքով, դրանցել ընծայատվությունների մատյանում, և ճեմարանի սեփականության անվանացուցակում²։

Հնաաբրիր է, որ 1870 թվականին Պետերբուրգից Ղրիմ մեկնելիս 2. Կ. Այվազովսկին եղավ ճեմարանում, և դիտելով այն. գտավ, որ իր նկարած և նվիրած կապիվ՝ «Քեոդոսիա քաղաքի տեսարանը տեղադրված է երա համար խիստ շահավետ տեղում»³։ Դա Այվազովսկու միակ նվերը չէր ուսումնական հաստատություններին։ Այսպես, ուսանակն արվեստի պատմաբան Սորելն նշում է, որ նկարիչը Վենետիկում նկարած իր «Լուսնյակ գիշեր» նկարը նվիրաբերել էր սր. Ղազարի վանքին, որտեղ դաստիարակվել էր երա ավագ երաբար Գարեբեկը⁴։

Ներկայումս նախկին լազարյան ճեմարանի կառավերի և քանդակների հավաքածուի մեծ մասը, որոնք Համառուս. Կենսագրվածուի որոշմամբ հանձնված էին Հայաստանի բանվորագյուղացիական կառավարությանը⁵ ի տնօրնություն, գտնվում են Երևանի պատկերասրահում։ Ինչ վերաբերում է Պ. Վ. Տուտակինի «Լազարյան ճեմարանի տեսարանը» նկարին, ապա այն հայտնաբերվել էր ՄՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի մասնաճյուղի գրազարանում⁶ և վերադարձվել էր Մոսկ-

վա՝ նախկին լազարյան ճեմարանի շենքը, որն այն ժամանակ գրազնցնում էր ՄՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը⁷։

1

Լազարյանները կերպարվեստում

Լազարյանները հաստատուն կերպով մտել են արվեստի պատմության մեջ որպես նկարների, քանդակների հավաքածուի տերեր, որպես մեկնանաներ և վերջապես, որպես մի ընձանիքի ներկայացուցիչներ, որոնց դիմանկարները կերտել են անցյալի ականավոր նկարիչներ Երանց հարուստ պատկերասրահը ներկայացված էր XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի մեծ վարպետների ստեղծագործություններով։ Այդ հավաքածուի մի փոքր մասը կազմում էին լազարյանների ընտանիքի ներկայացուցիչների դիմանկարները։

Ինչպիսին էլ որ լինեին պատվիրատուների շարժառիթները, ներկայումս աչդ սանդոզագործությունները յուրահատուկ էջ են կերպարվեստում, իսկ յուրաքանչյուր դիմանկար՝ գեղարվեստական և պատմական մեծ արժեք է։ Լազարյանների ընտանիքի անդամների քանդակներն ու դիմանկարները ցուցադրված են Լենինգրադի, Գրգիտ, Կալուգայի գեղարվեստական պատկերասրահներում, իսկ Երևանում զարգանում են մի քանի սրահ։ Դրանց պար է ավելանել, որ լազարյանների ընտանիքի անդամները առնվազն երկու դիմանկար գտնվում են արտասահմանում։

Լազարյանների ընտանիքի անդամների պատկերասրահային ուսումնասիրությունը համոզում է արվեստագետ Տ. Ա. Սելինովի այն կարծիքի ճշմարտացիությունը, «որ լազարյանների դիմանկարները բավարար չափով ուսումնասիրված չեն եղել, զոյություն ունեն բազմաթիվ փաստական ախալներ և անճշտություններ»⁸։ Իրոք, միշտ չէ, որ մանրակրկիտ կատարվել է դիմանկարների նույնացում և պարզվել նկարիչների հեղինակությունը։ Դրա համար էլ նկարների պատճենները մատուցվում են

² Արևելյան լեզուների լազարյան ճեմարանի վարչության ճեմարանի հոգաբարձուի հրած 1865 թվականի մայիսի 13-ի (№ 124) նամակից. (ՄՔՊՊԱ, ֆ. 212, ց. 1, գ. 339, ք. 18)։

³ ՎՊՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 283, ք. 39։

⁴ Н. П. Собоко. Словарь русских художников с древнейших времен до наших дней. Т. 1, вып. 1, с. 314 (2. Կ. Այվազովսկու ավագ երաբար ասանել էր հայ կաթոլիկ միաբնաբան միարանության զբոսնում՝ Վենետիկում, սր. Գաղար կղզու)։

⁵ «Известия», 29.IX. 1921.

⁶ Հետ երևումին, աչ նկարը XIX դ. 70-ական թվականներից հետո, արգեն Արամյանի-Լազարյանների հոգաբարձուական ժամանակ, առավել է Պենտերուց, որտեղ համարել է արվեստի սանդոզագործությունների Երանց մեծ հավաքածու։ Հնարավոր է, որ Պ. Վ. Տուտակինը կատարել է նկարի հեղինակային պատճեն։ Բանն այն է, որ այդ նկարը վրա դրված է «1860» տարիվից, իսկ յուր տարի հետո, 1864 թվականին, լազարյանները վճարել են

Տուտակինի «Լազարյան ճեմարանի տեսարանը յուզանկարի համար (ՎՊՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 147, ք. 49 ք)։

⁷ 1953-ից մինչև 1976 թվականը Հայկական նրբանցքի № 2 տան գրալի մասը զբաղեցնում է ՄՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտը։

⁸ Т. А. Селинова. Иван Петрович Аргунов. М., 1978, с. 64.

որպես բնագրեր: Յավոք, միօրինակություն չկա դիմանկար-
ներում պատկերված անձնավորությունների անվանատառերի
գրելաձևի մեջ, այստեղից էլ ծագել են շատ շփոթություններ:

Ուշադրություն է գրավում այսպիսի մի գործոն ևս: Մինչև
այժմ կաղարյանների դիմանկարները դիտվել են այս կամ այն
նկարչի ստեղծագործության ուսումնասիրման տեսանկյունից:
Հավանաբար, իմաստ ունի ուսումնասիրության մեկ ուրիշ հանգ-
րեճը (ռակուրս) ևս, այն է՝ քննել դիմանկարչային դեղանկար-
չության ձևափոխությունը հարույր հիսուն ամյակ ընթացքում,
սկսած XVIII դարի երկրորդ կեսից և մինչև XIX դարի սկիզբը.
կաղարյանների դիմանկարների օրինակով:

կաղարյանների բնամանիքի առաջին սերունդը Ռուսաստա-
նում ներկայացված է Աղադար Նազարի կաղարյանով (1700—
1782) և նրա կին Աննա Հովակիմի կաղարյանով (1710—1770):
Նրանց դիմանկարները նկարել է կոմս Շերեմետևների նշանա-
վոր ճարտ նկարիչ Իվան Պետրովիչ Արզումովը: Ի. Պ. Արզումովի
ստեղծագործությանը նվիրված հետաքրքիր մենագրության հե-
ղինակ է Ս. Ա. Սելինովան գտնում է, որ Արզումովը նկարել է
«կաղարյանների շրջա դիմանկարներ» ընտանիքի գլուխ Ա. Ն.
կաղարյանի, նրա կնոջ, Ա. Հ. կաղարյանի, նրանց երկրորդ որ-
դու՝ Մ. Ա. կաղարյանի, և, քառ երեւոյթին» (ընդգծումը մերն է:—
Ս. Բ.), նրա կնոջ՝ Ա. Վ. կաղարյանի, ծննդավոր՝ Խասաստովա-
յի. դիմանկարները»⁹: Այդ զգույշ «քստ երևույթին»-ը կապված
է այն պարագայի հետ, որ դիմանկարը «ստորագրություն չու-
նի»¹⁰: Ս. Ա. Սելինովայի կարծիքով, այդ կանացի դիմանկարի
պտկանակությունը Ի. Պ. Արզումովի վրձինն՝ «կասկածներ են
հարուցում»¹²:

Այսպիսով, Ի. Պ. Արզումովի ստեղծագործության մեջ ներ-
կայացված են կաղարյան արզումունը կրողների երկու սերունդ:
Տ. Ա. Սելինովան ընդգծում է, որ «Արզումովի արվեստի ամե-

⁹ Հայերեն Հովակիմ անունը հաճախ ուսուրեն Թարգմանեմ է Բուսկիմ,
Սկիմ, Յակիմ, Ակիմ: Այդ հանգամանքը պատճառ է դարձել, որը մասնավոր-
ապես ղեկավարացնում է կաղարյանների ընտանիքի ազգամենքի դիմանկարները
նույնացումն այն դեպքերում, երբ գրանց վրա մակագրություններ են արված
անվանատառերով կամ անունով և ազգանունով:

¹⁰ Т. А. Селинова, Иван Петрович Арзумов, М., 1978, с. 64.

¹¹ Նույն տեղը, էջ 72:

¹² Նույն տեղը:

նորարձր ծաղկման շրջանում պատկերված կաղարյանների դի-
մանկարները վկայում են նկարչի ձգտման մասին՝ ճշմարտա-
ցիտորեն բացահայտելու մոդելի կերպարը և հաղորդելու ազգային
գեղեր կաղարյանների արտաբնում»¹³:

Տ. Ա. Սելինովան առաջադրում է մի թեզ ևս միևնի դիմա-
նկարի վերաբերյալ: Նա գտնում է, որ այդ դիմանկարում պատ-
կերված է ոչ թե Աննա կաղարյանի (կաղար Նազարովիչի և Աննա
նկիմովնայի դուստրը), ինչպես գտնում են Երևանի պատկերա-
սրահի արվեստագետները, որոնք հիմնվում են նկարի կտրի մա-
սում պահպանված «պատաստումով եղբերով պիտակի վրա, որը
վրա կարելի է կարդալ. «Աննա կաղար... Սոււբաստովա...»¹⁴, այլ
Աննա Վասիլենա Խասաստովան (1750—1802), Մ. Ա. կաղար-
յանի կինը:

Լիսազոտոգի պնդումը կառուցված է այն բանի վրա, որ.
«Համեմատելով կանացի դիմանկարները և Մ. Ա. կաղարյանի
դիմանկարը, չի կարելի նրանց միջև չնկատել կոմպոզիցիոն և
գեղանկարչական նմանությունը»¹⁵:

Մեղ թվում է, որ այդ փաստարկը հետազոտողի իրավա-
ցությունն էրավականաբար համոզելու այսպույց չէ: Երկու դիմա-
նկարների և՛ կոմպոզիցիոն, և՛ գեղանկարչական նմանությունը
միանգամայն թույլատրելի է ինչպես ամուսնուն և կնոջը պատ-
կերելու, այնպես էլ եղբորն ու բրորը պատկերելու: Այնքան է:
Համոզել չեն նաև Տ. Ա. Սելինովայի մի քանի ուրիշ կարծիք-
ներ, որոնք դիմանկարի նույնացմանը չեն վերաբերում: Հեղի-
նանք գրում է. «1760-ական թվականների վերջերին, երբ Ար-
զումովը նկարում էր կաղարյանների դիմանկարները, նա ապ-
րում էր Պետրովովից, կոմս Շերեմետևի» «Միլիտանոց տա-
նը», և վաչելում էր լավ դիմանկարչի համարվ: «Միլիտանոց
տնից» ոչ հեռու գտնվում էր Լ. Ն. կաղարյանի ավագ որդու՝ պա-
րտական ոսկերիչ Լ. Ա. կաղարյանի առնելը... Կարելի է ենթա-
դրել, որ ոչ միայն դիմանկարչի համբուխը, այլև բարեօրացիա-
կան հարաբերությունները նպաստել են այդ պատվերի ստաց-
մանը»¹⁶: Այս ենթադրությունը կապ չունի դիմանկարների նույ-
նացման հետ: Այնուհետև, Տ. Ա. Սելինովան ուշադրություն չի

¹³ Т. А. Селинова, Иван Петрович Арзумов, М., 1978, с. 73.

¹⁴ Նույն տեղը, էջ 72:

¹⁵ Նույն տեղը:

¹⁶ Նույն տեղը, էջ 64:

շարժրել հետևյալ փաստի վրա: Արզուեովի աշխատանքների թվում կա նաև Աննա Լադարենայի ամուսնու՝ Ի. Գ. Մուսթատովի դիմանկարը: Հարկ է խորհել նաև այն մասին, թե ինչպես կարող էր նկարիչ Արզուեովը նկարել Լ. Լադարյանի և նրա կնոջ դիմանկարները: Չէ՞ որ հիշյալ անձնավորությունները մշտապես բնակվում էին Մոսկվայում և նրանց համար խիստ դժվար գործ էր ծերունական տարիքում ուղևորություն կատարել Պետերբուրգ:

Ինչ վերաբերում է Աննա Լադարենա Լադարյանին, ապա նա ապրում էր Պետերբուրգում, որտեղ ծառայում էր նա ամուսնին՝ իշխան Իվան Գրիգորևիչ Մուսթատով: Հենց այստեղ էլ, Պետերբուրգում, Ամոնիի հայկական գերեզմանատան եկեղեցու Լադարյանների տոհմական հանգստարանում էլ թաղվել են նրանք: (Ինչ վերաբերում է Լ. Ն. Լադարյանին, նրա կնոջը՝ Ա. Ն. Լադարյանին, նրանց որդուն՝ Մինասին, ապա սրանք թաղված են Մոսկվայում, Վազանկայի հայկական գերեզմանատանը:)

Կարող է հարց ծագել, իսկ այդ դեպքում ինչպես է նկարիչ Ի. Պ. Արզուեովը նկարել Լ. Ն. Լադարյանի, նրա կնոջ, նրանց որդու դիմանկարները: Այդ առթիվ կարելի է վիճել: Կարելի է, օրինակ, ենթադրել, որ Արզուեովը նրանց դիմանկարները նկարել է ոչ թե բնօրինակից, այլ սակավ հայտնի, օռչ հեղինակավոր՝ նկարչի նկարած դիմանկարներից: Հայտնի է, որ Լադարյաններն ունեցել են «բրնձ» նկարիչ: Մասնավորապես, Տ. Ա. Ալեխնովան հիշատակում է «Լադարյանների նկարիչ Յակով Լեոնովին՝ Վ. Լ. Բորովիկովից աշակերտին»¹⁷: Ավելի ուշ ժամանակ, արդեն XIX դարում, կարելի է տալ նկարիչներ Կոչակովի և Լոդեշչիկովի անունները: Բայց, բոլոր պարագաներում, Տ. Ա. Ալեխնովայի ենթադրությունը ապացույցներ է պահանջում:

Որպես քաղաքական գործիչ, ձեռնարկատեր և գործարանատեր, որպես մեկնեսա ամենից ավելի մեծ համբավ է ստացել Եղազար Նազարի Լադարյանի շրթ որդիներից ավագը՝ Հովհաննես Լադարյանը: Հենց նա էր, որ փալկայում էր ուսումնական հաստատություն ստեղծելու գաղափարը և հենց նա էր, որ նշանակալից գումար էր թողել դրա հիմնադրման համար: Ավելի ուշ, Լադարյան ճեմարանի ստեղծումից ք վեր, Հովհաննես Լադարյանի վրա է հաստատվելու ճեմարանի հիմնադրի մակղիբը և նրա դիմանկարները ուղեկցվելու են այդ բառերով:

«Հովհաննես Աղազարի Լադարյանի» հայտնի լուսանկարը պատկանում է Վիեննայի գեղարվեստից ակադեմիայի պրոֆեսոր և Վերոնայի ակադեմիայի անդամ Իոհան Բապտիստ Լամպի-ուպոզի վրձինի»¹⁸: Լամպի կղզամտեովը հայտնի են հինգ նկարիչներ, և նրանցից երեքը են Իոհան Բապտիստ անունը: Դրա համար էլ այդ երեք նկարիչների անուններին համապատասխանաբար ավելացնում են՝ ավյազ (I), կրտսեր (III): Ռուսաստան են եկել հայը և որդի Լամպիների, և զրա համար էլ նկարիչ Լամպիների մասին առական հարտարակություններում հետևում էին Լամպի-հայր, Լամպի-որդի ընտրույուններին:

Ի. Բ. Լամպի-հայրը (1751—1830) մեծ ժողովրդականություն էր վայելում իր հայրենիքում և արտասահմանում: 1789 թվականին Գ. Ա. Պոտոլովիից, որը առական բանակի հրամանատարն էր 1787—1791 թվականների առաջ-թուրքական պատերազմում, նրան հրավիրել էր Ցաստի: Այստեղ Լամպին նկարում է Եկատերինա II-ի այդ սիրելիցայի և էլի մի քանի դիմանկարներ, այդ թվում նաև երիտասարդ ապա, հրամանատարի համարը կոմս Հարտություն Հովհաննեսի Լադարյանի (1768—1791) դիմանկարը:

1792 թվականին Լամպին հրավիրեցին Պետերբուրգ, որտեղ նա աշխատեց մի քանի տարի (Վիեննա է վերադարձել 1797 թվականին, իսկ նրա որդին Ռուսաստանից մեկնել է 1804 թվականին): Լամպի-հայրը մեծ ազդեցություն է գործել մի ամբողջ շարք առաջ դիմանկարիչների ստեղծագործության վրա: Պետերբուրգում նկարչի կատարած աշխատանքների թվում են Հովհաննես Աղազարի Լադարյանի դիմանկարը, որի մասին խոսվեց վերևում, և կոմսուհի Լադարյանի դիմանկարը: Կանացի դիմանկարի նույնացման հարցում տարակարծություններ կան: «Старые годы» ամսագրում դիմանկարի լուսանկարի տակ կարդում ենք «Самуэль Լադարյան, ծննդյանը՝ Աբամիլթ»¹⁹:

Կալուզայի գեղարվեստական թանգարանի գլխավոր թանգարանապահ Գ. Մ. Զոտովյան 1979 թվականի մարտի 29-ի նամակում սիրալիբ կերպով հայտնում էր սույն գրքի հեղինակին, որ

¹⁸ Երբևէ նկարչի անունը գրում են Հովանի Բապտիստ Լամպի՝ Եշկով նրա իտալական ծագումը:

¹⁹ В. Веретенников. Лампи-отец и его мысли об Академии художеств.— «Старые годы», 1910, октябрь.

¹⁷ Т. А. Селинова. Иван Петрович Аргунов. М., 1978. с. 66.

Քանգարանի հավաքածուում պահպանվում են կամպիի վրձնիկն պատկանող կազարյանների ընտանիքի անդամների հրեք դիմանկարների՝ Հովհաննես Աղազարի կազարյանի դիմանկարը, փտավ, յուղաներկ, Հարություն Հովհաննեսի կազարյանի դիմանկարը և կոմսուհի կազարյանի, ծննդավաճ՝ Իվանովայի դիմանկարը (այդ մասին են վկայում կտավի եանում եղած թղթյա պիտակի մնացորդները)։

Մեկ թվում է, որ նույնացումը և՛ առաջին, և՛ երկրորդ ղեկարում սխալ է։

Սրբազան Հռոմեական կայսրության կոմսի տիազոս բարոն Իոհան ֆոն կազարեֆին՝ երկու սեռի օրինական ժառանգներով ու հետնորդներով շնորհվել է 1788 թվականին ավստրիական կայսր Հովհան II-ի կողմից։ Այդպիսով, միայն Հովհաննես կազարյանը, նրա կին Կատարինա Իվանովնա կազարյանը (ծննդյամբ՝ Միրզախանովա) և նրանց որդի Հարություն կազարյանն էին կրում կոմսի տիտղոս²⁰։ Ժիշ է, Հովհաննես կազարյանի կրտսեր եղբայր Հովակիմ կազարյանի կնոջ աղջկական ազգանունը Իվանովա էր։ Բայց, այնքա է կարծել, որ թղթի պիտակի մնացորդը պահպանել է ոչ թե Աննա Սերգենևա Իվանովայի ազգանունը (որը կոմսուհու տիազոս չէր կրում), այլ Կատարինա Իվանովնա կազարյան-Միրզախանովայի հայրանունը։

Կազարյան եզրգլխներից ավազի ընտանիքի անդամների բոլոր երեք դիմանկարները ստացվել են, ինչպես այդ հաստատում է Կալուզայի Դեղարվեստական թանգարանի գլխավոր թանգարանապահ Գ. Մ. Ձոտովան, Դելյանովների Կալուզայի մոտ գտնվող «ժեկեդնյակի» կալվածքի՝ Դելյանովները, ինչպես հայտնի է, կազարյանների մերձավոր ազգականներն էին։ Հովակիմ Աղազարի կազարյանի և Աննա Սերգենևայի դուստրը՝ Մարիան, ամուսնացած էր գեներալ-մայոր Ի. Ա. Դելյանովի հետ, իսկ Մարթա Հովակիմովնա (Ներսիսյան) կազարյանի և Դավթ Սեմյոնովիչ Աբամելիքի դուստրը կնոթյան էր գնացել Իվան Դավիդովիչ Դելյանովին։

Ներկա դարասկզբի արվեստագետներից մեկը գրում էր. «ժելեյնյակիի հին տունը լեռուն է նկատներինայի և Ալեքսանդրի ժամանակների դիմանկարներով։ Այստեղ է կազարյանների գրե-

թև ողջ ընտանիքը, Դելյանովները, իշխանուհի Աննա Դավիդովնա Աբամելիքը, հետագայում՝ Բարատինսկայան»²¹։ Այնուհետև հեղինակը բերում է Ալեքսանդր Սերգենիչ Պուշկինի «Իշխ. Ա. Դ. Աբամելիքի արտում» հայտնի բանաստեղծությունը։ «Պուշկինը որանշացած էր Բարատինսկայայի կրակոտ աչքերով ու դրախտային զեղեցկությամբ։ Դա պուշկինյան երազանքն էր»²²։

Ա. Գ. Բորասինսկայայի դիմանկարը նկարել է լավագույն ջրանկարիչներից մեկը՝ Ալեքսանդր Պավլովիչ Բյուլլովը։

Բայց վերագրմանը Ի. Բ. կամպիի նկարած Հովհաննես կազարյանի և Կ. Բ. Միրզախանովայի դիմանկարներին։ Ցաղրը, Հովհաննես կազարյանի, նրա կնոջ՝ Կատարինա Իվանովնա Միրզախանովայի, դիմանկարները, որոնք ցուցաբերված են Կալուզայի Էլզարդիստական թանգարանում, բնօրինակներն չեն։ Դարասկզբի հետազոտողները սխալվել էին, իսկ ժամանակակից հետազոտողները կրկնել են այդ մոլորությունները, ուչադրություն շղարձելով մի փոքր հորվածի վրա, որը լույս է տեսել «Старые годы» ամսագրի 1910 թվականի դեկտեմբերի համարում։ Այստեղ ապացուցված է Աբամելիք-կազարյանների սոսնձի միանջ ժառանգի և վերջին ներկայացուցչի (արական դժով) նամակը։ Սեմյոն Սեմյոնովիչ Աբամելիք-կազարյանը գրում էր. «Քույր ավիք ուղղելու «Старые годы» հանդեսի նույնների համարում սպրցած մի սխալ։ Այնտեղ՝ Պ. Վ. Վերանկերիովիչ Նովակովին կից տրված են կամպի-հոր դիմանկարներից արված երկու լուսանկար, որոնք պատկերում են կոմս Հովհաննես Աղազարի կազարյանին (որը պատկանում է ինձ) և կոմսուհի կազարյանի, ծննդյամբ՝ իշխանուհի Աբամելիքին (որը պատկանում է բարոն Ն. Ե. Վրանգելին)։

Իմ պապի հարազատ հորեղբայրը՝ Հովհաննես Աղազարի կազարյանը (1735—1801), Սրբազան Հռոմեական կայսրության կոմսի տիտղոս ստացել է 1788 թվականին։ Գիմանկարում պատկերված նրա կինը՝ Կատարինա Իվանովնա կազարյանը, ծննդյանյամբ՝ Միրզախանովա (1750—1819) է։ կազարյաններից կլած իշխանուհի կազարյաններն չեն եղել։

Կամպիի նկարած Հ. Լ. կազարյանի և Ե. Բ. կազարյանի սքանչելի դիմանկարները 30-ական թվականներին (XIX դարի։—Ա. Բ.)

²⁰ Սեդերն ավելի երկար ապրեցին, քան իրենց զավակները, և Հարություն կազարյանի մահվամբ հանգով կոմս կազարյանների տոհմը։

²¹ Н. Врангель. «Старые годы», июль-сентябрь, 1910 г., с. 65.

²² Նույն տեղը։

կասարած բտմանքից հետո բաժին ընկավ պապիս կրտսեր եղբորը՝ դենեբալ-մայր Չազոր Հովակիմի կաղարչանին, որն ամուսնացած էր իշխանագուսար Բիրտնի հետ, և այժմ գտնվում են նրանց թոռների ղյալկներում, կանացի դիմանկարը՝ կոմսուհի Զաւորմայի մոտ, Dyhernfurth ղյալկում, Բրեւլավլի մոտ, Միլեդիաում²³, իսկ աղամարդուը՝ Wiese ղյալկում, Մորաւիաում, Բլաուփ մոտ²⁴, կոմս Վիրտնի Զեղընիցկու մոտ: Կանացի դիմանկարը նույնն է «Старые годы» հանդեսում պատկերվածի հետ, իսկ Հովհաննես կաղարեիչը պատկերված է ոչ թէ Մալթայի կոմսզորի բանազգեստով, որ ասացել էր Պավել I-ից, այլ կապույտ թավջաբ համեմակումով:

Պապիս մոտ տահպանվել են (ինձ հայտնի չէ՝ կրկնողութուն են, թե պատճեն) նույն անձանց երկու ուրիշ դիմանկար՝ աղամարդուը, որը ինձ մոտ է գտնվում, և կանացի, որը այժմ պատկանում է մորապետի՝ կոմսուհի Մ. Խ. Նիրոդին, ծննդյամբ կաղարչան... Այդ շքոթ դիմանկարներից դատ պահպանվել են բազմաթիվ պատճեններ՝ իմ կալվածներում, կաղարչան ճեմաբանում և մասնավոր անձանց մոտ:

Իշխան Արամեիլը-կաղարչան²⁵:

Այսպիսով, միանդաման ակնհայտ է, որ, նախ և առաջ Ի. Բ. կամպի հոր վրձնին պատկանող կաղարչանների երեք դիմանկարներից երկուը, անկասկած, գտնվում են մեր երկրի տահպաններից զտրս²⁶, և, երկրորդ, պարզ է դառնում, թե ինչու տարբեր պատկերասրահներում դանում ենք կաղարչանների ընտանիքի անդամների նույնանման դիմանկարները: Բնչ վերաբերում է կամպի անվանատուրեր և ազգանունը կրող աշխատանքներին, և այս կարելի է ենթադրել, որ դրանց վրայի ստորագրությունը իսկական է, իսկ պատկերն ինքր, հնարավոր է, որ հեղինակային կրկնողություն է կամ պատճեն: Հիշեցնենք, որ հայր և որդի կամ-

²³ Ներկայիս Վրոցլավը՝ Լեհական Ժողովրդական Հանրապետությունում:

²⁴ Ժամանակակից Բալավան՝ բաղաբ է Չեխոսլովակյան Սոցիալիստական Հանրապետությունում:

²⁵ «Старые годы», 1910, декабрь, с. 78.

²⁶ « Allgemeines Lexikon der bildenden Künstler »-ում (Lpz., 1822)

Ի. Բ. կամպի Վինենայում մասնավոր անձանց սեփականություն հանդիսացող եղլած աշխատանքների վրում հիշատակվում է կոմսուհի կաղարչանի դիմանկարը (տե՛ս հ. 22, և՛ 274):

պիների անունը համընկնում էր՝ Իոհան Բապտիստ: Հարկավոր է նկատի ունենալ մեկ ուրիշ կարևոր հանգամանք ևս: Էնապոստոնները հաստատում են, որ Ի. Բ. կամպի-որդին գերազանց պատենանահան էր և ավելի շատ հայանի էր հենց այդ դերում: Ավելին, Վեամպի-որդին հաճախ պատճենահանում էր իր հոր աշխատանքները²⁷:

Համարձակվում են պնդել, որ Երևանի պատկերասրահում շրջազգրված Հովհաննես Աղապարի կաղարչանի յուզաները դիմանկարը Վ. Ա. Տրոպինինի ինքնուրույն աշխատանքը չէ: Վ. Ա. Տրոպինինը կատարել է Ի. Բ. կամպի-հոր նկարած դիմանկարի հիանալի պատճենը: Համադրենք դիմանկարները: Հիշե՛ս է համոզվել, որ նրանք լիովին համընկնում են, ասբրբերվելով միայն մանրամասներում: Վ. Ա. Տրոպինինի զործը հանդիսացող դիմանկարում ավելի շատ շքանշաններ կան, շքանակի վրայն սերտոն էլ ուրիշ է: Այսանի արդեն գրված է. «կաղարչան ճեմաբանի հիմնադիր»: Երբ Հովհաննես կաղարչանի դիմանկարը նկարում էր Ի. Բ. կամպին, ճեմարանի մասին խոսք լինել չէր կարող, քանի որ այդ ուսումնական հաստատությունը ստեղծվել է Հովհաննես կաղարչանի մահից 14 տարի հետո: Ուշադրություն դարձնենք ևս մեկ հանգամանքի՝ դիմանկարների դտնվելու վայրերի վրա: Մի դիմանկարը, քնորինակը, ինչպես վկայում է Ս. Ս. Արամեիլը-կաղարչանը, գտնվում է արտասահմանում, մյուսը, որը նույնպես նկարել է Ի. Բ. կամպին, Կարլսպաում, երրորդը, որը գտնվում էր կաղարչան ճեմարանի հանդիսարահում²⁸, Մոսկվայում, 1925 թվականից հետո՝ Երևանում: (Կարելի է ենթադրել, ևրնելով Ս. Ս. Արամեիլը-կաղարչանի վկայությունից, որ ուրիշ պատճեններ ևս կհայտնաբերվեն:)

Ակնհայտ է, ինչպես այստեղ արդեն այդ մասին ասվեց, Ի. Բ. կամպի զործի քնորինակը գտնվում է արտասահմանում: Այդ դիմանկարից Վ. Ա. Տրոպինինի կատարած պատճենը գտնվում է Երևանի պատկերասրահում: Հեղինակային կրկնությունը (կամպի-հոր կողմից) կամ կամպի-որդու վրձնին պատկանող պատճենը, գտնվում է Կարլսպալի մարզային ղեղարվեստական թանկարանում:

²⁷ Н. Врангель. Иностранцы в России.— «Старые годы», 1911, июля-сентябрь, с. 47—48.

²⁸ ԿողՊ, ք. 880, ց. 5, գ. 283, թ. 137 ր.:

Ինչ վերաբերում է Հարություն Հովհաննեսի կազարյանի կամպի-Տոր գործ դիմանկարին, ապա այն պատկանում էր Ս. Ս. Աբրահիբ-կազարյանին:

Հովհաննես Աղազարի կազարյանի ընտանիքի անգամների դիմանկարները քանդակագործական մարմնավորում են գտել կերպարվեստի ականավոր վարպետներից մեկի՝ Իվան Պետրովիչ Մարտոսի, ստեղծագործություններում:

2

Քանդակագործական հուշակոթող

Անինգրադի քաղաքային արձանագործության թանգարանում, նախկին Ակերսանդրո-Նեսկի մայրավանքի տարածքում, գանվում է ականավոր վարպետ Ի. Պ. Մարտոսի (1752—1835) ձեռքի գործ քանդակների մի մեծ խումբ: Վճիռմակ մարմարիոնից բազմապատկերաբանդակը՝ թանգարանում եղած հուշակոթողային քանդակագործության փորքաթիվ ստորագրված ստեղծագործություններից մեկն է: Նրա պատվանդանին փորագրված է. «Այս հուշարձանը 1802 թվականին քանդակել է իսկական պետական խորհրդակցան, ակադեմիկոս Մարտոսը»: Դա կազարյանների տապանաբարձն է, որոնցից ավազը հայտնի է Հայաստանի և Խուստասանի մշակութային կապերի բնագավառում ծավալած իր գործունեությունը²⁹:

Տապանաբարձի առջև զրված է թանգարանային փորքի տախտակ հետևյալ բացատրագրով. Հ. Հ. և Հ. Ա. կազարյանների հուշարձանը: Տապանաբարձի աջ և ձախ կողմերում պատին ամրացված են շորս միաշափա և գեղարվեստական ձևավորմամբ միասնական մարմարեղենից սալաբարձի հայկերեն և ռուսերեն տեքստով: Այդ դամբնագրերը նվիրված են Հարություն Հովհաննեսի, Հովհաննես Աղազարի, Հարություն Հովակիմի և Կատարինե Իվանովիչնա կազարյաններին:

Հարավոր է ուշագրություն դարձնել այն բանի վրա, որ Ի. Պ. Մարտոսի ստեղծագործության ժամանակակից հետազոտողները միշտ չէ, որ ճիշտ են վարվում այդ հուշարձանի հետ

կազված պատմական փաստերի նկատմամբ, բայց են թողնում մտքամասնությունները, դրա համար էլ ազավազվում է քանդակագործական հուշակոթողի գեղարվեստական ընտելացրությունը և անպանաբարձի իսկական պատմությունը: Դա առավել են անհնայտ է, որ տապանաբարձի սյուժեն բացատրում է այն մեկ անձնավորությունից սպաս որևէ ուրիշին նվիրված լինելու հնարավորությունը:

Խուսական արվեստի պատմության քաջատեղյակ հետազոտող Ն. Ն. Կովալենկայան կազարյանի տապանաբարձ համարում է «նոր խոսք Ի. Պ. Մարտոսի ստեղծագործության մեջ»: Ուշագրություն է գրավում տապանաբարձի նպատակը՝ միայն կազարյանին: Հետազոտողը գրում է. «կազարյանի տապանաբարձ (մարմար, 1802 թ.) նա (Ի. Պ. Մարտոսը—Ա. Բ.) կրկին ձեռք է բերում խոր արասնայտչակետություն, ընդ որում չկորցնելով ընդհանուր տապավորության խստությունը: Հանգուցյալ պատանու ողբացող մոր կերպարը իսկապես ողբերգական է. Մարտոսը նույնիսկ վճռել է ցույց տալ նրան զգզված, ուսերին փոճված մազերով: Բայց, իհարկե, նա չէր կարող կանգ առնել այդ հոգեցունց կերպարի վրա. վշտահար, բայց արիասիրտ հոր կերպարում, որը, ասես մեկնած ձեռքի շարժումով հանգստացնում է կնոջը, քանդակագործը կրկին վերագտնում է իր ներգրանակ աշխարհայեցողությունը՝ որպես իսկական նեոկլասիցիստ, նա մահն ընդունում էր իբրև անխուստփելի օրենք³⁰: Մենք ուզում ենք ուշագրություն հրավիրել «կազարյանի տապանաբարձ» բառերի վրա: Ն. Ն. Կովալենկայան արդարացիորեն գտնում է, որ հուշակոթողը նվիրված է երիտասարդ սպային, որի քանդակապատկերը տեղադրված է տապանաբարձի կենտրոնում: Պատանին՝ Հովհաննես և Կատարինե կազարյանների որդի Հարությունը, մահացել է 1791 թվականին: Միակ որդուն կորցրած մտղները հուշարձան-տապանաբարձ են պատվիրում հայտնի քանդակագործ Իվան Պետրովիչ Մարտոսին:

Այստեղ մենք պետք է մի խիստ հետաքրքիր փաստ նշենք: Մեկուսյունի վրա պատկերված պատանու դեմքը դիմանկարային նմանություն ունի Հարություն Հովհաննեսի կազարյանին, ինչ որ չի կարելի ասել հոր և մոր քանդակների մասին: Հուշակոթողա-

²⁹ Г. Д. Негунахина, Н. И. Удимова, Музей городской скульптуры. Л., 1972, с. 76.

³⁰ Н. Н. Коваленская, История русского искусства первой половины XIX века. М., 1951, с. 71—72.

յին բանդակագործական ավանդույթներով ասպանաբարերում թուլյալովում է միայն հանդուցյալի դիմանկարային նմանությունն: Եվ թեև հուշարձանը Մարտոս ավարտել էր արդեն Հովհաննես Լազարյանի մահից հետո, որ վախճանվել էր 1801 թվականի հոկտեմբերին, քանդակագործը, պետք է կարծել, Կասարինե Իվանովնա Լազարյանի համաձայնությամբ, չէր փոխել իր և պատվիրատուների նախնական մասհղացումը: Քանդակագործական հուշակոթողը Բ. Պ. Մարտոսը կտարաբել է 1802 թվականին, և այն որպես ասպանաբար պղծվել է Լազարյանների բնասելիան հանգստարանում՝ Պետերբուրգի Ամոլնիի հայոց գերեզմանատան եկեղեցում:

Հակառակ հուշակոթողային քանդակագործության ավանդույթներին, մասնական կից հրապարակումներում, նույնիսկ արխիվում մենք կարող ենք պնդումներ գանել, որ ասպանաբարը նվիրված է Հովհաննես Աղազարի Լազարյանին կամ Հովհաննես և Հարություն Լազարյաններին, այսինքն՝ հայր և որդի Լազարյաններին: Լազարյանների արխիվում գրառում է պահպանվել այն մասին, որ Հովհաննես Աղազարի Լազարյանի գերեզմանի վրայի հուշարձանը Պետերբուրգի գերեզմանատան եկեղեցում կերտել է սկզբնիկոս Մարտոսը 1802 թվականին³¹:

Մահարձանի սյուժեով, նրա պատկերավոր լեզուն միանգամայն բացառում են այն միտքը, որ հուշարձանը նվիրված է Հովհաննես Աղազարի Լազարյանին: Երեք կերպարներ են պատկերված մահարձանում՝ հանդուցյալ պատանին, ողբացող մայրը, վշտաբար հայրը: Եթե համարենք, որ հուշարձանը նվիրված է Հովհաննես Լազարյանին, ապա կոմպոզիցիայում պատանին տեղ չունի և բոլորովին անհասկանալի է, թե ինչու կիրք պետք է ուրա կողքին կանգնած ամուսնուն:

Բոլոր այդ տրամաբանական անհամապատասխանությունները հնչողությամբ վերաջվում են, երբ մենք վերադառնում ենք այն պնդմանը, որ մահարձանը քանդակագործի և նրա հետ համաձայն Հովհաննես Կասարինե Լազարյանների մտահղացման՝ եղել է նրանց որդու հուշարձանը: Այդ դեպքում մահարձանի երեք կերպարներից յուրաքանչյուրն ստանում է զեղարվեստական լուծում, իսկ ամբողջ կոմպոզիցիան՝ տրամաբանորեն արդարացված պատկերավոր ավարտում:

Բայց փաստորեն Բ. Պ. Մարտոսի գործ մահարձանը Հովհաննես Լազարյանի ընտանիքի հուշակոթողն է: «Լազարյան եղբայրներից անդրանիկի կինը, որդին և մի քանի այլ մերձավոր ազգականներ և Հ. Լ. Լազարյանի ինքը թաղված են կողք կողքի, եկեղեցու խորաններից մեկում և ննչեցյալների ասպանների վրա հասուկ արձանագրություններ են արված»³²: Այսպես են հայտնարվել դամբարանապահերով մարմարինոյա սալիկները:

Մահարձանի վրայի վշտահար հոր քանդակը դիմանկարային նմանություն չունի և խորհրդանշան էր հանդիսանում: 1819 թվականին վախճանվեց Կասարինե Իվանովնա Լազարյանը, որի կերպարը երբեմն ոգեշնչել էր քանդակագործին՝ պատկերելու մարտական վիշտը: Այդպիսով, Լազարյանների հանգստարանում զրված հուշակոթողի բազմակերպար կոմպոզիցիան նոր մեկնարանություն է ստանում որպես Հովհաննես Լազարյանի ընտանիքի մահարձան:

Այդ մահարձանից բացի Բ. Պ. Մարտոսը ստեղծել է Հովհաննես Աղազարի և Հարություն Հովհաննեսի Լազարյանների քանդակասպակերները (ձուլված բրոնզից): Այդ բրոնզե կիսանդրիները զրված էին Լազարյան ճեմարանի հանդիսատարանում³³, իսկ ներկայումս գտնվում են Երևանի պատկերասրահում:

Անկասկած է, որ մահարձանի սյուժեովն ծնողների վիշտն է մոռած որդու համար: Հուշակոթողական քանդակագործության ավանդույթների համաձայն մահարձանում Բ. Պ. Մարտոսը պահպանել է միայն ննչեցյալի դիմանկարային նմանությունը, իսկ սյուս երկու կերպարները վշտի ու թախծի խորհրդանշաններ են: Մահարձանի հարթաքանդակի համար որպես մոդել է ծառայել, պետք է ենթադրել, Բ. Բ. Լամպիի գործը՝ Հարություն Լազարյանի դիմանկարը:

Ընդհանրապես Բոսսական թանգարանի պահեստարանում պահպանվում է Բ. Պ. Մարտոսի գործ մահարձանի թրծակալն մոգեղ:

Ընթերցողը, հաղանաբար, կհամաձայնվի, որ թրծակալն մոգեղը ընդհանուր կոմպոզիցիոնով, երեք ֆիգուրների տեղա-

³² А. Зинovieв. Исторический очерк Лазаревского института восточных языков. С. 95.

³³ ԿՊՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 283, Բ. 137:

³¹ ԿՊՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 147, Բ. 199:

դրութեամբ և զործանական դերով (աշխց և ձախից տղամարդու և կանացի ֆիդուրները՝ թախծի խորհրդանշաններ, մեղսեղում, մեղալուծի վրա՝ մահացած պատանու դիմանկարը) հիշեցնում է կազարյանի մահարձանը։ Մեծ նամուրթուն կա մահարձանի և մողղի վրայի պատանիների դիմանկարներում։ Կարելի է ենթադրել, որ թրձակվե կոմպոզիցիան քանդակագործի համար եղել է Հարություն կազարյանի մահարձանի լավագույն լուծման որոնման արդյունք, մի փուլ սահեղագործական մասնագետը մարմնավորելու ճանապարհին։

Կազարյան եղբայրներից երկրորդի՝ Մինաս կազարյանի (1737—1809) դիմանկարը, ինչպես ասվեց վերևում, նկարել է Էվան Պետրովիչ Արզումովը (1728—1802)։ Երևանի պատկերասրահում ցուցադրված են կազարյան եղբայրներից կրասերի՝ Հովակիմ կազարյանի (1743—1826) երկու դիմանկարները։ «Ճեմարանի հիմնադրի» (ձախ ձեռքում նա պահում է կազարյան ճեմարանի գունավոր պատկերը) այդ քաջ հայանի դիմանկարը Վ. Ա. Տրոպինինի (1776—1857) գործն է։ Վ. Ա. Տրոպինինը նկարել է նաև Հովակիմ կազարյանի որդու, երիտասարդ սպա Հարություն կազարյանի³⁴ դիմանկարը, որը սպանվել է կապիգիջ մոտ 1813 թվականին տեղի ունեցած օժողովուրդների ճակատամարտում։ Հովակիմ կազարյանի երկրորդ կրտսերորին բռնաբերելու կերպի է Ռուսաստանում ազարած ֆրանսիացի բանդակագործ Տ. Ժ. Ժակը (1805—1876)։ Անկապած է, որ այդ աշխատանքը կատարված է ոչ թե բնօրինակից, այլ դիմանկարից, քանի որ 1826 թվականին Հովակիմ կազարյանի մահվան ժամանակ քանդակագործի 20 տարին զեն ետ էր լրացել։ Ավելի շուտ, քանդակագործը Հովակիմ կազարյանի կրտսերորին քանդակել է մողղու ունենալով ոչ թե Տրոպինինի վրձնի պատկանող դիմանկարը, որտեղ Հովակիմ կազարյանը պատկերված է որպես զառամյալ և հիվանդոտ մի մարդ։ Քանդակագործական դիմանկարը արտացոլում է մողղի կամքն ու հուանդը։ Հավանաբար, որպես մողղի ծառայել է գեմանացի նկարիչ Հանս (Իոհան) Ռոմբաուերի

(1782—1849) ձեռքի գործ դիմանկարը, նկարված 1820 թվականին³⁵։

1828 թվականի թուրքմենչայի հաղթական տպմանագրի համաձայն, որով ավարտվեց ռուս-պարսկական պատերազմը, նստառանկարում էր, մասնավորապես, հայերի անբարկ վերանախեցում Ռուսաստանի օժանդակը։ Այդ կարերը առաքելությունը կրված էր սպա Դազար Հովակիմի կազարյանի վրա։ Իրանից հայերի դաղթին է նվիրված նկարիչ Վ. Ի. Մոչեղովի կաավը, որը ձեռք էին բերել կազարյանները։

Կազարյանների ընտանիքի անդամների դիմանկարների մի մասը շարք է ստեղծել նկարիչ Սերգեյ Կոնստանտինովիչ Զարյանկոն (1818—1870)։ Նրա վրձնին են պատկանում եղբայրներ Հովհաննես Հովակիմի կազարյանի (1786—1858)³⁶ մինչև 1853 թվականը կազարյան ճեմարանի հոգաբարձուի, և հաշատուր Հովակիմի կազարյանի (1789—1871) կազարյան ճեմարանի վերջին հոգաբարձուի, դիմանկարները, 1854 թվականին Ս. Կ. Զարյանկոն նկարում է Խ. Հ. կազարյանի դստեր՝ Ելիզավետա Խաչատուրյանի դիմանկարը, իսկ մեկ տարի առաջ, 1853 թվականին, Նրա ամուսնու, Սեմյոն Դալիդովիչ Աբամալիի (1815—1888) դիմանկարը։ Ս. Կ. Զարյանկոյի այս շորս դիմանկարներն էլ ցուցադրված են Գրբլու զեղարվեստական թանգարանում³⁶, Ուլադիսլավյան դարձնենք հեռանալ փաստի վրա, որը հետադուտողները նախկինում չեն նշել։ Հովհաննես Հովակիմի և Խաչատուր Հովակիմի կազարյանների դիմանկարները Ս. Կ. Զարյանկոյի ճեղինակային կատարմամբ (կամ կրկնադրությամբ) զանգուժում են նաև Երևանի պատկերասրահում։ Ինչպես տեսնում ենք, կազարյանները պատմվորում են իրենց ընտանիքի անդամների դիմանկարները պատճենները (այն դեպքերում, երբ այդ հնարավոր էր, ապա նաև ճեղինակային ընդօրինակությունները)։

Ընդ որում, մեր կարծիքով, Նրանք հետևում են որոշակի սկզբունքների։ Իրենց կալվածները և տները նրանք գարգարում են ընտանեկան դիմանկարներով, էլնելով ազգակցական կապերից, բայց ընտանեկան ավանդույթներով։ Ինչ վերաբերում է կա-

³⁴ Կարելի է հաստատել, որ Հովակիմ կազարյանի որդին Հարություն է անվանվել ի հիշատակ մյուս Հարությունի՝ Հովհաննես կազարյանի որդու։ Հարություն Հովհաննեսի կազարյանը մահացել է 1791 թվականի հուլիսի 12-ին, Հարություն Հովակիմի կազարյանը ծնվել է նույն թվականի փետրվարի 15-ին։

³⁵ Ռոմբաուերը Պետերբուրգում ապրել է 1806-ից մինչև 1824 թվականը։

³⁶ Կազարյանների և Աբամալի-կազարյանների ընտանիքի անդամների դիմանկարները ստացվել են, ինչպես այդ մասին սխրույթը կրողով հաղորդել է թանգարանագետ Ս. Վ. Վուդո-Պոլյակը, Աբամալի-կազարյանների իրենի նովգորդի առանձնատներից 1919 թվականին։

զարյան ճեմարանին, ապա այսպիսի ցուցադրվում են Լազարյանների ընտանիքի միտքն այն սննդամանքի դիմանկարները, որոնք ուղղակի առնչություն ունեն տոհմական ուսումնական հաստատության հետ:

Լազարյանների՝ ընտանիքի անդամների առավել մեծ թվով դիմանկարներ վան Հայաստանի պետական պատկերասրահում: Ցուցասրահում դիմանկարները լավ են անդադրված, ճիշտ են խմբավորված, բայց ուղեկցվում են բացարակյա ստորագրություններով, որոնք երբեմն մոլորություն մեջ են գցում: Մեկ դեպքում ճեմարանի հիմնադրի անվանատառերը ուսեւերն զրվում է Է. Ս., մյուս դեպքում՝ Է. Ս., երրորդ դեպքում՝ Ա. Ս.: Այդպիսի ստորագրությունները կարող են հանդիպել մեկ ուրիշ խառնաշփոթության (Иван Лазаревич, П. Л. Лазарев (Артемий Иванович) թե՛ Артемий Иоакимович) ստորագրությունները: Մեկ ուրիշ դեպքում պատկերասրահի այցելուն չի իմանա, որ Ա. Ա. (Аким) Лазарев-ը, А. Е. (Екимович) Лазарев-ը, А. И. (Иоакимович) Лазарев-ը, և А. Я. (Екимович) Лазарев-ը միևնույն անձնավորությունն է: Այս հեշտ ուղղելի մանրուքը կլուրացնի դիմանկարների նույնացումը:

Լազարյանները մեծ նշանակություն էին տալիս 1815 թվականին իրենց ստեղծած ուսումնական հաստատությունը և, քնականար, հպարտանում էին ճեմարանի հաջողություններով ու ժողովրդականությունը, որը դարձել էր Մոսկվայի լավագույն ուսումնական կենտրոններից մեկը: 1860 թվականին գեղանկարչության ակադեմիկոս Պյոտր Վասիլևիչ Տուսուլինը (1819-1901) նկարեց «Լազարյան ճեմարանի տեսարանը» կտավը, որը ոչ միայն դարգարում էր ճեմարանի ներսնամասը, այլև անդիպելի կերպով դրոշմել էր XIX դարի կեսի Մոսկվայի մի փոքրիկ անկյունը:

3

Անսպասելի գլուտ

Լենինգրադի Ռուսական թանգարանի դահլիճներից մեկում դրված է մի երեխայի հիանալի բանդակված դիմապատկեր: Բանդակի ցուցատախտակի վրա պահպանվել է արձանագրու-

թյուն՝ «Նովհաննես հաշատուրի Լազարյան», իսկ ներքևում, պատվանդանի վրա, մեկ ուրիշ մակագրություն՝ «Անհայտ բանդակագործ, XIX դարի առաջին կես»:

Թանգարանի այցելուների մեծամասնության համար այդ դիմարանդակը այն բազմաթիվ ստեղծագործություններից մեկն է, որնեցով այնքան հարուստ են Լենինգրադի թանգարանները: Ինչ վերաբերում է այս դրքի հեղինակին, որը երկար տարիներ ուսումնասիրել է Լազարյանների ընտանիքի անպիսի հարուստ արխիվները, ապա նա գիտեր, որ այդ կիսանդրին դեռահաս մասնացած Նովհաննեսին է՝ հաշատուր Նովակիմի Լազարյանի միակ որդունը: Տղայի մահով ընդհատվեց Լազարյանների տոհմի արական սերունդը: Կորցնելով ընտանիքի միակ ժառանգին, ծնողները և հորեղբայրը, ի հիշատակ հանդուցյալի, Լազարյան ճեմարանին նվիրեցին 60 հազար ուրլ²⁷, որով 1851 թվականին սկզբին հիմնվեց հատուկ բաժանմունք «ճեմարանի համար ոչ բավարար պատրաստություն ունեցող երեխաներին տարրական ստուգանքներ ուսուցանելու համար»²⁸, որն անվանեցին դեռահաս Նովհաննես Լազարյանի նախապատկան բաժանմունք:

Կրթի հեղինակը առցանց անդամ թանգարանում առնելով երեխայի մարմարե կիսանդրին, իր առջև լինողը չզրեց պարզելու անհայտ բանդակագործի անունը: Բայց 1962 թվականին Մասնագործանում Լազարյանների ընտանիքի արխիվը նախկին ինստիտ, որ XIX դարի 40-ական թվականների կեսերին հաշատուր Լազարյանի ընտանիքը երկարատև արտասահմանյան ուղեվերություն էր մեկնել, որպեսզի բուժի իր հիվանդոտ երեխային: 1845 թվականի ապրիլին Ֆլորենցիայում եղած ժամանակ Լազարյանները «հայտնի բանդակագործ Պանպոլոնիին 500 Ֆրանկով պատվիրեցին Նովհաննես հաշատուրի կիսանդրին (երեխան այն ժամանակ երկու տարեկան էր:—Ա. Բ.)», որը և ուղարկվեց Ի. Պետերբուրգ»²⁹, Այդպիսով, Երևանում գրքիս հեղինակը գտավ իտալացի բանդակագործի հետքերը:

Ցավոք, արվեստների ո՛չ իտալական, ո՛չ էլ գերմանական

²⁷ 1 ՊՊՊ, ք. 213, ց. 1, գ. 121, ք. 10:

²⁸ А. З. Зинovieв. Исторический очерк Лазаревского института восточных языков. С. 65.

²⁹ Մասնագործան, Լազարյանների արխիվ, ցուց. 84, թղթ. 116, գ. 186: Ավելի ուշ համանուն գրառում հաջողվեց գտնել Լազարյանների Մոսկվայում պահվող արխիվում:

Հանրագիտարաններում ոչ միայն տեղեկություններ շատվեցին «Տայտի» քանդակագործի մասին, այլև նրա ազգանունն էլ չէր հիշատակված: Դրա համար էլ կարելի էր երկու ենթադրություն անել. առաջին՝ քանդակագործի հուշակը այնքան աննշան է եղել, որ նրա անունն անգամ հիշատակման չի արժանացել: Այդ դեպքում հարց էր ծագում, իսկ ինչու՞ն են Ռուսական թանգարանի արվեստագետները, գեղարվեստական մեծ ճաշակի և խոր գիտելիքների անբ մարդիկ, ցուցադրում այդ աշխատանքը:

Հարկ եղավ ելակետ ընդունել երկրորդ ենթադրությունը, որ համահասարակ «Լազարյանների կյանքի տարեգրություն» կազմողը կամ արտագրողը, հավանաբար, սխալվել է օտարերկրացի քանդակագործի անվան գրությունը մեջ: Միայնվելը բարդ բան էլք, բանդի կադրայանների ընտանեկան ժամանակագրությունը կազմվում էր նկարապրված դիպրերից շատ ավելի ուշ (տվյալ դեպքում արտասահմանից ուղարկված ֆամակների համաձայն) և վերլուծներն անխուսափելի էին:

Եվ իրոք, այն ենթադրությունը, որ արխիվային գրառումը այնքան էլ ճիշտ չէ, հաստատվեց: Կերպարվեստի ընդհանուր բառարանի կալցցիգի հրատարակության 26-րդ հատորում տեղ է արված իտալացի քանդակագործ Պամպուլոնիին («Պամպուլոնի Լուիջի, Բանդակագործ. ծնվել է 1791 թ. հոկտեմբերի 7-ին Ֆլորենցիայում, մահացել է 1847 թ. դեկտեմբերի 17-ին Նոյն տվում: Բարտոլոմիի դպրոցի ճետերը: 1830 թվականից կանաչակալի անդամ»⁴⁰): Պարզվեց, որ չենց նա է կրտսերորդ Եղեղինակը: Ակադեմիկոս Պամպուլոնիի գործերը պահվում են Եվրոպայի շատ քաղաքների թանգարաններում: Այդպիսով, մարմարի տես կրտսերորդն, որը ցուցադրվում է Ռուսական թանգարանի Վենետիկյան դահլիճում, 1845 թվականին (մահից երեկու տարի առաջ) ստեղծել է իտալացի մեծավաստակ վարպետ Լուիջի Պամպուլոնին: Նախկինում այդ կրտսերորդն գտնվելիս է եղել իշխան Աբամելիք-Լազարյանների Պետերբուրգի առանձնատան գրադարանում:

Պետք է նշել, որ Ռուսական թանգարանի քանդակագործության բաժնի աշխատողները շատ բան են արել, որպեսզի պարզեն մանկական կրտսերորդ հեղինակի անունը, բայց, բանի որ նրանք որոնումները սահմանափակվում էին Լենինգրադի ար-

խի՞նելով, դռանը հաջողությամբ չէին պատկվել: (Ավելի ուշ, 1963 թվականին, երբ գրքիս հեղինակը իր հայտնագործության մասին հայտնեց Ռուսական թանգարանի քանդակագործական բաժնի վարիչ Գ. Մ. Պրեսնովին, իսկ նրանց զրույցը տեղի էր ունենում թանգարանի Վենետիկյան դահլիճում, Գրիգորի Մակարովիչը, ցույց տալով շատ արձաններից մեկը, ասաց՝ միայն ու դա: Հարկ եղավ այդ ժամանակ նրան վշտացնել. հենց այդ կրտսերորդն էր):

1968 թվականին «Вечерний Ленинград» թերթում գրքիս հեղինակը մի փոքր հոդված հրատարակեց «Քանդակագործի անունը հայտնի է» խորագրով, որին խմբագրությունը կցել է մեկ հոդվելում հետևյալ բովանդակությամբ: «Մենք խնդրեցինք Ռուսական թանգարանի քանդակագործության բաժնի վարիչ Գ. Մ. Պրեսնովին մեկնաբանել այդ հաղորդումը: Ահա թե ինչ հայտնեց նա «Вечерний Ленинград»-ի թղթակցին. «Վերջերս» մեր թանգարանում ստացվեց տղամարդու մարմարի տես կրտսերի, որի տակ եղած ստորագրությունը վկայում է, որ այն ստեղծել է իտալացի քանդակագործ Լուիջի Պամպուլոնին: Այդ գործի համագրումը մյուսի հետ, որը մենք արդեն ունենք, մեր կատարած ռճական վերլուծություններն էլ դուրս են եկել մեկ վարպետի՝ Լուիջի Պամպուլոնիի, ձեռքի տակից: Դրա համար էլ մտավայրի գիտնական, պատմական գիտությունների բեկնածու Ա. Բազիլյանցի առաջարկած լուծումը կարելի է ճիշտ համարել»⁴¹:

Արդ, այնպես է ստացվել, որ վեցամյա մանկան անունը արվեստում հավերժացրել են երեք մեծանուն նկարիչներ: շենց պատեղ, Ռուսական թանգարանում պահվում է Շովհանեսի հաշտատուրի կադրայանի ևս մեկ դիմանկար, որը պատկանում է մեծահամբավ նկարիչ Շովհանեսի Այվազովսկու վրձնին: Շովհանեսի Այվազովսկու այս գործը նկարվել է 1851 թվականին. արդեն երեկոս մահից հետո Այդ նույն՝ 1851 թվականին մեկ ուրիշ տաղանդավոր դիմանկարիչ՝ Ս. Կ. Զարյանկոն, նույնպես նկարել է արական գծով կադրայանների տո՛մի միակն է վերջինի ներկայացուցչի դիմանկարը:

Շովհանեսի հաշտատուրի կադրայանի մահից հետո միջնոր-

⁴⁰ Allgemeines Lexikon der bildenden Künstler. Bd. 26, Lpz., 1932.

⁴¹ «Вечерний Ленинград», 28.XI, 1963.

դուքայանների սկզբնցին, որպեսզի ազգանունը հաստատվի մեր-
ձավորազուն ազգականների վրա: 1873 թվականին իշխան Արա-
մելիքներին թուլյաարվում է անվանվել Արամելիք-Լազարյանների
և նրանց է վերապահվում Լազարյան ճեմարանի պատվավոր հո-
գարարձուներ լինելու իրավունքը: Առաջին պատվավոր հոգա-
բարձուն դարձավ Երիզավետա Նաչատուրովնայի ամուսին Սեմ-
յուն Գավրիլովիչ Արամելիք-Լազարյանը, որին հուսարական հա-
մազգեստով պատկերել է նկարիչ Ս. Կ. Զարյանկոն: Բակայես.
բնախնայ Ս. Գ. Աբամելիքը, հեանելով բնառանկան ավանդույթին,
էշտոն էլ զինվորական ասպարեզը, բայց 1859 թվականին Սեմ-
յուն Գավրիլովիչը զենեալ-մայորի աստիճանով պաշտոնաթող է
լինում և լրջորեն նվիրվում նկարչությանը: «Նա դիմանկարներ
և պատմական պատկերներ էր նկարում, ինչպես նաև սրբապա-
կերներ և կեղեցիկների համար իր կավաձմեբում, և «ՍԵՐ. Սուե-
փանոս Պերմյի» նկարի համար Գեղարվեստից ակադեմիան
Նրան արժանացրեց նկարչի կոչման»⁴²:

Այսպիսով, հարյուր արտուց ավելի մի ժամանակամիջոցում,
սկսած XVIII դարի երկրորդ կեսից, Լազարյանների ընտանիքի
մի շարք անդամների դիմանկարները ներկայացված են եղել
«ԵՍՍՄ Երուսաղիմ, Տրոպիկին, Արզումով, Զարյանկո և օտարերկ-
րացի» կամպի, Ժակ, Պամպուսին, Ռոմբաուեռ, խոշոր նկարչի-
ների և քանդակագործների ստեղծագործություններում: Այդ
ստեղծագործությունները զեղարվեստական մեծ արժեք ունեն,
հատկապես դիմանկարները և հուշակոթողական քանդակագոր-
ծությունը: Այդ դիմանկարները պահպանել են մի բնույթի
ներկայացուցչների կերպարները, որը նշանակալի զեր է խա-
ղաղի ուսու-հավական քաղաքական և մշակութային կապերը
ս մարայնդման, կրթության և զիտության վերելքի գործում: Վեր-
ջապես, սյուեռապյեի նկարները՝ «Շալիքի գաղթը Ռուսաստան»,
զրոշմել են ոչ վաղ անցյալի կարևոր պատմական իրադարձու-
թյունները և ուսու-հայ ժողովուրդների դարավոր բարեկա-
մության հուշարձանն են:

⁴² Н. П. Собко, Словарь русских художников с древнейших вре-
мен до наших дней, с. 1—2.

Լազարյանների դիմանկարները արտասանմամբ

Հայտնի է, որ Լազարյանների առհմը արական գծով ընդ-
հատվեց ավելի քան մեկ դար առաջ, իսկ Աբամելիք-Լազարյան-
ների ընտանիքի վերջին ներկայացուցիչը՝ դիտնական և ճանա-
պարհորդ, արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի պատվա-
վոր հոգաբարձու Սեմյուն Սեմյոնովիչ Արամելիք-Լազարյանը
վախճանվեց 1916 թվականին, առանց ժառանգներ թողնելու:
Բայց այսօր էլ պարբերական մամուլի էջերում (լիտսելով ար-
դևն գիտական ուսումնասիրությունների մասին) մենք հանգի-
պում ենք հիշատակումներ այդ ընտանիքների մասին, որոնք
հաստատուն կերպով մտնոք են գործել ուսու-հայ ժողովուրդ-
ների մշակույթի պատմության մեջ:

Վերջերս «Ռուզե Պրավո» լրագրի շարաթորյա հավելվածում
մի մեծ հոգված էր հրատարակվել Զեխուովակիայում դանված
Լազարյանների արխիվի և զեղարվեստական հավաքածուի մա-
սնվն⁴³:

Հոգվածի հեղինակ Կ. Կրժիժովան հաղորդում է, որ Լազար-
յանների ընտանեկան հավաքածուում հայտնաբերվել են՝ Կառլ
Բրյուլլովի մինչև հիմա անհայտ մնացած մի ստեղծագործու-
թյուն և XIX դարի նկարիչների ուշագրություն արժանի ուրիշ
գործեր, այդ թվում «Նշանավոր նկարիչ Ա. Օ. Օռլովսկու սանդ-
ձագործությունները»: Հետազոտողը հատուկ կանգ է առնում
«ազգայանների հավաքածուի անչափ արժեքավոր դիմանկար-
ներից» մեկի՝ Ի. Լամպիի նկարած «Սոսկվայի հայտնի Արևել-
յան լեզուների ճեմարանի հիմնադիր Զ. Լազարյանի» դիմանկա-
րի վրա: Այդ նույն էջում վերաբրտարված է երիտասարդ, զեղե-
ցիկ, զմեքի մտախոհ, տխուր արտահայտության մի կնոշ՝ Ան-
նա Լազարյանի, դիմանկարը:

Կ. Կրժիժովան արասհայտում է, մեր կարծիքով, արգարացը
ենթազրություն, որ Լազարյանների հավաքածուի զեղարվեստա-
կան արժեքները Զեխուովակիա են ընկել որպես «հուշակավոր
ուսու-հայ ընտանիքի ներկայացուցիչներից մեկի... օժիտք մի մա-
սը. 1864 թվականին Աննա Լազարյանը (1838—1883) կնության

⁴³ «Ռուզե Պրավո», շարաթորյա հավելված, Պրագա, 31. VII. 1982 թ.:

է զնացել Իզլավայի վրայի Լուկա զղլակի տիրոջը և իր հետ Մորավիա է տարել բնտանեկան հավաքածուի մի մասը»:

Այնուհետև Կ. Կրժիժովայի գրում է. «Բզլավայի Լուկա զղլա-
պում Աննա Լազարյանը և իրս բնտանիքի մյուս անդամները
զղլակի գրադարանում ժողովում էին ոչ միայն պատմագրա-
կան արժեք ունեցող գրականություն, այլև XIX դարի Ռուսաս-
տանի առաջադեմական ուղղության գրականություն: Այլ զըր-
բերի թվում այստեղ ժողովված էին նաև Տուրգենևի և Գոտտուսե-
կու երկերը»: Այս անուշովյումը արժե հիշել, որ Ֆ. Մ. Գոտտուսե-
կու երկերի առաջին ժողովածուն տպագրվել է Մոսկվայում.
Լազարյան ճեմարանի ապարանում: Գայնակիչը է Լեթագրիչ, ոչ
ՉՊՁ-ում հայտնաբերված Լազարյանի գրադարանում կրտս-
ճբլի ուսս մեծ գրողի երկերի հենց այդ հրատարակությունը:

Կ. Կրժիժովայի հետաքրքիր հոդվածը ավարտվում է հետե-
լալ բառերով. «Լազարյանների ժառանգությունից մնացած հա-
վաքածուն ունի ոչ միայն զեղարվեստական, այլև վավերագրա-
կան մեծ արժեք: Շուտով այն կարողանա մեր հետապա ուսումնա-
սիրությունների առարկան և կգրավի սովետական մասնագետ-
ների ուշադրությունը»:

Արձագանքելով շխտսովական մեր գործընկերոջ հրավերին,
Նեկատևք, որ լիովին համամիտ լինելով Կ. Կրժիժովայի եղա-
կացությունը Լազարյանների արխիվների և հավաքածուի գիտա-
կան և զեղարվեստական մեծ արժեքի մասին, միաժամանակ ան-
հշատեալ ենք համարում սանելու, որ երիտասարդ հետազոտող
Վիլհամ Կրժիժովայի հոդվածը ճշտումների և ուղղումների կարգը
է զգում: Կ. Կրժիժովային չի հաջողվել մեծ ճշտությամբ պար-
զելու հայկական Լազարյան բնտանիքի (ազգանունը ուսանելն
ավելի հաճախ գրվում էր Լազարև) տոհմաճառը:

Այնուհետև, իսկապես որ XVIII դարի երկրորդ կեսի և XIX
դարի առաջին երեսնամյակի նշանավոր նկարիչներից մեկը՝
Թոհան Բապախաս (Ջովաննի Բապախաս) — ավագը, Նեկարել է
կոմս Լովհաննես Ազազարի Լազարյանի, իրս կնոջ, կոմսուհի
Վատարինե Բվանովնա Լազարյանի (ձեռնդամը՝ Միքայելանովնա)
և նրանց որդու, երիտասարդ սպա կոմս Լորուսյուն Լովհաննեսի
Լազարյանի (կոմսի արտոջըր ակնարկի հեղինակը հիշատակում
է հիշատակելու համար զիմանկարների նույնացումը) զիմա-
նշարները: Այդ փաստի մասին բանիցս գրվել է դեռ անցյալ դա-
րում և ավելի ուշ:

Յավթը, Կ. Կրժիժովայի հոդվածում ոչ բոլորովին ճիշտ է
նույնացված Բ. Լամպիի նկարած տղանաբազու զիմանկարը: Կր-
պում բերված լուսանկարում պատկերված է Լովհաննես Աղա-
զարի Լազարյանը, այսինքն՝ չորս եղբայրներից ավագը, որը,
բայտ հետագա բնտանեկան ավանդույթի, համարվում է Լազար-
յան ճեմարանի հիմնադիրը, բայց այդ զիմանկարի տակ ցույց
տված ձեռնդրան և մահվան տարեթիվերը՝ 1743—1826, ճշտարեն
մատնանշում են կրտսեր եղբոր՝ Լովակիմ Ազազարի Լազարյանի,
ձեռնդրան և մահվան տարեթիվը, որին, բայտ նույն ավանդույթի,
ընդոծում են որպես ճեմարանը հիմնողի, և ոչ թե Լովհաննես
Ազազարի Լազարյանի (1735—1801):

Աշխատենք հաստատել շխտսովական մեր գործընկերոջ
մեր կարծիքը. ճիշտ այն ենթադրությունը, թե ինչպես է Լազար-
յանների բնտանեկան հավաքածուի մի մասը բնկել Մորավիա:

Դեռ 1910 թվականին Սեմյուն Սևեյնովիչ Արամելիք-Լազար-
յանը գրում էր. «Լամպիի նկարած... Լ. Լազարյանի և Կ. Բ. Լա-
զարյանի սրանչիլի զիմանկարները... բաժին բնկան իմ պապը
կոտսեր եղբորը՝ գեներալ-մայոր Ղազար Լովակիմի Լազարյա-
նին, որն ամուսնացած էր իշխանազուտար Բիրոնի հետ, և այժմ
գտնվում են նրանց թոռների զղլակներում»⁴⁴: Այնուհետև Ս. Ս.
Արամելիք-Լազարյանը ուղգակի մատնանշում էր, մասնավորա-
պես, տղամարդու զիմանկարի գտնվելու վայրը՝ կոմս Վ. Ջեզը-
նչեցկու (հանդիպում է նաև Սեդրիցիկի ձեռով: — Ա. Բ.) մոտ՝ Մո-
սկվայում, Իզլավի մոտ⁴⁵:

Աննա Լազարյանը, որի զիմանկարը բերված է Կ. Կրժիժով-
այի հոդվածում, Լազարյան ճեմարանի հիմնադիր և առաջին հո-
գաբարձու Լովակիմ Ազազարի Լազարյանի թոռն էր և գեներալ-
մայոր Ղազար Լովակիմի Լազարյանի ու արքայազուտար Ան-
տոն Լեոնտա Պետրովնա Լազարյանի (ձեռնդամը՝ Բիրոն) դուստրը:
Դիմանկարներին նվիրված ակնարկում տեղին է սանել, որ Ա. Պ.
Լազարյան-Բիրոնի զիմանկարը նկարել է Կարլ Բրյուսովի ավագ
եւշալը՝ Ալեքսանդրը: Անցյալի արվեստի ուսումնասիրողները,
խոսելով Ա. Պ. Բրյուսովի ջրանկար այդ գործի մասին, անփո-
փոխ ավելացնում էին՝ սրանչիլի զիմանկար է:

Պաշտոնաթուղ լինելով, Ղ. Լ. Լազարյանը բնասանքով դե-

⁴⁴ ՏԵՍ և շ 61:

⁴⁵ Նույն տեղը:

բաղանջապես արտասահմանում էր ապրում: Ղ. Շ. և Ա. Պ. Լազարյանների ազգա զուտորը կնոթյան շնաց Փրանսիացի մարկիզի, կոտսերը՝ իշխան Ռուսսովին, իսկ միջինները՝ Աննան, ալստրիական կոմսի: Այդպես Շովհաննես Աղազարի Լազարյանի և կոտսերինե Իվանովնա Լազարյանի դիմանկարները նրանց ծոռնակից գրքում հինների՝ Դարյա Լազարենայի մնացյալ օժիտի հետ մնացին արտասահմանում:

Լազարյանների ընտանիքի ՉՍՍՀ-ում հայտնաբերված գեւաբանատական հազարածուր մասին հողվածին լուրահատուկ ձևով զուգակցվում է մոտավորապես մեկ տարի առաջ Լոնդոնից գրքիս հեղինակի սաացած նամակը: Աննա զր Մերինզուր գրում էր. «Մեծ... հեաբբրույթյամբ կարգացի Ձեր «Ճշմարտութունը առասպելներից հեաբբրիբ է» գրքույլը, որ սերտորեն ստեղծում է իմ ազգակցությանը մայրական կողմից: Ես լինքս ծննդյամբ Աննա Անդրեևնա Օլտոֆևա եմ, իսկ մայրս ծննդյամբ Երիզավետա Սեմյոնովնա Արամելիբ-Լազարյան էր»: Այնուհետև Աննա զր Մերինզուր հայտնում էր, որ իր մոտ պահպանվել է պապի՝ Սեմյոն Դավիդովիչ Արամելիբ-Լազարյանի դիմանկարը լիբ-հուսարական համազգեստով, ինչպես նաև «Աննա Դավիդովնա Բարատինսկայայի (ծննդյամբ Արամելիբ) այն նույն դիմանկարի ջրաներկ պատճենը, որ նկարել էր Ա. Բրուչչոլլը...»⁴⁶:

Մեր կողմից ավելացնելը, որ նրանի պատկերասրահներում, որքան մեզ հայտնի է, շկա երևելի կանանցից մեկի, բանաստեղծուհի, իր ժամանակի հայտնի թարգմանչուհի, Պուշկինի ներբողած և Լերմոնովի լավ բարեկամուհի Աննա Դավիդովնա Բարատինսկայայի դիմանկարը⁴⁷:

Անցյալ ասրիների հրատարակութուններում հաճախ Աննա Դավիդովնա Արամելիբ-Բարատինսկայային և Անտուանետա Պարտովնա Բիրոն-Լազարյանին պատկերող Ա. Պ. Բրուչչոլլի ջրաներկ դիմանկարները կոպր-կողքի էին դրվում:

⁴⁶ Մուրի գրքի հեղինակի արխիվը:

⁴⁷ Այն կապակցությամբ, որ սույն գրքում հաճախ է հիշատակվում Աննա (Աննա Դավիդովնա, Աննա Լազարենա, Աննա Անդրեևնա) անունը, ազկորը չէ սակ: որ այդ անունը Լազարյանների տոհմում և նրանց մերձավոր ազգականների մոտ ավանդական էր և հանդիպում է յուրաքանչյուր սերնդի մեջ: Այդ ավանդությունը, պետք է ենթադրել, հարգանքի տուրք էր Աննա Շովհանի Լազարյանի (1710—1770), Աղազար նազարի Լազարյանի (1700—1782)՝ Ռուսաստանում Լազարյանների տոհմի նահապետի, կնոջ հիշատակին:

Այդպես Անդրիայից ստացված Աննա Անդրեևնա զր Մերինզուրի նամակը արձագանքում է հետազոտող Կվետա Կրժիժովայի հողվածին շեխական լրագրի էջերում և Լերու զեպքում էլ խոսքը Լազարյանների ընտանիքի արտասահմանյան գեղարվեստական հավաքածուների մասին է:

Արտասահմանյան այս նյութերը, անկասկած, կհարստացնեն և կլրացնեն մեր տեղեկությունները մշակույթի պատմության մեջ հայկական գաղութների ունեցած դերի ու նշանակության մասին:

IV
Ա. Գ. ԱՌԱՄԵԼԻՔ

1

Նրան պոեաներն են բանաստեղծություններն նվիրել

Պուշկինի և Լերմոնտովի ստեղծագործությունները միշտ էլ ջերմ ու կենդանի հետաքրքրություն են առաջացրել բոլոր սերունդների ընթերցողների և հետազոտողների մեջ: Բազմաթիվ առաջնակարգ աշխատություններ են գրվել, որոնցում մանրագնի հետազոտված է ուսս հոնճարեղ պոետների կյանքը: Բայց զեռ հայտնաբերվում են նրանց կենսագրությունների նոր փաստեր, իսկ յուրաքանչյուր մի նոր բնորոշ մանրամասնություն Պուշկինի և Լերմոնտովի կենսագրություններում քնդհանուր հետաքրքրություն է առաջացնում և մեծ արժեք ներկայացնում, օգնելով ոչ միայն ավելի մանրամասնորեն պատկերելու պոետների կյանքը, այլև նույնց տալու նրանց ստեղծագործական շրջապատը, գրական կազմը: Միաժամանակ յուրաքանչյուր նման բնորոշ մանրամասնություն բնութագրում է նրանց ստեղծագործությանը այս կամ չափով մասնակից անձանց, օգնում է պարզելու նրանց բարեկամների շրջանը: Այստեղ մենք կպատմենք այդ բարեկամներից նրանց մասին, որոնց պատկանում էին ժամանակի հայկական առաջավոր շրջանների մի բանի ներդաշույցությունը: Այսպես, կադարյանները, Ախշարումովները, Աբամելիքները, Ախվերդովները բարձր էին փառատում և հասկանում ուսական մշակույթը:

Կադարյանների ընամիքը ծանոթ էր Վ. Ա. Ժուկովսկու, Պ. Ա. Վլադեմսկու, Ա. Ս. Պուշկինի, Մ. Յու. Լերմոնտովի հետ: Քաջ հայտնի է, մասնավորապես, Պուշկինի կադարյան ճեմարան այցելելու փաստը, որը նշվել է մատուցող զեռնս անցյալ դարի կեներին:

Նկարիչ Ե. Ե. Մելիքովի հուշերում սեղեկություններ են պատկերվել Լերմոնտովի՝ նրա մանկական տարիների ընկերոջ մասին:

«Չորեքորս (գեներալ Պավել Մովսեսի Մելիքովի:— Ա. Բ.) բնակարանը գտնվում էր Մյասնիցկայա փողոցում, Հալկական նրբանցքում՝ հայկական եկեղեցու և կադարյան ճեմարանի մոտ, որի հոգաբարձուն էր նա՝: Կրասնի փողոցային մոտ բնակվում էին նրա բարեկամները՝ Մեշչերինովների ընտանիքը: Ոչ հեռու ապրում էր Բաղդալովների ընտանիքը, որը նույնպես հայտնի էր հայերի շրջանում: Մեշչերինովների հարկանությունը ապրում էր նրանց ազգականուհի Ելիզավետա Ալեքսենա Արսենևան, ծննդամբ՝ Ստոլիպինա, նշանավոր բանաստեղծ Լերմոնտովի սուտը: Բոլոր այդ անձինք հորեքորս բարեկամներն էին, հաճախ տեսակցում էին իրարը»: Այդ նոթերին կից ծանոթագրություններում ասված է, որ ձևկարիչ Մոսեսը Եգորովիչ Մելիքովը (ծնվ. 1818) Լերմոնտովի հետ ծանոթացել է Մոսկվայում 1827 թ.: Այդ ժամանակ Մելիքովը սովորում էր Բորգարով պանսիոնում, քմուհետև արևելյան լեզուների կադարյան ճեմարանում»:

Մ. Ե. Մելիքովի հուշերը հանգեցնում են այն մտքին, որ մասնակց հասակում Լերմոնտովը գեներալ Պ. Մ. Մելիքովից շատ բան կարող էր լսած ինեկ Բորողինովի ճակատամատուի և Էլենբալ Պ. Պ. Երմուզովի մասին, որը ոչ միայն Մելիքովի պետն էր, այլև բարեկամը¹:

Ոչ միայն Մելիքովները, Մեշչերինովները, կադարյանները, այլև մեքնավոր աղզական Աբամելիքները, ինչպես նաև Ախվերդովները, անկասկած, մոտիկից ծանոթ էին Գրիբոլեդովին, Պուշկինին, Լերմոնտովին: Այսպես, նիկոլայ Իսանիչ Ախվերդ-

¹ Այստեղ սխալ է թույլ տրված Պ. Մ. Մելիքովը հոգաբարձու չի եղել, բայց մտել է ճեմարանի խորհրդի կազմի մեջ:

² М. Е. Меликов. Заметки и воспоминания художника-живописца. — М. Ю. Лермонтов в воспоминаниях современников. М., 1964, с. 72.

³ Նույն տեղը, էջ 426:

⁴ Տ. Ա. Կվանդան նշում է, որ «Լերմոնտովը հաճախ էր լինում Մեշչերինովների ընտանիքում, որտեղ հանդիպում էր գեներալ Մելիքովին, ուրը ձեռք կորցրել էր Բորողինովի ճակատամարտում: Տանտերը և նրա բարեկամը, կենտ գեներալը, Երկուսն էլ Հալկական պատերազմի մասնակից, ազգական հասակակիցներն էին ոչ վաղ անցյալի զեղրերի մասին»:

(Т. А. Иванова, М. Ю. Лермонтов в Подмосковье, М., 1962, с. 64);

գովը, որի հայրը՝ Բ. Վ. Ալավերդովը, ղեկ XVIII դարի 30-ական թվականների վերջերիսի ռուսական ծառայության մեջ էր հասնողի և վերացիներից կառավարման հաստիկ գինվորական միավորումում, ներկա էր եղել Յարսկոյե Սելոյի լեյցելի 1815 թվականի հունվարի 8-ի փոխարկական քննություններին, երբ պատանի Պուշկինը կարգացել էր իր «Հիշողություններ Յարսկոյե Սելոյի մասին» բանաստեղծությունը: Ե. Բ. Ալավերդովի եղբայր Ֆլոդոր Իսանիչը ժամուսնացած էր գեներալ-մայոր Արսենիի դստեր հետ, որի մոտ էր դաստիարակվել իշխանուհի Նիկա ճավճավաձևն, հետագայում Գրբրուցիովի կինը»⁵, իսկ Ֆ. Բ. Ախերդովի կինը՝ Պրասկովյա Նիկոլանան, բարեկամական հարաբերություններ էր մեջ էր Գրբրուցիովի հետ:

Գրականության մեջ բաց հայտնի են Բ. Լ. Անդրեևիչովի հետաքրքիր նյութերն ու ենթադրությունները վրաց և հայ մտավորականության հետ Մ. Յու. Լերմոնտովի ունեցած կապերի մասին: Մեզ օրինաչափ է թվում մեծ պոետի իսկական բարեկամների՝ «մեծ բանակության և մարտը սրաի տեր մարդկանց»⁶ թվում դասել Աննա Գավիդովնա Արամելիքին:

Եւ, «Պուշկինի ներբողածներից մեկը»⁷, ազգական էր և բարեկամ Լերմոնտովին և, ինչպես հայտնի է, պահպանել էր երկու մեծ բանաստեղծների ինքնազրկը: Մովսեսական գրականության մեջ Աննա Գավիդովնայի մասին տեղեկություններ գրեթե չկան, և միայն Ա. Մ. Պուշկինի և Մ. Յու. Լերմոնտովի բանաստեղծությունների ծանոթագրություններում նրան մի քանի տող է հասկացրում: Մինչդեռ այդ երեկի կինը արժանի է մեծ ուշադրության:

1963 թվականին «Արևելյան լեզուների ճեմարանի տեղիծումը Մոսկվայում» աշխատության մեջ առելն զբքի հեղինակին հաջողվեց որոշ կենսագրական տվյալներ հրատարակել Ա. Գ. Արամելիքի, ամուսնուկամը Բարատնիսկայայի և Ա. Մ. Պուշկինի ու Մ. Յու. Լերմոնտովի նրան ընծայած ինքնագրերի մասին: Մի

քանի տարի անց, 1967 թվականին, «Работница» ամսագրի գլխավորման համարում հայտնվեց Լ. Չերեչևիկու հետաքրքիր վերբերածավալ հոդվածը Ա. Գ. Արամելիքի մասին⁸:

Աննա Գավիդովնան ծնվել է 1814 թվականին Նշանավոր և հարուստ իշխան Արամելիքների հայկական ընտանիքում: Աննա Գավիդովնայի մայրը՝ Մարթա եկեմովնա, ծագում էր Լազարյանների ընտանիքից: Հայրը՝ գեներալ Գավիդ Արամելիքը (1774—1833), որը մասնակցել էր 1812 թվականի հայրենական պատերազմին և արտասահմանյան արշավանքներին, աչքի էր ընկել Արամելիքի, Բորիզոնի, Կրասնիի ճակատամարտերում: Այլը պատերազմին մասնակցություն էին ունեցել նաև Աննա Գավիդովնայի եղբայրները և ուրիշ մերձավոր ազգականներ: Պահպանվել է հետաքրքրական արխիվային մի քաղաքը, որը վերաբերում է միանգամից Արամելիքների ընտանիքի երեք անդամներին, «1813 թ. ապրիլի 2... արխիվում և բաշտմամբ աչքի ընկածներին, Կրասնի քաղաքի մոտ ամսի 3-ի, 4-ի, 5-ի և 6-ի ճակատամարտում... պարզևտարված են՝ զնգապետ իշխան Արամելիքը քր. Աննայի 2-րդ կարգի շքանշանով: Շտաբ-ռոտմիստրներ... իշխան Արամելիքին... ոսկի սուր՝ բաշտման համար. կոռնետ իշխան Արամելիքին... սր. Աննայի 3-րդ կարգի շքանշան»¹⁰:

Արամելիքների ընտանիքն աչքի էր ընկնում մեծ կրթվածությամբ և զբաղմունքով ու պղծեցիկ արվեստների նկատմամբ ունեցած աշխույժ հետաքրքրությունը: Աննա Գավիդովնայի հայրը հայրենից բացի տիրապետում էր ռուսերեն և վրացերեն լեզուներին և խոսում էր թուրքերեն: Աննա Գավիդովնայի կրտսեր եղբայրը՝ Սեմյոն Գավիդովիչ Արամելիքը (1815—1838), իր կառնիքան սկսել էր լեյք-զվարդիան հուսարական գնդում, որտեղ մի ժամանակ ծառայել էին նրա եղբայրները, որի հրամանատարն էր եղել նրա հայրը:

Ա. Գ. Արամելիքը Մ. Յու. Լերմոնտովի ընկեր էր զվարդիական լուսնիկների զվարցից (ընդունվել էր բանաստեղծից մեկ տարի հետո) և զնգում ծառայելու: Մ. Յու. Լերմոնտովին և Ա. Գ. Արամելիքին մերձեցնում էր ոչ միայն ծառայությունը, այլև ասին, որ երկուսն էլ լրջորեն հրապարակած էին նկարչությանը:

⁵ «Работница», 1967, № 12.

¹⁰ ԱԿՊԱ, ֆ. 1252, գ. 68, ր. 7 ր:

⁵ Русский биографический словарь. Т. 2. СПб., 1900, с. 361.
⁶ Նույն տեղը, էջ 111:
⁷ Այդ խորագրով հրատարակվել 1900 թվականին Բ. Պ. Կրուչովի գրքույկը և այդ նույն տեղում էլ սկսվում «Харьковский университетский сборник в память А. С. Пушкина (1799—1899)», Харьков, 1900.
⁸ Очерки по истории русского востоковедения. Сб. 6. М., 1963, с. 286—287.

Աւերանդր Տիտովի վերջերս հրատարակված փաստագրական «Եմառը ջրերում» փյուփյուռ նկարագրվում են, մասնավորապես, Լերմոնտովի փոխհարաբերությունները Ի. Ա. Բարատինսկու և կարայր ու բուլր Արամիլիների հետ: Վերապահ Բարատինսկին, եղյանք ֆիզիկ-աղյուսանալը, հայտնի բանաստեղծ Բարատինսկու հարազատ եղբայրն էր և մտախիղջ ծանոթ էր համարյա բոլոր գրողներին, համենայնդեպս նրանց, ովքեր ապրում էին աշխարհիկ հասարակության մեջ: Լերմոնտովին նա դուր էր գալիս. զեղեցիկ էր առանց սեփեկիանքի, գերազանց կրթության տեր, միշտ բարեհամրույր և առանց բռի դիմադրակառնության նվազագույն իսկ երանգի:

Բարատինսկին վերջերս ամուսնացել էր պորուշիկ իշխան Արամիլիի բրոջ հետ, որին կարճ հասակի պատճառով գնդում անկանում էին «Մատնաշափ աղա»: Արամիլիի կրթող կեցրո՞ւ կեցրո՞ւ և հաճախ ի վնաս ծառայության, ինչպես և Լերմոնտովն ինքը, հրապուրված էր նկարչությանը, և նրանք երկուսով հաճախ էին ապաստան գտնում զինգալեաի տանը, որտեղ «Մատնաշափ աղան» ազգականի իրավունքով իր համար հարմար արվեստանոց էր պատրաստել¹¹:

Շնորհալրված բանաստեղծին Կովկաս ճանապարհելիս, զբնարանտի հետ ունեցած նեանմարտից հետո, Լերմոնտովի գնդի ծառայակից ընկերների թվում էր նաև Սեմյոն Արամիլիի: Բանաստեղծին ճանապարհում էին նաև զՎերապետ Բարատինսկին և Աննա Գավիլովնա Արամիլիի¹²:

Հիմա մենք կարող ենք վառահարաբ առել, որ Արամիլիիները, այդ թվում նաև Աննա Գավիլովնան, Լազարյանների և Պետերբուրգի ու Մոսկովայի մի բանի որչի՞ք չճան ընտանիքներ կապ էին պահպանում Ա. Ս. Պուշկինի և Մ. Յու. Լերմոնտովի հետ, որը դուրս էր դալիս բարձրաշխարհիկ փոխհարաբերությունների շրջանակներից:

«Աննա Գավիլովնան հիանալի կրթություն էր ստացել, երիտասարդ ժամանակ աչքի էր ընկնում արանելի գեղեցկությանը. լայնածավալ կրթությամբ, բնական խելքով, նուրբ ճաշակով և գրականության հանդեպ ասածով սիրով, Գերազանց իմանալով անդերեն, գերմաներեն, ֆրանսերեն և չոնարեն, նա ուսուսական

ընտրվելուսից նորը երկեր գեղարվեստորեն թարգմանել էր ասար լեզուներով»¹³:

Ա. Ս. Պուշկինը Աննա Գավիլովնային էր ձուներկ մի բանաստեղծություն, որը բանաստեղծի Երկերում հրատարակվում է. «Իշխ. Ա. Գ. Արամիլիի ալբոմում» խորագրով:

Հիշում եմ սիրով, որ մի ժամանակ Օրոբևի եմ ձեզ հայացրով ձեռնադր, Սրբ հրաշագեղ մտնով կից դեռ: Մտղիս եր հիմա... մի ուրիշ տեսակ Աննաներով եմ խոնարհվում ձեր դեմ: Այնք անուն է աչքի բոցակեղ, Ջարդում է ուժգին սիրտ սկսմամ, Հպարտանում եմ ձեր դայակի պես Ձեր մեծ համբավի, անունի համար:

Այս բանաստեղծության ծանոթագրությունում նշված է. «Թխանուհի Աննա Գավիլովնա Արամիլիի Պուշկինը ճանաչում էր. երբ երկու տարեկան երեխա հասակում տեսակցության օրը լիցեց էին բերում Պուշկինի ընկերներից մեկին այցելելու համար: Այդ մասին էլ հիշում է պոետը բանաստեղծություն առաջին տողերում»¹⁴: Բայց այստեղ անճշտություն է սպրդել: Ջարդելու տեղում էր կանգնած Աննա-գավիլովնայի հուսարական դուհուր, որտեղ ծառայում էին Աննա Գավիլովնայի հայրն ու եղբայրները: Հայտնի է նաև, որ Պուշկինը բարեկամական հարաբերություններ էր պահպանում այդ դեղի սպաների հետ: Մյուս հրատարակություններում, մասնավորապես ակադեմիական Երկերի լրակուտար ժողովածուում (3-րդ հրատ.) ավելի ճիշտ և լրիվ տեղեկություններ են բերված: «Իշխ. Ա. Գ. Արամիլիի ալբոմում: Պուշկինի կենդանության օրոք չի տպագրվել: Գրվել է 1832 թ. ապրիլի 9-ին: Աննա Գավիլովնա Արամիլի (1814—1889) մասնակցություն էր Պուշկինին: նա բանաստեղծուհի-թարգմանչուհի էր, համարվում էր Պետերբուրգի առաջին գեղեցկուհիներից մեկը: 1832 թ. նշանակվել էր ֆրիլիան»¹⁵:

¹³ Д. Д. Языков. Обзор жизни покойных русских писателей и писательниц. Вып. 9. М., 1905, с. 5—6.

¹⁴ А. С. Пушкин. Собрание сочинений в десяти томах. Т. 2. М., ГИЗЛ. 1959, с. 735.

¹⁵ А. С. Пушкин. Полное собрание сочинений в десяти томах. Т. 3. М., Изд-во АН СССР, 1963, с. 518.

¹¹ А. Титов. Лето на водах.— «Звезда», Л., 1973, № 1, с. 99.

¹² Նույն տեղը, էջ 147:

Մի բանի տարի անց Աբամելիբեքերի ընտանեկան նվիրական հուշաբերքը լրացվեցին կերմոնսովի ինքնագրով, որը նվիրել էր Աննա Գավիղովնային, տնի ժամանակ արդեն Բարասինսկայային (նա ամուսնացել էր 1835 թվականին)՝ «Վերջին նորարանակոթյուն» բանաստեղծության ինքնագիրը: «Ըստ երևույթին նկատի ունենալով Աննա Գավիղովնայի կապերը արքունիքում, կերմոնսովը բերել էր «Վերջին նորարանակոթյուն» բանաստեղծությունը՝ մեծ իշխան Միխայիլ Պավլովիչից աջ սպազորելու թուլտվություն ստանալու խնդրանքով»¹⁶: Այդ բանաստեղծության ծանոթագրությունում ասված է. «Սևագիր ինքնագիրը (մատիաով)՝ կերմոնսովի այրումում, որը պահպանվում է Պետական հանրային գրադարանում... մաքրագիր ինքնագիրը՝ ՌԳԻ-ում (Պուշկինյան տուն), Ա. Գ. Աբամելիբեքի այրումից (տպագիր տեքստից պարբերություններով)»¹⁷:

Երկու մեծ բանաստեղծների ինքնագրերը կազմում էին Աբամելիբեքերի ընտանիքի հպարտության հատուկ առարկան: Ա. Գ. Աբամելիբեքին նվիրված կերմոնսովի ինքնագիրը հրկառ տարիներ պահպանվում էր Աբամելիբեք-Լազարյանների ընտանիքում և, ինչպես պատմական շատ փաստաթղթեր, ունի իր պատմությունը, որը, ճակոթ, զեռ մինչև վերջ պարզված չէ:

Նիկողայևյան հեծկադրային ուսումնարանի (Պետերբուրգում) կերմոնսովյան և պատմական թանգարանների նախագահ Մ. Կ. Մարչենկոն 1916 թվականի նոյեմբերի 29-ին մի նամակով գիմնել էր Ս. Ս. Աբամելիբեք-Լազարյանի այլու՝ Մարիա Պավլովնային, որտեղ գրում էր. «Համադրյալ իշխան Սեմյոն Սեմյոնովիչը (Աննա Գավիղովնա Աբամելիբեքի դստերը) — Ա. Բ.) Կիևովոզուկում վախճանվելուց մի բանի օր առաջ ճաշում էր տեղի տղնվականության նահանգական պարագլխի տանը և ինձ խոստացավ Պետերբուրգ վերադառնալուց հետո Նիկողայևյան հեծկադրային ուսումնարանին աղբյուր կերմոնսովի թանգարանին հանձնել (որտեղ դաստիարակվել էր բանաստեղծը և որտեղ հավաքված է նրա ձեռագրերի Ռուսաստանում ամենամեծ հավաքածուն՝ ալլելի բան 1200) կերմոնսովի իր մոտ եղած «Վերջին նորարանակոթյուն» ինքնագիրը, որը բանաստեղծը ժամանակին

բերել էր իշխանուհի Աննա Գավիղովնա Աբամելիբեքին... ինչպես նաև իր հանդուցյալ հոր գիմանակարը: Իշխան Սեմյոն Սեմյոնովիչի անսպասելի մահը խախտեց այդ մտադրությունը իրագործելու հնարավորությունը: Ներեցեք անհամաստեղծյալ համար, որ կերմոնսովյան թանգարանի անուոնից անհանգստացնում եմ Ձեզ օգնելու խնդրանքով, էթե Գուբ հնարավոր կհամարեք իրականացնելու ամբողջ վերջը շարտորվածը»¹⁸: Մարիա Պավլովնան դրականորեն վերաբերվեց Մարչենկոյի խնդրանքին և զրեց իր պիսակըր կառավարելու. «Քանի որ դա իմ անմոռանալի ամուսնու կամքն է, ուստի, իհարկե, այն պետք է կատարել»¹⁹: Խնդրում եմ Ձեզ խոսել իշխանի Ա. Մ. Մեղչերսկու և Թանկեպի կոմսուհի Օլտոֆնայի հետ»²⁰: Մեղչերսկիների և Օլտոֆնայի ազգանունները հիշատակումը բացառություններ է պահանջում: Բանն այն է, որ Ս. Ս. Աբամելիբեք-Լազարյանի քույրերից մեկը ամուսնացած էր իշխան Մեղչերսկու, մյուսը՝ իշխան Գաղարինի, երբբայց՝ կոմս Օլտոֆնի հետ: Իշխան Սեմյոն Սեմյոնովիչը Աբամելիբեք-Լազարյանի ժառանգներն էին, հավանաբար, կնույց՝ Մարիա Պավլովնայից բացի, զամիկները՝ Օլտոֆնայի և Մեղչերսկիների երեխաները (Գաղարինները զավակ չունեին) և Ցավոթ, զեռս չի հաջողվել պարզել, կե կտտարվել է արդյոք Ս. Ս. Աբամելիբեք-Լազարյանի այլու կարգադրությունը: Հայտնի գրականագետ Ա. Բ. Մոձակովին մասնանշում է, որ Մ. Ցու. կերմոնսովի «Վերջին նորարանակոթյուն» բանաստեղծության ինքնագիրը եղել է Ա. Գ. Բարատինսկայայի, իսկ այնուհետև՝ Ս. Ս. Աբամելիբեք-Լազարյանի սեփականությունը, իսկ հետո այն անցել է Ա. Կ. Կաբինինի, որից էլ 1930 թվականին անցել է Պուշկինյան տան ձեռագրերի բաժնին»²¹:

18 ԿՊՊԱ, ֆ. 880, ց. 5, դ. 107, թ. 1:

19 Պետք է նեթագրել, որ Ա. Աբամելիբեք-Լազարյանի կինը կատարել էր նրա խնդրանքը: Այդ մասին է անտղականորեն վկայում Ս. Գ. Աբամելիբեք-Լազարյանի խոստանված և Ռուսաց գրականության ինստիտուտի (Պուշկինյան տուն) թանգարանում պահվող գիմանակարի վրայի նշումը՝ «կերմոնսովյան թանգարանից»:

20 ԿՊՊԱ, ֆ. 880, ց. 5, դ. 107, թ. 2:

21 Գրքին հեղանակին ՍԷՄ ԳԱ ուսական գրականության ինստիտուտի ձեռագրերի բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների զոկտոր Ս. Վ. Իզմայլովը սիրալիբ հաղորդեց, որ «Պուշկինյան տան ձեռագրերի բաժնի ստացումները մատչանում 1930 թվականին № 1290 տակ եղած է. Ա. Գ. Աբամելիբեք-Բարատինսկայայի այրումը»: Կազմի հակառակ կողմում գրված է.

16 «Наше время», 23.IX. 1916.

17 М. Ю. Лермонтов, т. 2, М.-Л., 1938, с. 232.

Ինչպես վերևում սովորյալ, Աննա Դավիդովնա Արամելիք-Բաբախանյանի Միխայիլ Լեբմոնովի հետագոր ազգականուհին էր: Արամելիքը և Լազարյան ընտանիքները մերձավոր ազգակցական կապեր ունեին իսաաստուղիների հետ, որոնք Լեբմոնովի ազգականներն էին մեր կողմից:

Ա. Գ. Արամելիքը համբավ էր սասցել որպես թարգմանչուհի: «Կատարելապես գիտեսնալով անգլերեն, Աննա Դավիդովնան բնագրի շափով արտակարգ հիշու և գեղեցիկ թարգմանել էր Պուշկինի, Լեբմոնովի, կոմս Ա. Տոլստոյի, Նեկրասովի, Տյուսչևի, Ապոլևանի, Կոլտովի և ուրիշների որոշ ստեղծագործություններ: Խարկովի ուսումնական օկրուգի նախկին հոգաբարձու Բ. Պ. Խորշովիի վկայությամբ, որը նոթերի և անձնական հուշերի հիման վրա Ա. Գ. Բարախանյանի մասին գրված մի փոքրիկ գրքուկի հեղինակն էր, նա «արգվեստորեն կարողում էր բանաստեղծություններ, և Պուշկինի բոլոր լավագույն ստեղծագործությունները անգիր գրահեր»²⁶:

Աննա Դավիդովնան Պուշկինից անցյերենն է թարգմանել «Քրանի դեռ պոեմին Ապոլոնը սրբազան զոհարելուցան շի կոչում», «Ես բեզ սիրեցի, սերս պուցե դեռ...», «Սեղմի դռանը հրեշտակը նրբագեղ», «Աստված Ձեզ օգնական, կը բարեկամները», «Կյանքի սայլը», «Դեղը», «Այն օրերին, երբ դեռ նոր էին ինձ համար կյանքի տպավորությունները բոլոր...», «Մասնատները», «Փառքի ու բարու հուշագր անվախ առաջ եմ նայում...», «Սեր ջահել տարիները քո», «Պարզև ապարզում, պարզև պատահական», «Ձվարձություն թե պարսպ ձանձրույթի պահին», «Ան** (Ես հիշում եմ անխթարքը հրաշալի)», «Նախանշանները», «Ոչ, շողոքորթ չեմ ես, երբ թագավորին...», հերկու հատված «Կնչուներ» պոեմից, «Իշխ. Ա. Գ. Արամելիքի այբումում», «Անչար»²⁷, Ֆրանսերեն և անգլերեն է թարգմանել «Քալիստանը»²⁸:

«Princessa Annette Abamelek. Sf. Petersburg 1832»: Լեբմոնովի «Վերջին նորարակություն» բանաստեղծությունը գտնվում է այդ այբումում:

²² Харьковский университетский сборник в память А. С. Пушкина (1799—1809), с. 6.

²³ И. П. Хрушов. Одва из воспетых Пушкиным. Харьков, 1900, с. VII, VIII.

²⁴ [Н. Н. Голицын]. Библиографический словарь русских писателюниц князя Н. Н. Голицына. СПб., 1889, с. 287.

Աննա հենց այս հանգամանքներն են Բարախանյանի կենսագրի թուղ տվել ասելու նրա մասին որպես «մի անձնավորություն, որը հերկու ձեռով էր կապված Ալեքսանդր Սևրգեևիչի պոեզիային»²⁵:

Աննա Դավիդովնա Բարախանյանի արասասամանում (հունիս-հուլիս, 1876—1877) հրատարակել է գերմանական, անգլիական և ֆրանսիական բանաստեղծությունների ռուսերեն թարգմանություններ: Այդ փոքրիկ գրքուկի կերտ կազմում էին Հայնի 25 բանաստեղծությունների թարգմանությունները. թարգմանվել էին նաև Լոգգիլլի, Թ. Մուրի և ուրիշների ստեղծագործությունները²⁶: Բայցի այդ, նրան է պատկանում «նոթագրություն բանաստեղծ բարուն Ա. Ի. Գլինիցի այբու մասին»²⁷: Որոշ թարգմանություններ Ա. Գ. Բարախանյանն ստորագրում էր «A Russian Lady» կեղծանունով: Այդ կեղծանունը սարքերի մասնակ և միմյանցից անկախ բացասալու են Ի. Պ. Խորշովից և Մ. Ա. Վենեվիխինովը:

1833 թվականին Պյոտր Անգրեևիչ Վյազեմսկին Աննա Դավիդովնային էր նվիրել մի բանաստեղծություն, որի ենթախորագիրն էր «Մոսկվա մեկնիցույ առաջ» և հիշեցնում էր Իտալիայում նրանց ունեցած հանգիպումների մասին:

ԻՇԵԱՆՈՒՅԻ ԱՆՆԱ ԴԱՎԻԴՈՎՆԱ ԱՐԱՄԵԼԻՔԻ

(Մոսկվա մեկնիցույ առաջ)

Իմ հայրենիքի լեզու լուստու,
 Ողջունում եմ քեզ այս հողում օտար,
 Հայրենի երկրում շատ սիրված ես դու,
 Այստեղ առավել թանկ ես ինձ համար:

Ուրիշ ապրում է խեղ ու հիացում
 Լուսողն խաղով քո հմայքների,
 Բայց նրա առջև սիրով չես բացում,
 Որ հասու լինի սուրբ խորհուրդների:

²⁵ И. П. Хрушов. Одна из воспетых Пушкиным, с. V.
²⁶ Նույն տեղում, էջ VIII: [Н. Н. Голицын]. Библиографический словарь русских писательниц князя Н. Н. Голицына, с. 287.

²⁷ Д. Д. Языков. Обзор жизни покойных русских писателей и писательниц, с. 5—6.

Ես էլ եմ պաշտում շատերի նման
Զասել աստղերին նրբի պանանայն,
Միայն թե հիմա թողած ամեն բան
Տարվում եմ քեզնով, խորհում քո մասին:

Թռչում եմ ապա մտրով դեպի տուն,
Հուշերն են դանտում իմ մտերմուհիին,
Տենչում եմ լինել ևն քեռջ կատաղատում,
Որ որ ձգվում է քո պաշտոն ուրին՝²⁸:

Պ. Ա. Վլադիմիրու մյուս՝ «Տիրեհեցիա» բանաստեղծությունը
ևս կապված է Աննա Դավիդովնա Աբամելիքի հետ: Նրան է ձեռ-
ված, թեև նրա անունը չի տրված, պոետի այն բանաստեղծու-
թյունը, որտեղ կան այսպիսի ստղեր.

Օ՛ շքնաղ եղբր... ծաղկում է, շողում
Բնությունը ճոխ, արվեստն անմեղի,
Մարմարը այստեղ շնչում է, խորհում,
Նկարն և՛ հրե ցուր է հուշգրերի:
Այստեղ բարբառը նման է երգի,
Խոսքը՝ սրտահույզ, բառը՝ զրնգուն,
Բայց ինչ էլ լինի, առաջին շերթին
Ինձ հափշտակեց ազդին այս սիրուն՝²⁹:

Բանաստեղծությունն ավարտվում է հետևյալ խոսքերով.

Եվ ցուրտ հյուսիսի դուտորը շահել
Հարավի արևն ուներ իր հողում՝³⁰:

Իվան Պետրովիչ Մլադիլը (1796—1844)՝ Ի. Ա. Կոխլովի,
Վ. Ա. Ժուկովսկու, Ա. Ս. Պուշկինի, Պ. Ա. Վլադիմիրու և Մ. Յու.
Աբամելուսովի բարեկամը, հանդատարաբայ բանաստեղծություննե-
րի (մակաբոնական բանաստեղծություններում մեկ լեզվի բա-
սերն ու արտահայտությունները խառնված են մեկ ուրիշ լեզվի
բասերին ու արտահայտություններին)՝ հեղինակը Աննա Դավի-
դովնային է ձոնել մի բանաստեղծություն, որում կատակի ձևով
իր հիացմունքն է արտահայտել.

²⁸ [П. А. Вяземский]. Полное собрание сочинений князя П. А. Вяземского. Т. 4, СПб., 1880, с. 176.

²⁹ Նույն տեղը, էջ 192:

³⁰ Նույն տեղը, էջ 193:

Ինչ էլ մտտե՛ս չա ֆիկցիոյ,
Միշտ սազում է ժե՛ ժու գայարթ,
Ինչ էլ պարլէ, ողջն արարող
Կամխարիստ ի դու դեպո
Եվ ամուսնի քեռջ ակունք:
Մի հասարակ բնեմուրը քո
Ախ, այնքան է հոգե՛մաս,
Որ զմտախօսի զին ունի նա:
Թե աչքի սրշով պար ազար
Նստերն թիկն մի ուղար,
Ուզես թէ շուգես:
Իսկ նսար հրեր իսկույն բրրույն:
Գուր լի՛ս կրակ արեկերի
Միշտ բուշվում եմ ես մի կողմի,
Որ չլսողնեմ, չմտորանամ,
Եվ պար ամուր չմահանամ
Կամ շտառնամ տուրովմա,
Շաղանակ բոտը կամ սո՛ս կվիտ՝³¹:

Պ. Մլադիլ³³

Աննա Դավիդովնային բանաստեղծություն է ձոնել նաև բա-
նաստեղծ իվանովիչ Կոզլովը.

ԻՇԵՆԱՆՈՒՆԻ ԱՔԱՄԵՆՔՈՒՆ

Մաղկարայք հոփն խաղաղ զիշերով
Թռչում է զբկից հետո աստղերի,
Լուսնի շողի ճեա իշնում է նա վար,
Իճնում է մեզ մոտ մի հրաշք փերի:

³¹ Татевский сборник. СПб., 1889, с. 63—64.

³² Այդ բանաստեղծության ծանոթագրությունում մողովմուտի կազմող Մ. Ա. Ռաչինսկին գրում էր. «Մրամիտ հեղինակի այդ կատակը... ուղղված էր մտրաբոլոս, որին գովերգել էին Պուշկինն ու Կոզլովը: Աննա Դավիդովնան ոչ միայն գեղեցկություն էր աչքի ընկնում, այլև խելքով ու սիրալիրության մեջ ոչ փոքր բանաստեղծական առաջնորդ: Գերմանական և անգլիական պոետների նրա հրանալի թարգմանությունները տպագրվում էին ժամանակակից հրատա-
րակություններում և հավաքված էին մի գրքույիում, որը հրատարակվել էր արտասահմանում»:

³³ Վրիպակ է: Պետր է կարգալ՝ Ի. Մլադիլ:

եմ երգում է նա, երգում մեզ համար
Մեր երգն անուշ մինչ վաղ առավոտ,
Ջահել սրտերը լցնում ակամա
Տագնապ ու թախծ, հրճվանք ու կարոտ

Գու հայտնվեցիր էն փերու նման
Վե՛հ երգչերի երկնային շաղմփ,
Ինքդ էլ մի փերի՝ տեսող անմասն,
Լուսն ժպիտով, արցունք-ձիճազով:

Ողջ Արևելքն է աշերիդ մեջ թուխ,
Քո հայացքի մեջ՝ զգզանք արթնցման,
Շրթերիդ սիրո երգն է սրտաբուխ,
Կրճերիդ տակ՝ հուրը ոգևորության³⁴:

Վերջում հարկավոր է նշել, որ Աննա Գալիզովնան հայտնի էր ոչ միայն որպես տաղերգու, բայց նաև հայտնի էր որպես հասարակական գործիչ, Ռուսաստանում միջազգային կոնգրեսների պատվավոր հոգաբարձուհի:

2

«Ո՞վ գիտե այս բանասերձուրյունը»

1964 թվականին «Իզվեստիա» լրագրում հրատարակվեց «Ո՞վ գիտե այս բանասերձուրյունը» հետաքրքրական խորագրեր կրող մի հոդված:

«1939 թվականին Հայաստանի Պետական արխիվի դիրեկտոր Կ. Ա. Ստեփանյանը արխիվի նյութերի մեջ գտավ «Գեի» ընդօրինակությունը հետևյալ նշումով. «Մոսկվա, 25 փետրվարի 1842 թվականի»: Լերմոնտովը, ինչպես հայտնի է, սպանվել է 1841 թվականի հուլիսին: Հետևաբար, ընդօրինակությունը ետմահու է: Ընդ որում այն չի համընկնում պոեմի հայտնի խմբագրումներից ոչ մեկի հետ: Այն հայտնաբերվել է գիտնական Ի. Խ. Քուչուկ-Շուվհանիսյանի³⁵ ֆոնդում: Ինչպես և կրթ է ընկել այնտեղ՝

³⁴ [И. Козлов]. Собрание стихотворений Ивана Козлова. Ч. 2. СПб., 1834, с. 273.

³⁵ Վրիպակ է: Պետք է կարգաւ Խ. Ի. (Խրիստափոր Լվանովիչ) Քուչուկ-Շուվհանիսյան:

հայտնի չէ»³⁶: Այդ բանը պնդում է հոգվածի հեղինակ Ի. Լ. Անդրոնիկովը, և նա էլ տալիս է այն պարագաների բացատրությունը, որոնց պայմաններում, նրա կարծիքով, Մ. Յու. Լերմոնտովի՝ պոեմը էր ընկնել Խ. Ի. Քուչուկ-Շուվհանիսյանի ֆոնդը:

«Յե՛ն զիտենանք,— գրում է Ի. Լ. Անդրոնիկովը,— որ Լերմոնտովը ազգակցական կապեր ուներ հասարակական հայտնի և անհայտ անհատների հետ (նրա տառի բույրը ամուսնացած էր հասարակական հետ), որ հասարակությունը՝ Լերմոնտովի մտաբաններն ու ընդհանրը, ազգակցություն մեջ էին հայազգի կազարյանների հետ, ապա արդեն գտնվածների չի թվա, որ կազարյան ճեմարանի և Մոսկվայի հայկական գաղութի հետ կապված Քուչուկ-Շուվհանիսյանի մոտ հայտնվել էր «Գեի» ընդօրինակությունը, որի հավաստիությունը կարելի է առանց երկչուրի հավատալ»³⁷:

Գիտնականի իմացությունը և ճեմարանողի բնազդը որոշել էին որոնումների շրջանը և ուրվագծել ճիշտ լուծումը: Բայց այն հոդվածում, որից բերված է բաղվածքը, մենք, այնուամենայնիվ, չենք գտնում այն հարցերի կոնկրետ պատասխանը, թե ինչպե՞ս է «Գեի» ընդօրինակությունն ընկել Խ. Ի. Քուչուկ-Շուվհանիսյանի ֆոնդը և ինչու՞ է մոսկվացի դասախոսը արխիվը հայտնվել Երևանում:

Կարելի է համարձակորեն պնդել, որ Խրիստոֆոր Իվանովիչ Քուչուկ-Իոհաննեսովը (այդպես է նրա անուն ազգանունը ուսուցիչի կենդանության օրոք լույս տեսած հրատարակություններում) չի հանդիսացել 1842 թվականով թվագրված «Գեի» ընդօրինակության սեփականատերը: Բավական է սասել, որ նա մտնել է 1852 թվականին: Գալուսացի համեստ պատանի (նա ծնվել է Խերսոնի նահանգի Գրիգորիպոլիսում քաղաքում) Խ. Ի. Քուչուկ-Իոհաննեսովը, որի կյանը ընթացել է Մոսկվայում, առաջցրեց և փոխարքայական իմաստով հետո էր հոստատությունները, և կազարյանների մալրաբազմաբաններին երևելի և հարուստ հայկական ընտանիքներից: Մինչևից մասնակա Ի. Լ. Անդրոնիկովը իրավացի է, կրթ երևանյան գյուղը կապում է Մոսկվայի Արևելյան լեզուների կազարյան ճեմարանի, հայկական գաղութի ներ-

³⁶ Ираклий Андроников. Кто знает эти стихи?— «Новости», 12. IX. 1964.

³⁷ Նույն աղբյուր:

կալացուցիչներին՝ Մ. Յու. Լերմոնտովի ազգականների և մեր-
ձավորների հետ:

Բայ հայտնի է, որի Մ. Յու Լերմոնտովը պատվալոր ծա-
նոթների ու ազգականների թվում բիշ չէին այն մարդիկ, որոնք
կազմում էին Մոսկվայի և մայրաքաղաքի հայկական հասարա-
կությունը:

Իր հուշերում Մ. Ե. Մելիքովը գրում է, որ «Մեշչերինովները
և Լերսենները գրեթե մեկ սան պես էին ապրում»³⁵ և պատմում
է Մ. Յու. Լերմոնտովի հետ հանդիպումների մասին ոչ միայն
Լեխիա ժամանակ, այլև ավելի ուշ: Ինչպես տեսնում ենք, Մ. Յու.
Լերմոնտովը կապերը չէր խզել մանուշխնայն օրերից մտոիկ ըն-
ձանիքների հետ, իսկ սրանք էլ, իրենց հերթին, հասկանալի մեծ
հարգանք էին ցուցաբերում բանաստեղծի ու նրա ստեղծագոր-
ծությունների նկատմամբ:

Լերմոնտովի ասելով ժանոթների ու բարեկամների մեջ հարկ
է առանձնացնել Աբրամելիքների բնտանիքին և հատկապես Աննա
Գավիղովնա Աբամելիքին:

Շնե հիշենք, որ «Վերջին նորարանություն» բանաստեղծու-
թյունը, որի ինքնագիրը նվիրվել էր Աննա Գավիղովնային, գրե-
վել էր 1841 թվականի մարտ-ապրիլին, ապա պարզ է դառնում,
որ Մ. Յու. Լերմոնտովը և նրա տաղանդի մեծ երկրպագու և նրա
բանաստեղծությունների թարգմանիչ Ա. Գ. Աբամելիքը բարձի
հարաբերություններ էին պահպանել մինչև բանաստեղծի կյանքի
վերջը:

Բայց վերադառնանք «Գեի» 1842 թվականի ընդօրինակու-
թյանը: «Նրանյան ընդօրինակությունը» 1942 թվականին վերա-
գրծվեց Մոսկվա և այժմ պահվում է Գրականության և ար-
վեստի կենտրոնական գիտական արխիվում (ԳԱԿՊԱ)՝ «Մ. Յու.
Լերմոնտով... «Գե» պոեմը, անհայտ անձնավորության ձեռա-
գիր»³⁶ խորագիրը կրող թղթապանակում: Պոեմի տեքստը զըր-
ված է հիանալի թվթի վրա, ջրանիշխնով առաջին և վերջին
թերթերի վրա: Արդեն տեսողական ծանոթությունը ընդօրինա-
կության հետ հանդեհնում է այն մտքին, որ արտագրողի ձեռքի
սակ եղել է, գուցե, պոեմի խմբագրումներից մեկի սեպպեր բնա-

պիրը: Բանն այն է, որ «Նրանյան ընդօրինակության» արտա-
գրումը չանացել է առանց որևէ փոփոխության պահպանել, պաշ-
մանակներին ասենք, բնագրի տեքստը, վերադարձրելով, ըստ
էջնակների, վերջինիս և՛ տարբերացումները, և՛ ուղղումները:
Այսպես, 4-րդ թերթում կարդում ենք. «Роскошной Грузии
картины», որանց «картины» բառը անպես է շնչված, որ «Նեշ-
տայնյանը կարդացվում է. 9ր. թերթ՝ «И над нависшего волной»,
«волной» բառի վերևում մատիտով գրված է՝ «скалой»: 10ր.
թերթում «Тоску любви, ея мученья» բառերը պարունակող
ստորի վերևում մատիտով գրված է՝ «волнение»: Կասկած չկա,
որ նման մանրագնություն կամ, եթե կուզեք, արդարացված
անվճարականություն, կարելի է պահպանել միայն այն դեպքում,
եթե արտագրությունը կատարվում է հեղինակային բնագրից
կամ հեղինակային ուղղումներ ունեցող տեքստից:

Հիմա, նախքան ենթադրություն հայտնելը, թե ում է պատ-
կանել «Գեի» 1842 թվականով թվագրված ընդօրինակությունը,
վերադառնանք այն հարցին, թե ինչպես է այն ընկել Լազարյան
ձեռարանի հայտց լեզվի դասախոս Խ. Ի. Քուչուկ-Նովիկանիսի-
չանի ֆոնդը: Բանն այն է, որ «Յաշատուր Նովիկանի Լազարյա-
նի (Աննա Գավիղովնայի բնուս — Ա. Բ.) մահից հետո նրա ժա-
ռանգը՝ իշխան Սեմյոն Գավիղովի Աբամելիքը, ձեռարանի արտ-
մագրության սակ էր գրել Լազարյանների ընդարձակածավալ
նամակագրությունը 115 հատորով»³⁷:

Ս. Գ. Աբամելիքը պաշտոնապես կազմակերպել էր 1859 թվականին գե-
նեիալ-մայրի առաիճանով, անկասկած, ոչ միայն նրա համար,
ոչ լրջորեն նկատելի թյամբ գրազվի, այլև որպես առաջին հեր-
թին օգնի դասաձյալ, միակ ժառանգին կորցրած հաշատուր
Նովիկանի Լազարյանի՝ վարելու Լազարյանների լայնածավալ
անտեսության գործերը:

Լազարյան ձեռարանի վերջին հոգաբարձու հաշատուր Նովի-
կանի Լազարյանի մահից հետո, ինչպես արդեն սակ ենք, Ս. Գ.
Աբամելիքը, որն ամուսնացած էր նվազալիսա հաշատուրի Լա-
զարյանի հետ, և նրա ժառանգները 1873 թվականին իրավունք
ստացան կրելու Աբամելիք-Լազարյանների ազգանունը և Լազար-
յան ձեռարանի պատվալոր հոգաբարձուների կոչումը:

³⁵ М. Е. Меликов. Заметки и воспоминания...— М. Ю. Лермонтов
в воспоминаниях современников, с. 73.

³⁶ ԳԱԿՊԱ, ֆ. 276, ց. 1, ք. 19, թ. 1:

³⁷ Материалы для истории Лазаревского института восточных язы-
ков, с. XIV.

Վերը քաղվածարար բերված գրքից իմանում ենք, որ Լազարյան ճեմարանի հոգաբարձու իշխան Սեմյոն Սեմյոնովիչ Աբամելիք-Լազարյանը (Սեմյոն Դավիդովիչ որդին) միջոցներ էր արամադրել Պետերբուրգից ուղարկված 115 հատորանոց արխիվի նկարագրության համար, «որը առաջին հատորների նկատմամբ կառարոված է Լազարյան մենք իմանում ենք, որ Քուչուզ-Հովհաննիսյանը մուտք էր ստացել Լազարյանների լայնածավալ արխիվ և քանի որ իր՝ երեսուրորդ Իվանովիչի, որպես ճեմարանի գասախոսի, արխիվային ֆոնդը նույնպես Լազարյան ճեմարանի, Լազարյանների և Աբամելիք-Լազարյանների ընտանիքների նյութերի ընդհանուր հավաքածուի մի մասն էր, ուստի և «Երեկ» գանված ընթացիկությունը, անկասկած, Աբամելիք-Լազարյանների ընտանիկան նվերական հուշադրերից էր, և կարելի է ենթադրել, որ, ավելի շուտ, այն պատկանել էր Աննոս Դավիդովնա Աբամելիքին:

Հոկանձերբյան մեծ հեղափոխությունից հետո Աբամելիք-Լազարյանների և Լազարյան ճեմարանի արխիվի մի մասը, այդ թվում նաև ձեռագրերը, հանձնվեցին Սովետական Հայաստանի արխիվազարաններին: Այգլիսով «Երեկ» անհայտ խմբագրության ընդօրինակությունը Պետերբուրգից, որանդ այն պահվում էր Աբամելիքների ընտանիքում, ավելի ուշ վերադառնում է Մոսկով՝ Լազարյան ճեմարան, իսկ պահ՝ 20-ական թվականներին կեսերին, Նրանան:

3

«Աճհայտ հեղինակի... նկարներով տետրը»

(ՊՈՒՇԿԻՆԻ ԳՈՎԵՐԳԱՏ ԿՐՈՋ ԳՐԱԿԱՆ ԳՄԱՆԱԿԱՐ ԸՈՐԻՋԸ)

«Անհայտ հեղինակի գրական թվանակներով նկարների (առչոյ և թանաթով) տետր»: Այգլպես է վերնագրված Մոսկովայի Հին պոեզիերի կենտրոնական պետական արխիվում պահվող № 1259 ֆոնդի № 1493 փոքրիկ թղթապանակը: Այդ ֆոնդը կաղնում են

⁴¹ Материалы для истории Лазаревского института восточных языков, с. XIV.

երկու հայանի առհամերի՝ Լազարյանների և Նբանց մերձավոր ազգական իշխան Աբամելիք-Լազարյանների նյութերը:

Այդ թղթապանակում պահվում է մի տետր, ավելի շուտ, նկարչության աեսար՝ 26 համարակալված թերթերով:

Առաջին 24 թերթը 24 նկարներ են միանգամայն ակնհայտ գրական սյուժեներով: Ավելին, 23 նկարներ ունեն «բացատրություններ»՝ ներքևում արված ստորագրություններով: (25-րդ և 26-րդ թերթերը նախորդ սյուժեների հետ կապված չեն: Այս վերջին թերթերի վրա հեղինակը ժողովներ և ձիեր պատկերելու վարձույթներ է անում): Սյուժետային նկարները ճնշող սեծածասնությամբ նվիրված են Արքանայի Սերգևիվի Պուշկինի սանդուղիներին: «Եղբարս-ավազակներ», «Ռուսլան և Լյուդմիլա», «Պետրոս մեծի արապը» և այլ ստեղծագործությունների պատկերազարդումներն:

Տետրը սկսված է, ինչպես երևում է առաջին թերթի անդիտերն տեսաից, որը նախորդում է համարակալված թերթերին, 1880 թ. հունվարին և ավարաված է 1882 թվականին (այդ մասին վկայում են 21 և 22 նկարների տակի տարեթվերը: Նկարների վրա ուրիշ տարեթվեր չկան):

24 նկարներից 23-ը ուղեկցվում են «բացատրական» անբստով և միայն մեկը (թ. 3), պայմանականորեն այն անվաններ «Լոռայի էտոք», առանց ստորագրության է:

«Բացատրական» բառը անելով լակերտների մեջ, մենք տղում ենք ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ նկարների տակ եղած ստորագրությունները բացատրում են բովանդակչությունը, բայց միայն ռուսերեն և... անգլերեն լեզուներ իրացող ընթերցողին: Բանն այն է, որ ստորագրությունների մի մասը գրված է ռուսերեն, մյուսը՝ անգլերեն, իսկ երրորդը՝ երկու լեզուների բառերի զուգակցությամբ: Պարզ է, որ սեքստերնայ ուղ տեսքով տպագրության համար չէին նախատեսված, այլ ետև են, պայմանականորեն աւած, աշխատանքային տարբերակ: Ակնհայտ է ևս մեկ բան: Պատրաստվում էր Ա. Ս. Պուշկինի երկերի պատկերազարդ հրատարակություն անգլերեն թարգմանություն: Մեզ միանգամայն պարզ է թվում, որ պատկերազարդող նկարիչը ևս անգլերեն բացատրությունների կարիք էր զգում: Այդ ենթադրվող պատճառները ճեղհանում էին Թանհայտ հեղինակի՝ որոնումների շրջանակները:

Մի կարևոր հանդամանք է: Արիստիվալին զրառուժն ալն մա-
սին, որ նկարները պատկանում են «անհայտ հեղինակին», այն-
քան էլ ճիշտ չէ: Բանն այն է, որ անվանն և ազգանվան (կամ
ազգանվան մի մասի) առաջին տառերը լիովին ակնհայտ են:
«Շատ ժողովուրդներին, այդ թվում անգլիացիների մոտ, ազգա-
նունը անպայման գրվում է անունից հետո, վերագրատվորումը
անթուլլատրելի է:») 21-րդ թերթում նկարի տակ, աչ կողմից,
պահպանվել է ստորագրություն՝ C. Good (այդ երկու զխատա-
ռերը նշված են նաև 6-րդ թերթի նկարի տակ):

Իմանալով անվան կամ անուններից մեկի (չառ ժողովուրդ-
ների մոտ ընդունված է երեխաներին մի բանի անուն դնել)
սկզբնատարը, աղգանունը (կամ ազգանվան միայն առաջին մա-
սը), կողմնորոշվելով նկարների ստեղծման տարեթվերով
(1880—1882), նկարչի անունը գտնելը (եթև, իհարկև, նա համ-
բավ էր վաշելում), թվում է, մեծ դժվարություն չէր ներկայաց-
նում:

Բայց նախքան փորձելը՝ պարզելու նկարների հեղինակին,
չսնանք պարզել մեկ ուրիշ անուն՝ պատվիրատուի անունը:

Մեզ հավաստի է թվում, որ Պուշկինի երկերի պատկերազար-
դումների պատվիրատուն կարող էր ինչևէ միայն Աննա Գալի-
զովնա Բարատինսկայան (ծննդյամբ՝ Արամիկի):

Կարելի է պնդել, որ միայն պատվիրատուի դերում չի հան-
դես եկել (կամ ենթադրել է հանդես գալ) մեծ բանաստեղծի գե-
ղեկը: Կարելի է, որոշ դրուստություն պահպանելով, պնդ-
ել, որ 70-ական թվականներին սկզբներին Ա. Գ. Բարատինսկա-
յան պատրաստել էր ուսուց դրակոնություն գեղարվեստական
երկերի անգլերեն թարգմանություններ, այդ թվում՝ «Գապիտանի
աղջիկը», «Գուբերովսկին», «Պետրոս Մեծի արարքը», «Ներայոչ-
անազակներ» պոեմը: Բարոմանությունները պիտք է կազմեն
մեկ միասնական հատոր կամ ժողովածու, միմյանց հետ կապ-
ված որոշակի նյակետային նախադրյալներով, մասնավորապես,
պատկերներով, ինչպես և թարգմանությունները պիտք է կատար-
ված լինեին միևնույն գեղարվեստական յուրանուխմամբ:

Երկուր ժամտեսակ մեզ չէր հաջողվում պարզել պտտկերազար-
դումների (կամ նրանց էսքիզների) հեղինակի անունը: Հնարա-
դիտարաններում Գուգ անվան տակ հանդիպում էին նկարիչներ,
բայց նրանցից և ոչ մեկը 80-ական թվականների սկզբին ողջ չէր:
Վերջապես, կազարյանների կնիքգրագի ֆոնդում մեր տշքին

երկավ մի փոստային բարտ կամ, ինչպես դեռ վերջերս էին գրում,
բաց նամակ, հասցեաղրված Իտալիա «miss Goodlet»-ին:

Այդպիսով, Արամիկի-Լազարյանների ֆոնդում պահվող
նկարների հեղինակը անդու՛՛հ C. Goodlet-ն է: Ահա թև ում
համար էին գրվում նկարների տակի այնքան յուրահատուկ բա-
ցատրական» տեքստերը: Ավելին, կարելի է համարակարգել թուլլ
ուսլ այն միտքը, որ անդու՛՛հ miss Goodlet-ին բազմիցս և
հաճախակի բանավոր կոնսուլտացիաներ էին տալիս «A Russia»
Ledy» Աննա Գալիզովնա Բարատինսկայան, որը մի բանի ան-
գամ երկար ժամանակով մեկնել էր Իտալիա:

Նկարչուհու և նրա սպասուիրատու» վերաբերյալ նյութերի
սյուժետները մեզ բերեցին հայտնի Պուշկինյան տունը՝ ՍՍՀՄ ԳՒ
ուսուց դրակոնություն ինստիտուտ: Այստեղ, ինստիտուտի
մասնագրանում, պահպանվել են Կ. Գուգեթի շորս նկարներ,
նվիրված մեկ ուրիշ ուսու մեծ զրոյի՝ Ն. Վ. Գուգոյի «Շենեկին»⁴²:
Թուր նկարները կատարված են թղթի վրա՝ տուշով և թանաթով,
թվագրված են 1891 թվականով և ստորագրված են մեզ արդեն
հայտնի «C. G.» անվանատառերով⁴³:

Գրանից մեկ տարի առաջ, 1890 թվականին, նկարչուհին
նորից է անդրադարձել Ա. Ս. Պուշկինի ստեղծագործությանը,
պատրաստելով 15 նկարներ՝ պատկերագրությունների մի ամբողջ
սլրում «Գապիտանի աղջիկը» վիպակի համար⁴⁴:

Այդպիսով, Կ. Գուգեթը, ինչպես տեսնում ենք, երկար ժա-
մանակ աշխատել էր ուսուց դասական գրականություն երկերի
պատկերազարդումների վրա:

Բանասիրական գիտությունների դոկտոր Կամսար Ներսեսի
Կրիպորյանի և Պուշկինյան տան թանգրանի աշխատակիցուհի
Ելենա Արեքսանդրովնա Կոմակևսկայալն սիրալիք աշակցությունը
հաջողվեց ծանոթանալ Թուսաց գրականության ինստիտուտի
բարտարանի նյութերին: Տեղեկությունները խիստ աղբատիկ էին
և վերաբերում էին, մի զեպրում, Պետերբուրգի ուսումնական
հաստատություններից մեկին անդկերենի գասատու Պ. Գուգեթին,

⁴² «Описание материалов Пушкинского дома». Т. I. М.—Л., 1951
գրքի 107—108 էջերում արժում է նկարների սյուժետների համառոտ շորս-
գրանքը: Բայց նկարների իրենք վերագրատված չեն:

⁴³ Նույն տեղը:

⁴⁴ Արժումը պահվում է Ա. Ս. Պուշկինի համաժողովնական թանգրանում
(Պուշկին թաղարում):

մյուս դեպքում՝ Ի. Գուղեթի նամակներին՝ գրականության հայտ-
նի պատմարան, ակադեմիկոս Ալեքսանդր Նիկոլաևիչ Վեհե-
լովսկուն։ Պարզվեց նաև, որ Կ. Գուղեթի նկարները Պուշկինյան
տուն են ընկել 1922 թվականին Ս. Ս. Աբամելիք-Լազարյանի՝
Աննա Գավիդովնա Աբամելիք-Քարաախնակայայի եղբորորդու,
առանձնատնից։ Կարելի է ենթադրել, որ այժմ կենդանացած
թանգարաններում պահվող Կ. Գուղեթի նկարները Պուշկինյան
տուն են ընկել Աբամելիք-Լազարյանների ընտանեկան կապանե-
րի, նկարների, այբուսերի մի մասի և Ս. Ս. Աբամելիք-Լազար-
յանի առանձնատան իրերի (գրապահարանների, ձոլաջաջների,
պատի աշտանակների և այլն) հետ միասին։ Ինչպես գրում է
Վ. Ն. Բասկակովը, 1920 թվականի ամռանը ժամանակավորա-
պես Պուշկինյան տանն էր «տրամադրվել հալաուրինի փողոցում
գտնվող շենքը (№ 22), որը մինչև Հոկտեմբերյան հեղափոխու-
թյունը պահպանելու է եղել իշխան Ս. Ս. Աբամելիք-Լազարյա-
նին»⁴⁵։ (Պուշկինյան տունը այստեղ է գտնվել մինչև 1925 թվա-
կանը)։

Իրենց վրա ուղարկություն են հրավիրում մի շարք պարա-
գաններ, կապված Կ. Գուղեթի նկարների հետ։ Առաջին, Կ. Գուղ-
եթի նկարները, որոնք ներկայումս պահվում են Լենինգրադի
Խանգարաններում և թվագրված են 90-ական թվաշաններով,
ուղեկցված չեն յուրաքանչյուր «երկրկուտ» բացատրական անթատե-
րով։ Գա բացատրվում է, հավանաբար, նրանով, որ նկարների
մոտիվյան աետրի «պատկերատան» և, մեր տեսակետով, հա-
վանական թարցմանչուհին՝ Աննա Գավիդովնա Աբամելիք-Քա-
րաախնակայան, մինչև այդ վախճանվել էր (1859 թ. փետրվա-
րին)։ Պետք է ենթադրել, որ այդ նույն պատճառով էլ Կ. Գուղ-
եթի 80-ական թվականների սկզբի և 90-ական թվականների
նկարները հայտնվել են տարբեր պահպարաններում։ Բայց, բո-
լոր պարագաներում, Կ. Գուղեթի նկարներով մեղ հայտնի բոլոր
աետրերն ու այբուսերը պատկանվել են Աբամելիքների և Աբա-
մելիք-Լազարյանների ընտանեկան ֆոնդներում։ Կարծում ենք, որ
գա պատահականություն չէ, այլ օրինաչափություն։ Կարելի է
ևնթադրել, որ Կ. Գուղեթը մոտիվ մարդ է եղել Աբամելիք-Քա-
րաախնակայայի և Աբամելիք-Լազարյանների ընտանիքներում։
Եթև ենթադրենք, որ նկարուհին եղել է ակադեմիկոս Ա. Ն. Վե-

սևովսկու հետ նամակագրության մեղ գտնված Ի. Գուղեթի և
անվերենի դասատու Պ. Գուղեթի ազգականուհին, ապա կա-
րելի է կարծել, որ միաս Կ. Գուղեթը ծագել է Պետերբուրգի կուլ-
տական և կրթված անլիտական ընտանիքից։ Միաս Կ. Գուղեթի
տնվան հիշատակությամբ փոստային բացիկը, որն իտալիա և
սվարկվել, գրքի կողմից վերաբրտարել է երեխաների՝ տղայի և
տղչկա, լուսանկարները։ Արդյոք միաս Գուղեթը տնային գաս-
տրարուհուհի, անգլերեն լեզվի և նկարչության ուսուցչուհի չի
եղել Աբամելիք-Լազարյանների ընտանիքում։

Այստեղ բարձրացված հարցերի պատասխանները կրթչնեն
Աննա Գավիդովնա Աբամելիք-Քարաախնակայայի գրական կեր-
պրը, որին գովեբգել է մեծ բանասաեղծը, կծանոթացնեն նկար-
չուհի Կ. Գուղեթի հետ, որն նկարները նվիրված են եղել ուս-
ական գաստկան գրականության գրքերին և նոր ընդրոյ մաս-
րամաներ կազմելաքեն Ա. Ս. Պուշկինի պատկերագրությանը։

Այս պարբերությամբ էր ավարտվում Երևան, «Литературный
Армения» ամսագրին ուղարկված իմ հոդվածը։

Բայց ինչ արդյունք ունեցա ես, երբ համոզվեցի, որ ակ-
նարկում առաջարկված հարցերի մի մասին ես կարող էի պա-
տասխանել դեռ շատ տարիներ առաջ, երբ առաջին անգամ էր
դիտում Անհայտ հեղինակի... նկարներով տետրը» և սկսել էի
անհայտ անձավորության որոնումները։

Ավելին։ Անհայտ անձնավորության որոնումների համար
պետք էր ոչ ուրիշ քաղաքներ մեկնել, ոչ էլ նույնիսկ գուրս գալ
Հին ակտերի կենտրոնական արխիվի ընթերցատարհից։ Աբամե-
լիք-Լազարյանների այդ նույն ֆոնդում նշված է № 1531 գրքի,
որը վերնագրված է. «Տուշով կամ թանաքով արված և տղա-
մարդկանց ու կանանց խմբերի ու առանձին տղամարդկանց, երե-
խաների ու կանանց գանտղան էկենցաղային տեսարաններ պատ-
կերող նկարներ՝ անլերեն մակերգրություններով ու ծանոթու-
թյուններով, 1887 թ. և առանց արևթվի»։

Այս երկարաշունչ վերնագիրը թվում էր սպառիչ և չէր հա-
պրում գրական այլուստի որոնումների։ Բայց հենց այստեղ,
№ 1531 գրքում, երևան եկան և՛ կենցաղային թեմաներով
նկարներ, և՛ գրական այլուստով միավորված նկարնաշի ամբողջ
սերիաներ։ Կարելի է ենթադրել, որ «նկարիչը» նկարների սե-
րիայով և առանձին տեսարանների պատկերմամբ պատրաստել
էր, մտնկավորության չոր լեզվով սասած, զննական Աննարի,

⁴⁵ В. Н. Баскаков. Пушкинский дом Л., 1980, с. 53.

որը հետագանում էր անգլերենի ուսուցումը: Այլիլի մեծ աշխու-
ժության համար «նկարիչը» սլուծիի հենքի մեջ էր ներմուծել
աշակերտներին (աշակերտուհուն) ծանոթ «հերոսների»:

Որոշ նկարներ նույնիսկ կողմնակի դիտողին շնն վարող ան-
տարրեր թողնել:

Այստեղ էլ, № 1531 գործում, պահպանվում են արդեն ծանոթ
Կ. Գուդելի աղգանունով ևտորագրված նկարներ և նույնիսկ
նկարչուհու մի քանի թեթևակիորեն զավեշտական ինքնանկար-
ներ:

Այդ թղթապանակում հավաքված են անփույթ կատարված
շատ նկարներ, բայց հանդիպում են նաև մանրակրկիտ և մաս-
նագիտորեն արված նկարներ: Մի քանի նկարներում մենք տես-
նում ենք «միտոր Գուդելիին» և հավանական աշակերտուհուն
«Հարչարող» միսս Գուդելիին, 8—9 տարեկան շարաճնի աղջնա-
կին:

Այդ թղթապանակի նկարները թվագրված են 1887—1888
թվականներով, իսկ նրանց տակի մակագրութունները, ինչպես
և № 1493 գործի թղթապանակի նկարների (աչսինթն՝ 1880—
1882 թթ. նկարների) տակի մակագրութունները, երբեմն մա-
կարոնական ոճի բնույթ են կրում:

V

ՍՍՇՄ ԱՎԱՄԱՍԻ ՖՈՆՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՊԱՄԱՆԿՆԵՐԸ

Մենք համառոտակի նկարաբեցիներ Ալ-
մաստի ֆոնդի յոթ երեկի քարերի, քարի աշ-
խարհի յոթ հրաշլիքների պատմութունը: Նրանց
փայլի մեջ ու ճակատագրում թաքնված է մեր
անցյալի մի մասը: Որքան ֆանտաստիկական
դասավածներ ու լեզվեղներ են կապված թանկ-
արժեք քարերի հետ համաշխարհային գրական-
նության մեջ: Այդ լեզվեղները իրենցով լցրել են
և՛ հանքարոնական մեծ տեղեկագրերը, և՛ դա-
սական հետազոտողներին. հանքարանների ու
ուսկերիների լավագույն գրերը՝ քանդակաքա-
րերի ու թանկարժեք քարերի մասին:

Մենք կուզենք այդ լեզվեղներից բացահայ-
տել իսկական պատմական փաստերը, մենք
փորձել ենք դրանք հիմնավորել բուն քարերի
ճշգրիտ դիտական ուսումնասիրությամբ: Միայն
այդ ուղու վրա էինք մենք տեսնում այն հար-
ցերի ճիշտ լուծումը, որոնք այնքան հաճախ
են կապվում հազվագյուտ քարերի հետ, նրանց
մեջ արտացոլելով հեռավոր անցյալի մի ամ-
բողջ շարք պատմական, սոցիալական և հոգե-
քանական պրոցեսներ:

Ա. Ե. Ֆերսման
Պատմվածքներ ակնեղենի մասին

Թվարկենք մեր երկրի Ալմաստի ֆոնդի այդ յոթ պատմական
քարերը:

Կայսերական մեծ թագը, որ պատրաստել էր Թո-
դենն 1762 թվականին Եկատերինա II կայսրուհու թագադրության
կապակցությամբ, պահվում է 398,72 կարատ կշռով շպինելը.
որը Ալեքսեյ Միխայլովիչ ցարի հրամանագրով ուս դեպպանորդ
Նիկոլայ Նպասարիտսը գնել էր չինական բողդիխան Կան Հիֆոց

1676 թվականին: Եպիսկոպոս ՍՍՀՄ Ալմաստի ֆոնդի յոթ պատմական քարերից մեկն է:

Աշխարհում ամենամեծ ցիլոնյան շափուղան (258,18 կարատ) հին հնդկական երեսակվածութամբ, ադամանդյա ագուցարանով:

Տափակ (քանդակաքար) անադարտ արմատ, մոտ 25 կարատ կշռով, ագուցված մանրանկարով ոսկյա լայն ապարանջանի մեջ:

Կոլումբիական զմրույտը (136,25 կարատ) միասագազարդի կիևտրնուսում և հազվադառնա մեծության քրիզովիթը (192,6 կարատ) ևս երկու պատմական թանկագին իրեր են:

Այս ակնարկում խոսք է լինելու «Ալմաստի ֆոնդի յոթ երևելի քարերից, քարի աշխարհի յոթ հրաշարվեճերից» երկուսի մասին: Որոշես ուսումնասիրության առարկա ընարված են երկու զոհարներ, որոնց պատմութունը ուղղակի առնչություն ունի մեր երկրի ոչ վաղ անցյալի կարևոր քաղաքական իրողագրությունների հետ: Երկու քարեր, որոնց հետ ավելի հաճախ լեզենգներ են կապում, բան թե պատմական փաստեր:

1

«Լագարյան» — «Յուլով» — «Ռուսական»

1972 թվականին «Юность» ամսագրի էջերում հրատարակվեց Յուրի Սկոպի «Մարիա» արմատաբար վիպակը: Հեղինակային փորձիկ նախարանը, որը վերանորված է «Ռբպես նախարան», աչպսիսի խոսքեր է պարունակում մեր երկրի Ալմաստի ֆոնդի ողակի քարերից մեկն մասին: «Վարդուց ի վեր արգեն ամավէ, որ քարերն էլ են կարողանում խոսել: Ո՛վ գիտե... Երանյոց յուրաքանչյուրի ետևում ժամանակն է, այն էլ ինչպիսի՛: Մեկ բառ՝ պատմություն...»

Եկեք դանդաղ հայացքով անապարենք ցուցափեղկների դարձարուն փայլատակումների վրայով և, իսկույն կանգ առնենք ցարական գալիստի վրա...

Ահա նո, ամբողջ հասակով կանգնած մեր առջև՝ ինքնակալների զարմանահարջ խաղալիքը, որի գազաթի պսակում է անհատավ մի ալք՝ շլացուցիչ բյուրեղ...

«Կոմս Օռլով»: Աշխարհում ամենամեծ արմատներից մեկը:

Նրա մարբության (ուշագրութուն դարձրեք՝ մարբության) և կանաչավուն-լուսնային երանգի մասին գրքեր են գրված... «Գերիակնետ» լույսի ծով կամ «Մեծ Մոդոլ»՝ այսպես էին անվանում այն հնում քարի առաջին աներբը, քար, որը հանվել է Գոլդեյգալի բնդերից, Կոլումբի հնդկական՝ հանքավայրերից XVII դարի սկզբին...

Ջահան շահը, նրա որդի Աուրենգ-Չեբը և նազիր շահը քիչ արյուն չեն հեղել նրա համար... Այնուհետև այն կուրքի ալք է եղել Սեմիկանում, որտեղից այն գողացել էր մի ֆրանսիացի գիմպոր: Իսկ 1773 թվականին կոմս Գրիգորի Գրիգորևի Օռլովը փեկատերինա կայսրուհու անվանակոչության տոնին ծաղկեփյջի փոխարեն նրան մտոտուցել էր այդ քարը, և կայսրուհին բարեհաճել էր ողորմածաբար ընդունել ընծան: Ի միջի այլոց, կոմսը այն ցնել էր Ամսաերգումի շուկայում, հայ վաճառական Լադարյանից՝ 400 000 ռուբլով... Ահա ինչպես:

«Եվ կհանգչի, ևս մեկ անգամ բոցավառվելով ներքին շերմուկներին, վեհագանծ քարը՝ մեծ վարզը, մինչև շուրթերը լեցուն թեթևակիորեն կապույտ և փոքր-ինչ կանաչ երանգով»:

Չարժե վիճել «և քարերն էլ կարող են խոսել» թեևավոր արտահայտության ճշտության մասին: Միայն թե վիպակի հեղինակին հանելով կրկնենք. «Մ՛վ գիտե»:

Եվ իսկապես, ռ՛վ գիտե, թե ինչու են մաացածին բաներն աչքբան կենսունակ: Ինչո՞ւ են Օռլովը անվանում «Գարիա-լեներ», շփոթելով երկու զոհարներ, որոնք տարբերվում են կշռով, ձևով և գտնվում են միմյանցից մի բանի հազար կիլոմետր հեռավորության վրա (մեկը՝ Մոսկվայում, ՍՍՀՄ Ալմաստի ֆոնդում, իսկ մյուսը՝ Թեհրանում, Իրանի պետական թանկավորերի փաճազարանում):

«Մարիա» արմատաբար վիպակի հեղինակ Յուրի Սկոպը սոսկ կրկնել է հարատեղ լեզենգները, որոնց նկատմամբ հետաքրքրութունն ուժեղացավ ՍՍՀՄ Ալմաստի ֆոնդի հայկապ ցուցատանգին բացումից հետո:

Այո, իսկապես, քարերն էլ են կարողանում խոսել, բայց արդյո՞ք միշտ ճիշտ:

Աշխարհում խոշորագույն զոհարներից մեկը, որը գրավա-

1 Юри́й Скоп. Алмаз «Мария». Повесть.— «Юность», 1972, № 10, с. 2—3.

Պոլյան մեջ հայտնի է «Մեծ Մոդոլ», «Դարիա-լեճուր» («Լույսի ծով»), «Անտերդամյան», «Լազարյան», «Թուսական» և, վերջապես, «Օուլով» անուններով լեզնեղների, ֆանտաստիկ վերապատմումների և քաղաքական խարդավանքների պատճառ է դարձել: Բայց ամենից ապշեցուցիչն այն է, որ լեզնեղները շատ ավելի կենսունակ դուրս եկան, քան պատմական տեղեկությունները, քան քաջ հայտնի փաստերը, որոնք գիտության և սեփականությունն էին դարձնել անցյալ դարում:

Եվ ահա նորից, 1967 թվականի վերջին, հին և ոչ շատ ինքնատիպ լեզնեղները եղբորդ ծնունդն առան, իսկ պատմական հավաստի փաստերը, որոնք, զբոսի հեղինակի տեսակետով, շատ ավելի հետաքրքիր են, ուղղակի անշուքյուն ունեն մուսաստանի պատմության հետ և կազմում են նրա մի մասը, լայն տարածում շտապան:

Սովետական պետության հիմնադրված նվիրված հորեյանական հանդիսությունների օրերին Մոսկվայի կրեմլում բացվեց «ՄՍՄՄ Այմաստի ֆոնդը» ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվեց թանկարժեք քարերի եղակի հավաքածու եվ ահա նորից, այս անգամ վենետրոնական թերթերում, երևացին նշանավոր ալմաստների շուրջը երբեմնի հյուսված լեզնեղներ:

«Պատկերը անմոռանալի է: Բայց դրա հետ մեկտեղ քարերի փայլը և հերիաթային խաղը ասես մի տեսակ լուսավորում են անցյալի էջերը...»

Էքսկուրսավարը կանգ առավ «Օուլով» այմաստի մոտ, որը հազիվ նկատելի կանաչավուն-կապույտ երանգ էր ճառագայթում... Լեզնեղների համաձայն, այմաստը զոդացվել է և մի ամբողջ շարք արկածներից հետո ընկել սոսակական արքունի ուկերիչ լազարեի ձեռքը: Այնուհետև նա ճանապարհորդը, որի անունը անհայտ է մնացել, քարը ոտքի մեջ է խրել և Հնդկաստանից Կովկասյան լեռների վրայով հասցրել Պետերբուրգ: 1773 թվականին կոմս Գրիգորի Օուլովը գնել է այդ քարը»:

Լեզնեղի մյուս տարբերակը պատմվում էր «Եղվեօտիա» թերթում. «Իսկ ահա լեզնեղային «Օուլով»: Նա շողացել է հնդկական կուռքի ակնախորշում, մինչև որ աքի դողացել է մի ֆրանսիացի գինեվոր XVIII դարի սկզբին: Այնուհետև գոհարը գտնվել է պարսից նազիր շահի մոտ, իսկ նրա մահից հետո նորից է ան-

հայտացել և հայտնի չէ, թե ինչ կերպ հայտնվել մի հայ վաճառականի ձեռքում: Նա էլ այմաստը վաճառել է կոմս Գրիգորի Օուլովին»:

Մի փոքր ավ խմբագրությանը այս տարբերակը պատմվում է Լ. Շապոշնիկովայի «Հաբալային Հնդկաստանով» գրքում: «...Հետաքրքիր է այն գոհարի ճակատագիրը, որը հայտնի է «Եղվով» անունով: Այդ քարը մի ֆրանսիացի գինեվոր գողացել էր հնդկական աստույն արձանից: Ֆրանսիացուն տուն տանող Ֆրեյատե նավագետը իմանում է գոհարի մասին և կողոպտում գինեվորին: Կոմս Օուլովը նավագետից գնում է գոհարը 90 հազար ֆունտ սաեռլինդով և այն ընծայում եկատերինա II-ին: Քարը կշռում էր 194^{3/4} կարատ»:

Եվս մեկ քաղվածք բերենք Յա. Միլեցկու «Գոհարներով գանձապահարանը» հոդվածից. «Օուլով» այմաստը կշռում է 200 կարատ... Կոմս Օուլովը այն գնել է մի վաճառականից, առատորեն նրան վճարելով 450 հազար ոսկուր և շնորհելով տարեկան արձամբով շորս ու կես հազար ոսկուր, ունետա»:

1963 թվականին համալսարանական պատկանելի հրատարակությունը լույս տեսավ մի դերք, որը հատկապես նվիրված էր թանկարժեք քարերին, և որը այդպես էլ փոխվում էր «Փանկարմեք և զոնավոր քարեր»: «Նշանավոր այմաստներ» բաժինը սկսվում է հենց «Օուլովի» պատմության նկարագրությունից: «Ըստ ավանդության, «Օուլովը» ծագում է Հնդկաստանից, որտեղ գտնվել է XVII դարի սկզբին: Այդ այմաստը «Գերիանդ» («Լույսի ծով») անունով արքայաբեկ է նազիր-շահի գահը, որը 1738 թ. գրավել էր Հնդկաստանի մայրաքաղաք Դելին: Շահի մահից հետո այմաստը դողացվում է և ինչ-որ ճանապարհով ընկնում պարսիկ վաճառական Շաֆրասի ձեռքը, որից էլ Օուլովը գնում է եկատերինա II-ի համար կանխիկ 450 000 ոսկուր և ազնվականության պարգևագրով»:

Այմաստներին նվիրված մեկ ուրիշ հատուկ հրատարակության մեջ հեղինակը սահմանափակվում է Ա. Ե. Ֆերմանի

³ И. Цыганов. Все грани.— «Известия», 11.XI. 1967.

⁴ Л. Шапошникова. По Южной Индии. М., 1962, с. 146.

⁵ Я. Милецкий. Сельф с бриллиантами.— «Огонек», 1964, № 24, с. 24.

⁶ В. С. Петров. Драгоценные и цветные камни. М., 1963, с. 73.

² В. Молчанов. Сверкающие грани.— «Правда», 9.XI. 1967.

գրույթների համառոտ շարադրանքով, որը «մանրամասն հետազոտել է արմասք, նկարագրել այն և, որքան հնարավոր է եղել, վերականգնել է պատմությունը»⁷: Վկայառուչելով ակադեմիկոս Ա. Ե. Ֆերսմանի աշխատությունները, «Այնաստեղծ» գրքի հեղինակն ասում է, որ «Օւլուզը» կրել է «Գերիանուր» անվանումը և որ նրան է վերաբերում նաև «Մեծ Մոզոլ» անվանումը⁸:

Գովար է ասել, թե ինչպես էին այնպիսի մասին լեզնդնեը ստեղծվում հետև անցյալում, բայց ինչ վերաբերում է ժամանակակից հեղինակների պնդումներին, այսպե՛ս զբաճց համար որպես աղբյուր ծառայել են 20-ական թվականների հրատարակումները:

Երիտասարդ սովետական պետությունը մի շարք վճռական միջոցներ ձեռնարկեց, պահպանելու ժողովրդի ստացվածք դարձած պատմական և ղեկավարվածական տրեքները: Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1920 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ, որը կրում է Վլադիմիր Իլիչ Լենինի ստորագրությունը, Մոսկվայում՝ ֆինանսների ժողովրդական կոմիսարներին առընթեր ստեղծվում է ՌՍՖՍՀ արժեքների պետական պահպարան (Պետգորան), որը կոչված էր հաշվի առնելու և կարգավորելու երկրում ոսկու, մյուս աղիքի մետաղների և թանկարժեք քարերի քույր պաշարների պահպանումը:

Երկու տարի անց Պետգորանին են հանձնվում Զմեռային պալատի «Գոհարեղենի սենյակի» թանկարժեք իրերը:

Ինչպես հայտնի է, ուսաց ցարերը թանկարժեք քարերի և ոսկու վիթխարի հարստություններ էին կուտակել: Թագադրության պերճաշուք հանդեսները ուղեկցվում էին միապետական իշխանության արասրիսի նշանակելով՝ բարգիխաներով (գահ, թագ, իշխան, մական): Համահի, գահ՝ բարձրանալով, նոր կալսը պատվիրում էր ցարական նոր սեպալիաներ: Պերճանքի մեջ անժուժկալությունը և թանկարժեք իրերի նկատմամբ ազահույթյամբ հատկապես շաքի էին ընկել՝ Նիդալվետա և Եկատերինա II Կայսրուհիները:

«XVIII դարը՝ բացարձակ միապետությունների ժողովան ժամանակաշրջանը, գոհարի հատուկ պաշապանների ժամանակաշրջան էր: Բարձրագույն դասալին արբերանըներ պեանական

⁷ И. И. Шафранский. Алмазы. М.-Л., 1964, с. 105.

⁸ Նույն տեղը:

իշխանության պաշտոնական ասիրտաներում՝ այսպես կոչված ռեզարվաներում, գոհարների քանակը և արժեքն էր»⁹:

Ինչպես գրում է ակադեմիկոս Ա. Ե. Ֆերսմանը, «Զմեռային պալատի 1737 թվականի հրեհից հետո թագապատկան գոհարները և մյուս թանկարժեք իրերը ղեկավարեցին գոհարեղեն իրերի հատուկ ստեղծված պահեստադարանում՝ 1884 թվականի որոշմամբ թանկարժեք իրերի պահպանությունը վերցվեց պետական հսկողության ասել: Այդ պահից թանկարժեք իրերը սկսեցին համարվել պետության սեփականություն և նրանց համար հաշվեկալություն էին տալիս, ինչպես և պետական ամբողջ ունեցածքի համար»¹⁰, «Գոհարեղենի սենյակի» գանձերը գտնվում էին Պետերբուրգում և միայն դեպից դեպ, թագադրության համար, ցարական սեպալիաները փոխադրվում էին Մոսկվա-բայց 1914 թվականին, Հլուսիս-արևմտյան ռազմաճակատի ռուսական բանակների ամառային անհաջող հարձակումից հետո, «գոհարեղենի սենյակի» ոսկին և թանկարժեք իրերը շտապով դարավեցին ութ սեղուկների մեջ և առանց որևէ ցուցակի կամ ակտի կնքված ձևով հատուկ գնադրով ուղարկվեցին Մոսկվա և հանձնվեցին Զինապալատ»¹¹: Այստեղ էլ նրանք արկղներով ընկած մնացին մի քանի տարի¹²:

1922 թվականի սկզբին գեանականների և փորձագետների կազմով հատուկ հանձնաժողով ստեղծվեց «գոհարեղենի պահեստադարանի» գանձերի նկարագրության, գիտական ուսումնասիրության և դեմահաման համար:

Ա. Ե. Ֆերսմանի զլիավորած հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էին էրմիտաժի դիրեկտոր Ս. Ն. Տրոնիցկին, Զինապալատի վարչը Լ. Գ. Իվանովը և ակադեմիկոս Ա. Կ. Չաբեժեն, Ի. Ֆ. Կոուլսարը, Բ. Ե. Մասենը, Պետգորանի փորձագետ Ն. Ա. Գմիարիերը և ուրիշներ¹³:

Ա. Ե. Ֆերսմանը և Ս. Ն. Տրոնիցկին մանրակրկիտ ուսումնասիրեցին Ռուսաստանի թանկարժեք քարերի վերաբերյալ նյութերն ու հրատարակումները և իրենց հետազոտությունների ար-

⁹ Сокровища Алмазного фонда СССР, М., 1967, с. 6.

¹⁰ А. Е. Ферсман. Рассказы о самоцвете. М., 1974, с. 206.

¹¹ Նույն տեղը:

¹² Նույն տեղը:

¹³ Сокровища Алмазного фонда СССР, с. 8.

դու:նքները հրատարակեցին «ՍՍՄՄ արմատի ֆոնդը» շքեղ պատկերազարդված շրտ պրակների էջերում, որոնք լույս տեսան 1924, 1925 և 1926 թվականներին՝ ուստերն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Ալեքսանդր Եվզենիշ Ֆերմանի մեջ հատուկ հետաքրքրություն առաջացրին Այմատի ֆոնդի յոթ պատմական բարերը, և դրանց թվում «Օուլով» և «Շահ» արմատները, որոնց դիտակահանը հատուկ ուսումնասիրություններ նվիրեց: Ա. Ե. Ֆերմանը գրում էր, որ «երեք տարի շարունակ իմ վերջ փորձում էինք հարուստուն Այմ արմատի ֆոնդի առավել նշանավոր բարերի պատմությունը: Այդ պատմության մեջ շտա բան դեռ պատճառ է անցյալի խավարով, շտա բան բնավ երբեք չի դառնա մարդուս ակտիվությունը: Բայց և այնպես մեր կփորձենք մի բանի կցկատուր տեղեկություններ բերել այդ նշանավոր բարերի անցյալից»¹⁴:

Քաջ հայտնի է, որ Ա. Ե. Ֆերմանը շտա և համառորեն զբաղվել է թանկարժեք բարերով, նրանք պատմությանը: Փանկ-աթժեք և գունավոր բարերի վերաբերյալ աշխատությունները մի ամբողջ հատոր են կտգմել դիտակահանի «Ջնտիր երկերում»: Եթե նրիտաարդ գիտնականի առաջին աշխատությունները աղամանդի մասին վերաբերում էին թանկարժեք բարի գեոթիմիային և բյուրեղագիտությանը, ապա որոշ ժամանակ անց նա աշխատություններ է հրատարակում և դասընթաց կարգում (1919 թվականին) թանկարժեք բարերի մասին:

Ա. Ե. Ֆերմանի և Ս. Ն. Տրոնիցկու «ՍՍՄՄ արմատի ֆոնդի» հատորներում «Օուլով» աղամանդի մասին հրատարակումները տարակարծություններ ունեն: Պրոֆեսոր Ս. Ն. Տրոնիցկին իր հոդվածում լրիվ բերում է XI⁷ դարի սուս հետազոտող Մ. Կ. Պիլյակի հրատարակած արխիվային տեղեկությունները, և աշխատության սկզբում միայն Ա. Տ. Տրոնիցկին տալիս է Պրոսիտյի դեպպանորդի կողմից Եկատերինա II-ի սնվանակաղուցության օրոտ սուսական արքունիքում տեղի ունեցած հանդիսությունների նկարագրությունը, որի ականատեսն էր եղել նա. «Նշանավոր հնագ աղամանդը, որը մի բանի տարի առաջ բերվել էր Պարակաստանից, երկար ժամանակ պահվել Ամստերդամի բանկում և հետո մատուցվել այստեղի արքունիքին, այդ օրը նույնպես քուցազրվեց: Իշխան Օուլովը գնել էր այդ թանկարժեք իրը... և

մատուցել կայսրուհուն ծաղկեփչի փոխաբեն և նա բարեհաճել էր ողորմածաբար ընդունել ընծան»¹⁵:

Պրոֆեսոր Ս. Ն. Տրոնիցկին լուծելով էր շրջանցել «Օուլով» աղամանդի պատմության մասին մյուս տարբերակները, պետք է կարծել, այն պատճառով, որ Մ. Ի. Պիլյակի հետազոտությունները (գրանց մասին հետո) համարում էր բավականաչափ հեղի-նակալոր:

ՍՍՄՄ արմատի ֆոնդի» շորրորդ և վերջին պրակում հրատարակվեց ակադեմիկոս Ա. Ե. Ֆերմանի մեծ հոդվածը, որը և սկսվում էր նշանավոր «Օուլովի» նկարագրությամբ:

«Մեր բարը,— գրում է Ա. Ե. Ֆերմանը,— գտնվել է XVI դարի սկզբին Գոլդոնդայում (հավանաբար, Կոլուրի հանքերում) և երեսակված է բարձրագույն վաղի տեսքով, նրա նախնական քաշը եղել է շուրջ 300 կարատ, ընդ որում այն ներկայացնում էր «Մեծ Սողոյ»¹⁶ մեծ բարի երկու բնական բեկորները: Զուհան շահ¹⁷ զգոտ մնաց երեսակումից, ստիպեց այն նորից երեսակել, որից հետո բարը ընդունեց ներկայիս «Օուլով» ձևը նրա մոտավորապես 200 մետրական կարատով: Հենց այդպիսին էր տեսել բարը Աուրեղ-Ջերի¹⁸ պալատում 1665 թվականին ճանապարհորդ Տալիերին¹⁹: Անհրաժեշտ է նշել, որ հոր Ջահան շահը, մահից հետո 1661 թ. Աուրեղ-Ջերի ձևերը ընկավ նաև մեկ ուրիշ խոշոր աղամանդ, գուցե և ավելի հին, նույնպես երեսակված հնդկական վարդի տեսքով, որն ավելի ուշ (Նագիր շահի օրոք)²⁰ անվանվեց «Կոնիուր» և վերաներանակումից հետո կշռում

¹⁴ Алмазный фонд СССР. Второй выпуск. М., 1925, с. 14.

¹⁵ Եվրոպացիները մեծ մտղներ անվանում էին այն շահերը դիտատեսին և կայսրությունը, որոնք կառավարում էին Հնդկաստանում 1526 թվականից: Բարոտը՝ դիտատեսից հիմնադիրը, իր ստեմարառությունը բխեցնում էր Գինգիսանից, այստեղից էլ «Օուլովին» անվանումը:

¹⁷ Ջահան-շահը կառավարել է 1627—1658 թվականներին:

¹⁸ Աուրեղ-Ջերի կառավարել է 1658—1707 թվականներին:

¹⁹ Պրոսիտյից հայտնի ճանապարհորդ Տալիերին վեց ճանապարհորդություն է կատարել Արևելք: Նա եղել է Հնդկաստանում և Պարսկաստանում, որ նրան հրատարակում էր թանկարժեք բարերի տեսարանը (սակ՝ В. Бартольд. История изучения Востока в Европе и в России. СПб., 1911, с. 106):

²⁰ 1738 թվականին պարսից շահը արշավանք սկսեց Հնդկաստան Կոտտայի ճակատամարտում Մուհամադ-շահի գործերը ստիպեցվեցին և 1739 թվականի մարտի 20-ին Նագիրը գրավեց Գինին՝ «Հնդկաստանում վիթխարի ուղեվ-ավար զավթի»՝ մեծ քանակությամբ դրամ և թանկարժեք իրեր, որը գնահատվում էր 20 մլն. սուրի: Կողոպտված հարստության մեծ մասը տարվեց Կելուզի,

էր 186 կարատ: Այդ բարը մեր «Օռլովի» համար, որն այն ժամանակ «Մեծ Մոզդլ» անունն էր կրում, հիանալի գույզ էր, բայց ոչ մի հիմք չկա կարծելու, որ դուրս բերորեն էր միեւնոյն բնական բարքը են»²¹: «Պալլասի»²² զննչար բնութիւնը հարգորդման համաձայն,— գրում է Ա. Ե. Ֆերսմանը.— «Օռլովը» և «Կոի-նսուրը» զրվել էին նաղիր շահի գահին, որը դրավել էր Գիւլին 1737 թ. (Վրիպակ է: Պետր է կառգալ 1739—Ա. Բ.): Ընդ որում «Օռլովը» կրում էր «Deryai noot» («Լույսի ծով»), իսկ մյուսը՝ «Koh-i-noot» («Լույսի լիւն») անվանումը: Հետագայում այդ բարերի ճեպատագրերը տարբեր դասավորվեցին. «Օռլովը» այս կամ այն ձևով զոգացվեց և ձեռքից ձեռք անցնելով բնկավ Ամստերդամի շուկան»²³:

Ռուսերեն և անգլերեն հետադարձ հարադարձումներում հեղինակի այդ գրույթները շփոխվեցին: «1772 թ. Ամստերդամում կոմս Օռլովը այդ բարը գնեց Եկատերինա II-ի համար... «Օռլովը» զրվեց արծաթի մեջ առնված, ցախական մականի մաքրված աղուցարանի մեջ, ներսի կողմից շրջապատված զոհարների օղակով: Այդ ժամանակ դա հայտնի ամենամեծ հնդկական ազամանն է»²⁴:

Այդպիսով, Ալեքսանդր Եվզենիկ Ֆերսմանը պնդում էր, որ նախ, «Պարսիս-յն նոր» հայտնի ազամանը և «Օռլովը» մինչև նույն քարեն են, երկրորդ, ու չենց Գրիգորի Օռլովն է այդ ազամանը գնել Ամստերդամում 1772 թվականին:

Բնական է, որ Ա. Ե. Ֆերսմանի նման ականավոր գիտնականի և գիտութեան փալլուն մասսայականացնողի հեկինակավոր կարծիքը ռուսատուլեց գիտութեան մեջ, իսկ անցյալ տարիների նվաճումները դուրս մնացին պատմական ազամանից հետադոտոգների և նրա վերաբերյալ հրապարակումների հեղինակների տեսադատարից:

Ինչ վերաբերում է գրքին հեղինակին, նրան նշանավոր ազա-

որտեղ պահվում էր մինչև նաղիրի մահը» (պահվել է 1747 թվականին) (ան՝ Պ. Ր. Արուнова և К. З. Ашрафян. Государство Надир-шаха Афшара. М., 1958, с. 64—65):

²¹ Алмазный фонд СССР. Выпуск четвертый и последний. М., 1925, с. 10.

²² Պալլաս Պյոտր-Միսն (1741—1811)— բնախույզ և ճանապարհորդ:

²³ Алмазный фонд СССР. Выпуск четвертый и последний, с. 10.

²⁴ А. Е. Ферсман. Рассказы о самоцветах, с. 220.

մանդի պատմության հետադոտմանը հանգեցրին այնպիսի հարցեր, որոնք հետո էին կանգնած քարագիտության պրոբլեմներից: Երկարատև աշխատանքը կազարյանների արխիվի վրա և կազարյան ճեմարանի մասին աղբյուրների ու հրապարակումների ուսումնասիրությունը պատճառ դարձան ուսումնասիրելու նաև մեր երկրի պատմական ազամանիցների վերաբերյալ նյութերն ու գրականութունը:

Կազարյան ճեմարանի՝ Կովկասի, Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների մշակույթին ուսումնասիրելու համար հիմնված, որտե՞ ժողովրդի և Ռուսաստանի Արևելքի ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը աջակցած ուսումնական հաստատություն հասարակական-քաղաքական նշանակությունը ստաց էր բերում հեռադիմական շրջանների կատարությունը: Այդ վերաբերումները բացառիկ ուժով սկսեց զբաղվել ներկա դարի սկզբին, երբ ուսակալն պրոլետարիատն և գյուղացիության հեղափոխական շարժումը էենտրոնական նահանգներում սկսեց միահյուսվել Ռուսաստանի ճեմված ժողովուրդների շարժման հետ: Հասակալն ջանք չէին խնայում սեհարյուրակալիները, «Միքայել հրեշտակապետի միություն» անդամները²⁵:

Հավատարիմ հոգատակ մամուլը, կառավարության կողմից աջակցված, բոլոր միջոցներով փորձում էր շուփինխտական տրամադրություն հրահրել քաղրնիներին մեջ և աղպամիջյան երկպառակություններ բորբոքել, որպիսիք կորաչրասպան ընդհարումներում հանգցնի Ռուսաստանի ժողովուրդների դասակարգային պայքարի հուրը: Ահարյուրակալիների լրագրերում մատնություններ են հրապարակվում կազարյան ճեմարանի, նրա ղեկավարների, հոդարարծուր, կազարյանների վրա: Հետադիմականների չէին խորշում ոչ մի միջոցից, կանց չէին առնում զբրպարաութեան ու կեղտոտ հիբյուրանների առջև: Հատկապես մեծ ջանքեր էր թափում «Русское знамя» լրագիրը: Լրագրին ամենից քիչ էին հետարբերում կազարյանները՝ ուսակալն կայսրու-

²⁵ «Միքայել Հրեշտակապետի միությունը», որը ծայրահեղ հետադիմական գիրք էր գրաված, 1907 թվականին առանձնացված Ռուս ժողովրդի միությունից: «Ռուս ժողովրդի միությունը» սեհարյուրակալին կազարյանություն էր, որն էր առջև խնդր էր դրել պաշտպանել ինքնակալությունը և անխնա պայքար էր մղում հեղափոխական շարժման դեմ: «Միություն» տպագիր օրգաններից մեկն էր Պետերբուրգում հրատարակվող «Ռուսական դեմ» (1905—1917) լրագիրը:

Քյանն ազնվականները, ընդ որում մի տոհմի ներկայացուցիչներ, որոնք ուղղակի ծառանգներ չէին թողել: Նրանք էլ ազիլի քիչ էր հետաքրքրում այդ տոհմի կողմնակցուղի ներկայացուցիչ, իշխան Աբամելիք-Լազարյանը՝ արքունի շտաբմայտերը և երկրի ամենահարուստ մարդկանցից մեկը: Լրագիրը փորձում էր վարկաբեկել Աբելիյան լեզուների Լազարյան ճեմարանի ժողովրդականությունը: Լրագիրը գրում էր, որ Լազարյան ճեմարանը, իբր, հաշվական ուսումնական հաստատություն է, այն էլ Ռուսաստանի սրտում՝ Մոսկվայում, և, իհարկե, բարի նպատակներով չի կառուցված: Զխորելով ոչնչից, լրագիրը տարածում է այն վերսիսան, որ ճեմարանը հիմնադրվել է Իրանից գողացված ազամանդի վաճառքից ձեռք բերված փողով:

Լրագրի ելույթի համար որպես առիթ էին ծառայել այն լուրերը, որ իշխան Աբամելիք-Լազարյանը դիմել է կառավարությանը թույլ տալու, որ տարեկան 50—60 հազար ռուբլու եկամտի բնորոշ իր տունը նվիրանալի Լազարյան ճեմարանին՝ ճեմարանի շենքեր մեծացնելու և այնտեղ գուրահեռ դասարաններ կազմակերպելու համար:

Հարկ չկա խոսելու այն մասին, որ սովետական պատմաբանին վաչկի չէ գրազուլելի ապացույցներ համար կոմս Լազարյանների հարստության աղբյուրների արգարացիությունը: Կալվածատերերի, ֆաբրիկատերերի, վաճառականների և մյուսների հարստության աղբյուրները պարզ են: Սակայն երեք հանգույնները զրոկցիին հեղինակին՝ գրազուլելու աշխարհի խոշորագույն ազամանդներից մեկի Ռուսաստանում հայանվելու պատմությունը: Առաջին նպատակն էր մերկացնել սենարյուրակայինների զրպարտությունն ու նրանց կեղտոտ պրոֆուկացիան եղանակները: Երկրորդ հանգամանքը: Խոսքն այն նշանավոր ազամանդի մասին է, որը բազմաթիվ լեզվողների, ֆանտաստիկական վերապատումների և բազբաթական խարդալանքների առիթ է ծառայել: Երրորդ պատճառը: Լազարյան ճեմարանի վերաբերյալ առաջին հրատարակության աշխատանքի ժամանակ նրա խմբագիրը, մեր երկրի ամենաազնվամուր արևելադեղատներից մեկը, ախալսեմեթու Նովոսիկ Աբգարի Օրբելին, որը երկաթ տարիներ եղել է էմիտաժի գիրակալը, ուր ցուցադրվում է խոշորագույն ազամանդի բյուրեղապակյա պատճենը, հարկ համարյա ուշադրություն հրավիրել գրականության մեջ զրույթուն ունեցող վերսիսանների և արխիվային նյութերի ուսումնասիրության ան-

հրամշտութան վրա՝ վերականգնելու թանկարժեք քարի պատմությունը:

Բայց նախ «Մեծ Մոզոլ» այմաստի մասին:

Մ. Ի. Պիլյանի մեղերվող գրքում ենթադրություն է արվում, որ «Կոնտուրը» և «Ուլով» այմաստը մի վիթխարի այմաստի մասեր են, որն այնքան հաճախ նկարագրվում է «Մեծ Մոզոլ» անվամբ: Այդ նույն այմաստի բեկորն էն համարում 132 կարատ կշիռ ունեցող այմաստը, որին տիրում էր Աբրաս-Միրզան²⁶, որը, ինչպես պատմում են, այն ձեռք բերելով Կարաստինի մի աղբատրեակից, օգտագործում էր կաթձրթի փոխարեն²⁷:

«Կոն-ի-նուր» («Վույսի լեռ»), «Գարիա-լե-նուր» («Ուլայի ծով»), «Յոլով»: Ահա երեք անուններ, որոնք միահյուսվում են խոշորագույն հնդկական ազամանդների մասին պատմություններում: Հետամուտ լինենք դրանց պատմությանը, հասվել ենք այն պատճառով, որ «Կոն-ի-նուրին» տիրանալու համար վրեժ մեզ են մտել Պակիստանի, Հնդկաստանի, Իրանի կառավարությունները, իսկ ազամանդը դոնվում է Լոնդոնում:

«Առասպելական «Կոն-ի-նուր» ազամանդը նորից, արդեն որբերող անգամ իր երկարատև, ինչպես պնդում են, հազարամյա պատմության ընթացքում, իր վրա է բեռնել բազմաթիվ մեկնաբանների և պատմաբանների ուշադրությունը Հնդկաստանում, Պակիստանում և Մեծ Բրիտանիայում»²⁸: «Իզվեստիա» լրագրում նրա թղթակիցը հրատարակում է «Կոն-ի-նուր» ազամանդի շուրջ հոդվածը, որտեղ ասված է, որ «անապատալիտրեն հայտնուվել են «Կոն-ի-նուրի» նոր հավանորդները»²⁹: Պատմության իրանցի երեք պրոֆեսորներ պնդում են, որ «Կոն-ի-նուրը» և մյուս թանկարժեք իրերը, այդ թվում երկրորդ հայտնի «Գարիա-լե-նուր» ազամանդը... իբր մոլորների կալիչի ընծան են նախընշահին՝ Մոհամմեդ Գուրիանին իշխանությունը վերադարձնելու փոխարեն³⁰: «За рубежом» շաբաթաթերթում արաստադրվում է մյուսերիկան «Քլիվ» ամսագրից մի հոդված՝ «Կեճ 106 կարա-

²⁶ Նոստի է անվում պարսից արքայազն Աբրաս-Միրզան (1784—1833), որը Ճիլ-Ալի-շահի գահամուտնեցն էր և նրա փոխարեն Աբրեջանում:

²⁷ М. И. Пылаев. Драгоценные камни, их свойства, местонахождение и употребление. СПб., 1888, с. 176.

²⁸ Легенды о бриллианте.— «Правда», 26.IX. 1976.

²⁹ «Известия», 14.IX. 1976.

³⁰ Նույն անդր:

տի համար, կամ նշանավոր «Կոհ-ի-նուր» արժաստի պատմութունը»:

Ինչպես հայտնի է, Նաղիր-շահի սպանությունից հետո «Կոհ-ի-նուրը», փոխելով մի քանի տերերի, կրկին հայտնվեց Հնդդ-կասասանում:

«Երբ 1849 թվականին Արևելա-Հնդկական ընկերության գաղութային զորքերը ներխուժեցին Լահոր, 12-ամյա գահաժամապի գոյի պ Մինգչինի այլ բան չէր մնում անել, քան ստորագրել մի «պայմանագիր», որի համաձայն նա ցմամբ թողնակի փոխարեն հրաժարվում էր գահից և... «Կոհ-ի-նուրից»: Այդպես արժաստի և ամբողջ Հնդկաստանի տերեր դարձան անգլիացիները: Վիկտորիա թագուհին բարեհաճեց թանկարժեք քարն ընդունել որպես «ընծա»»³¹:

Այստեղ քաղր առժեց արդեն թագավորական ձեռքերից: 1862 թվականին Վիկտորիա թագուհին ձեռք գրկեց անձամբ հղկելու քար և 186 կարատանոց արժաստից մեաց միայն 106 կարատ: «1911 թվականին «Կոհ-ի-նուրը» անուցվեց աջպես կոչված երկրորդական թագի մեջ»³² և այժմ դանվում է Լոնդոնի Թաուե-րում:

Հետամուտ լինենք «Գարիա-յե-նուր» ազամանդի ճակատազրույց:

Անցյալում ոռուական գիտություն նվաճումներից մեկը սովյալ հարցում եղել է այն, որ XIX դարի բոլոր ոռու հեղինակները գանադանում էին «Գարիա-յե-նուրը» «Օռլովից» և դրանք չլին նույնացնում: Այդ պնդումը փոխելու Ա. Ե. Ֆերսմանի փորձը հիմնադրվել է, և այդ հարցում իրավացի են նրա նախորդները: Բանն այն է, որ «Գարիա-յե-նուր» անվամբ ազամանդը լավ նկարագրված է և նրա պատմությունը այն բանից հետո, երբ Իրանի շահի՝ Հնդկաստան կատարած արշավանքի հետևանքով ինչպես է ազամանդն ընկել Նաղիր-շահի ձեռքը, իրանական ազդուներում լավ է հետազոտված:

«Հայտնի «Գարիա-յե-նուր» ազամանդը, հավանաբար, առաջին տեղն է զբաղում Իրանի պետական թանկարժեք իրերի մեջ: Այդ թանկարժեք իրը նշանավոր «Պոխտորի» դուլդն է և հա-

մարվում է աշխարհի ճանաչված հնապուրն թանկարժեք քարերից մեկը...»

«Գարիա-յե-նուր» արժաստը Նաղիր-շահի սպանությունից հետո անցավ նրա թոռանը՝ Շահբուխ-Միրզային, այնուհետև ընկավ Ամիր Ալլամ-խանի... հետո Մոհամեդ Հասան խան Կաջարի, իսկ հետո էլ Լյուծֆ Ալի խան Զեհեփ ձեռքը, որը, իր հերթին, քաղաքային Մոհամեդ խան Կաջարի կողմից և, այդպիսով, նշված արժաստն ընկավ Կաջարների դանձարուն:

Նասրեդդին-շահը համոզված էր, որ այդ ազամանդը Կուրդյի (Կուրդուս մեծի:— Ա. Բ.) թագի ազամանդներից մեկն էր, և նա ինքը հատուկ սեր էր ասածում այդ ազամանդի նկատմամբ և ժամանակ առ ժամանակ նրանով պարզարում էր կամ իր գրչի փարկը, կամ՝ կուրծքը: Նա նույնիսկ հասնանակ էր «Գարիա-յե-նուրի» պահապանի հատուկ պաշտոն և այդ պատվավոր պարտականությունը վերապահում էր երկրի մեծառոտմիկ և երեկոյ մարզկանց:

Հետագայում «Գարիա-յե-նուրը» մուսք գործեց պետական թանկարան»³³: Բայց գրանով էլ ազամանդի պատմությունը չավարտվեց: Իրանական հեղափոխության ապրիլներին այն ընկ էր մնում Իրանի սահմաններից դուրս տանել գահընկեց արված թագ Մոհամեդ Ալի Միրզան, բայց թանկարժեք քարը «կրկին վերագործվեց Պետական թանկարան և այժմ պետական գանձարանի դարդն է հանդիսանում: «Գարիա-յե-նուրի» քալը 182 կարատ է»³⁴: («Պարզ է, որ երկու ազամանդների կշռային ցուցանիշները չեն համընկնում»): Այսպիսով, Ա. Ե. Ֆերսմանի կողմից «Գարիա-յե-նուր» և «Օռլով» ազամանդների նույնացումը չխաչ է: Դրանք երկու միանգամայն տարբեր քարեր են, որոնք ապրիլ էր հիշենք ունեն և ձևով բացարձակապես նման չեն:

Բայց վերագրանանք «Օռլով» ազամանդին: Մ. Ի. Պիլյաևը, Ս. Ն. Տրոյնիցիին և Ա. Ե. Ֆերսմանը փորձել են տալ ազամանդի պատմության գիտական մեկնաբանությունը:

³³ Իրանի թանկարժեք իրերի պահպարանի ուղեցույց և պետական որոշ թանկարժեք իրերի նկարագրություն Իրանի կենտրոնական բանկի հրատարակչակ, 1964, էջ 14 (պարսկերեն): Թարգմանությունը կատարել են Ա. Շոյ-բուլդ և Ա. Ալիևը, որի համար գործընկերներին շնորհակալություն եմ հայտնում:

³⁴ Նույն տեղը, էջ 16:

³¹ «3а рубежом», 12—18. XI. 1976, № 96.

³² Նույն տեղը:

Ա. Ե. Ֆերսմանը հակված է կարծելու, որ XVII դարի կեսերին գտնված ադամանդը պատկանել է Հնդկաստանի կառավարողներին, այնուհետև, Բրանի շահի արշավանքից և Դելիի գրավումից հետո, XVIII դարի 30-ական թվականների վերջերին ընկել է Բյան, Նադիրի ձեռքը: 1747 թվականին Նադիր-շահի սպանությունից հետո, ադամանդը ձեռքից ձեռք անցնելով, հայտնվել է Անտառերդամի շուկայում: Հետագա պատմությունը հայտնի է: Մ. Ն. Տրոյնիցիին սամանտիպովում է Ֆախիկնում Մ. Ի. Պիլյակի հրատարակած արխիվային նյութերի կրկնությունը: Ինչ վերաբերում է Մ. Ի. Պիլյակին, ապա նա, գիտնալով այդ լեզվեցանքը, դրանք ֆանտաստիկ է համարում և պնդում է, որ Գլիգոր Սաֆրասի գնած ադամանդը փաշով ձեռք է բերել Հովհաննես Լազարյանը, այնուհետև այն վաճառվել էր Գրիգորի Օւլովին, որը և այն նվիրել էր Եկատերինա II-ին³⁶:

Այս գրքի հեղինակը հակված է միանալու Մ. Ի. Պիլյակի պնդումներին:

Ա. Ե. Ֆերսմանի դրույթը կառուցված է Տավերիի ուղեգրություններից և Պալլասի Տադորոտներեց բազմված վկայագրությունների վրա: Նույնիսկ կասկածի տակ չառնելով Տավերիի XVIII դարի կեսերին Հնդկաստանում տեսած և, Ա. Ե. Ֆերսմանի արտահայտությամբ, «առասպելական» ադամանդի մասին առաջին «հիաստախությունը, Պալլասի հուղորդումն³⁶ այն մասին, որ «Դարիա-յե-նուրը» և «Կոնուրը» ազդեցված էին Նադիր շահի գահի մեջ³⁷, մենք հեշտությամբ համոզվում ենք, որ այդ վկայությունները առնչություն չունեն «Օռլովի» հետ, որքանով որ «Դարիա-յե-նուրը» այժմ գտնվում է Թեհրանում, «Կոն-նուրը»՝ Լոնդոնում, իսկ «Օռլովը»՝ Մոսկվայում:

Այժմ անցնենք Մ. Ի. Պիլյակի պնդումների ճշմարտացիու-

թյան ապացույցներին: Բայց, նախ ցույց տանք լեզվեցանքի կենսունակությունը և աշտու վերաբերումը դրանց նկատմամբ:

Ադամանդը Եկատերինա II-ին նվիրաբերելու պահից ի վեր գրականություն մեջ ժամանակ նստամանակ երևան էին գալիս գանազան առասպելներ և հերյուրանքներ Բուսաստանի կայսրերի թագադրման ուղեգրանքների այդ խոշորագույն ադամանդի մասին: Ըստ որում այդ հերյուրանքների երևան գալու պատճառների մասին ճշմարտությունը մոտ ենթադրություններ արտահայտվել են դեռ անցյալ դարում և միաժամանակ ադամանդի պատմության մեջ վերականգնվել են շատ օղակներ: Համենայն դեպս, հետազոտությունները բավականաչափ ապացույցներ էին պարունակում, որպակի չդրվեր գոլությունների հարցը, բայց, այնուամենայնիվ, ավելի հաճախ հրապարակվում և լայն տարածում էին գտնում առասպելները, այլ ոչ թե փաստերը:

Սովորաբար յուրաքանչյուր լեզվեցանք բնահանգրանք միահյուսվում են մտացածինը և ճշմարտությունը, փաստերն ու երևակայությունը: Նման զուգակցում կարելի է տեսնել նաև սրվալ ադամանդի պատմության մեջ:

«Տեղեկություններ կան, որ իբր Լազարևի բերած ադամանդը փոխարինել էր Մեծ Մոզոլի գահի մոտ եղած ոսկե առլովի աչքը, և որ այդ առլովի մյուս աչքը «Կոն-նուր» («Լույսի լեռ») անվամբ այժմ գտնվում է անգլիական թագուհու մոտ: Այլ տեղեկությունների համաձայն, լազարյան ադամանդը եղել է հնդկական կուրքի աչքը Սերենգամի տաճարում: Այդ ադամանդը իբրև թե Հնդկաստանում իսպանական ծառայության մեջ գտնվող ինչ-որ մի ֆրանսիացի զինվոր գողացել և այդ թանկարժեք բարի հետ վախել է Մալաբար: Այնտեղ այդ բարբ գնել է մի նավապետ, որը 2000 զինակալով այն վաճառել է մի հրեայի, որից էլ վերագնել է Լազարևը: Իմանալով այդ մասին, պարսից շահը ստիպել է Լազարևին հանձնել իր գնած ադամանդը, բայց Լազարևը, ազդրի մեջ բացվածք անելով, ադամանդը թաքցրել է այնտեղ, և բանի որ ադամանդը նրա մոտ չլին գտել, ի վերջո նրան ազատ են արձակել: Նա եկել է Պետերբուրգ, որտեղ նրա խնդրանքով նրան վիրահատել են... Ադամանդի համար Լազարևն այնպիսի զին է պահանջել, որ Եկատերինա II-ը հրաժարվել է այն գնելուց: Լազարևը մեկնել է Ամստերդամ, և այնտեղ կոմս Ալեքսեյ Օռլովը գնել է ադամանդը 450 000 ռուբլով և, բացի այդ, Լազարևին

³⁶ Ռուսական հայտնի արևելագետ, Լազարյան ճեմարանի և Պետերբուրգի համալսարանի ուսն Ք. Պ. Պատկանյանը նույնպես, ինչպես և Պիլյակը, այդ ադամանդը առեւձեռնացնում էր և այն անվանում «Ամստերդամյան» (К. П. Патканов. Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке. СПб., 1873, с. 6).

³⁷ Պալլասը թե՛վել և մտնելովները անցկացրել էր Թեպիսում: Նադիր-շահի սպանության տարում նա բնակվում էր 6 տարեկան էր:

³⁸ Алмазный фонд СССР. Выпуск четвертый и последний, с. 11.

պարտավորություն է տվել 2000 ոտրլու ցմա՝ ունեւտա ստա- նալու»³⁸,

Բրոկհաուզ և Եֆրոնի Հանրադատական բառարանի հոդվածի հեղինակը գտնում է, որ «այսպէս կոչված «Օւոլովը»... ծագում է Հնդկաստանից, որտեղ այն ծառայել է որպէս Բրահմայի ար- ձաններից մեկի աչք: Այն բնկել է պարսից շահ Նադիրի ձեռքը, որի սպանութիւնց հետո գողացվել է մի ֆրանսիացի գրեմա- գրերի կողմից և թափառումներից հետո գնվել է կոմս Օւոլովի կողմից, Եկատերինա II կայսրուհու համար 1774 թվականին 450 000 ոտրլու դրամով, 4000 ոտրլու տարեկան թոշակով և ազնվականութիւն հռովարակով»³⁹:

Եվս մեկ տարբերակ բերված է «Շերայրական օգնութիւն Քուրբիալում տուած» հայերին» գրքում, որը հրատարակվել է XIX դարի վերջին: «Աղարչական» կեղծանունով ստորա- գրված հոգիածի հեղինակը գրում է, որ Աղարչ կազարսիին է պատկանելիս եղել այժմ աշխարհում լավագուցնը ճանաչված «Օուլովան» ազամանոր: Այդ ազամանգի մասին մի բանի առասպելներ գոյութիւն ունեն: Պատում են, որ, Յաքցնիով իր գանձը, կազարչանն իր ազամանգը ուն կողակազարսիտի իրոց- յով Պարսկաստանից Ռուսաստան է ուղարկել և այն վաճառել Գրիգորի Օուլովին⁴⁰: Այնուհետև բերվում են նաև ուրիշ վերսիա- ներ, իսկ հոդվածը ավարտվում է մի շորուցամաք տեղեկանքով. «Լազարչանների նահապետ Աղարչը Նազարի կազարչան, որը Պարսկաստանից բերել է նշանակալից կարողութիւն և թանկ- արժեք իրեր, այդ թվում նաև նշանավոր «Օուլովյան ազաման- րը»⁴¹, Կարելի է բերել ուրիշ տարրերակներ և, բայց դրանք բո- յով էլ հանգում են մտապորտապէս այսպիսի մի սխեմայի: Ազամանգը գանվել է Հնդկաստանում, այնուհետև բնկել է Իրան, այստեղից Ամասերգամ (ուրիշ տարբերակներում ուղղակի Ռու- սաստան, շրջանցելով Հոլանդիան), հետո Օուլովի ձեռքը, որը այն նվիրել է Եկատերինա II-ին:

«Քանկարժեք քարերը, նրանց հատկութիւնները և գտնված վայրերը» գրքի (XIX դարի Երկրորդ գնահին ունեցել է Երեք հրա- տարակութիւն) հեղինակ Մ. Ի. Պիլյակի կարծիքով, որոնք են այդ հերյուրանքները ծնած պատճառները: Գրքի առաջին հրա- տարակութիւնը լույս է տեսել 1877 թվականին, բայց ավելի վաղ, դեռ 1866 թվականին «Русский архив»-ում զետեղվել էր նրա «Կայսերական մեծ ազամանգի մասին» հոդվածը:

Նախապէս մասնավոր անձի սեփականութիւնը եղած նման թանկարժեք իրի արտասովորութիւնը և, գուցէ, հենց այն հան- կամանքները, որոնց ժամանակ այն նվիրվել է Եկատերինա կայսրուհուն, ֆանասատիկական հերյուրանքների առիթ են տվել, բազմաթիվ լուրեր և ավանդութիւնների ծնել այն մասին, թե ինչպէս է այդ նշանավոր ազամանգը բնկել ուղև. կազարիի ձեռ- քը: Ումանք պնդում են, որ իբր ազամանգը պրոցացվել է Նադիր- շահի ձեռնարանից, մյուսները, որ կաղարեն այն ձեռք է բերել շնչին գնով, նրա արժեքը շիմացող ինչ-որ մի մարդուց, ուրիշ- ները, որ իբր ինչ-որ մի կողակասքանակ, կազարիի հանձնարա- ութիւմբը, այդ թանկագին իբր իր ոտքի մէջ է մխրնել և այդ ձևով այն Հնդկաստանից Կողկաստան լեռների վրայով Պետեր- բուրգ հասցրել և այլն»⁴²:

Արժեք ուշագրութիւն գործնել նաև շար բանի վրա, որ «Օու- լով» ազամանգի վերաբերյալ լեգենդները շատ բանով համընկ- նում են «Ռեխոս» կամ «Պիտա» արմաստի մասին կլանող պատմութիւնան»⁴³:

Մէսա թե «Ռեգինտ» ազամանգի պատմութիւնը ինչպէս է նկարագրում «Օուրին մեծութիւնը ազամանգը» գրքի հեղինակ Գ. Ի. Միշկելիչը: «Այդ թանկարժեք քարը (նրա նախասկզբնա- կան քաշը 400 կարատ էր) գտնել էր մի սարդիկ հնդիկ՝ 270 տարի առաջ, նշանավոր Գոլկոնդացի հանքերում: Ստրուկը իսկույն զըլ- խի էր բնկել, և որ այդ ազամանգի գիտնալ է ձեռք բե- ռել: Գանեկալի ազատութիւն: Ստրուկը գիտնել է շուրջըրուրը, վերք- րել թլունդը և նրա սուր ծայրով թափով հարվածել աղբրին: Ար- լունը դուրս է ժայթթել: Հաղթահարելով ցավը, հնգիկը թանկար- ժեք քարը թաքցրել է խոր վերքի մէջ և այն ժամեկն անբնկերի կոպիտ վերակապում: Այժմ մնում էր մի բան՝ գտնել մի մարդու,

³⁸ Е. П. Карнович. Замечательные богатства частных лиц в Рос- сии. СПб., 1874, с. 364—365.

³⁹ Энциклопедический словарь. Изд. Брокгауза и Ефрона. Т. I. СПб., 1890, с. 471.

⁴⁰ Вратская помощь пострадавшим в Турцин армянам. М., 1893, с. 539.

⁴¹ Նույն տեղը:

⁴² «Русский архив», М., 1866, с. 645.

⁴³ Г. Н. Мамжеевич. Его величество алмаз. Л., 1972, с. 21.

որը կհամաձայնվեր օրհնել բարը փոխանակելու ազատության հետ: Այդպիսի մի մարդ գտնվեց: Դա անգլիական նավի մի նավաստի էր: Տեսնելով վիթխարի ազամանը, ծովայինը պատրաստ էր դիմել ամեն բանի, միայն թե ձեռք բերի այդ բարը՝ ձեռքից ունենալով նման կարողություն, ինքը էլ նավաստի կդառնա: Երբ նավաստին և սարուկը արագ համաձայնություն եկան: Երբ վապուտից գաղտնի նա հնդկերի թագերը էլ նավամբարում՝ չուրի հակերի արանքում: Երբ նավը դուրս է եկել բաց օվկիանոս, նավաստին գիշերը սարուկին ուտելիք է բերել և ստացել ցանկալի սովորը՝ ազամանը: Հարմար պահ որսալով, նրբ ստրուկը հակվել է ափսեի վրա, նավաստին նրան դաշունահարել է: Օվկիանոսը կլանել է զոհին:

Հասնելով Մադրաս, ծովայինը բարը վաճառել է բազարի անգլիական նահանգապետին՝ սըր Պիտտին, 20 հազար ֆունտ սեռտլինգով...

Իսկ հետո ինչ եղավ ազամանդի հետ: 1717 թվականին Պիտտար ազամանը վաճառեց ֆրանսիայի ռեզնետ ղուբա Օռլանդոսին 3,4 մլն. ոսկի ֆրանկով: Գուբը կարգադրեց երեսակել ազամանը. այսպես աշխարհ էկավ «Թեզեետ» ազամանը»⁴⁴:

Շատ մեծ նմանություն կա այդ «ազամանդի պատմություններում», ընդհուպ մինչև ազամանը «պահելու» այնպիսի արաստվոր տեղը, որպիսին է ոտքի վերքը:

Առասպելները և ֆանտաստիկ մասաձիմի պատմությունները միայն ուշադրություն էին գրավում թանկարժեք բարերի նկատմամբ և միաժամանակ բարձրացնում նրանց առևտրական արժեքը:

Մ. Ի. Պիլլանը վկայաբերում հողավածու և գրքերում բավականին մանրամասն շարադրել է ազամանդների պատմությունը: «Թուսական ազամանդ կամ Օռլով, հենց նույնը ամբաստանողական ազամանդը չէ: Այն երեսակված է վարդի ձևով և սպորցված ռուսական միասնակի վեհապետական զայխուսի մեջ: Նրա քաշը 194 3/4 կարատ⁴⁵ է, զինը գայխուսի հետ միասին

⁴⁴ Նույն տեղը, էջ 21—22:

⁴⁵ Տարբեր հրատարակություններում ազամանդի կշիռ վերաբերյալ տեղեկությունները տարբեր են՝ 185-ից մինչև 200 կարատ: «Сокровища алмазного фонда СССР» գրքում, «Յուրով» ազամանդի կշիռը 189,62 կարատ է:

⁴⁶ Կարատը (հասցահատիկի արաբական համանուն կշռաչափից)— ազամանդների և ուրիշ թանկարժեք քարերի կշռաչափ է: Տարբեր երկրներում կա-

2 339 410 ոտքի արծաթով. այն բուրրովին անդուլն է և անադարտ: Ըստ ավանդության, այն երբեմն ծառայել է որպես հրեղակական կուրքի աշք, ապա շողարձակել է Նադիր-շահի գահին և անտեղից դողացվել է մի գինվորի կողմից 1747 թ. խառնակությունների ժամանակ, իսկ 1772 թ. արդեն պատկանում էր Եկատերինա II կայսրուհուն: Այն կայսրուհուն էր նվիրվել նրա սիրենցյալ իշխան Գր. Գր. Օռլովը, որը այդ ազամանը ձեռք էր բերել՝ դնելով այն ժամանակի արքունի բանկիր Իվան Կազարեիչ Լազարևից»⁴⁶:

Չորս անուն է հիշատակվում XVIII դարում ազամանդի գրեման պատմությանը նվիրված հրատարակումներում: Գրանք են՝ Եկատերինա II-ը, Գրեգորի Գրեգորևի, Օռլովը, Սաֆրասը և Հովհաննես Աղազարի կազարյանը:

Եկատերինա II-ը իշխանության ղուխ անցավ 1762 թվականին պալատական հեղաշրջման հետևանքով, որում գործում դեր էին խաղացել մասնավորապես, Օռլով երբայրները: Կայսրուհու թագադրության առթիվ նշանավոր ակնագործ Երեմիա Պոլոնսկի պատրաստեց մի թագ, որը, մասնագետների կարծիքով, «զեղչկությունով, նուրբի հարստությունով և ակնագործական տեխնիկայի նրբությունով էր հավասարը շուներ եվրոպական ռեզալիաների մեջ»⁴⁷: Չվիճակը: Մենք միայն կնշենք, որ ոսկուց, արծաթից, մարգարիտ և թանկարկն բարեկարգ պատրաստված և համարյա երկու կիլոգրամ քաշ ունեցող այդ թագի վրա կա 4938 ազամանդ, որոնց քաշը կազմում է 2858 կարատ: Հիշեցնենք, որ քաշը պատկում է 398,72 կարատանոց շպիճիլը, որը 1676 թվականին գտնվել էր լինական բողդիսնից: Ինչպես գրում է ակադեմիկոս Ա. Ս. Ֆերսմանը, «Թանկարժեք իրերի վիթխարի հարստություն էր կուտակվել Եկատերինա II-ի օրոք»⁴⁸:

բառով արտահայտված կոռուպիի միավորը չէր համընկնում (տարբերում կեն անգլիական, ավստրիական, բրազիլական, հոլանդական, Ֆրանսիայի, ֆրանսիական կարատները): 1914 թվականին հաստատվեց միասնական մետրական կարատ, որը հավասար է 0,2 գրամի:

⁴⁶ М. И. Пылев. Драгоценные камни, их свойства, местонахождение и употребление. СПб., 1896, с. 158.

⁴⁷ Сокровища Алмазного фонда СССР. Каталог выставки. М., 1975, с. 26.

⁴⁸ Նույն տեղը:

⁴⁹ А. Е. Ферсман. Рассказы о самоцветах, с. 204.

1863 թվականին հրապարակվեց նկատերինա II-ի՝ մասնավոր գրասենյակի վարիչ Ա. Վ. Օլուֆեևի կայսրուհու գրած նամակների փորձիկ գրքուկը⁵⁰։ Այդ գրքուկի գրեթե ամեն մի էջում մենք կարդում ենք կայսրուհու այսօրինակ «խնդրանքներ»։ «Ինձ պետք են ծխախոտատուփեր, ջրանմանքեր, ոսկյա սրվակներ և դրանց մասան ձեռնոցներ իրեն», «Ինձ ուղարկեցե՛ք տարբեր գնաւոց մատանիներ, ինչպես նաև կանացի ադամանդայ կամ մարդարայա դարդարանքներ և ծխախոտատուփեր», «դուք ինձ բարեր եք խոստացել», «ինձ ադամանդյա արեր ուղարկեցե՛ք»։

Նկատերինա II-ը կալվածքներով, փողով, տիրուցաներով և պալատական փոշոմներով շուայրենի պարզևատրեկ էր Պետրոս III-ի դեմ կազմակերպված դավադրության մասնակիցներին։ Նա չէր մտապել նաև Օուլով եղբայրներին, Տատկապես պարզևատրեկով Գրիգորին և Ալեքսեյին։ Ալեքսեյ Գրիգորևիչ Օուլովը «դեմախալ-մայրիկ աստիճան ստացավ, նրան շնորհվեցին հրոկայական կալվածքներ և տասնյակ հազարավոր շունչ ճորտ զյուղացիներ, նա արժանացավ կոմսի տիտղոսի»⁵¹։ Նրա ավագ եղբայրը՝ Գրիգորի Գրիգորևիչը, Նկասերինայի սիրեցյալը, ակնառու դիրք չզտավեց արքունիքում և քանակում։ Այդպես շարունակվեց մտտավորական տապ տարի։ Բայց, ինչպես նշում են Գ. Գ. Օուլովի բոլոր կենսագրիչները, 1772 թվականից նա արդեն արքունիքում ազդեցություն չունի, զուրբ մղվելով Նկատերինայի նոր սիրեցյալներին՝ Վասիլիևիկովի և Պոտյոմկինի կողմից։

Հենց Գրիգորի Գրիգորևիչ Օուլովի էլ, Պետրոս III-ի դեմ ուղղված դավադրության ղեկավարներից մեկը, դավադրություն, որի հետևանքով զահ բարձրացավ Նկատերինա II-ը, վերջինիս նախկին սիրեցյալը կայսրուհուն նվիրեց ադամանդը։

Նվս մեկ անժամ, որ կապված է ադամանդի հետ՝ Սաֆրասի Դա խոշոր վաճառական Սաֆրաս հոշաձինասովին է՝ Նոր Զուղալից՝ Իրանի մայրաքաղաք Սպահանի հարուստ արվարձանից։

Հավանաբար, անհրաժեշտություն կա մի փոքր ավելի մասնաբանան խոսելու Զուղալի մասին։

Զգտելով բարձրացել երկրի կենտրոնական շրջանների տրանսասական նշանակությունը և կրելով ռազմական նպատակներից, Շահ Աբրա 1-ը (գահակալել է 1587-ից մինչև 1629 թվա-

կանը) 1598 թվականին մայրաքաղաքը փոխադրեց Իրանի խորհրդը՝ Սպահան քաղաքը։ 1603 թվականին Քուրբիայի դեմ հաջող սկսած պատերազմում Իրանին հաջողվեց նվաճել Անդրկովկասի և Փոքր Ասիայի մի շարք մարզեր, բայց հետ Քուրբական պարբերը սկսեցին նեղել շահական զորքերին։ Նահանգելիս շահ Աբրաքսը վճռեց թողնել «ամայացած գոտի», որպեսզի հակառակորդին զրկի «պարենամթերքներից և անասնակրից, իսկ այդ տարածքի քնակությունը թշվ Իրան»⁵²։ Նահանջը ուղեկցվել էր զյուղերի և բաղարների կանխամտածված ունշացմամբ։ Իրանի շահը հատուկ «Նոդատարություն» ցուցարներից Զուղալի նկատմամբ։ Նա երկյուղ էր կրում, որ Զուղան՝ նվրուպայի հետ Արևելքի առևտրի այդ կարևորագույն կենտրոններից մեկը, «կարող է անցնել Քուրբերի ձեռքը և սուլթանական զանձարանը նորից կհարստանա չուղայցիի վաճառականների հաշվին»⁵³։ Քաղաքը հրկիզվեց և ավերվեց, իսկ նրա բնակիչներին քնակության վայր տրամադրվեց Իրանի նոսր մայրաքաղաքը՝ Սպահանի, շրջանում։ Այդպես XVII դարի սկզբին առաջացավ Նոր Զուղան։ Հարուստ և երևելի չուղայցիներին մեծ արտոնություններ արվեցին, քաղաքին էլ ինքնավարություն և բալանթար (քաղաքազուլուխ) քնտրելու իրավունք։

Վիեննայի խոշորագույն ֆեոդալ, շահ Աբրաքսը գրա հետ միասին նաև խոշոր վաճառական էր։ Նա շահական մենաշնորհ հայտարարեց առևտրի առավել շահավետ առարկաները՝ մետաքսի հումքը, աղը, օճառը և այլն։ Շահական մենաշնորհ էր հայտարարվել նաև թանկարժեք քարերի արդյունահանումը, երկաթահանքերի մշակումը, դրամահատությունը⁵⁴։ Հենց առևտրական շահերն էին հարկադրում շահին խրախուսելու չուղայցիի վաճառականների առևտրական գործունեությունը։ Վերջիններիս ձեռքին էր կենտրոնացած Իրանի արտաքին առևտրի նշանակալի բաժինը։

Զուղայցիի վաճառականները առևտրական կապեր էին պահպանում Հնդկաստանի հետ։ Դեռևս հին չուղայցիի վաճառականները մոզղական շահերից և Հնդկաստանի առանձին մարզերի վառավարիչներից ստանալով բազմաթիվ առանձնաշնորհումներ,

⁵² В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII в. Ер., 1969, с. 10.

⁵³ Նույն տեղը, էջ 11։

⁵⁴ Նույն տեղը, էջ 22։

⁵⁰ Письма Екатерины II к А. В. Олсуфьеву, 1762—1783. М., 1863.

⁵¹ Советская историческая энциклопедия. Т. 10, с. 610.

անևտոր էին կատարում ամբողջ երկրով մեկ... Հնդկաստանի հայ վաճառականների գործարար հարաբերությունները Իրանի հայերի հետ հատկապես լայն բնույթ ընդունեցին նոր Զուղաբի սառցացումից հետո»⁵⁵:

Վահան Առաքելի Բալբորդյանի մենագրության մեջ հետևյալ փաստն է բերված անգլիացի հեղինակ Մ. Քոլլիսի (Siamese white. L., 1952) գրքից. «Միամի դեմ Արեւելա-հնդկական ընկերության մղած Գոկոնդյան պատերազմի ժամանակ 1685 թվականին անգլիացիները Մեդրաթըմում զավթեցին «նոր Նրուսազեմ» նավը, որը պատկանում էր ջուլպանցի վաճառական Հովհան Մարգարյանին, 500 հազար ֆունտ ստեռլինգ արժողությամբ թանկագին քարերի բեռով»⁵⁶: Զուղաբցի վաճառականները Իրանից և Հնդկաստանից եվրոպա էին արտահանում մետաքսի հումք, ինչպես նաև թանկածրեր քարեր: XVII դարի կեսերից Վերանտոսքի օրինակով ջուլպացի վաճառականները իրենց գրամազուխները միավորեցին առևտրական հզոր ընկերությունների մեջ... Զուղաբցի վաճառականների ընկերությունները մշտական անևտրական ներկայացուցիչներ ունեին Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի երկրներում: Նրանք աքնաբան գորավոր և աղղեցիկ էին, որ անմիջականորեն հարաբերություններ էին հաստատում օտարերկրյա պետությունների և եվրոպական ընկերությունների հետ, նրանց հետ կնքելով առևտրական պայմանագրեր և համաձայնություններ»⁵⁷:

Հենվելով արիվիպլանի ազդուրների վրա, սովորական գիտնական Վ. Կ. Ոսկանյանը աքն եզրակացություն է հանգում, որ «XVII դարում առևտրական կառավարությունը ոչ մի առևտրական ընկերության, ոչ մի պետության չէր թույլատրում տարանցիկ առևտուր կատարել Ռուսաստանի վրայով, որդեսպի այդ մենաշնորհը պահպանելու ոտս վաճառականների ձեռքում: Բայց Հայ-հնդկական ընկերությունը իրավունք ստացավ Ռուսաստանի վրայով տարանցիկ առևտուր կատարել Արևմուտքի և Արևելքի միջև, ընդ որում բավական արտոնյալ պայմաններով»⁵⁸:

Ռուսական կառավարությունը պաշտպանում և խրախուսում էր հայկական առևտրական ընկերություններին, թույլատրում էր նրանց նավեր կառուցել ադրանքներ փոխադրելու համար, ֆարսիականներ բացել: Մոսկվայի հետ ջուլպացիների առևտրական կապերի մասին է հիշեցնում արմատեռ այն գաճը, որ 1660 թվականին Սպասհանի հայ վաճառականների «նվիրել» էին Ալեքսեյ Միլասյովիչ ցարին:

Վերը սավափ լույս տակ դարձանալի չի լինի իմանալ, որ իր շափերով, զեղարվեստական արժեքով և առասպելական գնով բացատրել լեզուգրքար աղամանը սովորական առևտրական գուրմանությունների առարկա է եղել: Աղամանը պատկանել էր ջուլպացից հայտնի վաճառական, միլիոնատեր խոջամինասի որդի Գրիգոր Սաֆրասին (խոջա Նախդիրը նշանակում է «հասարակ», «եղբերի»): Իրանում խոջա էին անվանում հարուստ և աղղեցիկ վաճառականներին):

Սյս մեկ դեմք, որը հաճախ է հիշատակվում աղամանդի անբերի շղթայում՝ Հովհաննես Աղազարի կաղարան:

Ինկելով Գետերուրդի աննահարուստ մարդկանցից մեկը, Հովհ. կաղարանը երբեք ակհասործ չի եղել բառի ուղղակի խնամով, այնինքն՝ ոսկերչական իրեր չի պատրաստել և թանկարժեք իրերի առևտրով չի զբաղվել, բայց ինչպես փետեաներ ստորև, աննշովտում է ունեցել աննահարուստ աղամանդներից մեկի վաճառքին և, հավանաբար, նրա միջոցով էին Ռուսաստանի թագավորները գնում թանկարժեք քարեր և գնումներ ժամանակ նա էր հանդես գալիս իրրե վարկատու և երաշխավոր:

Պար է կարել, որ դրա հետ էր կապված պալատական ակնագործի նրա կողումը մինչև ռուսական տղնվտկահույլան շնորհումը և կոմսի տիպոսո ստանալը:

Մ. Ի. Պիլլյանի գրքերում բերված են աղամանդի վաճառքի հետ կապված փաստաթղթեր:

«Այն ժամանակի իսկական ժամանակակից փաստաթղթերում հետևյալ մանրամասնություններն ենք գտնում այդ թանկարժեք աղամանդի մասին. «Աստրաբանի մեշշանին Գիլյանչի 1778 թվականի ինքնագիր ղեկուցագիրը տեղի նահանգապետ Ի. Վ. Յակոբչի մկայում է, որ նրա՝ Գիլյանչի անհերք, ծագումով ջուլպացի հայ Գրիգոր Սաֆրասը..., որը Ռուսաստան է տեղափոխվել Հոլանդիայից, դեռ էր աշխարհում հազվագյուտ սե իր սգամանդակ բար, որը նա տարել էր Ռուսաստան... Պետերբուրգ»

⁵⁵ Նույն տեղը, էջ 79:

⁵⁶ Նույն տեղը, էջ 82:

⁵⁷ Նույն տեղը, էջ 79:

⁵⁸ В. К. Восканян. Многовековые связи.— Газ. «Коммунист», Ер.,

գում, Հոլանդիա մեկնելուց առաջ այդ Սաֆրասի գրած 1771 թվականի կտակից երևում է, որ Իտալան Աղազարը⁵⁹, իսկ ըստ այսուտեղի՝ Իվան Լազարիք, եղել է բարձրագույն զոան ակնադորձը: Նրան և նրա եղբոր Սաֆրասը նշանակում է կտակակառարներ և խնդրում է որպեսզի նրանցից մեկը, կամ ընդհանրապես երկուսն էլ 1767 թ. հոկտեմբերի 1-ին նրա փողմից Ամստերդամի բանկում պահպանության համար զբված կարմիր մեղրամոմի վրա երեք կնիքով կնքված ծրարը, որի մեջ Արևելահնդկական ծագման ազամանդյա քար է դանվում 779 հոլանդական գրամ կշռով, ես պահանջեմ...»:

1779 թ. հոկտեմբերի 20-ին Լազարը վկայում է. «Գրիգոր Սաֆրասը իր մեկ հտրուր իննստն հինգ կարատանոց ազամանդի կես մասը վաճառել է ինձ 125000 ոտլով և այդ քարը իմ կողմից հատուկ գրավոր հավատարմագրով ևս թողել էի նրա մոտ, որպեսզի ևս չանաչի ընդհանուր հաշվով վաճառել այն և ծախսերից հետո, ինչ գումար որ մնար, հավասարապես կիսեինք...»:

Սա գրել է Բ. Լ. կառավար.Ս.-Պետերբուրգում 1779 թ. սեպտեմբերի 1-ին, մեր կողմակալության ներկայացրած խնդրագրերից մեկում, Սաֆրասի ժառանգների միջև բաժանքի առթիվ⁶⁰:

Անիկզրագում, Կենտրոնական պետական պատմական արխիվում պահպանվել է «Աստրախանցի վաճառական Գրիգոր Սաֆրաս խոշամինասովի» (Հովհաննես և Հովակիմ Աղազարի Լազարյանների թևու) ժառանգների միջև ունեցվածքի բաժանման մասին գործը» (Ֆ. 880, ց. 5, գ. 532) և «Իրենց թևու՝ հայ վաճառական Գր. Սաֆրասի խոշամինասովի զավակների և ունեցվածքի նկատմամբ Հովհ. և Հովակիմ Աղազարի Լազարյանների խնամատարության մասին գործը» (Ֆ. 880, ց. 5, գ. 529):

Այսպիսով, մեծ որոշակիություն կարելի է պնդել, որ Արևելքում գտնված հնդկական ազամանդը ընկել է թանկագին քարերի առևտրով զբաղվող չուղաչեցի վաճառականների ձեռքը և նրանց կողմից տարվել է Լիբրպոական շուկա:

⁵⁹ Հովհաննես Լազարյան ունեցել է Ալտարիական կայսրության բարեյի, իսկ ավելի ուշ՝ կոստի տիտղոս: Այստեղից էլ նրա անվան գերմաներեն գրությունը:

⁶⁰ М. И. Пыляев. Драгоценные камни, их свойства, местонахождение и употребление, с. 158—160.

խոշամինասի որդի Գրիգոր Սաֆրասը հենց այն անձնավորությունն է, որի միջոցով XVIII դարում Ռուսաստան են ընկել երկու ազամանդ, որոնք իրենց զեկեցկույթյամբ, շահերով ու արժեքով առաջին տեղերն են զբաղել ռուսական ցարերի թագի թանկարժեքի իրերի մեջ: Գրիգոր Սաֆրասը արխիվներում հիշատակվում է որպես հարուստ վաճառական «միլիոնատեր Շաֆրասով», ազնվական Շաֆրասով: Արխիվային տվյալները վկայում են, որ Գրիգոր Սաֆրասը ֆինկ և Ամստերդամի բանկն էլ գրել մի խոշոր ազամանդ: Նա էլ խնդրել է իր գրամիկները Հովհաննես և Հովակիմ Լազարյանների լինելու իր «կտակակառարները»: Երևանի մատենադարանի արխիվային ֆոնդերում նյութեր են պահպանվել իշխան Գ. Գ. Օռլովի փողմից նկատերին: II Կայսրության չալվածի ձևի տեսք ունեցող ազամանդ նվիրելու մասին, որը գնվել էր հարուստ հայ Սաֆրասովից 400 հազար ոտլով⁶¹:

Ակազներիկոս Ա. Ե. Տերսմանը, տալով Ալմաստի ֆոնդի արժեքների նկարագրությունը, երկրորդ տեղը հատկացնում է այն ազամանդին, որը, ինչպես կոտաններ ստորև, ուղղակի անշուքիտն ունի Գրիգոր Սաֆրասի հետ:

«Մաքրույթյամբ և զեկեցիկ անաղարատությամբ «Օռլովիկն» է մոտենում երկրորդ խիտ հետաքրքրական քաչը՝ նույնպես հին հնդկական երեսակովում, կապտավուն երանգով. այն զարդարում է աշխարհագրունդը և կշռում է 46²/100 մ. կ.:

Երրորդ խոշոր ազամանդը պատմական «Շահ» է 88³/100 մ. կ. բաշով⁶², Ս. Գ. Արեշչյանը, Ռուսաստանում հայ մամուլի պատմության վերաբերյալ վերը վկայակոչված հետազոտության հեղինակը, տեղեկություններ է բերել երկրորդ ազամանդի մասին. Պայել 1-ի գահակալության ժամանակ տեղափոխվելով Պետերբուրգ, Իվան Արամեևիթովը⁶³ կայսեր հետ ընձաներ է գրիտանակում. Նա Պայելին առաջարկում է մի ազամանդ, որի մեծությամբ երկրորդն⁶⁴ էր պետության մեջ, իսկ Պայելը նրան կալված

⁶¹ Մատենադարան, ց. 84 և 116, գ. 106, թ. 103:
⁶² А. Ферман. Сокровища Алмазного фонда.— Алмазный фонд СССР. Первый выпуск. М., 1924, с. 23.
⁶³ Նկատի ունի Բ. Ս. Արամեևիթին:
⁶⁴ Երկրորդ XVIII դարում: XIX դարում, կր Ռուսաստան բերվեց «Շահ» ազամանդ, այն գործով մեծությամբ երրորդը:

է շնորհում Կամենեց-Պոդոլսկում...⁶⁵ Այդ աղամանը Ի. Աբամախիբը գնել էր Գր. Սաֆրասովից⁶⁶։ Բայց վերագրածանը «ՕՌՈՒՄ» աղամանն էր։

Ակսած Գրիգոր Սաֆրաս Խոջաձինսովից, որը աղամանը գնել էր XVІІІ դարի կեսերին, «ՕՌՈՒՄ» աղամանի հետագա ճակատագիրը տարածալուստի մասին անաչ չի բերել։

Գեո Մ.Մ. Պիլյակի առաջ քաշած այդ պնդման օգտին է վկայում նաև այն փաստը, որ ամետրոգամյան աղամանի շուրջը եղած առասպելները մուսուլմաններն տարածում սասացան Լազարյանի կողմից այն վաճառելուց հետո, և ոչ թե առաջ։ Հետաքրքիր է նշել, որ 1853 թվականին Իրանի շահը Լազարյանների բնաանիքի անդամներին պարգևատրում է Իրանի բարձրագույն շքանշաններով՝ պարսկահայտակների կրթությանը սատարելու համար, իսկ 1873 թվականի մայիսին՝ Նասր-է-ղ-զին շահը այցելել է Լազարյան ճեմարանը։

«Հասավ ի լուր մեզ, որ արժանավորագույն, փառապանծ, մեծաճոգի Հովհաննես Հովակիմի Լազարյանը մեծացրել է, կատարելագործել Մոսկվա բազարում Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը, որը հիմնադրել են նրա հորեղբայրը և հայրը և կալուճացրել է նորին գերազանցությունը, որանց ուրիշ փառություններից բացի պատանիներին դասավանդում են նաև օտար լեզուների արբերել, պարսկերեն և թուրքերեն։ Դրա հետևանքով այդ ուսումնական հաստատությունում կրթվում են լավ թարգմաններ, որոնք խիստ անհրաժեշտ են նաև Իրանի համար...»

Նմանարևույթ ծառայությունների համար... պարտք ենք համարում Ձեզ պարգևատրել Անույտի և Արիզակի առաջին առտիճանի շքանշանով...⁶⁷։

Այդպիսի հանդիսավոր ռեժիմ էր կազմված Իրանի շահի ֆիրմանը ճեմարանի հոգաբարձու Հովհաննես Հովակիմի Լազարյանին և նրա եղբորը՝ հայաուսուր Հովակիմի Լազարյանին իրանական բարձրագույն շքանշանով պարգևատրելու մասին։

Աղամանը նվրդպա էր տարել Գրիգոր Սաֆրասը և գրել Ամստերդամի բանկը (այստեղից էլ աղամանի «Ամստերդամյան» անունը)։ Գրիգորի Սաֆրասը աղամանի մի բաժինը վա-

ճառել էր Հովհ. Լազարյանին և խնդրել վերջինիս վաճառել այդ վաճառքը իրը (Լազարյանի ազգանունից ծագում է աղամանի ևս մեկ անվանումը՝ «Լազարյան»)։ Հովհ. Լազարյանը համեմատաբար էժան գնով աղամանը վաճառել էր Գր. Գր. Օսլովին, որը և այն նվիրել էր նկատարինա II-ին։

«Երկու պարկ լցրեցին ծղոտով, բարձեցին ձիու վրա, իսկ դադաղի մեջ դրված դիակը տեղավորեցին այդ պարկերի միջև»¹²⁵: Ապրիլի սկզբին սոս թափորը ժամանեց Քավրիդ: Մինչ այդ նինա Ալեքսանդրովնան Գրիբոլեզովի կինը, Քավրիդում էր: Նա հին էր և նրանից թաքցրել էին ամուսնուն պատահած տխուր դեպքի լուրը և համոզել էին զնալ Քիֆլիս, հարազատների մոտ: Քիֆլիսում, մոռ տանը, մեղձավորների հոգատարությանը շրջապատված, նա, սակայն, սկսել էր ալվելի ու ալվելի անհանգրստանալ Գրիբոլեզովի ճակատագրի համար: Մի անգամ նրան այցելեց Պասկելիչի կինը՝ Գրիբոլեզովի մորաբույր տղջիկը, խոսք բացեց Ալեքսանդր Սերգեևիչի և նրա լուսնյան մասին, խճճվեց լացատրություններում, լաց եղավ և ամեն ինչ բացեց: Նինա Ալեքսանդրովնան հիտաբիկայի մեջ ընկավ և հաշորդ օրը վա-

¹²³ Շահական արքունիքի ազդեցիկ բարձրաստիճան պաշտոնյա
¹²⁴ Н. Ениколопов. Грибоедов в Исток, с. 179.

¹²⁵ Նույն տեղը:

դաժամ ծննդաբերեց: Երեսնան ընդամենը մի քանի ժամ ապրեց»¹²⁹:

Քավորիզից Գրիբոյլզովի դիակը տեղափոխեցին Թիֆլիս: «Մախիսի 1-ը, որ էր հետ միշտ խնդրվածն է ուրախությունն է բերում, մեզ համար վշտի ու թախիծի օր էր: Այդ օրը, վերջապես, Պարսկաստանում մեր հանգուցյալ լիազոր մինիստրի մարմինը անցկացվեց Արթուր գետը... Հանգուցյալ Գրիբոյլզովի աճյունը պարունակող դագազը գտնվում էր թախտ-ռևանի»¹²⁷ մեջ: Երբ դագազը հանեցին թախտ-ռևանից և համոզվեցին, որքան հնարավոր էր, որ այն պարունակում է հանգուցյալ մինիստրի մարմինը, նրան զինվորական պատիվներ տվեցին և հոգեհանգիստ կատարեցին, որից հետո ամփոփեցին այստեղ պատրաստված դագաղի մեջ և դրեցին ամպոճանիով դիակառքի վրա: Հրամայվեց «սանեկ թաղման» և դանդաղ ու վեհապանծ ծայր առավ թագման թափորը՝ սզո երաժշտության հնչյունների ներքո»¹²⁸, Ճանապարհին, խոշոր բնակավայրերում, հոգեհանգիստ էին կատարում Գրիբոյլզովի համար:

Նախելեանից հետո դագազը ստիպված եղան հանել դիակառքի վրայից և տարան երկանիվ սայլով:

«Եզնեբը վեհորեն բարձրանում էին սարնիվեր: Նտնում, բարձր ասիին, Գյառգյառ ամբողջ էր, մերկ, ինչպես լեռը: Առջիվում՝ կամուրջ, որը նման էր Պանի սրնգին. արագահոտ գետակը կարկաչում էր: Երկու պարկերի միջև դրված Գրիբոյլզովը մոտենում էր կամրջին:

Հովհարով գլխարկ դրած և ուսերին այծենակած դցած հեծյալը հենց նոր էր անցել կամուրջը: Նա արագ իջնում էր զտիվայր ճանապարհով: Հավաստվելով թախտ-ռևանին, նա ընթացքից զլիով բարեկց անցորդներին և արագ հարցրեց ոտանքին:

— Դուք որտեղից եք գալիս:

Ավետիս Կուրինյանը գլխով բարեկց նրան և դժկամորեն պատասխանեց.

— Թեհրանից:

— Խնչ եք տանում,— հարցրեց մարդը արդեն անցնելով, և ճանապարհորդի հայացքով նայեց պարկերին ու արկղին:

— Գրիբոյլզովին,— անտարբերությամբ զլիով արեց նրան Ավետիսը:

Ձին արագորեն տարավ մարդուն սարնի վար և հանկարծ սկսեց թռչկոտել ու կանգ առավ: Մարդը ձգեց սանձերը:

Նա հայացքը զամել էր թախտ-ռևանին: Եզնեբը շարժում էին պոչերը, և երևում էր առաջին պարկը ու ետում նստած երկու հայերը:

«Պուշկինը հանեց գլխարկը»¹³⁰:

Այդպես է նկարագրում հայտնի գրող և հետազոտող Յուրի Եփրեյակովը Տիեյանովը երկու մեծ Ալեքսանդր Սերգեևիչների վերջին հանդիպումը:

Այդ տխուր հանդիպումը լեոնային ճանտպարհին Գյառգյառից ոչ հեռու, տանջելի հետք էր թողել Ս. Ս. Պուշկինի հոգում և արտացոլում գտել նրա «Ճանապարհորդություն» դեպի Արլըրում 1829 թվականի արշավների ժամանակ» գրքում:

«Նա անցա գետը: Երկանիվ սայլին լծված երկու եզնեբը բարձրանում էին դառիվեր ճանապարհով: Մի քանի վրացիներ ուղեկցում էին սայլին: Դուք ուղևորից եք,— հարցրեց նա նրանց:— Թեհրանից:— Խնչ եք տանում:— Գրիբոյլզովին: Դա սպանված Գրիբոյլզովի մարմինն էր, որ տանում էին Թիֆլիս:

Նա լեի կարծում արդեն երբեք հանցիպել մեր Գրիբոյլզովին: Նա նրանից բռնավեցի անցյալ տարի, Պետերբուրգում, նրա Պարսկաստան մեկնելուց առաջ: Նա տխուր էր և տարօրինակ նախազգացումներ ուներ»¹³⁰:

Այդ նտխագոցումները իրականացան 1829 թվականի հունվարին, իսկ Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյլզովի աճյունը ուղեկցող սզո թոփորը, արդեն որբորդ ամենա իր դանդաղ շարժվում էր քարքարոտ ճանապարհներով: Հունիսի 11-ին անցան Գյառգյառը, որտեղ տեղի ունեցավ հիշարժան հանդիպումը:

Իսկ այդ դեպքից բիշ առաջ, գեոևս Թիֆլիսի ճանապարհին, չճասած Կոբիի պահակակետին, Պուշկինը հանդիպել էր մեկ ուրիշ սայլի: «Սպասում էին պարսից արքայազնին: Կարևորից որոշ

¹²⁹ И. Ениколопов. Грибоедов в Грузии. Тб., 1954, с. 85.

¹²⁸ թախտ-ռևան— դեպուսի

¹²⁸ И. Ениколопов. Грибоедов в Грузии, с. 86.

¹²⁹ Ю. Тынянов. Смерть Вазира-Мухтара. Минск, 1978, с. 434—435.

¹³⁰ А. С. Пушкин. Полное собрание сочинений. Т. IV. Academia, 1936, с. 407—408.

հետվորություն վրա մեր դեմ ելան մի բանի բառանիվ կառքեր
և դժվարացրին անցումը նեղ ճանապարհով»¹³¹։ Դա պարսից
արքայազն Խոսրով-միրզան էր։

1829 թվականի հուլիսի 18-ին հանդիսավոր իրադրություն
մեջ տեղի ունեցավ Գրբորյեղովի թաղանթը Քիֆլիսում, Մթած-
մինգա սարի վրա գտնվող վանքի եկեղեցու բակում։

Թաղված վայրում Գրբորյեղովի ալրի նինա Ալեքսանդրով-
նան 1832 թվականին կանգնեցնել տեղի մահարձան, որը խա-
լայի բանդակագործ Կամպանինիի գործն է։

Ա. Մ. Գրբորյեղովի ալրի նինա Ալեքսանդրովնան, ծննդյամբ՝
Շավճավաձե, մինչև իր մահը՝ 1855 թվականը, «սուզ էր պահում
իր կարճատև ամուսնության համար... Գրբորյեղովի ազգական
կամս Պասկելիչ միջնորդությամբ նրան նշանակվեց միայն մի
համեստ ուսուսական թոշակ»¹³²։ Գրբորյեղովի մորը և կնոջը
«շնորհեցին» չուրաքանչուրին 30 հազարական ուսուցիչ և ստեղ-
նացիաներով 5 հազարական ուսուցիչ թոշակ։ «Ռուսական» բա-
ռով Վ. Յ. Մինորսկին ակնարկում էր այն, որ իրանական կազմը
միջոցներ չձեռնարկեց թոշակ սահմանելու սպանված դեպա-
նորդի ալրուն։ Բայց, նկատում է Վ. Յ. Մինորսկին, «սակնհայտ
է, որ նինա Ալեքսանդրովնան չէր ընդունի և ոչ մի փոխհատու-
ցում պարսիկներին»¹³³։

Բայց վերադառնա՞նք Խոսրով-միրզային։ Յարի մոտ հանդի-
սավոր ընդունելությունից միայն մի բանի օր առաջ սուրհանդակը
նրան հասցրեց շահի հրովարտակը, իսկ սեպտեմբերի 5-ին նա-
մակներ բերեցին շահից, Աբբաս-միրզայից և երարյուններից։ Ամ-
բոջ առավտոր նա անցկացրեց նամակների ընթերցումով և
հազոտափ ու այլ իրերի հակերի կարգավորմամբ, որոնց նա
սպասում էր մինչև իր ունեկորություն օրը... Աբբասյազնի Պարս-
կաստանից ստացած նվերները.— գեկուցում էր ցարին զենքալ
Պ. Պ. Սուխտելենը.— որոնք մատուցվելու են Չերոզ մեծությանը,
իշխվես ևս իմացա, բաղկացած են, այլ իրերից բացի, նազիր շա-
հի մեծ ազամանդից, 20 թվակարճեր ձեռագրերից, Քաշմիրի եր-
կու գորբերից և մարգարայ մտնականից նորին մեծություն կայս-
րուհու համար, որից՝ գաճաճասնուց մեծ իշխանի համար և մի

բանի պակաս թանկարժեք իրերից, որոնք Խոսրով-միրզան կցան-
կանար մատուցել մեծ իշխանուհիներին»¹³⁴։ Պ. Պ. Սուխտելենը,
որը հնարավորություն էր ունեցել առաջիններից մեկը դիտելու
ընծաները, ցարին դրում էր, որ ընծաները նրան խիստ համեստ
թվացին։ Այդ ֆոնի վրա «հատուկ տպավորություն բործեց հակա
ազամանդը, որը մի ժամանակ շնորհատանից բերել էր նազիր-
շահը այլ ավարի հետ միասին։ Իրանցիների կարծիքով «Շահ»
ալմաստը կարծես Գրբորյեղովի Վարյան գինն էր»¹³⁵։

1923 թվականին Վ. Յ. Մինորսկին «Չհրապարակված փաս-
տաթուղթի» խորագրով շրտարարակեց Ֆարս-Ալի-շահի նամակն իր
որդուն՝ արքայազն Ալի-Նազիր-միրզա Ռուբնուզ-Ռուսլեկին, Ղազվի-
նի նահանգապետին, որը մասնակցել էր Ռուսաստանի հետ տե-
րի ունեցող բանակցություններին, որից պարզ է դառնում, որ
«պաշտոնական ջրատարակեց Ֆարս-Ալի-շահի նամակն իր
թարյան գին» Ռուսաստանը չէր էլ մասձում պահանջել։ Պատըր-
վալը հնարել էր իր ձեռնարկումների և արշավախմբերի համադ
մշտնապես փողի կարիք ունեցող գաճաճասնուց, որպեսզի հորից
նպաստ ստանա։ Պարսկաստան գործողած իշխ. Գոլգորակովը
բացահայտել էր խորագրվաները, որը խանգարում էր Քեհհանի
խաղաքում պլանների վերանական վերացմանը, և ուսական
յակական պատահաների շահին բացատրելու համար արքայազն
Ալի-Նազիր-միրզան մեկնել էր Քեհհան...

Ռուսաստանը պնդում էր սուկ երկու կեսի վրա՝ դեսպանու-
թյուն ուղարկել ներդրություն հայցելու համար և պատժել մե-
զավորներից»¹³⁶։

«Ռչյան գին» ողջ պատմության մտացածինության մասին
Վ. Յ. Մինորսկու հետևությունը միանգամայն արդարացի է
թվում։ Բայց նրա մյուս պնդումը, որ «Քեհհանի իրադարձու-
թյունների վերջնական վերացմանը» խանգարում էր շահի անի-
բազեկությունը «ուսական իսկական պահանջներին», համոզիչ
չի թվում։ «Քեհհանի ողբերգության» լուծումը կախված էր ուս-
ական և թուրքական բանակների ձակատամարտերի ելքից։

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում «Շահ» ազամանագը։

¹³¹ А. С. Пушкин, Полное собрание сочинений. Т. IV, с. 400.

¹³² В. Минорский. «Цена крови» Грибоедова, с. 8.

¹³³ Նույն տեղում։

¹³⁴ [М. Розанов]. Персидское посольство..., с. 96.

¹³⁵ С. В. Шостакович. Дипломатическая деятельность А. С. Грибоедова. М., 1960, с. 271.

¹³⁶ В. Минорский. «Цена крови» Грибоедова..., с. 8.

Գ. Ի. Միշկեիշի կաղնած աղյուսակում, որտեղ աղամանդ-
ները «ղասավորված են ըստ կշռակարգի»՝ ամենխոշորից մինչև
ամենսփոքրը¹³⁷, «Շահ» աղամանդը գրավում է 36-րդ տեղը։
Բայց, հավանաբար, նժև չալ ցուցակից հաննը չեթեսակված
քարերը, ապա «Շահ» աղամանդը տեղ կգրավի երկրորդ տաս-
նյակի մեջ։ Անվիճելի է, որ «Շահ» աղամանդը մեծությամբ և
արժեքով մեր երկրի Ալմաստի ֆոնդի երկրորդ քարն է, առաջին
տեղը զիջելով նշանավոր «Ամասկերգամյան», «Աղաբայան», «Ռու-
սական» անունը կրող, բայց ավելի շատ «Շուլով» անունով հայտա-
նի աղամանդին¹³⁸։

«Շահ» գրեթե անմշակ խոշոր քար է, որը իրենից ներկա-
լացնում է խիստ երկարավուն բնական ութանիստ շյուրեղ, որը
ընդհանուր տեսքով հիշեցնում է շեղանկյուն պրիզմա։ Եղբերի
մի մասը պահպանվել է բնական տեսքով։ Երեք հղկված մակե-
րեսներին երևում են պարսկերեն լեզվով արված հիանալի փո-
քանդակները։ Քարի բարակ լեզվի կառարման մաքրությանը
բացասելի՝ 0,5 մմ խորությունը շրջանաձև ակոս կա¹³⁹։ Այդ ակո-
սով անցկացնում էին քուղ, որի օգնությամբ աղամանդը որոշ
հեռավորությամբ կտխում էին գահի առջև, սակա անցկացնելով
սահմանագիծ, որից այն կողմ անցնել չէր թույլատրվում։

Բերնը եւ Լազու ուրիշ երբերանցներով ասրերիվող վար-
կածներ։ Գրանցից մեկը հիմնված է ֆրանսիացի հայտնի ճա-
նապարհորդ Տավերնիեի նկարագրության վրա։ Մեծ Մոդոնիերի
փառահեղ գահի վերն, որը գաղարված էր հարյուրավոր գրմ-
բութաներով և արյունակաթուր շարիններով, կար մի ամպհո-
վանի, որը նույնպես հարուստ գնորդված էր թանկարժեք քարե-
րով։ Ամպհոլանտ առջնամասի մեկնությունում կախված էր մի
խոշոր (80—90 կարատանոց) աղամանդ՝ շրջապատված գրմ-
բութաներով և ստանկներով։ Դասելով քարի չափերից և թևի
ամբարցման շրջանակն ակոսիկի թակաությունից, չալ աղաման-
դը մեր «Շահ» էր, որը որպես թուխման կախված էր արևելյան
տիրակալի և նրա մոտ ընդունելության թույլատրված մարդկանց
միջև¹⁴⁰։

Թ. Գ. Վալանի «Աղամանդը փխրուն քար է» գրքում կարգում
ենք. «Քարը զտակորում է փոքրիկ ակոս ոսկյա շվթալի համար,
որից աղամանդը, որպես տիրակալի իմաստության և իշխանու-
թյան խորհրդանշան, կախում էին գահի առջև։ Նոր հողեր նվա-
ճելու համար արշավանքի մեկնելիս սուլթանը կամ շահը աղա-
մանդը կապում էին իրենց թրի գաստապանին կամ կրում կրծ-
քին՝ որպես վերբերից ու պարտություններից ապահովող թալիս-
ման։ Նմանաանակ համայնիներին խորապես հավատում էին
արաբները, հնդիկները և պարսիկները»¹⁴¹։

Մովսեսիան հայտնի գրող Յուրի Տիշյանովը «Վազիր-Մուխ-
թարի»¹⁴² մահը վիպում, որը նվիրված է Ա. Ս. Գրիբոլդովին,
տվել է հայանի արևելադեա Օսիպ Իվանովիչ Սենկովսկու¹⁴³ կող-
մից «Շահ» աղամանդի վրայի տեսարանի ընթերցման հետևյալ
նկարագրությունը։

«Աննյակը պտտահաններ շունը, իսկ ծանր գուրը նրանց Լա-
նից իսկույն փակվեցին բանալիով։ Սղը այստեղ թանձր էր,
առատապղի կամարակապ, ձայները՝ խուլ, և զրա համար էլ, թևն
սենյակում ոչ մի աթոռ չկար, այն թվում էր իրերով լեփեցուն։
Աղամանդը դրված էր սեղանին, թավշյա կարմիր բարձիկի
վրա։ Այն երկու մամլ էր լուսավորում։

Սենկովսկին վերցրեց խոշորացույցը։ Վիցմունդիբով փոքրա-
մարմին ծերունին պատրաստվեց գրի առնել։

— Շատ լավ է, — ասաց Սենկովսկին, կկրցելով աչքերը։

— Լավ է գրված, — ասաց նա ծերունուն։ — Գրեցե՞ք, զա-
ջար... Ֆաթի՛ Ալի... Շահ-Մուլթան... հազար երկու հարյուր քա-
նատուներիկու։

Մերունի։

— Գրեցի՞ք։ Փակադժերում, հազար ութ հարյուր քանչորս¹⁴⁴,
Մա փորագրել են ընդամենը հինգ տարի առաջ։

Մերունին զգույշ, երկու մատով, աղամանդը կողքի շուտ
տվեց։

¹⁴¹ Рустем Валаев. Алмаз—камень хрусткий. Киев, 1977, с. 30.

¹⁴² Վազիր-Մուխթար—լիազոր մինեստր

¹⁴³ Օ. Ի. Սենկովսկի (1800—1858) — ականավոր դեռահաս, հայրենական
արևելագիտության հիմնադիրներից մեկը և ժամանակին ժողովրդականություն
վայելող գրող, որը հայտնի էր Բարոն Բրամբուսու կեղծանունով։

¹⁴⁴ Միայն էլ շեքսպիր 1242 թվականը համապատասխանում է 1826 կամ 1827
թվականին։

¹³⁷ Г. И. Мишкевич. Его величество алмаз, с. 17.

¹³⁸ Բայց ոչ մի դեպքում «Փարս-յե-նուր-ի» «Ալաբի ծովին»։

¹³⁹ В. А. Милашев. Алмаз. Легенды и действительность. Л., 1976,
с. 22—23.

¹⁴⁰ Նույն տեղը, էջ 23։

— Այդպես չէ, զույսը ներքև, — առաջ Սենկովսկին: — Փոքրագրութունը կուպիտ է... ալո, նա... կուպիտ է... Տե՛նում էք, բլբլ... խորն է... Գրեցե՛ք... Բուրխան... Նիդալմ... Ե՛տ՛՛ ճրկբորդ... Հազարերորդ թվական:

Մերունին ուշադիր լսում էր, ջնջում, գրում:

— Ըստ երևույթին, հնդկական տիրակալ է: Տասնվեցերորդ դար:

Սենկովսկին ինքը շուտ տվեց ֆարբ:

— Գրեցե՛ք, — վոպուտրենն առաջ նա, — որդի... Զահանգիր-Եահի... հազար հիսունմեկ թվական: Փակագծերում գրեցե՛ք՝ Մե՛ծ Մոզդ:

Մերունին շտապով ճոճապցնում էր գրիչը, և գրիչը կանգ առավ:

— Մե՛ծ Մոզդ: Գրեցի՞ր: Քրիստոսի ծննդից հետո հաշար վեց հարյուր քառասունմեկ թվական: Փակագիծ:

* * *

— Արլան զին, — գլխով արեց Սենկովսկին ծերուկին, և ծերունին ճպճպացրեց կարմիր կոպերը: — Նրան սպանել է նրա որդին, Աուրենգ-Ջեբը, որպեսզի հափշտակի, — և նա մատը գրեց բարձիկին: — Եվ էլի նա սպանեց եղբորը, շե՛մ հիշում, ինչ էր նրա անունը, Աուրենգ-Ջեբը:

* * *

— Չորրորդ փորագրություն լինելու՞ է, — խստորեն հարցրեց Սենկովսկին:

Մերունին, ուներ թոթվելով, բացում էր դուռը¹⁴⁵:

Չորրորդ փորագրություն լիտ և շարժե անել:

Խոսրով-միրզայի երկար ու տևական ճանապարհորդության նկարագրությունից նշեց նա երկու փաստ: Երբ Պեսաբբուրդ գնալու ճանապարհին միսան ժամանեց Քիֆլիս, ՎՊասկևիչը չհապաղեց հաղորդելու արքայազնին Ախալցխայի մոտ իշխան Վ. Օ. Բեհրուժովի կողմից թուրքերին ջարդելու մասին¹⁴⁶:

Հուլիսի 14-ին իրանական դեսպանությունը հանդիսավոր կերպով դիմավորեցին Մոսկվայում: Հաջորդ օրը Խոսրով-միրզան այցելեց Ա. Մ. Գրիբոյեդովի մոտը՝ նաստայա Ֆլորոտովնային:

Նշենք, որ մի քանի ամիս անց, արպեն 1829 թվականի նոյեմբերին, վերադառնալով Պեսաբբուրդից, Խոսրով-միրզան կրկին մի քանի օրով կանգ է առնելու Մոսկվայում և նոյեմբերի 3-ին իր շրախմբով այցելելու է Արևելյան լեզուների հայկական կադրայան ճեմարանը:

Իրանական դեսպանության Պեսաբբուրդից մեկնելուց առաջ Խոսրով-միրզային և նրա շրախմբի անդամներին նվերներ մատուցվեցին: Վերջապահ Խոսրով-միրզային շնորհից աղամանդյա արծիվ՝ կրծքին կրելու համար, էմիր-Նիդամին՝ Սպիտակ արծվի շքանշան, Միրզա-Մասուդին՝ վեց հազար ոտբլանոց խոշոր ազամանգով մատանի¹⁴⁷, Միրզա-Սալեհին՝ 5 հազար ոտբլանոց գմբուխտյա մատանի, Միրզա-Բարային՝ 4 հազար ոտբլանոց մատանի, արքայազնի մորեղբայր Հուսեյն-Ալի-Բեկին՝ մատանի և ոսկե մեղալ... Միրզա-Մասուդը և Սեմինոն, որոնք իրրև կոմիսարներ մասնակցել էին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև սահմանի անցկացմանը ըստ թուրքմենշայի պայմանագրի, բոլոր մյուս նվերներից բացի ստացան, առաջինը՝ 1000 շերվոնեց, իսկ երկրորդը՝ 500 շերվոնեց և սր: Աննայի 2-րդ կնիքի շքանշան: Բանաստեղծ Ֆադլի-Խանին... 800 ոտբլի արժողութամբ ոսկե ժամացույց և ազամանդյա մատանի¹⁴⁸: Այնուհետև ցուցակում հիշատակված են ընդհանուր արժամք ավելի քան հինգ հազար շերվոնեցի գրամական շնորհումներ: Այդ ամենից բացի արքայազնին և դեսպանությունն առավել երևելի անդամներին նվիրվեցին խոշոր գումարի արժողությունը հազվագյուտ մորթիներ, արծեբավոր սպասքներ և հախճապակյա գանձադան իրեր՝ ավելի քան 840 հատ:

Ո՛չ, մենք չենք համեմատի այդ ընծաները և չենք հաշվի դրանց արժեքը: Միանգամայն ակնհայտ է, որ Մերձավոր արևելքում դիվանագիտական մեծ խաղի ամբողջ շղթան 1829 թվականին սվարտվեց Իրանի և թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի հաղթանակով: Եվ այդ պատմական իրադարձություններում ողբեր-

¹⁴⁵ Ю. Тынянов. Сочинения. Т. 2. М.-Л., 1959, с. 444—445.

¹⁴⁶ Ад. П. Берге. Хосров-мирза..., с. 335.

¹⁴⁷ Խոշոր ազամանդ աղոցարանով (տվյալ դեպքում՝ մատանի):

¹⁴⁸ [М. Розанов]. Персидское посольство..., с. 230.

գահան էջ էր ուսական ներկայացուցչության շարքը Քհնճրա-նում:

Կարող է հարց ծաղել, թե ինչու՞, երբ արդեն Քուրբխայի դեմ պատերազմի հաղթական ելքը կանխորոշված էր, ցարը, իշխանն Ն. Ա. Գոլզորովիչին նամակն ստանալուց հետո, որով վերջինս տեղեկացնում էր «մեր միսիային սպանած խռովարարներին պատժելու համար Քհնճրանում ձեռք առնված միջոցների մասին», տեսնելով «Աբրա-միրզայի անկեղծ բարեհաճությունը մեր նկատմամբ», «հարգելով այդ, ինչպես նաև խորով-միրզայի արտասովախառն համառ աղերսանքը... Պարսկաստանին պարզելեց մեկ կուրուր, իսկ վերջին կուրուրի վճարումը հետաձգեց հինգ տարով»¹⁴⁵:

Դա վարձահատուցում էր նաև 1828—1829 թվականների ուս-թուրքական պատերազմի ժամանակ Իրանի շեղորոթյան համար: Այդ «առատաձեռնությունը» բացատրվում է և՛ Իրանում դրոթյան առավել ևս վառթարացման շնայատեսված հետևանքներից ունեցած երկյուղով, և՛ «հոգատարություն» էր թուլակամ և անվճռական Ֆաթհ-Ալի-շահի գահի ու գահաժառանգ Աբրա-միրզայի դիրքերի համար: Այդ կուրուրների ստացման բացասական հետևանքները գերազանցում էին դրանց դրամական արժեքը:

Ինչպես հայտնի է, Աբրա-միրզան մահացավ 1833 թվականին, հոր՝ Ֆաթհ-Ալի-շահի մահից մեկ տարի առաջ, և Իրանի գահին բազմեց Մոհամմեդ-շահը: Միզ հայտնի խոսքով-միրզան, որը 1829 թվականին Իրանական դեսպանության հետ եղել էր Ռուսաստանում, նոր տիրակալի հրամանով կուրացվեց, որն աչդիսով եղբորը մեկուսացրեց գահի համար մղվող պայքարից:

Նվ թեև, ամենից ավելի հավանական է, որ խոսքով-միրզայի դեսպանության համար կպահպանվի «բավության միսիա» սահմանումը, դա մի դեսպանություն էր, որի նպատակն էր երկարաձեղել խոսանալման ժամանակը և օգուտներ քաղել, օգտագործելով Ռուսաստանի ծանր դրությունը, որը պատերազմում էր Քուրբխայի դեմ և երկյուղ էր կրում երկու ճակտոտվ պայքար մղելուց: Փաստորեն Իրանին հետողվեց 1829 թվականին ռազմատուգանքի դումարը նվազեցնել Լեկու միլիոն արծաթե սուրբով:

Նվ էթև «Շահ» ադամանդը կապվելու է մեծ գրողի անվան հետ, ապա որպես հիշեցում Ա. Ս. Գրիբոյեդովի անժամանակ վախճանի մասին: Մարդկանց հիշողության մեջ կմնա նրա «սեղ-բից պատուհաս» անմահ կատակերգությունը և ողբերգական կործանումը մի մարդու, որը ներքաշվել էր անցյալ դարասկզբի արշունալից պատմության նենգամիտ ոտսայնի մեջ:

Ավարտելով այս ակնարկը, չի կարելի շիտսել այն մասին, որ ուս-իրանական պատերազմները հանկեցրին Անդրկովկասի ժողովուրդներին ազատագրմանը շահական ճնշումից, իսկ հեռանկարում՝ տնտեսական, քաղաքական և մշակութային վերելքի: Անդրկովկասի ժողովուրդները, ինչպես և մեր երկրի բոլոր ժողովուրդները, խորապես հարգում են Ա. Ս. Գրիբոյեդովի հիշատակը:

Մոսկվայում, հանճարեղ բանաստեղծի հայրենիքում, ինչպես նաև Քբլիխում, որտեղ հանգչում է նրա աճյունը, Սրևանում, Հայաստանի մայրաքաղաքում, որի ազատագրմանը սատարել էր նա, երախտապարտ հետնորդները հուշարձաններ են կանգնեցրել Ա. Ս. Գրիբոյեդովին, իսկ այն տեղում, որտեղ մի ժամանակ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինը հանդիպել էր Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովի դագաղն ուղեկցող թափորին, հուշակոթող է դրված:

ՊԱԼՄԻՐԱՅԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱԿԱՅՈՒՑԱԿԸ

Այնցալ դարի 80-ական թվականների սկզբին երբեմնի նշանավոր Պալմիրայի ավերակներում հայտնաբերվեց, ակադեմիկոս Պ. Կ. Կոկովցովի բնորոշմամբ, «առաջնակարգ գիտական կարևորություն»¹ մի արձանագրական հուշարձան: Այն անձնավորությունը, որին հաջողվեց այդ գյուտով «խոշորագույն ներդրում կատարել սեմագիտության մեջ, այնպիսի ներդրում, որպիսին հազվագեղ է հաջողվում կատարել մասնագետ արևելագետներին»², Սեմյոն Սեմյոնովիչ Աբամելեխ-Լազարյանն էր:

Ս. Ս. Աբամելեխ-Լազարյանը բարձրագույն կրթությունը ստացել Պետերբուրգի համալսարանում, որտեղ սլենը էր պատմաբանասիրական ֆակուլտետի գծով գիտությունների լրվի դասընթացը և քննությունների ժամանակ ցույց էր տվել... զերազանց գիտելիքներ, որի համար... դիտարկության ներկայացնելուց հետո արժանի էր ճանաչվել թեկնածուի գիտական աստիճանին»³: 1881 թվականին ավարտելով համալսարանը, Լեհաստանի գիտնականը այդ նույն թվականին Պետերբուրգի համալսարանի արվեստների պրոֆեսոր Աղրիան Վիկտորովիչ Պրախովի հետ ճանապարհորդության մեկնեց Միջերկրական երկրները: Ինչպես շատ ավելի ուշ գրում էին Ս. Ս. Աբամելեխ-Լազարյանի կենսագիրները, «երիտասարդ ժամանակ նա երազում էր տրվածների բնագավառում գիտական կարիերայի մասին, որին նրան հա-

կում էր նրա պրոֆեսոր Ա. Վ. Պրախովը, որի հետ մինչև վերջ նա բարեկամական հարաբերություններ պահպանեց»⁴:

Արևելքի երկրներում կատարած այդ ճանապարհորդությանը Ա. Վ. Պրախովից զատ մասնակցություն բերեց հայտնի նկարիչ Վասիլի Դմիտրիևիչ Պոլենովը⁵:

«Ճանապարհորդության ուղիքը սովորական էր այն անձանց համար, ովքեր կամենում էին առավել կամ պակաս կարճ ժամանակամիջոցում ծանոթանալ հին երկրի տեսարժան վայրերին՝ Ալեքսանդրիա, Կահիրե, Լուբոսը, Էրմենտ, Սիլսիլե, Էսեե, Էրֆոն, Կոմ, Օմբո, Ասուան և ներդսով առաջատար դահաբիեով ետ մինչև Կահիրե՝ տարբեր կետերում կանգառներով, այդ թվում և Քենայում՝ դիտելու համար Գենդերի աաճարը, Բալխանում՝ Աբիդոսի աաճարի համար և այլ վայրերում»⁶: Այդ ճանապարհորդության ժամանակ՝ 1882 թվականին Պալմիրայում Ս. Ս. Աբամելեխ-Լազարյանին հաջողվեց «Արեգալի ասճարի բակի մոտաքի պաշտպանական աշտարակից մի վերստաշափ հեռավորության վրա»⁷ պեղել մի վեմ (վիմստախտակ), որն շուներ 6 մ 36 սմ բարձրություն և 7 մ 60 սմ բարձրություն, հաշվելով քարի այն մասից, որը գետնի երեսին էր, մինչև արձանագրության ներքևի ծայրը»⁸:

Հաջորդ օրը, ինչպես գրում է Ա. Ս. Աբամելեխ-Լազարյանը, Ա. Վ. Պրախովը օգնեց նրան հանելու հերկեզվյան արձանագրության պատճենը: Արձանագրության ներկայից մաս արտազերվեց, իսկ արձանականից էստամպած հանվեց: Պալմիրայի վի-

⁴ «Новое время», 23.IX. (6.X) 1916.

⁵ Այդ ուղևորությունից Վ. Գ. Պոլենովը բերեց տասնյակ տպուղներ, ուրվանկարներ, որոնք նույն ժամանակին կառավարի համար: Մասնավորապես, ուղևորության տպվորության տակ նկարիչը նկարեց «Ճուպիտերի տաճարը Բալխանիում» կտավը, որը ձեռք բերեց Ս. Ս. Աբամելեխ-Լազարյանը: Արիթմով պահպանվել է Արևելքում կատարած ճանապարհորդության արձույթ Ս. Ս. Աբամելեխ-Լազարյանի ուրվանկաներով և Պոլենովի նկարով (ՀԱԿՊԱ, ֆ. 1252, ց. 1, գ. 1494): Այստեղ էլ պահվում է տպագիր վերնապատկանների արձույթ, որ նկարիչը ուղարկել էր Ս. Ս. Աբամելեխ-Լազարյանին 1909 թվականին (ՀԱԿՊԱ, ֆ. 1252, ց. 1, գ. 1495):

⁶ М. А. Коростовцев, С. И. Ходжаш. Адрян Викторович Прахов (1846—1916).— Очерки по истории русского востоковедения. Сб. 3. М., 1960, с. 117.

⁷ С. Абамаелех-Лазарев. Пальмира. СПб., 1884, с. 41.

⁸ Նույն տեղը, էջ 42:

¹ П. Кокцов. Памяти князя С. С. Абамаелех-Лазарева. Отд. отт. из «Записок Восточного отделения Русского Археологического общества». Пг., 1917, с. 1—2.

² Նույն տեղը, էջ 4:

³ ՀԱԿՊԱ, ֆ. 1252, ց. 1, գ. 40 (գիպովմը):

մատախտակի տեքստը հրատարակվեց Մ. Ս. Աբամելիք-Լազարյանի կողմից, և նա էլ ճանդիսացավ զրա առաջին հետազոտողը։ Այդ աշխատության համար արձանագրությունների ֆրանսիական ակադեմիան նրան ճանաչեց որպես իր աշուտնկա՝ Առաջինը, ով զբաղվեց արձանական տեքստի վերականգնմամբ, եղավ ֆրանսիացի գիտնական զր Վոգլունը։

«Պարզվեց արձանագրությունը... Քրիստոսի ծննդից հետո 187 թ. Պալմիրայի նշանավոր մաքրային սակացուցակն է։ Չորս քառակուսիներում երկու լեզուներով՝ հունարեն և արամեերեն, այն պարունակում էր Պալմիրայի սուներիպալ սենատի սեկիւլ(յան) էրալի 348 թ. նիսանի 18-ի որոշման տեքստը ոչ թե օրենքի համաձայն, այլ սովորովի սահմանված մաքրային տարրերի գրավոր ֆիքսացման անհրաժեշտության վերաբերյալ, և ապա արտահանման և ներմուծման տարրեր առարկաներից զանձեղը բոլոր նման մաքրեր մանրամասն թվարկումը»⁹։ Առաջավոր Ասիայի հին վիճագրության այդ նշանավոր հուշարձանը գրավեց գիտնականների ուշադրությունը և հետազոտության առարկա դարձավ Փրանսիայում և Ռուսաստանում։

Առաջին արշավախմբի արդյունքները հրատարակվեցին Մ. Ս. Աբամելիք-Լազարյանի «Պալմիրա» գրքում, որը հրատարակվել է Պետերբուրգում 1884 թվականին¹¹։

1895 թվականին Մ. Ս. Աբամելիք-Լազարյանը նոր ճանապարհորդություն կատարեց Արևելքի երկրներ (Եգիպտոս, Պաղեստին, Սիրիա)։ Առավել մանրամասն նա հետազոտեց խաչակրների կողմից ավերված հին Ջերաշի հուշարձանները, որի հիանալի անտիկ շինություններից պահպանվել էին միայն վեհասօթանշ ավերակները։ Ջերաշից Բելլոսթ սանդը ճանապարհին, — գրում էր Մ. Ս. Աբամելիք-Լազարյանը, — մենք մտանք Բապուրեկ, որտեղ ինձ ցույց տվեցին պալմիրյան 6 հարթաքանդակներ՝ նաբաթևական արձանագրություններով, որոնց տեքստը սիրալիք թույլ տվեց ինձ լուստնակարել»¹²։

Երկրորդ ուղևորությունը բավականին համեստ եղավ արդյունքներով։ «Պարզվեց, որ Ջերաշում իմ գտած արձանագրությունների մեծ մասը հրատարակված էին, բայց նրանցում ևս, իմ բերած էստամպաներով կամ լուսանկարներով, կարելի էր որոշ ուղղումներ կատարել», — գրում էր հեղինակը¹³։ Ներկայումս էլ Մ. Ս. Աբամելիք-Լազարյանի գիրքը արժեք չի կորցրել, լինելով Ջերաշի անտիկ հուշարձանների առավել մանրամասն հեագիտական ուսումնասիրությունը ուսական գիտական գրականության մեջ։

Ուշադրություն է դրվում այն փաստը, որ այդ գրքում տպագրված էր Բ. Ա. Տուրանի, այն ժամանակ ղեկ Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտի հազորդու՝ Պալմիրայի նաբաթևական արձանագրություններ ունեցող հարթաքանդակների մասին, որոնց լուսանկարները բերել էր Մ. Ս. Աբամելիք-Լազարյանը։

Բայց վերադառնանք Պալմիրայի 1882 թվականի գյուտին։ Առաջին հրատարակումները հաստատեցին, որ գիտության սեփականությունն է դարձել սեմական կարևորագույն և թանկարժեք տեքստերից մեկը, որը հավաստաբան արժեքով էր ինչպես իր բովանդակությամբ, այնպես էլ լեզվարանական առումով¹⁴։ Խոշորագույն սեմագետ Պ. Կ. Կոկովցովը բացառիկ նշանակություն էր տալիս Պալմիրայի մտքային սակացուցակին և շատ տարիներ է նվիրել նրա խոր ուսումնասիրությանը¹⁵։

Պ. Կ. Կոկովցովը, լինելով այն բանից, որ Պալմիրայի երկրչեզյվյան վիճագրության հայանագրությունն պատիվը պատկանում է ռուսական գիտնականի, անհրաժեշտ էր համարում, որ այն վիճագրությունը պատկանի Ռուսաստանին։ Գիտնականի նախաձեռնությունը Ռուսական հեագիտական ընկերությունը 1899 թվականին «հետաքրքրվեց Պալմիրայի սակացուցակի նշանավոր վեմով և ցանկացավ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել փրկելու այն և վերապահելու Ռուսաստանին»¹⁶։

⁹ ԱԿՊԱ, ֆ. 1353, ց. 1, գ. 72, Բ. 11։

¹⁰ П. Кокцов. Памяти князя С. С. Абамелек-Лазарева, с. 2.

¹¹ Пальмира. Археологическое исследование князя С. Абамелек-Лазарева, действительного члена императорского Русского археологического общества, СПб., 1884.

¹² Джераш. Археологическое исследование князя С. Абамелек-Лазарева. СПб., 1897, с. 51.

¹³ Джераш. Археологическое исследование князя С. Абамелек-Лазарева, с. 30.

¹⁴ П. Кокцов. Памяти князя С. С. Абамелек-Лазарева, с. 3.

¹⁵ Р. Р. Орбели, Академик П. К. Кокцов и его рукописное наследие. — Очерки по истории русского востоковедения. Сб. 2. М., 1956, с. 353.

¹⁶ П. Кокцов. Памяти князя С. С. Абамелек-Лазарева, с. 3.

1900 թվականին Պ. Կ. Կոկոզցովը հրատարակում է մի զբոսայգի, որի վերնագիրը՝ «Պալմիրայում Արամելիք-Լազարյանի հայտնաբերած Ք. Մ. 137 թ. մաքսային սակացուցակը պարունակող վեմը և Ռուսաստանի համար նրա ձեռքբերման անհրաժեշտությունը» (ՍՊՔ., 1900), բնորոշում է նրա բովանդակությունը:

«...Ռուսական հնագիտական ընկերության և գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ Կոստանդնուպոլսում զննարկելու, Լազարյան ճեմարանի նախկին աշակերտը, հասավ այն բանին, որ սուլթանը իշխան Արամելիք-Լազարյանի Պալմիրայի արձանագրությունը նվիրեց Ռուսաստանի կայսրին: Բայց վիթխարի վեմի փոխադրությունը անապատի և ճանապարհարկության առանձնահատուկ պայմաններում ծախսեր էր պահանջում, և գիտական նպատակների համար կտաժավորությունից փոզ պրկելը շատ էլ հեշտ գործ չէր»¹⁷: Ահա թե ինչու Պ. Կ. Կոկոզցովը դիմեց Ս. Ս. Արամելիք-Լազարյանին, այլ առաջարկարգ հարուստ մարդուն, աներկիրմաստ առաջարկությանը: «Վիմարարի տեղափոխման արժեքը վճարելու կրիտիկական պահը եկել է, — գրում էր նա, — և ես սարսափում եմ մտածելու, որ հենց Դուք կհայտնվեք այն անձանց թվում, որոնք բուլբուլից բիշ են մասնակցություն բերել վիմարարի ճակատագրին: Բայց ես կարծում եմ, որ դեռ ժամանակ կա Ձեր կողմից համապատասխան առաջարկության համար, որով Դուք կապացուցեք բուլբուլի Ձեր զգացումները Պալմիրայի սակացուցակի նկատմամբ և զրա հետ մեկտեղ Ռուսաստանի կողմից վիմարարի ձեռքբերման պատմության մեջ նույնպիսի առաջատար դեր կվերապահեք Ձեզ, որպիսին Ձեզ բախտ է վիճակվել նրա հայտնագործության և ռուսումնասիրության գործում»¹⁸: Արամելիք-Լազարյանի աջակցությամբ զրեթե ջրան ապրի անց վիմարարը երկարատև ճանապարհ հանեցին: Թե որքան ղովարին է եղել հուշարձանի տեղափոխումը, վկայում է Լազարյան ճեմարանի նոխկին շրջանավարտ, իսկ նկարագրվող տարիներին Դամասկոսում Ռուսաստանի զլխավոր հյուպատոս Ա. Պ. Բելլանի նամակը: Ս. Ս. Արամելիք-Լազարյանին հղած 1901 թվականի օգոստոսի 16-ի նամակում Ա. Պ. Բելլանը գրում էր. «Ձեր Պալմիրայի վիմարա-

րը արդեն ճանապարհին է... Անգամ կտորներով վիմարարը Պալմիրայից Դամասկոս փոխադրեցին 12 օրում»: Արամելիք-Լազարյանը նույնպես էր Դամասկոսում ռուսական հյուպատոսի թարգմանի որդին»¹⁹: Վերջապես, Պալմիրայի երկրեզվյան մաքսային սակացուցակի հայտնագործությունից ավելի բան ջրան տարի հետո վիմարարը փոխադրվեց Ռուսաստան և դրվեց էրմիտաժում, ուր և այն գտնվում է առ այսօր:

1916 թվականի սեպտեմբերին իշխան Ս. Ս. Արամելիք-Լազարյանը վախճանվեց: Նրա մահվանը²⁰ արձագանքեցին ռուսական շատ լրագրեր, որոնցում հատուկ ընդգծվում էր Ս. Ս. Արամելիք-Լազարյանի կողմից «Պալմիրայի մաքսային սակացուցակի» հայտնագործումը: Ռուսական հնագիտական ընկերության ներկայան բաժանմունքը Լազարյան ճեմարանի պատվավոր հոգարարձուի հիշատակին նվիրված նիստ գումարեց, որտեղ հանգուցյալի մասին հիշողություններով հանդես եկավ ակադեմիկոս Պ. Կ. Կոկոզցովը:

¹⁷ Հյուպատոսի թարգմանն էր արար Ալեքսի Խուրին: Նրա որդին՝ Ֆադրը, որը մասնակցություն էր ունեցել մաքսային սակացուցակի տեղափոխմանը, մեաց Ռուսաստանում: Կրթությունը Ֆ. Խուրին ստացավ Լազարյան ճեմարանի մասնափոխական դասարաններում:

²⁰ XIX դարի 80-ական թվականներից հետո Ս. Ս. Արամելիք-Լազարյանը հեռացել էր արևելագիտության ազդարդից:

¹⁷ ՀԱԿՊԱ, ֆ. 1252, ց. 1, գ. 72, թ. 11:

¹⁸ Նույն տեղը, գ. 399, թ. 4 թ:

ՄԻ ՍՆԱԼՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Քաջ հայանի է, որ Մոսկվան Արևելյան լեզուների կազարյան ձեմարանով XIX դարի սկզբից ակնառու դեր է խաղացել հայ-առևտրական մշակութային ու գիտական կապերի զարգացման ու ամրապնդման, մշակութի, կրթության, գրատպության վերելքի գործում:

Հայանի է նաև, որ Արևելյան լեզուների ձեմարանը Մոսկվայում եղել է հայ-առևտրական ուսումնական հասաստություն սովորողների քանակակազմով, որտեղ դիմնադիական դասընթացի հանրակրթական առարկաները դասավանդվում էին ուսուսերեն:

Ուսումնական պրոցեսի կաղմակերպմամբ և ուսուցման մակարդակով, դասախոսների մասնագիտական որակավորմամբ կազարյան ձեմարանի դիմնադրան համարվում էր լավագույններից մեկը Մոսկվայում և, ընկանաբար, բավականին հանրաճանաչ էր: Կազարյան ձեմարանի դիմնադրական դասարանների աշակերտների և բարձրագույն դասարանների ուսանողների ցուցակում մենք գտնում ենք այնպիսի մարդկանց ազգանուններ, որոնք հետագայում դարձել են Ռուսաստանում հայտնի մշակութի գործիչներ, բանաստեղծներ, գրողներ:

Հետաքրքրությունը կազարյան ձեմարանի և Մոսկվայի նկատմամբ, որպես անցյալ դարի հայկական մշակույթի և կրթության նշանավոր կենտրոններից մեկի, հատկապես աճեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կաղմի մեջ մտնելու 150-ամյակի կապակցությամբ, որը նշվեց մեծ հանդիսավորությամբ: Հրապարակվեցին կաղմիտուլ ուսումնասիրություններ, արժեքավոր գիտական և գիտահանրամատչելի գրքեր, հետաքրքիր հոդվածներ:

Գրքիս հեղինակը տնհրաժեշտ է համարում ուշադրություն

հրավիրել ափսոսանքի արժանի մի սխալի վրա: Այդ մասին չի կարելի շատել, քանի որ այն վերաբերում է և՛ նիկոլակիչ Տոլստոյի կենսագրությանը, նրան է եկել պնդում, որ Լ. Ն. Տոլստոյը սովորել է Արևելյան լեզուների կազարյան ձեմարանում (մասնավորապես, «Մովհական Հայասան» ամսագրի 1978 թվականի № 7-ի հոդվածը): Դա սխալմունք է:

Կազարյան ձեմարանում սովորածների ցուցակում պահպանվել են Անատոլի Տոլստոյի, Վասիլի Տոլստոյի, Վիկտոր Տոլստոյի, Նիկոլայ Տոլստոյի և կոմս Նիկոլայ Տոլստոյի անունները: Ավելին, կոմս Նիկոլայ Տոլստոյի անունը «գրանցված է «Ռևուս տախակի» վրա»: Դա, հավտեաբար, մեծ զրոզի ավագ եղբոր անունն է: Լև Նիկոլակիչ Տոլստոյն ինքը արևելյան լեզուներ ուսանել էր Կազարյի համալսարանում (դասընթացը, ինչպես հայտնի է, չի ավարտել), ամբողջ կյանքում պահպանել էր հուշաբերությունը Արևելքի նկատմամբ, բայց դա արդեն ուրիշ թիմ է:

Ի միեթարություն նրանց, ովքեր կուզենային Լ. Ն. Տոլստոյի անունը սերտորեն կապել կազարյան ձեմարանի հետ, բերենք մի քանի փաստեր:

Մեծ գրողի մահվան կապակցությամբ Յասնայա Պոլյանայ՝ «Էլում Լ. Ն. Տոլստոյի ընտանիքին» ուղարկվեց հետևյալ բովանդակությամբ հեռագիր. «Ստեարհիլեով ներջեցյալ մեծ հանճարի հոգեման գեղեցկություն, սիրո և գիտարտության մեծ ուսուցչի առջև, որն արդեն կենդանության օրոք աննդժանելի հուշարձան կանգնեցրեց իրեն ամբողջ կուլտուրական մարդկության սրտում ու մարում, խոսքի բարձր վարպետի առջև, որն իր հրաշալի ստեղծագործություններով համընդհանուր համկրանք առաջ բերեց ռուս ժողովրդի և առևտական հոգու նկատմամբ, կազարյան ձեմարանի պրոֆեսորներն ու դասախոսները խորապես ցնցված են և՛ Տոլստոյի տառապալից վախճանից, անկեղծ ցավակալությամբ և՛ հայտնում նրա ընտանիքին իրենց վշտում, որը բաժանում է ողջ մարդկության լավագույն մասը»: Հեռագիրն ավարտվում էր՝ «Հավերժականի արարչին հավերժ հիշատակ» բառերով:

1910 թվականի նոյեմբերի 9-ին, գրողի թողման օրը, ձեմա-

1 А. ЗИНОВЬЕВ. Исторический очерк Лазаревского института восточных языков. СПб., 1855, с. 103.
2 ՄԲՊՊԱ, ֆ. 213, ց. 1, գ. 153, ք. 6:

բանում պարապմունքներ շկայացան, իսկ այդ ուսուցման հաստատության պրոֆեսորների խորհուրդը որոշում ընդունեց ընտրել պատվիրակություն, որի մեջ մտնում էին պրոֆեսորներ Ա. Ն. Վենելովսկին, Գր. Ա. Խալաթյանցը և Ա. Ս. Խախաճովը (Խոխանիշվիլի), և հանձնարարել նրան Լ. Ն. Տոլստոյի գերեզմանին նոճու ճյուղ դնել՝ ժապավենի վրա «Մեծ Տոլստոյին» կազարյան ճեմարանից՝ մակաբարոյությամբ: Որոշվեց նաև ի հիշատակ գրողի մասնագիտական դասարանների ուսանողների միջև հայտարարել մրցույթ՝ Արևելք և Ն. Տոլստոյի երկերում» Թեմայով լավագույն շարադրության համար:

Արամեիք-Լազարյանների արխիվում պահպանվում է և՛ նիկոլակիշի կնոջ բոջը՝ Տատյանա Անդրեևնա Կուզմինսկայաի նամակ՝ հասցեառված Սեմյոն Սեմյոնովիչ Արամեիք-Լազարյանին:

Տ. Ա. Կուզմինսկայան գրում էր. «Քույրս և Տանյա Լվովնան խնդրեցին Ձեզ բարեկ և տեւել, որ շատ և շատ ուրախ կլինեն, և թէ զուր անցնել Յասնայա Պոլյանա: Ես միանում եմ նրանց և ավելացնում եմ, որ Դուք մեր փոքր աշխարհում մեծ աշխուժություն մացրիք: Ցտեսություն իշխան: Ձեզ նվիրված՝ Տ. Կուզմինսկայա: 23 հուլիսի 1916 թ.: Յասնայա Պոլյանա»³:

Այսանդ հարկավոր է հիշատակել, որ Ս. Ս. Արամեիք-Լազարյանը անձամբ ծանոթ էր և՛ նիկոլակիշ Տոլստոյի հետ և լինում էր Յասնայա Պոլյանայում: Ի դեպ սասած, Լազարյանների ընտանիքից նրան ժառանգություն մնացած կալվածները գտնվում էին Տոլստոյների կալվածի հարևանությամբ: (Մասնավորապես, այդ մասին է հիշեցնում Տոլստոյի մարզում գտնվող Լազարևո երկաթուղային կայարանի անվանումը):

Տատյանա Լվովնա Սուխոտինա-Տոլստայաի վերջերս լույս տեսած «Հիշողություններ» գրքում զետեղված է երկու լուսանկար, որոնք ուղեկցվում են հետևյալ բացատրական տեքստով. «Լ. Ն. Տոլստոյը ընտանիքի շրջանում»: Յասնայա Պոլյանա: Լուսանկար՝ Ս. Ս. Արամեիք-Լազարևի, և «Լ. Ն. Տոլստոյը ընտանիքի և հյուրերի շրջանում...»: Յասնայա Պոլյանա: Լուսանկար՝ Ս. Ս. Արամեիք-Լազարևի: Առաջին լուսանկարը թվագրված է 1884, երկրորդը՝ 1888 թվականով:

³ ԶԿԳԱ, ք. 1252, ց. 1, գ. 1016, թ. 2—3:

⁴ Т. П. Сухотина-Толстая. Воспоминания. М., 1976, 416—417

Իհարկէ, որսաց երկրի մեծ գրողի կյանքի և ստեղծագործության ամենափոքր իսկ մանրամասները (շտրիխները) մեծագույն արժեք են ներկայացնում: Այդ կապակցությամբ ավելորդ չեմ համարում բերել տեղեկություններ, որոնք գրքիս հեղինակին հայտնել է սովետական ականալոր գիանական, այժմ հանգուցյալ պրոֆեսոր Հովսեփ Կարապետի Կուսիկյանը: Ինչպես հայտնի է Հ. Կ. Կուսիկյանը սերտորեն կապված էր Լազարյան ճեմարանի հետ, երկրբ տարիներ այտտեղ էր դասավանդել նրա հայրը, այստեղ էր ուսանել, աշխատել և ինքը՝ Հ. Կուսիկյանը: Պրոֆեսոր Կուսիկյանը պատմում էր, որ և՛ նիկոլակիշ Տոլստոյը մի քանի անգամ Լոշել էր Լազարյան ճեմարանում:

Հնաբաժոր է, որ այս տեղեկությունները հաստատում գտնեն Հ. Կ. Կուսիկյանի նրևանում գտնվող արխիվում:

ՐԱՌԱՐԱՆԻ ԷՋՆԵՐՈՒՄ

1960 թվականին Մոսկվայում տեղի ունեցավ արևելագեաների XXV միջազգային կոնգրեսը՝ Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի, Ավստրալիայի շատ երկրների գիտնականների հիշարժան գիտաժողովը: Նիտտերում հղան բովանդակալից զեկոլոգումներ, վեճեր ու վիճարանություններ, հետաքրքիր հանգիստներ՝ մեծ համադրմարի տոնական իրադրություն՝ և՛ գործնական, և՛ հանդիսար: Ըստ մասնագիտության գործընկերները զրբեր էին փոխանակում, նվիրում իրենց աշխատությունների վերջին հրատարակություններ: Բայց, հավանաբար, ամենահուզիչ նվերը 1896 թվականին Բելյուսում հրատարակված «Արարելեն-ֆրանսերեն բառարանն» էր:

Շատ աասնումյակներ այդ բառարանը պատկանել էր բազմաթիվ գիտական ընկերությունների և ակադեմիաների պատվաճուր անդամ և թղթակից-անդամ, Բլյունսլի և Քեմբրիջի համալսարանների պատվավոր դոկտոր, ականավոր արևելագեան, իրանագիտության ընագավառում ճանաչված հեղինակություն, ավելիք քան երկու հարյուր գիտական աշխատությունների հեղինակ, արևելագիտության Մոսկվայի դպրոցի ան Վլադիմիր Ֆլոդորովիչ Մինորսկուն՝ բարդ և ուսանելի ճակատադրի տեր մի մարդու:

Վ. Յ. Մինորսկին ծնվել է 1877 թվականին նախկին Տվերի նահանգի Կորչև փոքրիկ քաղաքում: Միջնակարգ, իսկ այնուհետև բարձրագույն կրթությունը նա ստացել է Մոսկվայում, հերթականորեն ավարտելով Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և Արևելյան լեզուների կադրյան ճեմարանի մասնագիտական դասարանները: Այսպեղ, կադրյան ճեմարանում, ուսանող Մինորսկին ուսանել էր ականավոր գիտնականներ Ֆլոդոր Վելյենևիչ Կորչև, Վսեվոլոդ Ֆլոդորովիչ Միլլերի,

Եգաֆանզել Եֆիմովիչ Կրիմսկու մոտ: Այդ նույն տարիներին մասնագիտական դասարաններում արաբերենի, պորսկերենի և թուրքերենի գործնական պարապմունքները վարում էին այնպիսի մասնագետներ, ինչպես Միխայիլ Օսիպովիչ Աթթայան, Սիմոն Գրիգորի Մերունյանը, Միրզա Ջաֆար Ռիզանը, Միրզա Արզուլա Գաֆֆարովը:

Դեռևս ուսանող ժամանակ Վ. Յ. Մինորսկին գործովում է Իրան և Թուրքիա՝ արևելյան լեզուների պրակտիկայի և գիտական աշխատանքի նախապարասավելու: Նրիտասարդ գիտնականն էր առաջին աշխատությունները հրատարակում է Արևելյան լեզուների կադրյան ճեմարանի կողմից հրատարակվող արևելագիտական աշխատություններում՝ և սերիական այլ հրատարակություններում: Բայց Վ. Յ. Մինորսկին գերագույն զիվանագիտական կարիերան, և 1903 թվականից սկսվում է նրա ծառայությունը արտաքին գործերի մինիստրության գերատեսչությունում: Այդպես բառարանի էջերում հայտնվում է առաջին գրառումը՝ «Վ. Մինորսկի: Թեհրան: Ռուսաստանի միսիա» (հավանաբար, 1903):

Հեղափոխությունը մասնագիտական դասարանների նախկին սանին վրա է հասնում Իրանում, որտեղ նա աշխատում է որպես Ռուսաստանի ղեկավարության առաջին բարոտար և գործերի հավատարմատար Քեհրանում: Վ. Յ. Մինորսկին հայրենիք չվերադարձավ: Նա պարսկերեն լեզվի և պարսից գրականություն, ինչպես նաև իսլամի պատմության վերաբերյալ դասախոսություններ է կարդում Ֆրանսիայում, Անգլիայում, հրատարակում է ֆունդամենտալ ուսումնասիրություններ և Արևելքի գրավոր հուշարձանների քննական թարգմանություններ: 1939 թվականից մինչև իր կյանքի վերջը (նա մահացավ 1966 թվականին), Վ. Յ. Մինորսկին Քեմբրիջում էր:

Այստեղ բառարանի էջերում մենք կանցնենք ևս մեկ՝ երկրորդ հիշատակարանին: «Եմ հին ուղեկից և բարեկամ,— զիմում է Վլադիմիր Ֆլոդորովիչը բառարանին,— ինչպիսի անդամատեղ ծառայություն էս դու ինձ մատուցել: Ես երբեք չեմ արհամարհել ըս օգնությունը: Էլ ինչպիսի փորձանքներում ասես, որ դու ինձ չես ուղեկցել: Փլունիկի նման դու անվնաս դուրս եկար Թեհրանի իմ վառվող տնից...»

Գրանից բառատուն տարի անց, երբ գերմանական ինքնաթիռները սլանում էին իմ գլխավերևով, դու զրված էիր իմ առջև, իմ

գիտնական գործընկեր, որը ղեկավարում էր ինձ գիտական ակադարեզում՝ Հայրենիքից հետո: Կվերադառնա՞նք մենք արդյոք այնտեղ միտաին, թե՞ դու միայնակ կմեկնես ողջունելու երիտաւարդ, անծանոթ սերնդին:

Քեմբրիջ, Գրինբերիք, 9
23.01.1944:

Պրոֆեսորի կինը, նրա անփոփոխ օրնականը՝ Տառլանա Ալեքսեևնա Մինորսկայան, 1972 թվականի մարտի 17-ի նամակում սիրալիք կերպով հայտնեց գրքիս հեղինակին, որ իր ղիվանագիտական գործունեության սկզբին՝ Իրանում, Վլադիմիր Ֆյոդորովիչը ապրում էր Բուսական միտաինի տարածքում: «Միտանա ան ժամանակ գտնվում էր Թեհրանի հին թագամասում և բազկացած էր մի մեծ տնից՝ դեպպանորդի համար ու գրասենյակից և ետևում, այդու միջով, մի քանի փոքր անկիթց՝ աշխատակիցներին համար: Գրանցից մեկում էլ ապրում էր Վլադիմիր Ֆյոդորովիչը: Հրդեհը, որ պատահել էր նրա բացառապայմանք, արձակուրդում եղած ժամանակ, սարսափելի շէր եղել, որոշ բաներ այրվել էին, այրվել էին գրքեր, որոնց մեջ էր նաև այդ բառարանը: Համադրությունը Քեմբրիջի հետ, ուր մենք դեկտեմբեր և լոնդոնից Արևելյան լեզուների գլոբոցի էվանգելիստից հետո, հետևանք էր գերմանական ոմրակոմիտեի հարձակման: 1940 թվականին նրանք մի քանի ուսուր էին նետել, որանցից մեկը՝ ան ժամանակ մեր սպրած անից ոչ հետո»:

Այստեղ մենք մի փոքր շեղում կատարեմք և դիմենք ակադեմիկոս Վլադիմիր Ալեքսանդրովիչ Գորդլևսկու, Մինորսկու անվանակից և կազարյան ճեմարանի նրա ընկերոջ խոսքերին: 1953 թվականին շունվարին Վ. Ա. Գորդլևսկին գրեց մի ակնարկ «Վ. Յ. Մինորսկու հիշատակին»՝ նրոխառապարտ լինելով Վ. Յ. Մինորսկու մահվան մասին լուրերի թյուրիմացության, «հին քնիկորոշ հիշատակին Վ. Ա. Գորդլևսկու խոսքը աչքի է ընկնում բացառիկ անկեղծությամբ, սրատլուրությամբ և նրբին հոգեբանական վերլուծությամբ: Արեւելագիտության պատմաբանը չի կարող

սուգորություն չդարձնել այն բանին, որ Վլադիմիր Ալեքսանդրովիչ Գորդլևսկին խիզարի փորձ է կատարել՝ ցույց տալու տարագիր գիտնականի հոգեբանական վիճակը, գիտնական, որը կարող էր հայտնաբերել: Գորդլևսկին գրում էր. «Կառնց կանոնի մեր բանի վրա, ինչը կարող է մեզ մի փոքր հաշտեցնել նրա անցյալի հետ: Վ. Յ. Մինորսկին, հավանորեն, տառապում էր հայրենիքից և տրված»:¹ Վ. Ա. Գորդլևսկին, քաջ գիտնական Մինորսկու պատենցիալ հնարավորությունները և նրա շխալակ նվաճումներն արտասահմանում (ի հեպ սասած, խիստ ծանրակշիռ) ակնում է ես մեկ ուրիշ արգարացի հետևորդի: «Եթե նա լինելը (Վ. Յ. Մինորսկին:— Ա. Բ.) ՍՍՁՄ-ում, էժավալվելին նրա կազմակերպական և գիտական բուրր ընդունակությունները»:

Անցավ մի քանի տարի: 1960 թվականին, 83 տարեկան հասակում Վլադիմիր Ֆյոդորովիչ Մինորսկին, որպես Արևելագետների միջազգային կոնգրեսի հյուր, կնոջ հետ ժամանում է Մոսկվա՝ իր պատանեկության քաղաքը: Նա ընում է Պեկրովկա: Լուսարտաբնակ, նա կանգնած է նախկին Չորրորդ գիմնադպարի շենքի մոտ, որը մի ժամանակ ավարտել էր ոսկե մեդալով: Սուսանահատուկ հետաքրքրությամբ և մեծ հուզմունքով վաստակաշատ գիտնականն այցելեց Հայկական նրբանցքում գտնվող հնոմենի առանձնատունը, որտեղ շատ տարիներ առաջ, որպես մասնագիտական դասարանների ուսանող, արևելյան լեզուների էր ուսումնասիրել: Երկար սպասված հանդիպումից հուզված, ծերունի գիտնականը կրկին դիմում է բառարանին, որը դարձել էր նրա նվիրական մտքերի պահպանարան: Եւմ թանկարկի պատվարժան քարեկամ, — գրի է առնում:— Ահա և լուծվեց 16 տարի առաջ մեզ հուզող հարցը: Կատարվեց հարաբ. 24 [տարի] անց մենք հեղ հետ միտաին վերադարձանք մեր մեկնակետին, իմ հայրենիքին: Փեղ հանձնում եմ վաստակած հանգստի՝ ալեկալգիտության ինտադիտումս, Հայկական նրբանցք երկու, որտեղ և անցկացրել եմ երեք տարի, որոնք իմ երկարատև կյանքն ուղղել են դպար Արևելք: Հիշողության մեջ անցնում են Վսեվ. Յ. Միլլերի, Ա. Ե. Կրիմսկու, Մ. Օ. Աթթայայի, Միրզա Ջաֆարի, Միր-

¹ Տեքստը ֆրանսերեն է գրված, բացառությամբ «երեստարդ, անծանոթ սերունդ» բառերի:

² Տպագրվել է 1968 թվականին Վ. Ա. Գորդլևսկու «Շնորհ երկիրի» 4-րդ հատորում, արդեն Վ. Ա. Գորդլևսկու մահից հետո, 1966 թվականին և Վ. Յ. Մինորսկու մահից հետո՝ 1966 թվականին:

³ В. А. Гордлевский. Избранные сочинения. Т. 4, М., 1968, с. 471.

⁴ Նույն տեղը, էջ 470:

⁵ 1953-ից մինչև 1976 թվականը նախկին կազարյան ճեմարանի շենքում ակադավորված էր ՍՍՁՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը:

զա Արդուլա Գաֆֆարովի ստվերները:— Հանգիստ նրանց աճ-
յունին:

Միզուցե դու դեռ օդուտ բերես ապագա սերունդների երիտա-
սարգ արևելագետներին, բայց, համենայն դեպս, խաղաղ հանգ-
չիբր իմ հին գպրոցի պատերի մեջ և հիշեցրու իմ մասին՝ նրա
հին ու շնորհակալ սանի մասին:

Փո հավատարիմ բեկեր և ողբկից
Վ. ՄԻՆՈՐՍԿԻ

Մոսկվա («Ուկրաինա» հյուրանոց): 1960 թվականի օգոստոս-
սի 15: Որպիսի երջանկովյուն էր տեսնել հայրենիբը և նայել ողջ
մնացած փոքրաթիվ հասակակիցներին ու երիտասարդ, անծա-
նոթ սերնդին: Թող նրան ուղեկցեն հաջողովյունն ու երջանկու-
թյունը: Վ. Յ. Մ.»:

Վլադիմիր Ֆյոդորովիչ Մինորսկին վախճանվեց Անզլիալուժե
նրա աճյունասփորը փոխադրվեց Մոսկվա և թաղվեց Նովոդեի-
չիևի գերեզմանատանը:

Վլադիմիր Ֆյոդորովիչը իր զրագարանի մի մասը, այն է՝
օտար լեզուներով գրեբըր, կտակել է ՄՍՀՄ ԳԱ արևելագիտու-
թյան ինստիտուտին (այժմ գտնվում է արևելագիտության ինս-
տիտուտի Լենինգրադի բաժանմունքում), իսկ ռուսերեն լեզվով
հրատարակովյունները՝ Քեմբրիջի համալսարանին:

ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

I. XVII դարի Պետերբուրգի հայկական գաղութի առաջին հուշա-
ձևները 17

II. Մոսկվայն երկուս 24

- 1. Մոսկվան հալ ժողովրդի մշակովթի կենտրոն 34
- 2. Ճորտ շարտարագետներ 50

III. Լազարյան հեմաբանի գեղարվեստական հավաքածուց 61

- 1. Լազարյանները կերպարվեստում 63
- 2. Քանդակագործական հուշակոթող 72
- 3. Անսոցաելի գլուտ 78
- 4. Լազարյանների զիմանկարները արտասահմանում 83

IV. Ա. Գ. Աբամելիք

- 1. Նրան պոետներն են բանաստեղծովյուններ նվիրել 85
- 2. «Մ՛վ զիսի այս բանաստեղծովյունը» 100
- 3. «Անհայտ հեղինակին... Եկարներով տեսրը» 104

V. ՍՍՀՄ ակմատի ֆոնդի պատմական արձանագրերը	111
1. «Լազարյան»-«Օռլով»-Ռուսական»	112
2. Փավոսյան միսիա՝	143
VI. Պալմիրայի մախային սակացուցակը	174
VII. Մի սխավմոնեի մասին	180
VIII. Բաաբաանի էջերում	184

Բաղիյանց Աշոտ Պատվոկանի
 էջեր ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԳԻՎԱՆԻՑ
 (Ակնարկներ)

Базиянц Ашот Патваканович
 НАД АРХИВОМ ЛАЗАРЕВЫХ
 (Очерки)
 (На армянском языке)
 Ереван «Айтастан» 1986

Հրատ. խմբագիր՝ Շ. Ս. Բաղիյանց
 Կրտսեր խմբագիր՝ Գ. Ռ. Կնյազյան
 Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
 Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
 Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան
 Վերատպուող սրբագրիչ՝ Լ. Շ. Հովհաննիսյան

ИБ № 5187

Հանձնված է շարվածքի 10.03.1986 թ.:

Ստորագրված է տպագրության 12.05.1986 թ.:

Ֆորմատ 84×108¹/₃₂: Քուլթ՝ № 1: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»,
տպագրություն՝ բարձր: 10,08 պարմ. տպագր. մամ., 9,25 հրատ. մամ.:

Պատվեր՝ 292: Տպաքանակ՝ 5000: Գինը՝ 90 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Айастан», Ереван—9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործն.
պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան փողոց № 23/1:

Типография № 6 Госкомитета АрмССР по делам издательств,
полиграфии и книжной торговли. Ереван, ул. Туманяна, 23/1.